491.99-3
Հ-42

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ

ԲԱՅՏԱՐԱԿԱՆ ԲԱՌԳԻՐՔ

Գ. Ա.

10.06.2013

4540

491.39-3
Հ-42

2304-10

Սպր.

ՄԱՐՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ – ի յուրեան
գաղտնիքով սէր սիրեմ Ես։

493
128-3Ա

ԲԱՅՑԱՏՐԱԿԱՆ 29.V.1913.
Երեան

Բ Ա Ռ Գ Ի Ր Ք

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/11-1922
им. А. Мясникяна
Ա. ՅՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Օտարազգի բառերի եւ օտարազիր բառերի ու դարձուածքների, որոնք գործածական են հայոց գրականութեան մէջ։

Լեռ
22488

Համեմատաբար բնիարձակ բացատրութեամբ փիլիսոփայական, տնտեսագիտական, հասարակագիտական, իրաւաբանական եւ կենսախօսական բառերի։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
ՏՊԱՐԱՆ Յ. ՍԱՆՈՅԵԱՆՑԻ
1912

ՆԻԷՐ ԱՆԹԱՆՕԹ ՏԻԿՆՈՋԸ

բոնող բացատրութիւններ են ասացել, զուտ հանրապետական բառարանների եղանակով. օրինակ, աշխարհագրութիւն, ապահովագրութիւն, աւետարան, բանաւոր, դպիր, գործադուլ, գործարարական օրէնսգրութիւն, համալսարան, հեղինակութիւն, հոգաբարձութիւն, մանկահասակների աշխատանք և շատ ուրիշները: Եւ երբոր նա ձգտել է իր բառգրքին հատարակապետական ոգղութիւն տալ, այդ իսկ պատճառով կան թէ օտար և թէ հայերէն բառեր, որոնք 2, 4 մինչև անգամ 8 երես բացատրութիւն ունին: Ուրեմն զուտ մաքով օտարազգի բառգիրք չէ սա: Ես ընդհակառակը ցանկացայ տալ միայն օտար բառերի բացատրութիւն, թէև դրանցից ոմանք էլ, ինչպես յիշած է դրքից երեսին, համեմատարար ընդարձակ բացատրութիւն են ասացել, բայց ոչ հանրապետարանի ընոյթով:

Բայց լինչ է օտար բառը. մանաւանդ հայերէնում:

Հայ լեզուն վաղուց է կորցրել իր կատարեալ ձևը. և կասկածելի է, թէ նա երբևիցէ ունեցել է: Ով մի անգամ իր ձեռն է առել Hübschmann-ի Armənische Grammatik աշխատութիւնը, որն նա ըստ ծագման դասակարգում է հայերէն բառերը, առկայծած կլինի, թէ ինչպիսի բառեր, որոնց անաղարտ հայկականութիւնը շատերի համար անվիճելի է, օտար ծագում ունին, օրինակ պարսկերէնից են առնւած՝ ազատ, աշակերտ, աշխարհ, բամբակ, բարակ, բժիշկ, գաւազան, գոմէշ, դաշտ, դմակ, երկատարդ, գանգատ, թշնամի, թուխ. հազար, ճաշակ, մոմ, պահապան, պատկառ, վաճառ, տախտակ և այլն. տաթերէնից են առնւած՝ արհեստ, գայլ, գաղութ, թարգման, խմոր, խնձոր, ծրար, կառուց, կապին, կեղև, հաշիւ, ձէթ, մանգաղ, մանիշակ, շաբիթ, սառնայ, քահանայ, քարոզ և այլն. արաբերէնից են առնւած՝ գունդ, դահլիճ, փազար, շալակ, մնդուկ և այլն: Բայց այս բառերը այնքան են արդէն մերում մեր լեզուի հետ, այնպէս են արդէն իւրացել, որ չհնաշած հնախոյզ լեզուաբաններից ոչ ոքի մտքով չի անցնիլ նրանց օտար ծագումը, հետևաբար և տեղ չեն կարող ունենալ մի օտարազգի բառագրքում: Բայց կան մի շարք բառեր, որոնց օտար լինելը նկատելի է լինում նաև ոչ մասնագէտ լեզուաբանին. այսպէս են՝ ամբար, բիւրեղ, կիթառ, գինեբուռ, գմբէթ, թատրոն, վիճակ, կանոն, կարկին, կինոարան, կոկորդիլոս, հիւպատոս, հանուար, մեհեան, մեհենական, մզկիթ, նօտար, ոսոխ, պառնիկ, ռեհան, տապար, տաճար, տոկոս, տօմար, պալատ, կրկէս, թէյ, կայսր, փոստ, դափնի, փայտ, սապոն, լապտեր, քարէկոք, ամբիոն, կլիմա, շաբաթ, հետք, գերծ և այլն և այլն և բազմաթիւ ուրիշները, որոնց շարքը կարելի էր շատ երկարացնել. այս բառերն էլ վաղուց կորցրել են

իրենց օտարութեան բնոյթն և նրանց գործածութիւնը թէ խոսակցութեան և թէ գրականութեան մէջ խորթութիւն չի առաջ բերում նոյնիսկ ամենաուժեղ գաւառների համար: Անշուշտ սրանք էլ տեղ չունին մի օտարազգի բառգրքի մէջ: Սրանց շարքին են պատկանում նաև մի շարք եկեղեցական բառեր, օրինակ՝ եկեղեցի, կաթուղիկոս, եպիսկոպոս, սինոդ. կոնդակ, մեղեդի, մեռոն, սաղմոս, արքեպիսկոպոս, կանթեղ, հեթանոս, պատրիարք, վեզար, փիլոն, և այլն, որոնց ակներև յունական ծագումը չի խանգարում, որ նրանք արդէն լիովին հայացած ճանաչուին: Բայց սրանցից զատ կան հազարներով բառեր, որոնք գործ են ածւում մեր գրականութեան մէջ, որոնք սակայն դեռ չեն կորցրել իրենց օտարութեան բնոյթը, որոնց նշանակութիւնը յաճախ մի բառով չենք կարող բացատրել. այդպիսիներն են անա, որ տեղ են բռնում բառգրքիս մէջ, ինչպէս՝ աբէբացիա, ալիանս, ալպարի, ալուան. աղնամ, անթրոպոլոգիա, աստէրոիդ և հազարաւոր ուրիշները: Անշուշտ բառարանիս մէջ կըգտնւին բառեր, որոնց մասին ես չկարողանամ ասել, թէ մեր որ հեղինակը իր որ գրւածքում է գործ ածել, կամ գուցէ դեռևս հայ տառերով այդ բառը տպւած չլինի, բայց այդ հանգամանքը ինձ չարգիլից դրանք էլ մէջ մըտցնել. օրինակ, գուցէ դեռևս մեզանում ոչ մի տեղ չկայ գործածւած աբակնատէզմ, անէսթեզիա, բիմէտալիզմ, կոլերտիզմ ապէրցեպցիա և այլն, բայց ես համոզւած եմ, որ դրանք այսօր կամ վաղը անխուսափելիօրէն պիտի գործածւին, եթէ մեկը ուզենայ մի բան գրել, գիտութեան այն ճիւղերից, որոնց դրանք պատկանում են: Ուստի այդ բառերն էլ տեղ են գտել բառգրքումս: Ինձ մնում էր բառերի ընտրութեան ժամանակ երբեմն չափ ընտրել իմ գիտութիւնս, զուրս թողնելով միայն խիստ մասնագիտական արհեստագիտական բառեր:

Գործս համեմատաբար հեշտ էր, երբ բանը վերաբերում էր այն բառերին, որոնք գործածական են ընդհանրապէս եւրոպական լեզուների մէջ. ռուսերէն և գերմաներէն հարուստ բառարաններ ինձ մեծ ծառայութիւն արին այդ խնդրում: Բայց դրանցից զատ կան բազմաթիւ բառեր, որոնք յատուկ են միայն հայ գրականութեան և առնւած են գլխաւորապէս ասիական լեզուներից: Դրանք արդէն ես հարկադրւած էի մանրակրկիտ աշխատանքով հատաքել մեր հեղինակների գործերից. Աբովեանի, Պռօշեանի, Դ. Ազայեանի, Գամառ Քաթիպայի, Յովհաննէս Թումանեանի, Աւ. Իսահակեանի, Յովհաննէս Յովհաննիսեանի, Ե. Սունդուկեանի գործածած օտար բառերը ամբողջապէս մտել են բառգրքիս մէջ. բացի դրանից ջանացել եմ նաև բաւականին ժողովել և Րաֆֆու, Շիրվանզա-

դէի, Ահարոնեանի, Փափազեանի, Շահազիզի գործածած օտար բառերը, որը ինձ յաջողուել է մասամբ միայն։ Որքան հնարաւոր է եղել տեղ եմ տուել նաև թիւքահայերի գործածած օտար բառերին։ Հայ գրողների գործածած բառերից դուրս եմ թողել միայն զուտ տեղական և գաւառաբարբառային բառերը, որոնք գործածութիւն են գտել համարեա միայն այդ հեղինակի մի որևէ գործում, այն էլ ծանօթութեան կամ փակագծի մէջ բացատրած են։

Չընայած այս ջանքերին չեմ համարձակւում բառգրքիս լիակատարութեան մասին ծպտուն անգամ հանել։ Լիակատար բառգիրք առհասարակ աշխարհիս մէջ գոյութիւն չունի. մանաւանդ մի կենդանի լեզուի համար, որի մէջ ամեն րոպէ նոր բառեր են շինւում։ Դուրկ միայն մեռած լեզուները կարողանան ունենալ լիակատար բառգիրք, այն էլ եթէ նրանք սահմանափակ թիւով գրուածքներում են ամփոփուած։ Յայտնի է, որ չնայած լատիներէնը մեռած լեզու է, բայց գիտութեան շատ ճիւղեր կարիք են զգացել լատինական արմատներից նոր բառեր սարքել, որ անուանում են նոր լատիներէն և այսպիսով ճանապարհ են բացում անվերջ նոր լատինական բառերի։ Ասել լիակատար օտարազգի բառգրքի մասին հայերէնի համար միամտութիւն կըլինէր, քանի որ հայերէնը բոլորիս աչքի առաջ զարմանալի արագութեամբ ճոխանում է և հարստանում նոր բառերով, մանաւանդ այնպիսի խոշոր քաղաքական շարժումներից յետոյ, որ տեղի ունեցան վերջին 10-ամեակի ընթացքում Ռուսաստանում, Թիւրքիայում և Պարսկաստանում։ Մեզանում պ. Դաղրաշեանն է սիրում իր բառարանների ճակատին դնել «լիակատար» բառը. բայց հէնց իր նոր լոյս ընծայած հայերէն-ռուսերէն բառգրքի յառաջարանի վերջում խոստանում յաւուկ յաւելուածով տալ մոռացած բառերը, չընայած, որ այս գրքի ճակատն էլ զարդարում է «լիակատար» բառը։ Ես համոզուած եմ. որ այդ յաւելուածի ապագրութիւնը դեռ բոլորովին չվերջացրած, պ. Դաղրաշեանը իր թղթապանակում արդէն հաւաքած կունենայ բառեր, որ ինքը յետոյ է նկատել։—Ուրեմն ես ուել եմ այն, ինչ որ հնարաւորութիւն եմ ունեցել այս երեք տարուայ աշխատանքով։ Եթէ յաջողութիւն եղաւ, նոր հրատարակութիւնը կըսրբագրեմ և կըլրացնեմ։

Տպարանական պայմանները միայն արգելք եղան, որ դնէի օտար բառերի արմատները և քերականական գարգացումը, անշուշտ մասամբ հեղինակաւոր անձանց գործերից առնելով։ Ուստի բաւականացայ միայն փակագծում դնել կրճատ այն լեզուն, որից առնուած է բառը։ Ուրեմն բառգիրքս լեզուարանական արժէքից

զուրկ է, եթէ չընդունենք այն մի շարք բառերը, որոնք նոր լինելով այստեղ, կարող են ուսումնասիրողին իրրև նիւթ ծառայել։

Ուղղագրութիւնը ամենածանր խնդիրներից մէկն է, որ կանգնեց իմ առջև այս գործում։ Մի հեղինակաւոր մարմնի բացակայութիւնը մեզանում, որը սրբագործութիւն տար այս կամ այն թէկուզ սխալ, ուղղագրութեան և նրան առժամանակ գոնէ պարտաւորիչ դարձնէր բոլոր գրուածքների համար, մի դուռ է բացել մեզանում ուղղագրական անասնական կամայականութիւնների նոյնիսկ մեր լեզուի արմատական բառերի նկատմամբ, ուր ինաց թէ օտար բառերի։ Ինձ մնում էր ուրեմն ուղղագրութեան մէջ դեկավարուել իմ հայեացքներով, որը իմ կարծիքով ամենից ուղիղն է, և որի հիմքերը այստեղ բերում եմ մանաւանդ հետագայների համար։

Ամենից առաջ հարց ծագեց առատադարձութեան. արդեօք արևելեան թէ արևմտեան հայոց առատադարձութիւնը ընդունել։ Ինձ համար ոչ մի կասկած չկար, որ այլանդակութիւն է արևմտեան հայոց առատադարձութիւնը, որը հակառակ լեզուարանական և պատմական հիմքերի յամառօրէն յառաջ են քշում պօլսահայ «նորերը». եթէ դեռ հինգերորդ դարում եղնիկ Կողբացին գրում էր պիլծագօրհանք, եպիկուրեանք, պղատոնեանք և այլն, ինչ սոսկալի հակասութեան մէջ են ընկնելու մեր պօլսահայերը եթէ նրանք հետևեն այս ուղղագրութեան. այն ժամանակ ինչ իրաւունքով նրանք կըգրեն եպիկուրեան և ապա միևնոյն ժամանակ պղատոն, քանի որ երկու բառերի մէջ էլ նոյն հնչիւններն են, որոնք մի դէպքում փոխարինում են պ և կ, իսկ միւս դէպքում բ և ք կամ զ տառերով։ Կամ թէ՝ անկասկածելիօրէն գրում են Պետրոս, բայց երբ տեղը եկաւ գրել Պէտրօլէում կամ Պետերբուրգ, անմիջապէս կերպարանափոխութիւն է առաջ գալիս և ասացւում է բէդրօլ և բէդրսբուրգ. ոչ մի հիմք չկայ, բացի յամառութիւնից. մանաւանդ որ թիւրքիայում էլ բուն ժողովուրդը արտասանում է արևելեան հայոց նման և գիտական հաստատութիւնները, ինչպէս Միխիթարեանները, նոյնպէս գրում են մեր դասական շրջանի տառադարձութեամբ, ինչպէս և ամբողջ արևելահայ գրականութիւնը։

Բացի տառադարձութիւնից հարկաւոր էր որևէ եղանակով լուծել նաև նոյնանշիւն տառերի գործածութեան խնդիրը։

1) Ո. թէ Ր. օտար բառերի թէ սկզբում և թէ վերջում անխտիր գործ է ածւում թէ մէկը և թէ միւսը։ Եթէ ընդունելի

երկուսի էլ գործածութիւնը իւրաքանչիւրը իր տեղում, այն ժամանակ համարեա միշտ առիւծած կլինէի նոյն բառը կրկնել երկու տառերի տակ էլ, օրինակ գրել Ռայխստագ Ո-ի տակ, ապա նաև Բ-ի տակ՝ բայխստագ տես Ռայխստագ։ Իսկ եթէ ընդունէի դրանցից մէկն ու մէկը, շատ յաճախ մեղանչած կլինէի ճիշտ արտասանութեան դէմ։ Այդ պատճառով որոշեցի երկուսն էլ անխտիր գործածել նայած բառի արտասանութեան, բայց չ տառից չեմոյ գնել փոխանակ միայն ո-ով սկսուղները, նաև ր-ով սկսող խօսքերը այբուբենական կարգով խառնւ։

2) վ, ու, թէ ւ. ինքս համոզմունքով ւ-ական լինելով բացարձակապէս մերժեցի թէ վ, պահպանելով իմարկէ միայն բառերի սկզբում, և թէ մանաւանդ ու-ն իրրև բաղաձայն։ Եթէ որևէ տեղ ու-ն պահպանւած է, դա նրա համար, որ հէնց ու էլ կարդացւի, և ոչ թէ բաղաձայն, ինչպէս օրինակ հզուիտ, լուիզոր, սկսուէլ և այլն։ Բայց չկարողացայ ւ-ի գործածութեան մէջ անշեղ արմատական լինել և հարկադրւեցի ընդունել վ տառը բացի բառերի սկզբից նաև ի և օ հնչիւններից յետոյ։ Ո-ից յետոյ հարկաւոր է նա չշփոթելու համար իւ երկբարբառի հետ։ Օրինակ՝ մենիւ, ինտերիւ, կօնսատիտիւանտ, էտիւի, էկիւ, ան սիւիտ բառերում իւն երկբարբառ է և արտասանւում է ռուսերէն ю կամ գերմաներէն ju հնչիւնի նման. այնինչ չէր կարելի նոյն կերպ գրել նաև ինտէնզիվ, դիվա, կիվի, ցիվիլիզացիա, նիվօ, որովհետև ընթերցողը կարող էր այս բառերի մէջ էլ իւ իրրև երկբարբառ արտասանել և մոլորութեան մէջ ընկնել։ Իսկ օ-ից յետոյ ւ-ը միամիտ ընթերցողին կարող էր անվարժութեան հետևանքով սխալ արտասանութեան ճանապարհը տանել։

3) օ թէ ո. օտար բառերի համար ևս անպայման ընդունում եմ օ փոխական ո. և սա մանաւանդ անհրաժեշտութիւն է դառնում, երբ այդ հնչիւնից յետոյ կայ յ հնչիւնը, հայը դեռ առաջին տարւայ ուսմունքից գիտէ որ ոյ իրրև երկբարբառ ույ հնչիւնն ունի. Թոյլ ծոյլ, բոյթ և այլն։ Ինչպէ՞ս անի նա երբ մի օտար բառի մէջ հանդիպում է ոյ. նա անշուշտ պիտի կարդայ ույ, որինակ՝ բօյախանա բառը եթէ նրան ծանօթ չէ արտասանութեամբ և նա տեսնում է բոյախանա դրւած նա անպատճառ պիտի բույախանա կարդայ և մոլորութեան մէջ ընկնի. այնինչ եթէ նա գրւած տեսնի բօյաշի և բուլնուզ չի շփոթի դրանց արտասանութիւնը։ Պ. Դաղրաչեանը իր հայերէն-ռուսերէն բառարանի մէջ իրար յետևից դնում է՝ բոյ, բոյթ, բոյլ, բոյկոտ. այս բառերքը նշանակւած է գլխաւորապէս նաև այն ռուսների համար, կամ ռուսահօսների համար, որոնք ուզում են հայերէն բա-

ների նշանակութիւնը հասկանալ. գիտենալով, որ հայերէնում ոյ արտասանւում է իրրև ույ ինչու պէտք է նրանք չբմտածեն, որ բօյ և բօյկօտ բառերն էլ հայերէնում արտասանւում են իրրև բույ և բույկօտ։

4) է թէ և. ինձ թւում է, թէ է հնչիւնը աւելի համապատասխան է օտար լեզուների մէջ նոյն հնչիւնի արտասանութեան, այդ իսկ պատճառով օտար բառերում ևս ընդունեցի ամէն տեղ է և ոչ թէ և։ Բացառութիւն արեցի միայն ռուսերէնից առնւած բառերում, ինչպէս գիմնազիօ, որտեղ մեր և-ն աւելի մօտ է ռուսական արտասանութեան. Օտար լեզուներից ռուսերէնն ունի э = է և е, ѣ = մօտաւորապէս մեր և-ին. թէև ռուսները օտար բառերում գրում են մեծ մասամբ е, բայց յաճախ նկատում էք գիտակից ձգտում, անշուշտ արտասանութիւնը մօտեցնելու նպատակով, նաև э, օրինակ леди և лэди, лендлорд և лэндлорд, аэроплан և այլն։ Եթէ մենք ունենք մեր է հնչիւնը, որ աւելի մօտ է եւրոպական լեզուների е-ին, ինչու չգործածենք։

Մեզանում կարծես թէ ազգասիրութեան մի արտայայտութիւն է դարձել գերազանցութիւն տալ ո-ին օ-ից, և-ին է-ից, ու-ին ւ-ից և այլն. մի նոյնանման աւանդամոլութիւն է նաև նոյնիսկ օտար բառերի վերջում ա-ից յետոյ յ դնելը. դրօշկայ և այլն։ Կարիք չկայ ապացուցելու, որ դա ևս մի էժան ազգասիրութիւն է և աւելորդ բեռ, նոյնիսկ մոլորեցնող. որովհետև եթէ այդ վերջին յ-ն չըպիտի կարդացւի, ապա ինչ անի ընթերցողը, երբ հանդիպում է շայ, նարայ և այլ նման բառերի, ուր վերջին յ-ն անհրաժեշտ է արտասանել։

Կրկնակի բաղաձայները. եւրոպական շատ բառեր, մանաւանդ լատինական, նախդրով կազմւածները, ունին կրկնակի բաղաձայններ. բայց այդ զոյգ բաղաձայնը արտասանւում է իրրև մէկ. օրինակ aggregat accumulation, affaire և այլն։ Արդեօք անհրաժեշտ էր հայերէնում նոյն զոյգ բաղաձայնի տեղ զոյգ հայերէնը դնել։ Եթէ այդպէս անենք, այն ժամանակ հայ ընթերցողը կարող է այդ բաղաձայնների իւրաքանչիւրը առանձին շեշտել, ինչպէս նա սովոր է անել նոյնանման դէպքում հայերէն բառերի մէջ, ինչպէս կծծի, ծծել, կտտանք, զննել, ֆռռալ, բզզալ և այլն բառերում. կամ աւելի վատը, հայի կոկորդը զբաղւածութեամբ է արտասանում իրար կողքի դրւած մի քանի բաղաձայնը և անպատճառ դրանց արանքը դնում է մի կամ երկու տեղ ը հնչիւնը ինչպէս Մկրտիչ, զլխատել, մկմկալ և այլ բառերում դրան արտասանելով Մըկըրտիչ, զըլխատել, մըկմըկալ և այլն։ Նկատի ունենալով արտասանութեան այս հնարաւոր

աղաւաղումը և այն, որ զոյգ բաղաձայները եւրոպական լեզուներում արտասանւում են իբրև մէկ, ես յարմար համարեցի այդպիսի դէպքերում զոյգը հայկական մի բաղաձայնով փոխարինել և գրեցի՝ ազրէզատ, ակումուլացիա, ագէր և այլն. բացառութիւն անելով շատ քիչ տեղերում, գլխաւորապար երբ զոյգ լ էր, որովհետև ինձ թւում էր, թէ արտասանութիւնն էլ զոյգ է և ոչ թէ մէկ: Այս կերպ վերաբերմունքը նոյնանման դէպքերում նորութիւն չէ մեր գրականութեան մէջ. դեռ VII դարում Անանիա Շիրակացին գրում էր՝ assarion = ասարիոն, grammarion = գրամար, milliarius = միղիարիա և նոյն բանը կրկնւել է յետագայ ժամանակներում և մեր օրերում: *) Նոյն բանը տեսնում ենք յաճախ և այլ լեզուներում. այսպէս իտալական lazzaroni բառը գերմաներէնում առաջել է lazaroni ձևը (Heise) ռուսերէնում ладзарони (Больш. енц.). գերմաներէն գրում են Mafia և Maffia (Heise) ռուսերէն мафія (Павленков) և маффія (Больш. энц.). каллиграфія (Павленков) և калиграфія (Больш. энц.) և շատ ուրիշները:

Ներկայացնելով աշխատութիւնս հայ հասարակութեան, ինձ է թւում է ինձ սպասել նրա դատաստանին: Ես խնդրում եմ թէ մամուլին և թէ մասնաւոր անձանց խիստ, բայց արդար քննադատութիւնը չըզլանալ. սրանից մի նկատողութիւն, շատում, մատնանշում ուրախութեամբ կընդունեմ և նկատի կառնեմ:

Մարտ. Յարութիւնեանց

1912. ապրիլ 26
Երևան.

*) Անանիա Շիրակունւոյ մնացորդք բանից. ի լոյս ած Բ. Պ. Պետերբուրգ 1877. եր. 27-8: Որ սա թիւրիմացութիւն չէ, պիտի յիշել հրատարակիչի խօսքերը յառաջաբանից. «Չեն եղաք անփոփոխ պահել զուղղագրութիւնս»

ԱՅՍ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ.

Գերմաներէն

1) J. Conrad, Handwoerterbuch d. Staatswissenschaften. Bde I—IV. 1909. IV—VII 1900—1.

2) L. Elster, Woerterbuch d. Volksw. 1906—7.

3) J. Bachem, Staatslexikon. Bde I—III, 1908—10. IV—V, 1903—4

4) Bluntschli, Staatswoerterbuch Bole i—III, 1875—6.

5) F. v. Holtzendorff, Rechtslexikon. Bde I—III, 1880—1.

6) K. Birkmeyer, Encyklopaedie der Rechtswissenschaft 1904

7) J. Kohler, Encykl. d. Réchtsw. Bd I, II. 1904.

8) F. v. Liszt, Das Voelkerrecht. 1910.

9) J. C. Bluntschli, Das moderne Voelkerrecht der civilisierten Staaten. 1878.

10) R. Eisler. Woerterbuch der philosophischen Begriffe. Bde I—III. 1911.

11) Kirchner, Woerterbuch der philoscophischen Grundbegriffe. 1907.

12) R. Odebrecht, Kleines philosophisches Woerterbuch. 1909

13) Heyse, Fremdwoerterbuch. 1903.

14) O. Sarrazin, Verdeutschungs—Woerterbuch. 1906.

15) W. Liebknecht, Volks-Fremdwoerterbuch. 1907.

16) O. Groth und H. Bayer, Politisch-wirtschaftliches Konversations-Lexikon. 1911.

17) H. Nordheim, Vademecum fuer Zeitungsleser. 1902.

18) A. Braun, Zeitungs-Fremdwoerterbuch und politische Schlagworte. 1908.

19) H. Hüebschmann, Armenische Qrammatik. I. 1895 II, 1897.

Բացի դրանից յաճախ կարիք է զգացել դիմելու Ernst Haeckel-*ի* Die Weltraethsel *և* Die Lebenswunder *գրքերին. վապ-տէրի, Շմօլլէրի, կօնրադի, Թիլիպօվիչի, Ագլէրի, Ենչի և ուրիշ-ների քաղաքական անտեսութեան ձեռնարկներին։*

Ֆրանսերէն

20) Maurice Block Dictionaire général de la politique. T. I, II. 1873—4

21) L. Say et J. Chailley, Nouveau dictionaire d' économie politique T. I, II. 1891.

22) A. Neymarck, Vocabulaire manuel d' Economie politique 1898.

23) Th. Bachelet, Dictionaire général des lettres, des Beaux-arts et des sciences morales et politique 1862.

24) Petit Larousse ilustré. 1909.

Ռուսերէն

25) Ред. С. Южаковъ, Большая Энциклопедія, 20 томовъ 1902—4.

26) Ф. Павленковъ, Энциклопедическій словарь 1899.

27) Словарь для всѣхъ 1907.

28) Ред. Э. Л. Радловъ, Философскій словарь *1904.*

29) А. Н. Чудиновъ, словарь иностранныхъ словъ *1908.*

30) Ф. Павленковъ, словарь иностранныхъ словъ *1907.*

31) Бурдонъ и Михельсонъ, полный словарь иностранныхъ словъ. *1907.*

Հայերէն

32) Տէր-Դաւթեան. Հանրամատչելի բառարան օտարազգի բառերի և գործածութեան մէջ մտած ժաքերի ու դարձուածքների 1908

33) Հր. Աճառեան. Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ. 1902.

34) Հ. Մ. Վ. Քաջունի. բառգիրք արուեստից, վիւռեթեանց և գեղեցիկ գրութեանց, հատոր I, II, 1892.

35) Տ. Նաւասարդեան. բառգիրք արարատեան բարբառի։ 1903.

36) Յ. Դաղբաշեան. լիակատար բառարան հայերէնից ռուսերէն 1911

Բացի այդ, նաև բառացուցակները կցած Աբովեանի և Ռ. Պատկանեանի երկերի ժողովածուներին և «Հայ գրողներ»-ի երկու հատորին։

Հայերէն բառերի ընտրութեան համար.

37) Գուրեան Լուսինեան. Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ. 1909—10.

38) Հ. Ա. Վ. Կոյլաւ. բառգիրք գերմաներէն-հայերէն։ 1889.

39) Յ. Դաղբաշեան. լիակատար բառարան ռուսերէնից հայերէն։ 1903.

40) Ա. Յովհաննէսեանց. բառգիրք ռուսերէնից-հայերէն։ 1888.

41) Վ. Ա. բառգիրք լատիներէն և օտարազգի դարձուածքների։ 1911.

Կրճատումների նշանակութիւնը։

Անգ., անգլիերէն։	*Յուն. յունարէն։*
Արաբ.. արաբերէն,	*Շէդ., շէդերէն։*
Դան., դանիերէն։	*Շօտլ., շօտլանդերէն։*
Եպ., եպօներէն։	*Ունգ. տես հունգ.։*
Երբ., երբայերէն. հին հրէական լեզուն։	*Չէխ., չէխերէն.*
	Չէրք., չէրքեզերէն։
Թաթ., թաթարերէն։	*Չին., չինարէն։*
Թուրք., թուրքերէն։	*Ռուս., ռուսերէն։*
Իսպ., իսպաներէն։	*Սանսկ., սանսկրիտ։*
Իտալ. իտալերէն։	*Սերբ., սերբերէն։*
Լատ., լատիներէն։	*Սլաւ., Պլաւօներէն։*
Լեհ. լեհերէն։	*Վրաց., վրացերէն։*
Հայ, հայերէն։	*Տաճկ., տաճկերէն։*
Հնդ հնդկերէն։	*Փոքթ., փորթուգալերէն։*
Հունգ. հունգարերէն։	*Քաղդ., քաղդիերէն։*
Հոլ., հոլանդերէն։	*Քրդ., քրդերէն։*
Մօնղ., մօնղօլերէն։	*Ֆր., ֆրանսերէն։*

ՄԻՏՔԸ ԱՂՃԱՏՈՂ ՎՐԻՊԱԿՆԵՐ

որոնք, խնդրում եմ, զործածելուց առաջ սրբագրել։

Երես.	Որ խօսքի բացատրութեան մէջ։	Տող	Տպւած է.	Պիտի լինի։
7	Ալէմդար	4—5	ձի-Ակատաբ...	ձիակատաբ...։
8	Ալէգրօ	3	ալլէգրէտտո	ալլէգրէտտո
8	Ալլօդ	4—5	Ալէօդը	ֆէօդը
10	Ակտիվ	8	և բրնա	երբ նա
12	Ինքը բառը		Աղզ Լի	աղգօմի
13	Ամֆիտռիա	2	յանցաւորնեըի	յանցանքնեըի
»	»	3	յանցանքնեըի	յանցաւորնեըի
15	Ինքը բառը		Ամնաթէմա	Անաթէմա
23	Ապրիօրի	2	ի յառաջագունէ	ի յառաջագունէ
27	Արբիտրաժ	20-21	տարբերութիւն	տարբերութեան
31	Ինքը բառը		Աւգեանախոռ	Աւգէեան ախոռ
35	» »		բաւամ	բաղամ
36	» »		բալտախին	բալդախին
37	» »		բաշխել	բախշիշ
»	Բահտէօրօզ	3	պարացող	պարապող
38	Ինքը բառը		բանդդա	բանդուրա
42	» »		բէնեֆիկաեան	բէնեֆ...
44	Բիժուտրի	3	Ջարդեղէն	Զարդ...
46	բլամաժ	1	նպիրանք	նպերանք
47	բուգուաբ	3	ոբ	ուբ
49	Բուբժուական	5	քաղքինիական	քաղքենիական
»	Բուբկա	1	տատատով	տատատոկ
»	Բրակ Բրանդմայո Բրաունինգ			Պիտի լինեն 50 հրեսուն բրաունինգ յատոյ
51	Ինքը բառը		Բրոշ	Բրօշ
54	Գաժ	1	վարժ	վարձ
56	Ինքը բառը		գէտան զիալ...	գէղան...
58	Գիգանտ	2	վիշապ, տաերով	վիշապ-ոտերով
»	Ինքը բառը		Գիլտիա, գիլտի	Գիլդիա, գիլդի
60	Գլօբուս	3	Երկրագնտի	Երկրի
63	Ինքը բառը		զօնոզ	զօնդօլ
64	Դաղ	1	զատատատան	Դատատատան
67	Դեսեատինա	4	10,925	109,25
70	Դէկամէրօն	5	բ.	Բ. (Բօկկաչիօն)
70-71	Դէմօնստրացիա	26	Ակընդէմների	ունկընդիրների
79	Դիկտանտ	3	դրւում է	գրւում է

Ա.

Աբա (արաբ.), բրդէ կտորից լայն վերարկու, որ արևելքում են գործածում։

Աբաժուր (ֆր.), լուսամփոփ. լամպի վրայ հագցրած գունաւոր թղթից կամ կտորից մի գոձիք, որը նպատակ ունի լոյսը ամփոփել յատկի տակ։

Աբասանոց = 20 կոպէկանոց պատկեր։

Աբասի (պարսկ.), պարսկական դրամ 4 շահի = 10 սանտիմ = մօտաւորապէս 3 կոպէկ։ Անդրկովկասում ռուսաց 20 կոպէկէ։

Աբբա (իտալ.), աբբահայր. կաթոլիկ վանքի վանահայր։

Աբդալ (արաբ.), մահմեդական շրջիկ կուսակրօն հոգևորական Պարսկաստանում և Հնդկաստանում։

Աբդաստ, աբդէստ, աստաստ (պարս.), մահմեդականների կրօնական լուացումը պէտք, ձեռքերի և դէմքերի աղօթքից առաջ։

Աբդոմիգիա (լատ.), հրաժարումն գահից։

Աբդուղ (պարսկ.), մաճնաչուբ։

Աբէրացիա (լատ.), խոտորումն, լոյսի շեղումը. ճառագայթների անորոշութիւն։ Աստղաբաշխութեան մէջ ա. կոչւում է աստղի առևելոյթ և իսկական տեղի մէջ եղած զանազանութիւնը, որ առաջ է գալիս այն հանգամանքից, որ որոշ ժամանակ է անցնում, մինչև որ լոյսի ճառագայթը իր աղբիւրից մեզ է հասնում։

Արիտուրիէնտ (լատ.), ընթացաւարտ. միջնակարգ դպրոց (գիմնազիա) աւարտած, հասունութեան վկայական ստացած։

Աբիօգենէգիս (յուն.), գործառնաւոր էակի ծագումը անդործարանաւոր նիւթից, անկենսածնութիւն։

Աբլա (արաբ.), մեծ քոյր։ Մայրիկ։

Աբլակատ, աքւօկատ բառի աղաւաղումն է. արհամարհական մտքով փաստաբան,

Աբլօմօվ, ռուս վիպասան Գանչարովի վէպի հերոսի անունը. թոյլ, անեռանդ մարդ, որը իր կեանքի ձևերը փոխելու անկարող է։ *Աբլօմովշչինա*, անվճռականութիւն. թոյլ, անշարժ բնաւորութիւն։

Աբնօրմ (լատ.), հակականոն, անկանոն. շեղած։ Հիւանդոտ. հակառնական։ *Աբնօրմալիթիւնհակառնականութիւն, գարտուղութիւն։*

Աբուտ, ամօթ։ Պատիւ, յարգ։

Աբսէնթ (յուն.), խիստ զօրաւոր օղի է։ Օշինդրի ոգի։

Աբսէնտէիզմ (լատ.), խոշոր կալւածքների կառավարութեան և մշակութեան այն ձևը, երբ կալւածատէրը բացակայ է։ Մասնաւորապէս ա. կոչւում է Իռլանդիայի կալւածատէրերի բացակայութիւնը. սրանք ապրում են Իռլանդիայից դուրս և իրենց հակառակները ծախսում են այլ

երկրներում, յանձնելով իրենց կալւածները կառավարիչների և կալալառուների։

Աբսուրդ (լատ.), անհեթեթ, անպատեհ։ Տխմար, անմիտ, անիմաստ։ Ծիծաղելի։ — Անմիտ եղրակացութիւն։

Աբստինենտ (լատ.), ժուժկալ, չափաւոր։

Աբստրակտ (լատ.), վերացական. այնպիսի հասկացողութիւն կամ մտածողութիւն, երբ առարկայի պատահական, անհատական յատկութիւնները մի կողմ թողած, նրա ընդհանուր, էական գծերի միացումով է գաղափար կազմւում։—*Աբստրակցիա*, աբստրակտ եղանակով գաղափար կազմելը։

Աբսօլուտ (լատ.), բացարձակ, կատարեալ, անպայման, անհրաժեշտ, անկախ, ազատ ամեն մի կապակցութիւնից և կախումից։ —Պայմանաւորութիւնից և սահմանափակումներից ազատ։—Անշրջափելի։ — Տարածութիւնից և ժամանակից անկախ։—*Աստուած*, իբրև յատկենական, անսահման, տիեզերքի հիմնական պատճառ։ —Հակառակը՝ *ըէլատիվ*, *հիպոթէտիկ*։

Աբսօլուտիզմ (լատ.), բացարձակ, անսահմանափակ, միահեծան իշխանութիւն. ինքնակալութիւն, որտեղ միապետի կամքը օրէնք է։—կամայականութեան իշխանութիւն։—Ինքնակալ իշխանութեան ուսմունք։

Աբսօլուտիստ, միահեծան իշխանութեան վերա հիմնւած պետական կազմի կողմնակից։

Աբսօլուտիստական, միահեծան, ինքնակալական, անսահմանափակ իշխանութեան համապատասխան. նրան վերաբերեալ, հակւած, յարած։

Աբրակադաբրա, կախարդական գրութիւն մի կտոր թղթի վրա առանկիւնաձև, որի իւրաքանչիւր կողմի վրա նոյն բառն է կարդացւում. համարւում էր միջոց ջերմախտի դէմ։ —*Անիմաստ*, անմիտ խօսք. դատարկաբանութիւն։

Աբրէժէ (ֆր.), կարճ, սեղմ բովանդակութիւն մի պիտութեան կամ արւեստի։

Աբրէկ (չէչք.), կեանքի բարիքներից հրաժարւած, վրէժի ոգով արած կովկասեան լեռնցի վախճական։

Աբրէշում, *աբրշում*, մեռաքս։

Աբրիկոտին, ծիրանից պատրաստած քաղցրահամ ոգելից ըմպելի։

Աբրօկ, *օբրօկ* (ռուս.) կամ *աբրօշնայա ատատնա*, հողային տուրքը, որ Պետրոս Մեծի ժամանակից սկսած վճարում է պետական գիւղացիութիւնը։—Պետական, ուղևի և այլ հողերից, հանքատեղերից պետական գանձարանի եկամուտը։

Աբօլիցիօն (լատ.), վերացումն, բարձումն որոշ օրէնքի։ Մասնաւորապէս՝ Ամերիկայում ըստրկութեան վերացումը։

Աբօլիցիօնիզմ, ստրուկների ազատագրման նպատակով շարժում։

Աբօլիցիօնիստ, ստրուկների ազատագրութեան կողմնակից Ամերիկայում։ — Ներկայումս իրենց ա. են անւանում հասարակաց տների և «սպիտակ գերեվաճառութեան» դէմ պայքարողները։

Աբօնէնտ (ֆր.), բաժանորդ լրագրի, գրքի և այլն։—Մշտական կամ տեւական առմամբ տեր թատրոնի, ձիաքարշի, երկաթուղու և այլն։—Մի ձեռնարկութեան գրամով մասնակցելու պարտականութիւն յանձն առած մարդ։

Աբօնիմէնտ (ֆր.), բաժանորդագրութիւն լրագրի, գրքի, թատրոնի և այլն։

Աբօրդաժ (ֆր.), նաւերի կըցումը միմեանց։

Աբօրիգէն (լատ.), բնիկ, բնաշխարհիկ. որևէ երկրում հնուց ապրող ժողովուրդը։ Հակառակը՝ *կօլօնիստ*, գաղթական։

Աբօրտ (լատ.), վիժւածք, թերածնունդ։

Աբօրտ (գերմ.), արտաքնոց։

Ազարացիները ապրում են յաճախ արաբները, որոնք իրը թէ սերում են Աբրահամի կնոջ Ագարի-որդի Իսմայէլից. կրում են նաև *Իսմայէլացի* անունը։

Ագենտ (լատ.), գործակալ, ներկայացուցիչ, միջնորդ։—Մի պետութեան ներկայացուցիչը այլ պետութեան կառավարութեան մօտ։

Ագենտ, ածան պրօվակատէօր (ֆր.), գաղտնի ոստիկանութեան գործակալ, որ առիթ է ստեղծում օրէնքի արգելած քաղաքական գործողութիւն անել տալ, ոստիկանութեան գործը դիւրացնելու համար։

Ագիտատօր (լատ.), քարոզիչ մի գաղափարի. գրգռիչ, դէպի մի նպատակ մղող։ *Ագիտատօրական*, քարոզչական, գրգռողական։

Ագիտացիա (լատ.), քարոզ յօգուտ մի գաղափարի. բորբոքումն։ Ուժեղ գրգռումն և մղումն դէպի մի նպատակ։ Բանաւոր և գրաւոր պայքար։

Ագլօմէրատ (լատ.), շիղջ, կոյտ. մի հաւաքածու, որ արտաքուստ ամբողջութիւն է ներկայացնում սակայն առանց օրգանական կապի։

Ագնօզի (յուն.), էջգիտութիւն։ Սոկրատէսի խօսքը. «Ես միայն մի բան գիտեմ, այն է՝ ոչինչ չէգիտեմ»։

Ագնօստիկ, *ագնօստ* կոչւում են ըստ անգլիական բնախուզական դպրոցի (Հուքսլէյ, Սպենսէր, Դարւին) նրանք, որոնք էութեան վերջնական պատճառների մասին ոչինչ չեն կամենում գիտենալ և ոչինչ չեն պնդում, մերժում են ամեն մի գերզգայական հասկացողութիւն։

Ագրար, ագրարային (լատ.), հողային, հողատիրական, կալւածատիրական, երկրագործական։ Ա. հարց, հողատիրական յարաբերութիւնների, գիւղատնտեսութեան վիճակի և ապագայի, մանր և հողազուրկ գիւղացիութեան վերաբերող հարց։ Ա. *շարժում*, հողատիրական յարաբերութիւնները կանոնաւորելու, հողային սեփականութիւն ձեռք բերելու կամ ընդարձակելու ուղղութեամբ եղած խմբական շարժումները. գիւղացիական շարժումներ։ Արևմտեան Եւրոպայում՝ ձգտումն միացնել երկրագործական և գիւղացիական ընկերութիւնները երկրագործութեան ընկած վիճակը բարձրացնելու նպատակով. այդ նոյն նպատակով քաղաքական գործունէութիւն։ Ա. օրէնքներ են, որոնք նպատակ ունեն հողատիրական անհաւասարութիւնը վերացնել սակաւահող և հողազուրկ գիւղացիներին հող բաշխելով։ Աւելի լայն մտքով՝ բոլոր այն օրէնքները, որոնք նպատակ ունեն կանոնաւորել հողատիրական յարաբերութիւնները և պահպանել հողային սեփականութիւնը։

Ագրարիէրներ, Գերմանիայում մի կուսակցութիւն է, որ նպատակ ունի պաշտպանել խոշոր կալւածատիրութեան շահերը. պահանջում է մաքսային հովանաւորութիւն գիւղատնտեսական արդիւնքների, արգելք անասունների ներմուծութեան. երկմետաղեան դրամական սիս-

տէմ (տես բիմէտալիզմ). որոշ միջոցներ մրցակից երկրներ՝ Ամերիկայի, Աստրալիայի և Ռուսաստանի դէմ և այլն։

Ազրարսօցիալիզմ, որ երբեմն նաև *ագրարկօմունիզմ* է ասւում, այն վարդապետութիւնը, որ ժամանակակից անարդարութիւնները և թշառութիւնները համարում է հետևանք միայն այն բանի, որ հողը մասնաւոր սեփականութիւն է։ Ուստի նա պահանջում է հողի կատարեալ պետականացումը, վերացնելով հողի սեփականատիրութեան իրաւունքը. կամ մի այնպիսի հարկ հողատէրերի վրայ, որը հաւասար լինէր հողի ամբողջ հասոյթին-ռէնտային։ *Ա.* դանագանւում է *սօցիալիզմից* նրանով, որ նա չի պահանջում մասնաւոր սեփականատիրական իրաւունքի վերացումը արդիւնաբերութեան բոլոր միջոցների վրայից, այլ միայն հողի, այն էլ ոչ թէ ընկերվարական կարգերում, այլ հէնց այժմ։ Գլխաւոր ներկայացուցիչն է Հէնրի Ջորջ ամերիկացին (1839—97)։

Ազրէգատ (լատ.), մի ամբողջութիւն, որ կազմւել է իր միակերպ մասնիկների լոկ կուտակումից, ինչպէս ցորենի շեղջը, աւազակոյտը։ — *Քիմիկայի* մէջ մարմինները բաժանւում են երեք ագրէգատ վիճակի՝ կարծր հեղուկ և գազային։

Ազրէսիվ (լատ.). յարձակողական, յառաջխաղաց։ Կուսխնդիր։

Ազրիկուլտուր (լատ.), երկրագործութիւն, գիւղատնտեսութիւն։ — *Ազրիկուլտուրային սիստէմ* տես *Քիմիօկրատիզմ*։

Ազրնօմ (յուն.), գիւտական գարգացումով գիւղատնտես։

Ազրնօմիա (յուն.), գիւտական հողամշակութիւն, երկրագործութիւն։

Ազօնի, ազօնիա (յուն.), հոգևարք. մահւան տագնապ. կռիւ մահւան դէմ։

Ադաթ (արաբ.), սովորութիւն, ծէս. կարգ, բարք։ Լեռնցիների այն սովորութիւնները, որոնք օրէնքի բնաւորութիւն են առացել. սովորութեան իրաւունք։

Ադալեմ, արդարադատ։

Ադամադորլմազ (թուրք.), մարդկանցից խուսափող, մարդավախ։

Ադամանդ (յուն.), թափանցիկ, խիտ կարծր թանկագին քար. ալմաստ։

Ադաշ (թուրք.), անւանակիից։

Ադաֆիօ (իտալ.), երաժշտութեան մէջ՝ մեղմ, չափաւոր, կամաց։

Ադեկւատ (լատ.), համապատասխան, կատարելապէս համաձայն, նման։

Ադեպտ (լատ.), մի արհեստի կամ գիտութեան քաջատեղեակ։ — Գիտակ գաղտնաբեռանների. հրաշագործ. ոսկի շինող։

Ադեփսզ (թուրք.), անամօթ։

Ադըմ, ադում (թուրք.), քայլ։ — Երկարութեան չափ թիւրքիայում = $75^3/_4$ սանտիմէտր։

Ադիլօխմա, շաքարահացի մի տեսակը։

Ադիտանտ (լատ.), օգնական, բազկակից սպայ, զօրքի հրամանատարին իբր օգնական տրւում է նրա դիւանական գործերը հոգալու և ծառայական պարտականութիւններին ջոկացելու։

Ադիո (ֆր.), ճիաս բարև, հրաժարական ողջոյն (*Աստծու մօտ, Աստւած օգնէ*)։

Ադ հօկ (լատ.), միայն այս դէպքի համար, այս նպատակով։

Ադմինիստրացիա (լատ.), վարչութիւն, վարչական պաշտօնէութիւն։

Ադմինիստրատիվ արատ, վարչական կարգով, առանց նախնական դատարանական քննութեան։

Ադմինիստրատօր, վարչական անձն. կառավարիչ։

Ադմիրալ (արաբ).. ծովակալ. ծովային զօրքերի կամ նաւատորմիղի հրամանատար։

Ադրբէջան, *Ատրպատական*։

Ադրէս (ֆր.), հասցէ։ — *Ուղերձ*։ — *Ժողովրդական ներկայացուցչութեան — պառլամէնտի դիմումը միապետին*։

Ադրէսատ (ֆր.)., հասցէատէր. որի անունով նամակ կամ մի բան է ուղարկւում։ — Այն անձը, որի անունով փոխանակագիր կամ մուրհակ է տրւած։

Ադրէսանտ (ֆր.), հասցէն գրողը, նամակագիրը։—Մուրհակ տւող անձը, որը երբեմն նաև մուրհակում նշանակում է, թէ ում պիտի դիմել վճարման անկարողութեան դէպքում։

Ադրէտ (ֆր.), ճարտար. ձեռնավարժ։

Ադօկատ (լատ.), փաստաբան։

Ադօնիս, յունաց դիցաբանութեան մէջ՝ մի գեղեցիկ պատանի, որին սիրում էր Վենուսը։ Առհասարակ գեղեցիկ տղամարդ։

Ադօպտացիա (լատ)., որդեգրութիւն։

Ադօրացիա (լատ.), պաշտօղութիւն, չափազանց մեծ յարգանք. աստւածացումն։—Հռովմայ պապի ոտքը համբուրելու ծէսը։

Ազա (արաբ.), ժողովի անդամ։

Ազաղամա (թուրք.), ազատագրւածը։—*Արտօնագիր*։

Ազան, Էզան (արաբ.), մզկիթի աշտարակից մուէզզինի հրդը, որով հաւատացեալներին աղօթքի է կանչում։

Ազապ (թուրք.), կոյս, ամուրի, չամուսնացած։

Ազապբաշի (թուրք.), ամուրացած. հարեմների ժամանակ ամուրիներից աւագագոյնը, որը խնջոյքում յատուկ պատիւներ է վայելում։

Ազար, ցաւ, հիւանդութիւն։— *Անասունների համաճարակ*։ — *Ընկնաւորութիւն*։

Ազարտ, Հազարտ (ֆր.), դէպք, բաղդ։—*Բորբոքւած վիճակ*։—*Ա. խաղեր*, թղթախաղի այն տեսակը, որտեղ շահելը կախւած է բերմունքից և ոչ խաղացողի հմտութիւնից։

Ազիատ, ասիացի։ — *Կոպիտ, բռնակալ մարդ*։

Ազիզ (արաբ.), սուրբ։ Թանկագին, հազւագիւտ։ Ինքդոյզ։

Ազիլի (յուն.), իրաւունք, միջազգային իրաւունքի մէջ՝ յանցագործին, գլխաւորաբար քաղաքական, ապաստան տալու իրաւունքը։

Ազիմուտ (արաբ.), հորիզոնի կամարը, որը ամփոփւած է մի աստղի ուղղահայեաց շրջանի և դիտողութեան կէտի միջօրէականի մէջ։

Ազոտ (Թուրք.), կատաղի։

Ազնաւուր (վրաց.), ազնւական. (հայերէն ազնւաւոր բառից)։

Ազրայիլ (արաբ.), մահմեդականների հաւատալիքով՝ մահւան հրեշտակը, որ մարդի վերջին շունչն առնում է։—*Կարիճ*։

Ազօթ (յուն.), բորակածին։

Ա՛էր, աէր (յուն.), օդ. եթեր։

Աէրօլիտ (յուն.), երկնքից ընկնող մետաղայ գանկւած. ընկած աստղ։ Տես նաև *մ՛էտէօրիտ*։

Աէրօնաւտ, օդագնաց։

Ա.էրօնաւտիկա (յուն), օդագնացութիւն. թռիչք օդապարիկով, օդից թեթև, գազով լցած գործիքների միջոցով:—Գիտութիւն օդագնացութեան մասին: Տես նաև աւիատիկա:

Ա.էրօպլան (յուն. լատ.), էրօպլան, առանց գազի, լոկ իր կազմուածքի և արագ շարժման շնորհիւ թռչող մեքենայ. օդաչու մեքենայ: Սրանցից նա, որը մի հարթութիւն ունի, կոչւում է մօնօպլան, որը երկու՝ բիպլան:

Ա.էրօստատ (յուն.), օդապարիկ:

Ա.թա-բաբա (թուրք), պապեր, նախնիք: Ա.թաղան-բաբաղան, հնուց, նախնի ժամանակներից, աւանդաբար:

Ա.թարէգ (արաբ.), սիլջուկեան տէրութիւնը կազմող մանր պետութեան իշխան:

Ա.թաման տես ատաման:

Ա.թար, քակոր. անասունների աղբից պատրաստած վառելիք:

Ա.թար (արաբ.), փերեզակ. մանրավաճառ:

Ա.թէիզմ (յուն), անաստուածութիւն, ապաստուածութիւն. աստուածութեան գոյութիւնը ժխտող վարդապետութիւն, որի ուսմունքով աշխարհը գոյութիւն ունի անկախ աստուածութեան սկզբունքից, ինքն իրեն և իրենից:

Ա.թէիստ, անաստուած. աթէիզմի դաւանող:—Աթէիստական անաստուածային, աստուածամերժ:

Ա.թէնաս կամ Ա.թէնաս Պալլաս, հռովմայեցոց Մինէրւան, յունաց աստուածուհին, Զեւսի դուստրը, որ կուռ վհնավառւած դուրս էր թռել նրա գլխից. իմաստութեան, գեղեցիկ արուեստների, պատերազմական քաջութեան և խելօքութեան աստուածուհին. Ա.թէնքի հովանաւորը և պաշտպանը:

Ա.թլէտ (յուն.), ըմբիշ, ըմբշամարտիկ. ուժեղ մարդ, որ դժւարին մարմնամարզական խաղեր է անում:

Ա.թլազ (արաբ.), ողորկ, փայլուն մետաքսէ կտոր:

Ա.թուրմա, խաղ իրար վրայից ցատկելով:

Ա.ժան (փր.), ոսոխական, քաղաքապահ: Տես ազէնտ:

Ա.ժդահա, աժդահար (պարսկ.) վիշապ:—Ահռելի, մեծ:

Ա.ժիտացիա (փր.), յուզմունք, սաստիկ բորբոքուիլ:

Ա.ժիո (իտալ.), վոզի այն քանակութիւնը, որ վճարւում է իբրև զանազանութիւն մի տոկոսաբեր արժէթղթի կամ դրամատեսակի իրական և անւանական արժէքների մէջ:

Ա.ժիոտաժ (փր.), արժէթղթերի առևտուր, որի նպատակն է օգուտ ստանալ ժիոից, իրական և անւանական արժէքի տարբերութիւնից: Ա. կատարւում է սովորաբար անմաքուր ճանապարհով, սուտ լուրերով և գների արհեստական բարձրացումով և գցելով:

Ա.ժուր գործւածք (փր.), ծակոտկէն գործւածք, ձեռագործ:

Ա.լ (թուրք.), վարդագոյն կարմիր:

Ա. լա, ալա (փր.), բառերի սկզբում դրւելով նշանակում է նմանողութիւն, հետևողութիւն:

Ա.լաբաղդ, ալաբաղդի (թուրք.), կարմրախէտ ձուկ:

Ա.լաբաստր (յուն.), նուրբ սեռակի գաճ, կարծր, որ յղկւում է. նրանից պատրաստում են արձանիկներ և այլ զարդեր:

Ա.լազիօր (փր.), երկու գնդակով բիլիարդախաղ:

Ա.լաթուրքա, թուրքական տարազով:—Թիւրքական ժամը:

Ա.լամ, ալէմ (արաբ.), բոլոր. ամբողջ:

Ա.լայ (թուրք.), զօրք, բանակ:—Բազմութիւն:

Ա.լայլի, թիւրքիայում կոչւում են այն սպանները, որոնք առանց զրոյցական կրթութիւն առնելու, զինուորութիւնից են բարձրացել իրենց աստիճանին:

Ա.լայ-մնդալայ, բոլորովին, ամբողջապէս. ընդամենը:

Ա.լան-թալան, յափշտակութիւն, կողոպտուիլ:

Ա.լա տարտար, թաթարների ձևով, միսը կէս հում, կամ բոլորովին հում կերարուը:

Ա.լաչուխա, հարուստ վրան թափառական ցեղերի:

Ա.լաջա, մետաքսի կտոր գոյնզգոյն շերտերով:

Ա.լարմ (փր.) կոչ, ազմուկ, հաւար:—Անսպասելի յանկարծական դիմակոչ:

Ա.լարմինա, ազմկարար:

Ա.լաֆ (պարսկ.), բոց:—Անասունների կերակուր:

Ա.լաֆրանգա (իտալ.), եւրոպական. եւրոպական հագուստով:

Ա.լբիոն, հռովմայեցիների արեւած անունը Մեծ Բրիտանիային. այժմ իբրև բանաստեղծական կոչւում:—Խորամանկ Ալբիոն սեւում է անպիսական քաղաքականութեան մասին:

Ա.լբինիզմ (լատ.), հիւանդութիւն է, որի հետևանքն է լինում մազերի և մորթի գունազրկութիւնը, սպիտակելը, իսկ ծիածանի թաղանթի կարմրութիւնը. լոնամորթութիւն:

Ա.լբինօս (իսպ.), ալբինիզմով բռնւած մարդ, սպիտակամազ և սպիտակամորթ. լոնամորթ:

Ա.լբոմին (լատ.), սպիտակուցային նիւթ կենդանական և բուսական արտադրութիւնների մէջ:

Ա.լբօմ, ալբում (լատ.), տետրակ՝ չըգրւած թղթից յիշողութիւններ, տարբագրութիւններ հաւաքելու համար: Կամ հատ թղթից յատուկ պատրաստած նկարներ և լուսանկարներ մէջը հագցնելու համար:

Ա.լգեբրա, ալջեբրա (արաբ.), հանրահաշիւ, գրահաշիւ. մաթեմատիկական առարկայ է, որ գործ ունի ընդհանուր մեծութիւնների հետ, որոնք նշանակւում են տառերով:

Ա.լդօշ (գեր.), աշխարհիս բոլոր գերմանացիների շահերը պաշտպանող մի միութիւն, որ հիմնւել է Գերմանիայում 1891 թւին. ձգտում է բոլոր գերմանացիների մէջ առաջ բերել ցեղական և կուլտուրական ընդհանրութեան գիտակցութիւն. հովանաւորում և պաշտպանում է գերմանական տարրերը Ունգարիայում, Աւստրիայում և այլն. աշխատում է ձեռք բերել գաղութներ գերման գաղթականների համար և մեծացնել գերմանական նաւատորմիղը:

Ա.լէմ տես ալամ:

Ա.լէմանիստներ կոչւում էր «Սօցեալ յեղափոխական բանւորական կուսակցութիւնը» Փրանսիայում իր պարագլուխ Ալէմանի անունով, հիմնւած 1890 թւին, որը այժմ միացել է ընդհանուր ս. կուսակցութեան: Ա.-ը անջատւեցին մարքսիստներից և կազմեցին զուտ բանւորական կուսակցութիւն առանց մտաւորականութեան. գործելակերպն էր ընդհանուր գործադուլը:

Ա.լէմդար (արաբ.), տիտղոս այն քառասուն արանց, որոնք կրում են Մահմէդի սուրբ դրօշակը Սուլթանի պալատում ծիսակատարութեան ժամանակ:

Ա.լէմ դունիա, արար աշխարհ:

Ա.լէյ, ալէյա (փր.), ծառուղի:

Ա.լէյքում սալամ (արաբ.),

մահմեդական ողջոյնի պատասխանը։

Ալէքսանդրեան տես աղէքս...

Ալիանդր տես օլիանդր։

Ալիանս (ֆր.), դաշն, դաշինք, նիզակակցութիւն պետութիւնների մէջ։

Ալիանս իզրաէլիտ (ֆր.), հրէական դաշն. 1860 թուին Պարիզում հիմնած մի ընկերութիւն է, որ տարածւած է ամբողջ աշխարհում և նպատակ ունի պաշտպանել հրէութիւնը, բացում է դպրոցներ արևելքում, տարածում է արհեստ և երկրագործութիւն հրէաների մէջ, օգնում է նրանց կարիքի դէպքում և հալածանքների ժամանակ։

Ալիբի (լատ), այլուր. իրաւաբանական և դատարանական լեզուով՝ մեղադրեալը ապացուցում է իր ալիբին, երբ պարզւում է, որ յանցանքի կատարման րոպէին նա մի այլ տեղ էր գտնւում։

Ալիզատօր (իսպ.), ամերիկական կոկորդիլոս։

Ալիզարին (իսպ.), տորոնի արմատից պատրաստած կարմիր ներկ։ Նաև նոյն նիւթից թանաք։

Ալիշ-վերիշ (թուրք.), առուտուր

Ալլահ (արաբ.), Աստուած. ճշմարիտ Աստուած։

Ալլեգրի (իտալ.), վիճակախաղ պարահանդէսի կամ դիմակահանդէսի ժամանակ։

Ալլեգրո (իտալ.), յորդոր, զւարթ երգ կամ նւագ—*Ալլեգրո, ալլեգրետտո, ալլեգրետտինօ*, իրարից աստիճանաբար աւելի դանդաղ չափ։

Ալլեգորիա (յուն.), այլաբանութիւն. այլաւսցութիւն, մի պատմւածք, նկար կամ քանդակ, որի էութիւնը ոչ թէ նրա արտաքուստ երևացող կերպարանքի մէջ է, այլ նրանում փոխաբերաբար արտայայտած ներքին իմաստի։

Ալպիտէրացիա (լատ,), նոյնանհնչիւնութիւն սկզբնական բազաձայնների. յանգի մի ձևը, որը հնում տարածւած էր գերմանական ժողովրդների մէջ։ Օր. «Mann und Maus, Land und Leute, Wind und Wetter, Kind und Kegel. *ռուսերէն՝* Бога браней благодатью. «*Սաբի սինձը սրտով սիրածին կըտամ*»։

Ալկօհօլ, ալկօլ (արաբ.), գինու ոգի, սպիրտ։

Ալկօհօլիզմ, ալկօլականութիւն, ոգելից խմիչքների չափազանց գործածութիւնից առաջ եկած հիւանդոտ վիճակ։

Ալկօհօլիկ ալկօլամոլ, արբեցող, գինեմոլ. ոգելից ըմպելիների անչափ գործածութիւնից քայքայւած առողջութիւն ունեցող։

Ալկօվ (արաբ.), անկողնասրճի։ Սենեակի ներս ընկած մի մասը, ուր անկողինն է դրւում։

Ալկօրան տես կօրան։

Ալհամբրա (արաբ.)։ Արաբական (մաւր) թագաւորների պալատը Գրանադայում (Իսպանիա)։

Ալհինա կամ հինա (արաբ.), մի տեսակ արմատից պատրաստած կարմիր ներկ, որով արևելքում ներկում են մազերը և ձեռքերը։

Ալլումինիում, ալլումինիյ (լատ.), արծաթագոյն թեթև մետաղ է. չի ժանգոտում և գործ է ածւում այլ և այլ նպատակների համար։

Ալլօդ (լատ.), միջնադարեան հողային սեփականութիւն, որ ժառանգաբար անցնում էր սերնդից սերունդ. այն ինչ *Ֆէօդը* տրւում էր միայն օգտւելու համար որոշ ծառայութեան փոխարէն։

Ալմա մատէր (լատ.), սնուցանող մայր. պատւանուն համալսարանի։

Ալմանախ (արաբ.), ժամանակացոյց, տարեգիրք, օրացոյց։ —*Տարեկան մի անգամ պարբերաբար հրատարակւող շատ ժողովածուներ կրում են այդ անունը։*

Ալմաստ, ալմազ, էլմաս (պարսկ.), աղամանդ (տես.)։ —*Ապակի կտրելու գործիք, որի ծայրը ալմաստ է հագցրած։*

Ալմ էնդէ (գերմ.) գերմանական երկրներում համայնական անառան, արօտ։

Ալուչա, ալչա, սալորի մի տեսակը։

Ալչաք, ստորաքարշ։

Ալչու, վէգի մի կողմը, երբ նա կանգնած է, ալչու կողմը վերևն է լինում։ «Ճանս ալչու է»—գործս յաջող է։

Ալպարի (իտալ.), նոյնագին. երբ օտար դրամի կամ արժեթղթի անւանական արժէքը նոյնն է, ինչ որ նրա ընթացիկ գինը, առանց աժիո։ Աւելում է նաև պարի։ Տես կուրս։

Ալտ, ալտօ (իտալ.), երաժշտութեան մէջ՝ երկրորդ ձայն։ Կանացի կամ մանկան ձայն միջակ բարձր տօնով։

Ալտէր էգօ (լատ.), երկրորդ ես, միւս ես։—*Տեղապահ, փոխարինող։*

Ալտերնատիվ (լատ.), կամ այս, կամ այն. մի այնպիսի վիճակ, երբ մարդ երկու հնարաւորութիւնից միայն հարկադրւած է ընտրել։—*Այնպիսի երկու դատողութիւն, որոնցից մէկը կարող է միւսի տեղ դրւել, առանց որ դրանից միտքը փոխւի։*

Ալտրուիզմ (լատ.), այլասիրութիւն. մարդասիրութիւն. անշահախնդիր ինքնամոռացութիւն Ըստ Օգիւստ Կոնտի՝ դէպի այլ մարդիկ ունեցած սիրուց բղխած մտածողութեան և վարւեցողութեան եղանակ։ Հակառակը՝ *էգօիզմ*—*եսականութիւն։*

Ալտրուիստական. այլասիրական։

Ալւալա, գոյնզգոյն, նախշուն։

Ալան, պատւական. ազնիւ. աւում է խաղողի գոյնզգոյն, լաւ տեսակների մասին։

Ալք (արաբ.), յաւերժահարս, ջրային ոգի։—*կախարդ։*

Ալքիմիա (արաբ. յուն). կարծեցեալ արհեստ՝ հասարակ մետաղները ոսկի դարձնելու իմաստութեան քարի միջոցով։ Քիմիայի խորհրդաւոր սկիզբը միջին դարերում։ Գաղտնալի բնագիտութիւն։ Ոսկեփոխութիւն։

Ալքիմիկոս, ոսկեփոխ, ոսկի շինող։

Ալէ տես հալէ։

Ալֆաբէտ (յուն.), այբուբէն։

Ալֆա և օմէգա (յուն.), յունական այբուբէնի առաջին և վերջին տառերի անուններն են. նշանակում է՝ սկիզբը և վերջը, ինչ կայ չկայ. ամբողջապէս։

Ալֆաւիտ տես ալֆաբէտ։

Ալֆօնս անարգաբար կոչում են այն տղամարդկանց, որոնք ապրում են կանանց հաշւով իբրև նրանց սիրեկան։

Ախատ (յուն.), ակատ. դանազան որձաքարերի խառնուրդից կազմւած մի քար է, որ գործ է ածւում իբրև զարդարանք։

Ախար, ախըր (արաբ.), վերջ։ —*Ոչ ապաքէն։*

Ախմախ (արաբ,), տխմար. յիմար։

Ախտուն, մահմեդական աւազ հոգևորական։

Ախտա, նեղքինացրած (ձի)։

Ախտարր (պարսկ.), տոպրակ։ —Ա. անել, մեկի տաղը գըտնել աստեղագիտական հաշիւներով։

Ախտանա, ախբանակա (ռուս), Ռուսաստանում այսպէս կոչւած պահպանական բաժանմունքը. ոստիկանութեան այն մասը, որ յատուկ պարտաւորութիւն ունի հետամուտ լինելու քաղաքական յանցանքներին և մանաւանդ կայսրի անձնական ապահովութիւնը պահպանելու։

Ախտո (պարսկ.), գոմ, մսուր։

Ակադեմիա (յուն.), ճեմարան, բարձրագոյն դպրոց, գիտական կաճառ։ Գիտնականների կամ արուեստագէտների միութիւն։

Ակադեմ իական, ճեմարանական, համալսարանական։

Ակադեմիկոս, ակադեմիկամ ակադեմիատ. ճեմարանական. գիտական կաճառի կամ միութեան պատկանող. ակադեմիայի անդամ։ Կաճառորդ։

Ակացիա (յուն.), 20—25 մետրը բարձրութեամբ ծառ, սպիտակ հոտաւէտ ծաղիկներով. կակիա։—Աբարական խէժ արտադրող մի բոյս։

Ակեֆալիա (յուն.), անգլխութիւն։—Անղեկավարութիւն։

Ակլիմատիզացիա (լատ.), կլիմային վարժեցնելը, նոր պայմաններին սովորեցնելը։

Ակուլիատ տես օկուլիատ։

Ակումուլատոր (լատ.), էլէքտրական զօրութիւն կուտակող մեքենայ։

Ակումուլացիա (լատ.), կուտակումն։

Ակուշերկա (ֆր. ռուս.), մանկաբարձուհի, տատմէր։

Ակուշէօր (ֆր), բժիշկ մասնագէտ կանանց հիւանդութիւնների, մանաւանդ ծննդաբերութեան։ մանկաբարձ։

Ակվէլլանդ (գերմ.), սպիտակ կամ կարմիր երիվից հիւս, որ որոշ պաշտօնի զինուորականներ և ժանդարմներ կրում են մի ուսից կախած։

Ակվեատար (ֆր.), գլխաւոր նիւթի լրացուցիչ զարդարանքներ։

Ակսիօմա տես աքսիօմա։

Ակսիոն դիրէկտ (ֆր.), անմիջական կոիւ, ուղղակի ներգործութիւն. ֆրանսիական յեղափոխական սինդիկալիզմի գործելակերպն է դասակարգային պայքարում՝ գործադուլներ, ամբոխարար ցոյցեր և այլն։

Ակուստիկա (յուն.), ձայնաբանութիւն, ձայնագիտութիւն. գիտութիւն ձայնի և լսողութեան մասին։

Ակուտ (լատ.), սուր, կտրող, սաստիկ, ծակող։—Ա. հիւանդութիւն, արագութեամբ վճռական բնաւորութիւն ստացող հիւանդութիւն։

Ակտան տես ակտէնա։

Ակտ (լատ.), գործ, գործողութիւն. գործունէութեան արտայայտութիւն։ — Թատրոնական գրւածքի գործողութիւն, արարած։—Նկարչութեան մէջ՝ կենդանի մօդելի բռնած դիրքը և այդպիսի նկարներ։—Պաշտօնական գործերի վերաբերեալ գրութիւն։ — Հրապարակային գործողութիւն. հանդէս։

Ակտեաբրիատ տես հոկտեմբերեան։

Ակտէօր (լատ.), դերասան։

Ակտիվ (լատ.), գործօն, ներգործական. գործունեայ։—Ծառայութեան մէջ։—Ա. ընտրողական իրաւունք, կընտրակից ընտրելու իրաւունք, այն ինչ պասիվը՝ ընտրելունն է։—Ա. առևտուր կոչւում է մի երկրի առևտրական վիճակը, ե րբ նա աւելի մեծ դումարի ապրանք է արտահանում, քան ներմուծում է, այն ինչ պասիվը հակառակն է։ Տես պասիվ։

Ակտիվա, կարողութիւնը դրամով կամ կանխիկ դրամով արտայայտած։ Ա. եւ պասիվա, ել և մուտքի կշիռ։

Ակտիվիտէտ (ֆր.), ներգործելու ընդունակութիւն. գործօնութիւն. գործօն վիճակ։ Հակառակը՝ պասիվիտէտ, կրաւորականութիւն։

Ակտուէլ (ֆր.), այժմէական, ընթացիկ. ներկայումս գործող, ժամանակակից։

Ակր, էկր (անգլ.), հողի չափ Անգլիայում, և հիւսիսային Ամերիկայում, որ հաւասար է 4047,6 քառակուսի մէտր.

Ակրօբատ, ակռաբատ (յուն.), լարախաղաց. օդի մէջ թռիչքներ և պարոյներ գործող արուեստագէտ։

Ակրօպօլիս (յուն.), միջնաբերդ, մանաւանդ Աթէնքինը։

Ակրօստիխոն, ակրօստիխ (յուն.), այնպիսի ոտանաւոր, որի տողերի սկզբնատառերից կամ վերջատառերից բառեր, անուններ կամ նախադասութիւններ են կազմւում։

Ակցէնտ (լատ.), շեշտ, արտասանութիւն. բարբառի առանձնայատուկ շեշտ։

Ակցէպտացիա (լատ.), յանձնառութիւն. մուրհակի արժէքը վճարելու պարտականութիւն։

Ակցիա (ֆր.), բաժնեթուղթ. որևէ անտեսական ձեռնարկութեան դրամագլխի որոշ բաժինը, որը միևնոյն ժամանակ այդ ձեռնարկութեան մէջ անդամ լինելու իրաւունք է տալիս. նաև այդ բաժնի վճարումը հաւաստող թուղթը։

Ակցիոներ, ակցիոներնցիա (լատ.), մի իրի արտաքին, անկարևոր, պատահական յատկութիւնը։ Հակառակը՝ էսէնց, էսէնցիա։ Ըստ ոմանց՝ առբատանցի տարբեր երևոյթը։

Ակցիզ (լատ.), անուղղակի հարկերի այն տեսակն է, որ մեծագոյն մասամբ դրւում է երկրի ներսում արդիւնաբերւած ապրանքների վրա, ինչպէս լուցկու, աղի, ոգելից ըմպելիների, ծխախոտի և այլն։ Երբեմն այս անունով կոչւում են բոլոր անուղղակի հարկերը։

Ակցիոն (լատ), գործողութիւն, գործունէութիւն, ներգործութիւն։

Ակցիոներ, որևէ անտեսական ձեռնարկութեան ակցիայի սեփականատէր. բաժնետէր։

Ակցիոներական ընկերութիւն, բաժնետիրական ընկերութիւն. ակցիաներով կազմւած հիմնական դրամագլխի վրա կառուցւած մի անտեսական միութիւն, որի անդամները հաւասարաչափ բաժնեվճարներով մասնակցում են հիմնական դրամագլխի մէջ, վաստակից բաժին են ստանում. ձեռնարկներին աւելի չեն մասնակցում, քան իրենց բաժնեվճարն է. և ընկերութեան պարտատէրերի առաջ անձամբ, իրենց ունեցւածքով պատասխանատու չեն։

Ակւարէլ, (ֆր.) ջրանկարչութիւն, ջրաներկով նկարած պատկեր. ջրանկար։

Ակւարէլիստ, ջրաներկերով նկարող նկարիչ. ջրանկարիչ։

Ակւարիում (լատ.), մի ապակեայ աւազան, որի մէջ պահւում են ջրային բոյսեր և կենդանիներ գիտական կամ զարձական նպատակով։ — Ջրային կենդանիների և բոյսերի թանգարան։

Ակոմպանիմէնտ (ֆր.), ձայնակցութիւն, նւագակցութիւն.

երգակցութիւն. երաժշտական գործիքով ձայնակցութիւն մի առանձին երգի նւագածութեան։

Ակօմօդացիա (լատ.), յարմարուն, միջավայրին համակերպուն։

Ակօրդ (ֆր.), ներդաշնակութիւն. մի քանի ձայների ներդաշնակ համահնչիւն։ Փոխաբերաբար՝ համերաշխութիւն, համաձայնութիւն։—*Ակօրդով աշխատանք*, կատրոյ և ոչ օրավարձով։

Ահասէր (երբ.), թափառական հրէայի անունը։ Յաւիտենական թափառող շրջիկ։

Ահէլ, ծեր, տարիքաւոր։

Ահուրամազդա տես Որմիզդ։

Ահրիմ կոչւում էր մի կուսակցութիւն Թիւրքիայի պառլամէնտում, կազմած ոչ միայն Թիւրքերից, այլև ուրիշ ազգերի ներկայացուցիչներից, դիմադրելու համար Միութեան և Յառաջադիմութեան կոմիտէին։ Նրա ծրագրում կար բոլոր ազգերի հաւասարութիւն, ապակենտրոնացում, ազգերի համեմատական ներկայացուցչութիւն թէ պառլամէնտում և թէ պաշտօնէութեան մէջ։ Այս կուսակցութիւնը չախչախւեց շնորհիւ իր մի սխալ քայլի մարտի մէկի յայտնի հակաիթթիհատական շարժման մէջ, որովհետև նա միամտաբար միացել էլ հակասահմանադրական տարրերի հետ։

Ահրիման, Ահրիման զրադաշտական կրօնի չարի, խաւարի աստուածը, որ շարունակ պայքարում է *Որմզդի* հետ։

Ահաւ, որպիսութիւն, առողջութիւն։

Աղա (Թուրք.), տէր, պարոն։ —*Գիւղատէր, կալւածատէր։*

Աղազաղէ, ազատանի, ազնւական։

Աղալար, Թուրք ազնւական (ռուս.), պատերազմական հակումներով կին, հերոսուհի։ Ա. կոչւում էին Ասիայի մի առասպելական ժողովրդի պատերազմասէր կանայք, որոնց աջ ստինքը վերացրած էր, որպէսզի աղեղը լարելուն չըխանգարէ.—*Հեծեալ կին։*

Ամալգամա (արաբ.), մնդիկի և մետաղի խառնուրդ, որով ծածկում են էլէքտրական մեքենայի շփուող մասերը էլ. ստանալու համար։

Ամա՛ն (արաբ.), այլ և այլ զգացմունքի բացականչութիւն։ *Աման կանչել*, յաղթողի ողորմածութեան ապաւինել։

Ամանաթ, էմանաթ (արաբ.)։ աւանդ, գրաւ։ Պատանդ։

Ամանդման (ֆր.), սրբագրութիւն, օրէնագիծը շտկող փոփոխութիւն։ Փոփոխութեան առաջարկ։

Ամատէօր (ֆր.), սիրող, ոչ մասնագէտ։

Ամարաթ տես *իմարէթ*։

Ամբար (պարսկ.), պահեստ, շտեմարան։

Ամբարդար (պարսկ.), շտեմարանապահ, պահեստապետ։

Ամբիցիա (լատ.), պատուասիրութիւն, պատուախնդրութիւն, ինքնասիրութիւն։

Ամբուլատօրիա (լատ.), հիւանդանոցի այն մասը, ուր ընդունում են երթևեկ հիւանդներին։

Ամբրոսիա (յուն.), աստուածների կերակուրը, անմահութեան կերակուրը յունաց դիցաբանութեան մէջ.—Անուշահոտ բալասան, օծանելիք։

Ամէթիստ (յուն.), որձաքարի մի տեսակը բաց մանիշակագոյն, գործ է ածւում իբրև զարդ, հնում ծառայում էր իբրև կախարդական միջոց արբեցութեան դէմ։

Ամէլիէ (տաճկ.), խճուղիների տուրք Տաճկաստանում, որ առնւում է չափահաս ազգաբնակութիւնից կամ փոխարինւում է անձնական աշխատանքով ճանապարհների շինութեան համար։

Ամէլիօրացիա տես մէլիորացիա։

Ամէն (երբ.), եղիցի, Թող կատարւի։

Ամէրիկանիզմ, ամերիկեան անգլիերէնի առանձնայատկութիւն։

Ամէրիկանկա (ռուս.), տպագրական փոքրիկ ձեռքի մամուլ։

Ամէօբա (յուն.). ամենապարզ գործարանաւոր կենդանիների մի տեսակը, բաղկացած անկազմ մի կտոր լորձունքից, ունի անհաստատ փոփոխուող ձև։

Ամի, հօրեղբայր, քեռի։

Ամիրա, հայ պաշտօնեաների դասը Թիւրքիայում։

Ամիր-նիզամ (արաբ.), զօրքերի հրամանատար. Պարսկաստանում սովորաբար ծառայում է իբրև լոկ տիտղոս մի բարձր պաշտօնեայի։

Ամիւզանտ (ֆր.), զւարճալի։

Ամնիստիա (յուն.), անյիշութիւն յանցաւորների, ընդհանուր ներում. յանցանքների մեծ քանակ խմբական ներում, երբ նրանց յանցանքները իբրև չեզած են նկատւում. ա. լինում է գլխաւորապէս քաղաքական յեղաշրջումներից յետոյ կամ կայսերական որևէ մեծ ոտնի առիթով։

Ամոնիցիա (լատ.), պատերազմական պիտոյքների պաշար։

Ամպլուա (ֆր.), գերատեան կատարած գերի բնաւորութիւնը. ասում են՝ նրա *ա.* է երիտասարդ սիրահար, այսինքն

նա խաղում է այդ բնաւորութեամբ դեր։

Ամպուտացիա (լատ.), անդամահատութիւն. մարմնի որևէ վնասած անդամը կամ վնասակար մասը կտրել հեռացնելը։ (Ոչ՝ անդամահատութիւն, որ *անատոմիան* է)։

Ամոն, ամօր (լատ.). սէր, սիրաբանութիւն։ — Հոմմայիացոց սիրոյ, ուրախութեան և կատակի աստուածը։

Ամօնիակ, ուժեղ հոտով գազ, կազմուած մի մաս բորակածնից և երեք մաս ջրածնից (NH3). նաշատիրի գազ անուշադր, աւշակ, օշակ։

Ամօրտիզացիա (լատ.), պետական արժեթղթերի անարժէք հրատարակումը, երբ պետութիւնը նրանց յետ է գնում շրջանառութիւնից։ — Պարտքը մարելը։ պարտքի վճարումը, երբ նա մաս-մաս է կատարւում իւրաքանչիւր մասավճարի վրա աւելացնելով նաև խնայած տոկոսը, և արագութեամբ է պատահում։—Ա. է կոչւում նաև երբ մի կտոր հող «մեռած ձեռքի» է վաճառւում, այսինքն՝ այնուհետև նրա կրկնավաճառումը անհնարին է դառնում՝ վանքերին, որևէ հոգևոր հաստատութեան, համայնքի, պետական հաստատութեան և այլն։—Պաշտօնական այն յայտարարութիւնը, որով մի կորած պարտամուրհակ, արժեթուղթ և նման բան անզօր է հրատարակւում, որպէսզի ապօրինի տիրապետողը այն չկարողանայ հնարաւորութիւնից ղրկւի։

Ամօրֆիզմ (յուն.), ձևազրկութիւն, անձևութիւն։ Հակառակը՝ բիւրեղացած։

Ամֆիբիա (յուն.), երկակենցաղ. միաժամանակ ջրում և ցամաքի վրա ապրել կարողացող կենդանի, ինչպէս գորտը, կրիան։

Ամֆիբրախիա (յուն.), տաղաչափութիւն եռավանկ ոտերով, որի մէջին վանկը շեշտած է. քողազօտ

Ամֆիթէատր, ամֆիթատրոն (յուն.), շրջանաձև կամ կիսաշրջանաձև հրապարակ, խաղատեղ իրար չհեռից աստիճանարար բարձրացող նստարաններով.

Ամֆիտրիտա (յուն.), ծովային աստուածուհին, Նէպտունի կինը յոյն դիցաբանութեան մէջ. նրան պատկերացնում են խխունջի մէջ նստած, որին ձգում են ծովային ձիեր և ղէլֆիններ։

Ամյամ (թուրք.), ոստիկանութիւն։—Ժամանակներ։

Ամյան, վերին ժողով.—*Մէջլիսը ամյան*, թիւրքիայի պառլամէնտի վերին ժողովը։

Ամյան (թուրք.), յայտնի

Ամյէնախանները Գերմանիայի բանաւորութեան այն մասը, որը ամենից առաջ ընդունեց կարլ Մարքսի վարդապետութիւնը և կազմակերպեց իրրև «Սօցիալ դէմօկրատ բանւորական կուսակցութիւն» 1869 թ.ին Այզէնախ քաղաքում։ Սրանք պայքարում էին բանւորութեան միւս հատւածի դէմ, որ կոչւում էին *Լասսալականները*։ Ձգտում էին միայն բանւորութեան միջոցով և քաղաքական կազմի ոտկատարացումով ազատագրել և ունէին աւելի միջազգային բնոյթ։ Երկու հատւածները միացան Գոթայում 1875 թ.ին։

Ամիլ-մայիլ, զմայլած։

Ամին-ամին (թուրք.), անպէտք, ոչ լուրջ։

Ամյոր (թուրք.), չըկռատած ձի։

Ամն, աշալի—տասանորդի—տուրքը ոչ դրամով, այլ բերքով թիւրքիայում։

Ամնալու (թուրք), մարտինի հրացան։

Ամնաչի (թուրք.), ատաքօս, յորինող։—Հայկազարդ։

Ամյազ, էյյազ, սպասաւոր։

Ամյան, վերնայարկի սենեակ։

Ամնա, մայր։

Ամնաբագիս (յուն.), այս անունով յայտնի են երկու դերեզման՝ 1) Բէկնոֆօնինը 10,000 յոյների մասին, որոնք արշաւեցին ի պաշտպանութիւն Կիւրոս կրտսերի նրա եղբօր դէմ. և 2) Աբրիանինը՝ Ալէքսանդր Մակեդոնացու մասին։

Ամնաբապտիսա, ամնաբապտիստ (յուն.), կրկնակնունք (աղանդաւոր)։

Ամնագրամմ. (յուն.), գրաշրջութիւն. մի խօսքի տառերի կամ վանկերի տեղափոխութիւնից այլ խօսք կազմելը։ Օր. պէտ—տէպ, կաթսայ—սայթակ. ռուսերէն՝ сила —лиса (*ոյժ—աղէս*) пила—липа (*սղոց—լորի*). գերմաներէն՝ Gras—Sarg (*կանաչ խոտ—դագաղ*), Dame—Made (*տիկին—որդ*). ֆրանսերէն՝ Révolution francaise—Un corse la finira—La France veut son roi (*ֆրանսիական յեղափոխութիւն — մի կորսիկացի նրան վերջ կտայ։ Ֆրանսիան ցանկանում է իր թագաւորին*)։

Ամնանթէմա (յուն.) եկեղեցական անէծք, նզովք, բանադրանք։

Ամնափրօնիզմ (յուն.), ժամանակաշրջութիւն, անժամանակութիւն, ապաժամութիւն, ժամանակավրիպութիւն։ Ժամանակագրական սխալ, ժամանակին անհամապատասխան մի երևոյթ։

Ամնեզիզ (յուն.), վերլուծութիւն։ Մի գաղափարի բաժանումը իր յատկանիշների. մի առարկայի կոտորակումը իր բաղկացուցիչ մասերի. նրանի վերլուծութիւնը իր բաղկացուցիչ տարրերի։ Հակադիրը՝ *սինթէզ*—համադրութիւն։

Ամնալիտիկ, ամնալիտիքական, վերլուծական, վերլուծութեան եղանակով կատարուող։

Ամնալօգ, ամնալօգիական (յուն.), նման, համապատասխան, նոյնօրինակ։

Ամնալօգիական եղրակացութիւն աւելում է տրամաբանութեան մէջ այնպիսին, երբ երկու առարկայի մի քանի էական համապատասխանութիւնից եղրակացւում է, որ նրանք միւս կետերում էլ կըհամապատասխանեն, հետևաբար և նրանք հաւասար են կամ նման։

Ամնալօգիզմ, անալօգիական եղրակացութեան ոգանակի գործադրութիւն ճանաչողութեան մէջ։

Ամնակլէօնական. վայելուչ, շնորհալի, քնքուշ, թեթև։ Յոյն բանաստեղծ Ամնակրէօնի (530 թ. Քրիստ. առաջ) անունից։

Ամնամա, արքայախնձոր. հարաւ-ամերիկեան մի բոյսի համեղ և հիւթալի պտուղ։

Ամնիզմ տես օնանիզմ։

Ամոզ (թուրք.), մեծ. խոշոր։

Ամոպէստ (յուն.), հոսավանկ ոտքերով տաղաչափութիւն; երկու կարճ և մի երկար վանկից, վերջաւորդ։

Ամոպլաստիկա (յուն.), բժշկականութեան մէջ՝ կոտրւած ոսկրների վերականգնման արուեստ. առհասարակ մարմնի մի պակաս մասը միւսների միջոցով վերականգնումն։

Ամոտոլիա (յուն.), *Ամոտոլս*, արևածագ արևելք։

Ամոտոմ, ամոտոմիա, աննատոմիայի մասնագէտ. մարմնահատ։

Անատոմիա (յուն.), մարմնահատուածութիւն, անդամահատութիւն, (ոչ անդամահատութիւն-ամպուտացիա). գիտութիւն կենդանական և բուսական մարմնի զանազան մասերի, ձևի և փոխադարձ յարաբերութեան մասին։

Անատոմիական թատրոն, այն շէնքը, ուր անդամահատութեամբ են զբաղւում, կամ ցուցադրած են մոմից շինած մարդկային մարմնամասեր։

Անարխիզմ (յուն.). անիշխանականութիւն. այն հասարակագիտական վարդապետութիւնը, որը ամենակատարեալ հասարակակարգը համարում է այն, որ անհատը ունի ամենալայն ինքնօրէնութիւն, որովհետև միայն կատարեալ ազատութեան մէջ է հնարաւոր անհատի կատարեալ զարգացումը. ուր գոյութիւն չունի որևէ ըստիպմունք, որևէ օրէնք, որովհետև օրէնքը իր մէջ պարունակում է ստիպմունք, հետևաբար և սահմանափակում անհատի ազատութիւնը. ուր բացակայում է ամեն մի հեղինակութիւն, ամեն տեսակ իշխանութիւն։ Հասարակական կազմակերպութեան հիմքը պիտի դրուած լինի ոչ թէ իրաւական ստիպմունքի, այլ ազատ անհատների ազատ դաշնագրութեան վրա, որ ամեն րոպէ կարող է լուծուել, եթէ ընկերութիւնը այդ հարկաւոր գտնէ։

Անարխի, անարխիա, անարշի, անիշխանութիւն. 1840 թուին Պրուդհոնի գործածած անունն է անարխիզմի դաւանած հասարակակարգի համար. Ա.-բառը յաճախ գործ է ածուել նաև իբրև իշխանազրկութիւն, անկարգութիւն, քաոսայնութիւն։

Անարխիսա, անարշիսա, անիշխանական, անարխիզմի վարդապետութեան հետևող։

Անարխոսօցիալիստներ կոչւում են 1905 թուին Ժօքսօր Ֆերիդէբերգի պարագլխութեամբ գերմանական սօցիալ-դեմօկրատիայից անջատած մի խմբակ։ Ա.-ը աննպատակ և անօգուտ են համարում պառլամէնտական գործունէութիւնը և սօցիալիստական կարգերի հաստատման միակ ճանապարհը ընդհանուր գործադուլն են ճանաչում։

Անաֆրօդիտ (յուն.), պաղատուրկ. անընդունակ ծնողութեան։

Ան բլօկ (ֆր.), ամբողջապէս, առանց մասերի քննութեան մէջ մտնելու։

Անգաժըման (ֆր.), հրաւէր։—Դերասանի և առհասարակ արուեստագէտի վարձումը որոշ քանակութեամբ ներկայացումների կամ որոշ պարտականութեան համար։

Անգեալ (թուրք.), արգելք, խոչնդոտ։

Անգլիական հիւանդութիւն տես *բախխոիզմ*։

Անգլիկանական կամ եպիսկոպական եկեղեցի. Մեծ Բրիտանիայի պետական եկեղեցին, որ կառավարւում է երկու արքեպիսկոպոսով և 24 եպիսկոպոսով։

Անգլիցիզմ, անգլիերէնի առանձնայատկութիւն։

Անգլօմանիա. անգլիամոլութիւն. չափազանցրած սէր և ձգտումն ամեն մի բանի, ինչ որ անգլիական է։—*Անգլօման*, այդպիսի ձգտում ունեցող։

Անգլօսաքսներ կոչւում են այժմեան անգլիացիք, որոնք կազմել են Անգլիայի հին բնակիչ կելտերի և եկած սաքսների ու այլ ցեղերի խառնուրդը։

Անգլօֆիլ, անգլիասէր։

Անգլօֆօբ, անգլիատեաց։ *Անգլօֆօբիա*, անգլիատեացութիւն. տեսլութիւն դէպի ամեն բան, ինչ որ անգլիական է։

Անգաման, անհետ։

Անգրո (ֆր.), մեծաքանակ։

Անգրօսիատ, տես *գրօսիատ*։

Անգօրայի բուրդ. Փոքր Ասիայում գտնուած Անգօրա քաղաքի անունով կոչւող այծերի երկար և փափուկ մետաքսակերպ բուրդը, որից պատրաստում են անգօրայի շալը։

Անդազա (թուրք.), էնդէզ, երկարութեան չափ, ոտատաց արշինից մի քիչ պակաս։—Թղթից կտրած ձև հագուստի։—Առակ, օրինակ։

Անդընդում (հայ. պատկ.), անհանգիստ, շարժուն։

Անդրօզին (յուն.) տես *հէլիոթերոպիա*։

Անդրօմանիա, այրամոլութիւն. կնոջ ծայրահեղ սեռական պահանջը։

Անդրօֆօբիա (յուն.), այրավախութիւն. կնոջ զգւանքը արական սեռից։

Անէկդօտ (ֆր.), կարճ, բնորոշ, սրամիտ պատմուածք. յաճախ յայտնի անձնաւորութիւնների կեանքից։—Մանրավէպ։

Անէմիա, անիէմիա (յուն.), սակաւարիւնութիւն, արեան պակասութիւն։

Անէմօլօգիա (յուն.), հոգմատիութիւն։

Անէսթէզիա (յուն.), զգայազրկութիւն. բթութիւն, անզգայութիւն։

Անթարի, էնթէրի (թուրք.), երկար և լայն զգեստ արեւելքում։

Անթիքա (իտալ. *անտիկա*.), անգիւս, հազուագիւտ իր։

Անթրացիտ (յուն.), քարածուխի մի տեսակը, որ այրուելիս

Անթրոպոգենեզիս (յուն.), է առանց ծխի։

Անթրոպոգէնի (յուն.), գիտութիւն մարդի և մարդկային ցեղի զարգացման մասին։

Անթրոպոմէտրիա (յունար.), մարդաստուածագիտութիւն. մարդկային աստուածաբորումը, մարդի աստուածացումը։

Անթրոպոմորֆներ (յուն.), մարդակերպներ. մարդանման կապիկները՝ շիմպանզէ, օրանգուտանգ և գորիլլա։

Անթրոպոլիթ (յուն.), մարդաքար, մարդաքարացում. մարդկային մարմնի կամ նրա մասերի քարացումներ։

Անթրոպոլոգ (յուն.), մարդաբան. մարդաբանական գիտութեամբ պարապող։

Անթրոպոլոգիա (յուն.), մարդաբանութիւն. գիտութիւն մարդի մասին։ Ա. բովանդակութիւնը հասկացւում է լայն կամ նեղ նայած գիտական դպրոցին։ Նրա մասերն են 1) ֆիզիքական ա., որ ուսումնասիրում է մարդին մարմնական կողմից, նրա ծագումը, զարգացման պատմութիւնը, կազմուածքի համեմատութիւնը այլ կենդանիների հետ. 2) հոգեկան ա., որը մարդին ուսումնասիրում է իբրև հոգևոր էակ բնապատմական տեսակէտից. 3) սօցիալական կամ հասարակական ա., որ ուսումնասիրում է մարդի հասարակական կեանքը, երբեմն ա. ըզբաղւում է և ուսումնասիրելով մարդկային կուլտուրան նախապատմական ժամանակում. մարդկային այլևայլ ցեղերի ծագմանխնդիրը։ Կայ նաև ռՕրազիտական կամ բրէական ա., որ ընդունում է, որ յանձագործութեան մարդկային բնութեան [illegible]

ՀԱՅ. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Մ. ՄԵՍՐՈՊԻ ԱՆՎԱՆ
1922

մարդաչափութիւն. գիտութիւն մարդի մարմնի զանազան մասերի համեմատական մեծութեան մասին այլևայլ հասակի, ցեղերի, սեռի մէջ և այլն.—ֆիզիքական անթրոպոլոգիայի մի մասը:

Անթրոպոմորֆ, մարդաձև. մարդի մարմնին կամ մարմնի մասերին նման գարեր, կենդանիներ:—Մարդակերպ կապիկ:

Անթրոպոմորֆիզմ (յուն.), մարդայնացումն, մարդակերպաւորումն. մարդկային յատկութիւնների ներմուծումը բնութեան երևոյթների մէջ:—Աստուածութեան պատկերացումը մարդկային յատկութիւններով օժտուած և մարդկային կերպարանքով:

Անթրոպոմորֆոլոգիա (յուն.), գիտութիւն մարդկային մարմնի ձևերի մասին. մարդաձևաբանութիւն:

Անթրոպոպսալմիզմ (յուն.), մի հայեացք, որ մարդկային յոգերով օժտուած աստուածութիւն է ընդունում, որ կարող է բարկանալ, նախանձել, ուրախանալ և այլն:

Անթրոպոս (յուն.), մարդ:

Անթրոպոցէնտրիկ աշխարհայեացք, մարդակենտրոն ա., որը մարդին համարում է տիեզերքի կենտրոն և նրա զարգացման նպատակ. ամէն բան ծառայում մարդին:

Անթրոպոֆագ, մարդակեր:

Անթրոպոֆագիա, մարդակերութիւն:

Անթրոպոֆոբիա (յուն.), մարդավախութիւն. հոգեկան հիւանդութիւն է, որի արդիւնքն է խուսափումն մարդկային հասարակութիւնից:

Ան ժէնէբալ (ֆր.), ընդհանրապէս:

Անիմալ (լատ.), անասուն, կենդանի:—Անասնական, կենդանական. գազանային, կենդանուն կամ կենդանական մարմնին յատուկ: Հակառակը՝ վեգետատիվ, բուսական:

Անիմիզմ (լատ.), Շտահլի (1660—1734) փիլիսոփայական և բնախօսական ուսմունքը, որով հոգին սկզբունք է կեանքի և կենդանութեան:—Ըստ Տայլօրի՝ նախնական կրօնը, որը հաւատում էր, թէ ոչիներ և գեներ կան բնութեան բոլոր առարկաների մէջ:

Անիմիստ, անիմիզմի հետևող:

Անիմիստ, անխիղճ:

Անիկէտ (ֆր.), մեծաքանակ հարց ու փորձ. բանաւոր կամ գրաւոր ուղղած հարցումներով զանազան հաստատութիւնների և անձնաւորութիւնների ժողոված նիւթը, որ նպատակ ունի տնտեսական կամ մի երևոյթ փաստացի կերպով հաստատել, կամ որևէ վիճակ որոշել: Հարցումները ուղղում են նախապէս միակերպ պատրաստած հարցաթերթերով, որոնց պատասխաններից դուրս են բերւում եզրակացութիւններ:

Անհէսաը, անհաշիւ, անթիւ:

Ան մասս (ֆր.), ամբողջ զանգւածով, մեծ քանակութեամբ:

Աննալներ (լատ.), տարեգիրք. պատմագրքեր. տարեգրութիւններ:

Աննէքսիա (լատ.), մի գաւառի կամ երկրի միացումը մի պետութեան:

Աննոնա (լատ.), տարեկան բերք:—Հին Հռոմում հացահատիկների պետական պաշարը:—Հռոմէացոց պատարերութեան աստւածուհին:

Աննօրմալ տես անօրմալ:

Ան շէֆ (ֆր.), իրրև գլխաւոր:

Անջաղ (թուրք.), հագիւ, միայն:

Անջիզեար (հայ. թուրք.), անգործ:

Անջոման, էնջոմէն (պարս.), ժողով, հաւաքոյթ. յեղափոխական շարժման ընթացքում գաւառական և նահանգական ընտրովի մարմիններ էին Պարսկաստանի քաղաքներում. սրանք հսկում էին կառավարութեան պաշտօնեաների գործողութեանց վրա, խորհրդակցում էին, առաջարկներ էին անում. ճանաչւած էին մէջլիսի կողմից: Ա.-ը վիլայէթի, գաւառական ա., ա-ը այլայէթի, նահանգական ա.:

Անսամբլ (ֆր.), ամբողջութեան մասերի կամ անդամների համապատասխանութիւն:

Անսաս, անձայն, անշշուկ, լուռ:

Անսարի (արաբ.), պաշտպան:—Մահմեդի բարեկամները Մէդինայում, որոնք խոստացել էին նրան պաշտպանել:

Անսիէն ռէժիմ (ֆր.), հին կարգ-կանոնը. ֆրանսիայի պետական և հասարակական կարգը մեծ յեղափոխութիւնից առաջ:

Ան սիւիտ (ֆր.), հերթով. հետևողութեամբ:

Անտագոնիզմ (յուն.), հակամարտութիւն. հակառակութիւն:

Անտագոնիստ, ընդդիմամարտ, հակառակորդ:

Անտակտ տես տակտ.

Անտանդ կօրդիալ (ֆրանս.), սրտագին համաձայնութիւն. ասւում է Ֆրանսիայի և Անգլիայի բարեկամութեան մասին:

Անտարկտիկ (յուն.), հարաւային. հարաւաբևեռային:

Անտի, անտ, խօսքերի սկիզբը դրւած նշանակում է հակառակ, ընդդէմ:

Անտիաթօլիցիսնիստ, հակաազատագրական. տորուկների ազատութեան հակառակորդ:

Անտիարիստոկրատ, հակաարիստոկրատ, ազնւականութեան իշխանութեան հակառակորդ:

Անտիլէմօկրատական (յուն.), հակաղէմօկրատական, հակաժողովրդապետական:

Անտիէտատիզմ, հակապետականութիւն:

Անտիթէզ, անտիթէզիս (յուն.), հակադրութիւն. մի դրութեան հակառակը: Տես դիալէկտիկա և թէզ:

Անտիլօպ (յուն.), յամոյր, պախրայծ. եղջերուների ընտանիքից մի գեղաչէայ կենդանի է:

Անտիսէպտիկա (յուն.), հակաթօլէրային միջոցներ:

Անտիկ, անթիք, (անթիքա), հնադարեան:—Հնութիւն. գեղարուեստի հին արտադրութիւն, մանաւանդ յունական և հռովմէական: Հազւագիւտ իր:

Անտիկրիտիկա (յուն.), քննադատութիւն քննադատութեանց, հակաքննադատութիւն:

Անտիկւար (լատ.), հնադրաւաճառ:

Անտիկւարիատ (լատ.), հնադրավաճառանոց:

Անտի-կօրնլաու-լիգա (անգլ.), Anti-corn-law-leage), հացահատիկների ներքին հակառակ միութիւն. անգլիական գործարանատէրերի մի ընկերութիւն, որ հիմնուեց 1839 թւին Մանչեստր քաղաքում և տարածւեց ամբողջ երկրում. որպէսզի բանւորութեան մտտեսական վիճակը լաւանայ և նա կարողանայ հանդէս գալ իբրև սպառող արդիւնագործական ապրանքների, գլխաւորաբար բամբակեղէն գործւածքների, այդ ընկերութիւնը պահանջում էր վերացնել

այն օրէնքը, որը արգելում էր առանց մաքսի պատասխանատուի հացահատիկներ ներմուծել. նրա կարծիքով մեծ երկրներն էլ իրենց հերթին կը վերացնէին մաքսերը Անգլիայի գործարանական ապրանքների վրայից, և երկուսդէք կը շահէր ազատ առևտուրը: Բանաւորութիւնը արձագանք չունեց այս քարոզին նկատելով, որ հացի էժանանալու հետևանքով գործատէրերը կը պակասեցնեն աշխատավարձը:

Անտիմակքիաւէլ կոչւում է Պրուսիայի թագաւոր Ֆրիդրիխ Մեծի մի գրուածքը ուղղած Մաքիաւէլիի «իշխանը» գրուածքի դէմ: Տես *Մակքիաւէլիզմ*:

Անտիմիլիտարիզմ, հակամիլիտարիզմ, հակառազմականութիւն. մշտական զօրքը միլիցիայով փոխարինելու ուղղութեամբ շարժում: Տես *Միլիտարիզմ*:

Անտիմօրալիզմ (յուն. լատ.), հակաբարոյականութիւն. մի ուսմունք, որ պնդում է, թէ մարդկային գործողութիւնները կարիք չունեն բարոյական պահանջների, բարու և չարի հասկացողութիւնները ի հաշիւ առնել:

Անտինացիոնալ (յուն. լատ.), հակազգային. ազգի, ժողովրդի շահերին հակադիր. հակաժողովրդական, ազգազրկիչ.

Անտինոմիա, անտինոմի, (յուն.), հակօրինութիւն. օրինաճարտ: Հակաժարտութիւն երկու օրէնքի կամ երկու եզրակացութեան, որոնք սակայն երկուսն էլ ճշմարտութիւն ունին իրենց մէջ: Ըստ Կանտի, օրինակ, անտինոմիա է 1) աշխարհը ակիզբն ունի ժամանակի մէջ և սահմանափակւած է ըստ տարածութեան և 2) աշխարհը ոչ ակիզբ ունի և ոչ սահման տարածութեան մէջ, այլ թէ ըստ ժամանակի և թէ ըստ տարածութեան անսահման է:

Անտիպաթի, անտիպատիա (յուն.), հակակրութիւն. խորշանք, անհամակրանք: Մի անորոշ խորշանք զէպի մարդիկ և առարկաներ, որ առաջ է գալիս բնախօսական կամ հոգեբանական պատճառներից:

Անտիպատրիօտիկ (յուն.), հակահայրենասիրական:

Անտիպարլամէնտարիզմ, հակապարլամէնտականութիւն: Տես *պառլամէնտարիզմ*:

Անտիպիրին (յուն.), հակատենդ. ջերմուտնդի դէմ գործող դեղ:

Անտիպլատօնական (յուն.), հակապլատօնական. հ. սէր, մարմնական, զգայական սէր: (Տես *պլատօնական սէր*:)

Անտիպօդ (յուն.), հակոտնեայ. կատարելապէս ուրիշ, ամեն բանում հակադիր. հակառակորդ:—Երկրագնդի ճիշտ հակառակ կողմի բնակիչ:

Անտիսէմիտ, հակահրէական. հրէութեան և հրէական ազդեցութեան դէմ կռւող:—*Ա. կռւսակցութիւնը* մաքառում է հրէութեան դէմ. Գերմանիայում կոչւում է *քրիստոնեայ-սօցիալ կռւսակցութիւն*: Գերմանիայում և Աւստրիայում ունին ազգայնական գոյն:

Անտիսէպտիկա (յուն.), հականեխական միջոցներ. նեխելուց և վէրքերը թարախոտելուց պաշտպանող միջոցներ:

Անտիսօցիալ (յուն. լատ.), հակընկերական, հակահասարակական. ընկերական, հասարակական կարգերի հակառակորդ:

Անտիրէւօլիւցիա (յուն. լատ.), հակայեղափոխութիւն:—*Անտիրէւօլիւցիոնէր կռւսակցութիւն*, Հոլլանդիայում պահպանողական կ.—ը, որ ձգտում է կալւածատիրութեան նախայեղափոխական կարգերին:

Անտիցիպացիա (լատ.), կանխակալութիւն. նախապաշարութիւն. իրրև ճշմարտութիւն ընդունւած անապացոյց դրութիւնների հիման վրա կատարւած ճանաչողութիւն:— *Վաղաժամ դանձումն տուրքերի*. փոխառութիւնների վճարումն ժամանակից առաջ:

Անտի-քրիստ (յուն.), սուտ Քրիստոս, նեռ:

Անտրակտ (Ֆր.), խաղամիջոց. ներկայացումների և հանդէսների մէջ գործողութիւնների և բաժինների արանքում ազատ միջոց:

Անտրացիտ տես *անթրացիտ*:

Անտրէ (Ֆր.), մուտք:—Երաժշտական ներածութիւն:

Անտրրկօտ (Ֆր.), եզան կոդմէջի միսը տապակած:

Անտրրշա (Ֆր.), պարարուտի մէջ, թռչէք զէպի վեր, օդի մէջ ուսերը միմեանց զարնելով:

Անտրրպրէնեօր (Ֆր.), մասնաւոր թատրոնի գլուխ կանգնած անձն, որ խումբ է կազմում և ներկայացումներ է կազմակերպում:

Անտրրպրիզ (Ֆր.), թատրոնական ձեռնարկուի (անտրրպրէնեօրի) գործունէութիւնը:

Անտրիւ (Ֆր.), տեսակցութիւն, բանակցութիւն:

Անտրօպօ... տես *անթրօպօ...*

Անվրլօպ (Ֆր.), ծրար:

Անփօշմ'ան, չըզղջացած:

Անօմալիա (յուն.), տարականոնութիւն, անկանոնութիւն, արտուղութիւն. շեղումն ընդհանուր կանոնից:—*Սոթիկանների վարդապետութեան մէջ՝ ապալօգիայի հակառակը*:

Անօնիմ (յուն.), անանուն: Գրուածք առանց աստրագրութեան: *Անանուն հեղինակ*:—*Անոնիմ ընկերութիւն*, բաժնետիրական ընկերութիւն: Տես *ակցիոնէրական ընկերութիւն*:

Անօնս (Ֆր.), ծանուցումն, ազդ, յայտարարութիւն:

Անօրգանական (յուն.), անկեանք, առանց կենդանի գործարանների:

Անօրգանական քիմիա, քիմիայի այն մասը, որ զբաղւում է առանց կենսական ուժի կատարող միացումներով:

Անօրմալ (յուն. լատ.), անկանոն, հակականոն, տարականոն. բնական ընթացքին հակառակ:

Անջան տէռոիքըլ (Ֆր.), մի մարդ, որ իր տաբօրինակ, տարականոն վարմունքով և ազատ շարժուածքներով սոսկում է ազդում. անկարգապահ, անզուսպ մարդ:

Ան ֆաւ (Ֆր.), դիմացից: Երեսի առջևի կողմից:

Աշար (արաբ.) տասանորդի տուրքը Թիւրքիայում. երկրագործական բերքերից՝ հացահատիկ, արմտիք, մրգեր, բանջարեղէն և այլն 10-ից մէկը վճարում է իրրև տուրք. սրա գանձումը կապալով է տրւում հարկահաւաքին:

Աշիրէթ, քրդական թափառական ցեղ, որ ենթարկւում է անմիջապէս իր ցեղապետին:

Աշխանա, աշչի խանա (պարս.), խոհանոց:

Աշկարա (պարսկ.), ակնյայտնի, բացայայտ:

Աշուր (արաբ.), տասնօրեայ մահմեդական տօն մուհարրեմ ամսին:

Աշուղ, աշըղ (արաբ.), թափառաշրջիկ բանաստեղծ-երգիչ, որ իր գործերի (սովորաբար՝ *սազ*) նւագակցութեամբ երգում է իր և ուրիշների յօրինած եր-

գերը և պատմում է հէքիաթներ։—Սիրահար։

Աշխ, աշխազ (պարսկ.), խոհարար։

Աշրաւ, թափառաշրջիկ ցեղեր Պարսկաստանում։

Աշրաֆի տես *Թումման*։

Աշխազ տես *աշխ*։

Աւտիէնցիա (լատ.), ուննկընդրուքիւն. մանաւանդ՝ բարձրաստիճան անձանց՝ թագաւորների, իշխանների, նախարարների մօտ. ընդունելութիւն ունկընդրութեան նպատակով։

Աւտիտորիա (լատ.) լսարան. բարձրադոյն դպրոցում կամ ժողովրդական համալսարանում սրահ, սենեակ, ուր կարդում է կամ դասախօսում ուսուցչապետը և լսում են ունկընդիրները։ *Ունկընդիրների խումբը*։

Աւլ (թաթ.), թաթարական գիւղ—Լեռնային ցեղերի, գլխաւորապէս չերքէզների գիւղ։

Աւլա (լատ.), ժողովարան, հանդիսարան, մեծ սենեակ համալսարանում, ուր հանդէսներ են կատարւում։

Աւտօպսիա (յուն.), ինքնադննութիւն. դիակի զննումը։ *Մի բան սեփական աչքերով զննելը*։

Աւտկթօն (լատ.). ածուրդ։

Աւտօդաֆէ (իսպ.), հրապարակային դատարան հաւատոյ և հերետիկոսների։—*Ինկւիզիցիայի դատապարտածների գլխատումը կամ այրումը*։ *Հրադատութիւն*։—*Հրկիզութիւն հերետիկոսական շարադրութիւնների*։

Ապաթիա (յուն.), անզգայութիւն, կրքազրկութիւն, անտարբերութիւն։ *Սառը, բութ, անտարբերը տրամադրութիւն*։

Ապանաժ (լատ. ֆր.), արքայազունների, երբեմն էլ բարձր պաշտօնական դասակների, ստացած եկամուտը պետական միջոցներից. 17-րդ դարից սկսած, երբ հաստատուեց անդրանիկ արքայորդու գահաժառանգութեան իրաւունքը, դադարեց պետական հողերի բաշխումը արքայազուններին, որի փոխարէն նրանք սկսեցին, գանազան երկրներում գանազան ձևերով, պետական ընդհանուր միջոցներից եկամուտ ստանալ, որ կոչուեց ա.։

Ապաշ (ֆր.), վողոցային շրջմոլիկներ և կողոպտիչներ Պարիզում. անանուն են հընդիկ աւազակաբարոյ համանուն ցեղի անունով։

Ապատիա տես *ապաթիա*։

Ապատրիօտ, հայրենապուրկ։

Ապատրիօտիզմ, ապհայրենութիւն. անտարբերութիւն հայրենիքի վիճակի վերաբերմամբ։

Ապարատ (լատ.), գործիքակազմ. գործիքների ամբողջ սարք։—*Գործիք. անօթ*։

Ապարէնտ (լատ.), առերևոյթ. պարզապէս։

Ապարտամէնտ, ապարտման (ֆր.), մի բնակարանի մասը, բաղկացած մի կամ մի քանի սենեակից, իբրև զատ բնակարան։

Ապէլ (ֆր.), կոչ։

Ապէլացիա (լատ.), կոչում, խնդրարկութիւն. բողոք բարձրագոյն դատարանական հաստատութեան աւելի ցածրի կայացրած վճռի դէմ։

Ապէլսին (չինական խնձոր), նարինջ։

Ապէնդիցիտ, ապէնդիցիտիս (լատ.), կոյր աղիքի որդաձև յաւելուածի բորբոքումն։

Ապէրացիա տես *օպէրացիա*։

Ապէրցէպցիա (լատ.), գիտակից, կամաւոր և ներգործական մտածողութիւն, հակառակ զուտ զգայական տպաւորման. ուշադրութեան միջոցով պատկերացումների բովանդակութեան որևէ մասի պարզացումը, որոշացումը, աւելի գիտակից դարձնելը։ *Ըստ Վունդի՝ ա. այն ներքինն է, որով մի որևէ հոգեկան բովանդակութիւն աւելի պարզ է ըմբռնւում. պատկերացումների ամբողջ դաշտից միայն փոքրիկ բովանդակութիւններ ուշադրութեան միջոցով դառնում են մեր ներքին տեսողութեան կետեր*։—*Ապէրցէպցիական հոգեբանութիւնը Վիլհելմ Վունդի հիմնած հոգեբանական ուղղութիւնն է, որը, հակառակ մտապատկերների զուգորդութեան (ասոցիացիայի) վերա հիմնւած հոգեբանութեան, պնդում է, որ պատկերացումների մէջ տիրապետող տարրի գոյութիւնը հետևանք է ուշադրութեան հետ սերտ կապւած ապէրցէպցիայի*։

Ապիս, արքայան եղը. ինքը սև ճակատի մէջ տեղում ոսկեայ եռանկիւնի պիտակով. նա պաշտւում էր եգիպտացիներից իբրև պատկեր երկրագործութեան աստւած Օզիրիսի, որը երկրագործութիւնը մտցրել էր մարդկանց մէջ։

Ապլոդիսմէնտ (լատ.), ծախտահարութիւն։

Ապլոմբ (ֆր.), խոսակցութեան, վարմունքի հաստատուութիւն, վստահութիւն, շիշտ։

Ապպա տես *աբբա*։

Ապրիօրի, ա պրիօրի (լատ.), ի յառաջագոյն է, ճանաչողութեան այն եղանակը, որը կատարւում է փորձից անկախ և փորձից առաջ, որը պայմանաւորւած չէ փորձով և հետևանք չէ փորձի։ *Ըստ Կանտի ա. փորձից անկախ այն բանական ճանաչողութիւնն է, որը ունի ընդհանրականութիւն և անհրաժեշտութիւն. բոլոր այն զուտ ձևականը ճանաչողութեան մէջ, որը միայն ճանաչողութեան նիւթը ճանաչողութիւն և փորձ է դարձնում, որը անհրաժեշտօրէն ամեն մի փորձ պայմանաւորում և կազմակերպում է։ Հակառակը՝ ապօստէրիօրի*։

Ապրիօրիական, ապրիօրի եղանակով։

Ապտէկ (յուն.), դեղատուն։

Ապրօբացիա (լատ.), մի հիմնարկութեան կողմից քննութեան ենթարկելը. որևէ կոչման հմտութիւնը վկայող թուղթ։

Ապօգէօն, ապօգէյ (յուն.), երկրի կենտրոնից ամենահեռաւոր կետը, որի վրա լուսինը գտնւում է իր շրջանառութեան ժամանակ։ *Ամենամօտը կոչւում է պէրիգէյ*։—*Փառքի գագաթնակէտ*։

Ապօթէօզ (յուն.), աստւածացում, դիցակարգութիւն. աստւածների կարգը դասելը։—*Յօբելեարին կամ նրա արձանը շրջապատելը նրան յարգողների խմբով*։

Ապօլլօն, Ապօղօն, հին յունաց դիցարանութեան մէջ լուսոյ, արևի, դուշակութեան, բանաստեղծութեան աստւածը։ *Բելվեդերեան Ա., այդ աստծու մի հին հռչակաւոր արձանը*։—*Գեղեցիկ տղամարդ*։

Ապօլօգիա (յուն.), ջատագովութիւն, պաշտպանողական ճառ, գրութիւն։ *Մի ուսմունքի գաղափարի համար պաշտպանողական խօսք գրաւոր կամ բանաւոր*։

Ապօկալիպսիս (յուն.), յայտնութիւն. *Յովհաննու յայտնութիւնը*։

Ապօկրիֆ (յուն.), գրքեր,

դրւածքներ, կտորներ Ս. գրքից, որոնք եկեղեցու կազմից չեն ճանաչւում իբրև հարազատ և ճշմարիտ. անհարազատ, անվաւեր, անստոյգ, սուտ։

Ապոպլէքսիա (յուն.), կաթւած։

Ապօստէլ (յուն.), առաքեալ։

Ապօստէլիօրի (լատ.), ա պօստէլիօրի, ի յետնագունէն. ապրիօրի-ի հակառակն է, ինչ որ ծագում է փորձից, փորձով է պայմանաւորւած։ Տես ապրիօրի։

Ապօստրօֆ (յուն.), ապադարձ կետադրութեան մի նշան (՚)։

Աջալ (արաբ.), օրհաս, մահ։

Աջամ, աջէմի (արաբ.), պարսիկ։

Աջաճ (արաբ.), արդիօք — Զարմանալի։

Աջղղ (թուրք.), վրէժ, քէն, ոխ։

Աջղղու վրիժառութեամբ, քինախնդրութեամբ։

Ադ, ամօթ։—Ադսըզ (թուրք.), անամօթ, անպատկառ։

Ադնատուդ (թուրք.), ալբանացի։

Ադ, թղթախաղի մէկանոց։

Ադմին (յուն.), կարճաշնչութիւն, շնչարգելութիւն, «թանգանաֆաստութիւն», հիւանդութիւն է, որ առաջանում է սրբատային և թոքային հիւանդութիւններից և սակաւարիւնութիւնից։

Ադէսօր (լատ.), պաշտօնի անունն պետական ծառայութեան մէջ։

Ադիզնացիա (լատ.), թղթադրամի մի տեսակը, որ Ռուսաստանում Եկատերինա II կայսրուհու օրով հաստատւած յատուկ բանկի միջոցով պատրաստւում էր։

Ադիզնատ, ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ դրծածական թղթադրամներ պետական խոշոր պարտքերը ծածկելու նպատակով հրատարակ հանւած։

Ադիմէտրիա (յուն.), անհամաչափութիւն։

Ադիմիլացիա (լատ.), օտար նիւթեր ներս առնել իր մարմնի մէջ, նրանց լուծել իւրի հետ և դարձնել իւրի տեսակ։ կենդանիների և բոյսերի այն գործողութիւնը, որով նրանք դրսի նիւթեր ընդունում են իրենց մարմնի մէջ և իւրացնում։ Նաև հոգևոր մարդով։

Ադիմիլատօրական քաղաքականութիւն կոչւում է այն քը, որը ձգտում է այլազգիներին լուծել և տիրապետող ազգի բոլոր առանձնայատկութիւնները իւրացնել տալ նրանց։

Ադիսատէնտ (լատ.)։ ընթերակայ։ օգնական պաշտօնեայ։

Ադիրօլօգիա (յուն.), ատրադիտութիւն. գիտութիւն ատրների և ատրական հին պատմութեան։

Ադլ, ծագում. ցեղ։—Ադլը, ի բնէ։

Ադլան (թուրք.), առիւծ։—*Բաջ։—Ադլան բալասի* (թուրք.), առիւծի կորիւն։

Ադլարի, գերմանական գաղութներում զինւոր ընտիրներից։

Ադլեարի (թուրք.), խաղողի մի տեսակը։

Ադկէր (թուրք.), զօրք, զինւոր։

Ադկէտ (յուն.), ճգնաւոր, միայնակեաց, անապատական։—*կեանքի աղմուկից հեռու ապրող մարդ։*

Ադնաֆ, էհնաֆ (արաբ.), արհեստաւորների դաս։

Ադադաղ, զէնք։

Ադաղը (յուն.), փոքրիկ ապրատակ դրամ Թիւրքիայում,=$^1/_3$ փարա կամ $^1/_{120}$ դուռուշ։

Ադապիրանտ (լատ.), մի կոչում ընդունելու համար պատրաստող մարդ։

Ադապիրացիա (լատ.), շնչահառն արտաշնչութիւն։—*կարօտալի ձգտումն մի բանի։*

Ադատրօլօգ (յուն.), աստղագէտ, աստղագուշակ, քաղդէացի. աստղերի շարժումներից մարդկանց վիճակի մասին դուշակութիւններ անող։

Ադատրօլօգիա (յուն.), աստղագիտութիւն, աստղագուշակութիւն. կեղծ գիտութիւն աստղերի մասին, մոգական դուշակութիւններով։

Ադատրօնօմ (յուն.), աստղաբաշխ, աստղերի վերաբերեալ գիտութեան տեղեակ։

Ադատրօնօմիա (յուն.), աստղաբաշխութիւն. գիտութիւն, որ ուսումնասիրում է երկնային լուսաւորների շարժման և ձգողութեան օրէնքները։

Ադատրօսկօպ (յուն.), աստղադէտ։

Ադասկիր-ի-միլբիւլ, 1877 թւին Թիւրքիայում գոյութիւն առած քաղաքացիական բանակ, որի մէջ կարիքը պահանջած դէպքում պարտաւոր էին մրցանել 17—45 տարեկան այն քաղաքացիները, որոնք նոյն ժամին արդէն զօրքի մէջ չէին ծառայում։

Ադատէրօիդներ (յուն.), աստեղակերպներ. անդէն աչքով անտեսանելի փոքրիկ մոլորակները են թւով հարիւր ութսուն հատ, որ գտնւում են Մարսի և Իւպիտէրի արանքում ընկած տարածութեան մէջ։

Ադտրօիտ (յուն.), աստղաքար։

Ադօցիացիա (լատ.), ընկերակցութիւն. զուգորդութիւն։ Այլևայլ նպատակներով կազմած մարդկանց խմբակցութիւն, որ ներկայանում է իբրև իրաւաբանական անձնաւորութիւն. անհատների միացում մի համայնական միութեան մէջ մի ընդհանուր նպատակ իրագործելու համար։ — *Բանւորական ադներ կամ ընկերակցութիւններ, արդիւնաբերական կամ սպառողական նպատակներով բանւորների միութիւններ։— Գաղափարների ա., կամ մտապատկերների զուգորդութիւն կոչւում է հոգեբանութեան մէջ մեր մտապատկերների այն կապակցութիւնը, որի հետևանքով մի պատկերացումին ակամայ հետևում է մի ուրիշը որոշ օրէնքների հիման վրա. օր՝ մի տեղ տեսնելիս յիշում ենք մի դէպք, որ այնտեղ է պատահել. կամ մի մարդի հանդիպելիս յիշումենք նրա հետ կապւած մի բան։— Ադօցիական հոգեբանութիւնը համարում է ա. մարդկային հոգեկան կարողութիւնների հիմնական սկզբունքը։ Մարդկային հոգեկան կեանքի հիմքը նա ընդունում է զգայարանքների զանազան տպաւորութիւններ. հոգեկան գործողութիւնները իրար հետ միանում են ա.-ի օրէնքով։*

Ադրջէի տես Էակիջի։

Ադֆալտ (յուն.), կուպրի և այլ նիւթերի խառնուրդից պատրաստած մի շաղախ, որով փողոցներ, մայթեր, կտուրներ և այլն ծածկում են՝ ողորկ դարձնելու և ջրի ազդեցութիւնից զերծ պահելու համար։

Ադտակա (ֆր.), զօրքի յարձակումը թշնամու բանակի, բերդի վրա և այլն։

Ադտաման (ռուս.), կօզակների խմբապետ, զօրապետ, առաջնորդ։ Տես նաև Հէտման։

Ադտաշէ (ֆր.), կցորդ. դես-

պանատան կցորդ պաշտօնեայ. դեսպանատան վիճաբանական կըցորդ։ Երիտասարդ պաշտօնեայ, որ ծառայում է դեսպանատանը դիւանագիտութեան մէջ վարժւելու համար։

Ատաւիզմ (լատ.), նախնական նմանութիւն, վերադարձ դէպի նախնիքների յատկութիւնները. ժառանգականութեան այն ձևը, երբ յատկորդների մէջ երևան է գալիս մի քանի սերունդ առաջ եղած նախնիքների այն հոգևոր կամ մարմնական յատկութիւնը, որը արդէն անհետացած էր համարւում։ Օրինակ, երբ երեխան ծնւում է մազով ծածկւած կամ պոչով. ձին ունենում է զեբրայի շերտեր։—*Ա.* փոխաբերական մտքով գործ է ածւում նաև հասարակական երևոյթների համար։

Ատաւիստական, նախնանմանական։

Ատազիստներ, օտգօվիստներ (ռուս.), մի հոսանք ռուս սօցիալ-դէմօկրատիայի մէջ, որը ցանկանում էր չորրորդ Պետական Դումայից յետ կանչել (отозвать) ս. դ. պատգամաւորներին։

Ատէլիէ (ֆր.), գեղարուեստական արհեստանոց։

Ատէնտատ (լատ.), դատադրութիւն, մահափորձ։—*Ուրիշի իրաւունքը յափշտակելու փորձ։*

Ատէստատ (լատ.), վկայագիր, վկայական։

Ատլանտ կամ Ատլաս, հին յոյների հաւատալիքով՝ տիտաններից մէկը, խելօք, որ լաւ ճանաչում է ծովի խորքերը. նա է պահում իր ուսերի վրա երկնակամարը։—Ճարտարապետութեան մէջ՝ մարդկային կերպարանք, որ սիւնի փոխարէն կրում է առաստաղը կամ կարնիզը։

Ատլանտիդա, մի առասպելական ցամաք, որ իբր եղել է Ատլանտեան ովկիանոսում Ա. Ֆրիկայից արևմուտք։

Ատլաս, քարտէզների և գիտութեան այլևայլ ճիւղերի նըկարների ժողովածու։

Ատլէտ տես ամիլէտ։

Ատմօսֆէրա (յուն.), մթնոլորտ. երկրագունդն շրջապատող օդի ամբողջութիւնը։—*Փոխաբերական՝ մի մարդի շրջապատող պայմանները։*

Ա-տու-պրի (ֆր.), ինչ գնով էլ լինի, անպատճառ։

Ատտիրական, նուրբ, սրամիտ, Ա. Թէնդի զարգացման և ճաշակին համապատասխան։

Ատրակցիօն (լատ.), ձգողութիւն։ Հակառակը՝ ըէպուլսիօն, վանողութիւն։

Ատրիքուտ (լատ.), մի առարկայի անանձնատ յատկանիշը։—*Մի էութեան անհրաժեշտ, էական, անմիջական, անանձնատ յատկութիւնը։* — Գեղարուեստի մէջ ս. կոչւում են այն նշանները, որոնք պատկերացրած գլխաւոր առարկայի յատկութիւնն են ցոյց տալիս, ինչպէս Պետրոս առաքեալի բանալինները, թագաւորի գայլեօնը։

Ատրուշան (պարսկ.), կրակապաշտական տաճար։

Ատրօֆի (յուն.), ոտնութիւն. նիհարութիւն։ *Մի գործարանի անհետանալը կամ անգործանալը չըգործածութիւնից։*

Ատօմ (յուն.), նիւթի ամենափոքր մասնիկը, որը այլևս անբաժանելի է համարւում։ Ժամանակակից բնագիտութիւնը ատօմը ընդունում է հաւասար 0,2 միլիկրօնի։ (Մի միլիկրօնը=մի միլիօներորդ միլիմէտր)։

Ատօմիզմ, վարդապետութիւն, որ ընդունում է, թէ աշխարհը կազմւած է ատօմներից։

Ատօմրատիկա, ուսմունք ատօմների մասին։

Ար, ֆրանսիական չափ մակերևոյթի, որ հաւասար է 100 քառակուսի մէտրի=ռուսական մօտ 22 քառակուսի սաժէն։—*Դեկար*=10 ար. *հէկտար*=100 ար=0,915 դեսեատին. *կիլար*=1000 ար. *միրիար*=10000 ար։—*Դէցիար*=$^1/_{10}$ ար. *ցէնտիար*=$^1/_{100}$ ար. *միլիար*=$^1/_{1000}$ ար։

Արաբա (թուրք.), սայլ. երկանիւ սայլ։—*Կառք։*

Արաբական թիւեր, սովորական գործածական թուանշանները 1, 2, 3, 4 և այլն. այնինչ լատինական են I, II, III, IV և այլն։

Արաբաջի (թուրք.), սայլապան։ Կառապան։

Արաբէսկա, արաբական ոճով զարդանկարներ։

Արաբիատ, արաբագէտ. արաբերէնի մասնագէտ։

Արաբատան, Արաբիա։—Արաբական ձի։

Արախչի (պարսկ.), կլոր տափակ գլխարկ ձեռագործ զարդանկարով։

Արաղ (արաբ.), օղի։

Արանչի, գլխադպան։

Արբար (արաբ.), վարպետ, գործաւէր։

Արբիտր (լատ.), միջնորդ դատաւոր. իրաւարար։

Արբիտրաժ (ֆր.), շահադիտական փոխանակութիւն արժէթղթերի. առևտրի մի տեսակը, երբ վաճառականը, միջնորդը, բանկիրը (սեղանաւորը) կամ այդ տեսակի առևտրականը շահ է տանում մինոյն ապրանքի միաժամանակ գտնուած շուկաներում ունեցած գների տարբերութիւնից։ *Միջազգային առևտրի մէջ ա. օգուտ է դուրս բերում այն բանից, որ վճարում է կամ կանխիկ դրամով կամ մուրհակով, նայած դրանց գների յատկութեան. արժէթղթերի, մուրհակների, բաժնետոմսերի մի տեղում գնելուց և մի այլ տեղում վաճառելուց համեմատ այդ ապրանքների գնի տարբերութիւն տարբեր տեղերում։ Նրա սկզբունքն է՝ մի ապրանք (բառիս լայն մտքով) գնել մի տեղում, ուր նրա առաջարկը կայ և գինը ցածր է և միաժամանակ վաճառել մի այլ տեղ, ուր նրա պահանջը կայ և գինը բարձր է։—Միջնորդ դատարան և նրա վճիռը. իրաւարարութիւն, իրաւավճիռ։*

Արգուս, արգօս, հարիւրակնեայ մի էակ, որը Հնօնայի կողմից կարգած էր հսկելու Իպիտէրի սիրուհու Իօի վրայ, որին Հնօնան կով էր դարձրել։ Արգուսի հարիւր աչքի կէսը քնում էր, այնինչ միւսները շարունակում էին հսկել։—Աբթուն, նախանձախնդիր պահապան, լաւ վերահսկող։ Այս տեղից՝ արգուսի աչքեր։

Արգումէնտ, (լատ.), ապացոյց, հիմք։

Արգումէնտացիա (լատ.), ապացուցումն, պատճառաբանութիւն, հիմնաւորումն։—Մի մըտքի ապացուցման համար բերւած բոլոր փաստերի դումարը։

Արգօնատներ, արգօնաւորդներ. յոյն դիցաբանութիւնից, այն քաջերը, որոնք իրենց համար յատկապէս պատրաստած Երգօս նաւով գնացին Կոլխիս Եաղօնի առաջնորդութեամբ և բերին ոսկեգեղմը։

Արզ, արզա (պարսկ.). խնդիրք, լուծ։ Արզայի, խնդրատու։

Արէնա (լատ.), մրցապարէզ,

մրցապաշտ։ Հին հռովմէական կրկէսներուն մէջին հրապարակը, ուր խաղերը և մրցութիւնները էին կատարուած։

Արձնդ, արձնդա (լատ.), կապալ, կապալավճար։ Ուրիշի սեփականութիւնը ժամանակաւորապէս օգտագործելու այն ձևն է, երբ մի առարկայ ժամանակաւոր գործածութեան համար վերցնողը (արձնդատուորը) իրաւունք ունի գործածելու այդ առարկան այլև այդ առարկայից առացած պտուղը, արդիւնքը իրեն սեփականելու, դրա համար վճարելով սեփականատէրին պայմանաւորուած վարձը դրամով, պտղով կամ անձնական ծառայութեամբ։ Ա-ը դանազանւում է *ըրէհից* նրանով, որ *ըրէհղարը* միայն առարկան գործածելու իրաւունք ունի, իսկ արձնդատուորը նաև նրա պտուղները վայելելու։ Օրինակ, գիւղացին իւր *կը* տալիս է գութան կամ սայլ լծելու համար և առանում է վարձ, դա *ըրէհով* տալ է նշանակում. բայց երբ նա իր կովը կամ ոչխարն է տալիս, որոնց կաթից և բըրդից կարող են օգուտ, դա արձնդ է։ Ժամանակաւորապէս ուրիշին տուած մի կտոր հող, եթէ նա ծառայում է իրրև պահեստատեղ, *ըրէհով* է տուած, իսկ եթէ նրան մշակում են, կամ նրա մէջ եղած քարհանքը, ածուխը, անտառը, հանքային ջրերը, ձկնորսարանները և այլն շահագործում են, դա արձնդ է։ Արձնդով կարող են տալ բացի առարկաներից նաև իրաւունքներ, օրինակ՝ որսորդական, ձկնորսական, մի գործարան բանեցնելու, հարկերը դանձելու (Թիւրքիայում) իրաւունքը և այլն։ — Ռուսաստանում մանաւորապէս, բացի վերոյիշեալից, արձնդ նշանակում է նաև բարձրագոյն հրամանով (թագաւորի կարգադրութեամբ) շնորհուած եկամուտ պետական կալուածքների արդիւնքից։ (Տես նաև *ըրէհ*)։

Արձնդատոր, կապալառու։ Տես *արձնդ*։

Արձս, հին յունաց պատերազմի աստուածը, հռովմայեցոց *Մարսը*։

Արձատ (լատ.), արգելք. կալանաւորութիւն։

Արձատանտ, կալանաւոր։

Արձօզազ (յուն.), անկուսակցական դատաւորների ժողով։ Բարձրագոյն ժողովրդական ներկայացուցչութիւն։ — Աթէնքի ամենահին և ամենանշանաւոր դատարանը, որ դումարւում է *Արձսին* նուիրուած բլուրի վրայ։

Արիա (իտալ.), մեներգ, երգ։

Արիական ազգեր կոչւում են լայն մտքով բոլոր հնդեւրոպական ազգերը, իսկ նեղ մտքով միայն վերջիններից նրանք, որոնք բնակւում են Հնդկաստանում, Իրանում և Կովկասում, դրանց թւում և հայերը. դրանց լեզուները կոչւում են *արիական լեզուներ*։

Արիաղնա, յոյն դիցաբանութիւնից, Մինոս թագաւորի դուստրը՝ որը իր ուած մի կոծիկ թելով օգնեց Թեզէոսին դուրս գալ լաբիւրինթոսից։ *Արիաղնայի թելը*, այսպիսով, նշանակում է խառնաշփոթ վիճակից դուրս բերելու համար ուղեցոյց խորհուրդ։

Արիանիզմ, Արիոսի ազանդը, որով Հայր-Աստուած և Որդին չէին ճանաչւում համագոյակից և ամէն բանով հաւասար, այլ Որդին ստեղծած Հօրից նրա նմանութեամբ։ Նիկիոյ ժողովում 325 թ. այս ազանդը մերժուեց։

Արիատոկրատ (յուն.), ազնուական. հասարակութեան բարձրը դասակարգին պատկանող։

Արիատոկրատիա (յուն.), լաւագոյնների իշխանութիւն. ազնուապետութիւն, ազնուավարութիւն։ Ազնուականութիւն։ Պետական իրաւունքի մէջ՝ գլխաւորաբար հին Յունաստանում գոյութիւն ունեցող այն վարչական եղանակը, որով իշխանութիւնը պատկանում էր արտօնեալ լաւագոյն համարուած փոքրամասնութեան. երկիրը կառավարում էին ընտիր ծագում ունեցող, ազնուական ընտանիքներից առաջացած անհատներ. իրենց արժանիքների համար գանազան պատիւների, աստիճանների, պաշտօնների հասածները. մեծ տարբերով փարձառութիւն ձեռք բերածները և վերջապէս դրամապէս և կալուածապէս մեծ հարուստներ։ — Ներկայումս՝ հասարակական բարձր, առաջաւոր և գօրաւոր դասակարգեր. ազնուականութիւն, ոչ ազնուական ծագմամբ հարուստ քաղաքացիներ, խոշոր կալուածատէրեր և դրամատէրեր, բարձր պաշտօնէութիւն։

Արիատոկրատիական, արիստոկրատիային վերաբերեալ, նրան յատուկ։

Արիվիդերիճէ (իտալ.), յոռետութիւն։

Արիօզո (իտալ.), եղանակաւոր արտասանութիւն երաժշտախառն։

Արիթմէտիկա, արիթմէտիկ (յուն.), թուաբանութիւն։

Արլէկին տես *Հարլէկին*,

Արհասիզմ (յուն.), հնաբանութիւն, հնաոճ. հնացած և ժամանակակից գործածութենից դուրս եկած խօսք, արտայայտութիւն, դարձուած։

Արհաւոտ (թուրք.), մի տեսակ թաւ վերարկու։ — *Կովկասում՝* չերքէզների տակից հագնող զգեստը։

Արհաջ, ոչխարների հանգստանալու տեղ։

Արհիին, հանգիստ. անդոգ։

Արհէօլոգ (յուն.), հնագէտ, հնախօս. հնութիւնների ուսումնասիրութեամբ զբաղող գիտնական. մասնաւորաբար հին արուեստի երկերը հասկացող և ուսումնասիրող։

Արհէօլոգիա (յուն.), հնագիտութիւն, հնախօսութիւն. գիտութիւն որ զբաղւում է հնութիւնների ուսումնասիրութեամբ մասնաւորաբար հին արուեստի։

Արիի մանրիկը գրած որևէ հասկացողութեան առջևից նշանակում է այդ հասկացողութեան ծայրագոյն աստիճանը։

Արհիհիսկոն (յուն.), աւագ արկաւագ։

Արհիմանդրիտ (յուն.), ծայրագոյն վարդապետ. վանահայր։

Արհիպէլագ (յուն.), կղզեծով. մանր կղզիների խումբ։

Արհիտէկտուրա (լատ.), ճարտարապետութիւն. մի շէնքի կառուցածքը և նրա կառուցաձևը։

Արհիվ (յուն.), հնադարան. դիւան, դիւանատուն. պահեստատեղ։ Պաշտօնական հաստատութիւնների ունեցած յատուկ մի տեղ, որտեղ պահւում են ձեռագրեր փաստաթղթեր, վաւերագրեր և այլ տեսակի գրութիւններ, որոնք իրրև աղբիւր կարող են ծառայել պատմական ուսումնասիրութիւնների համար. յաճախ այնտեղ է պահւում նաև պաշտօնական կնիքը։ Ա. կոչւում է նաև այդ գրութիւնների ամբողջութիւնը, ժողովածուն։

Արհիվարիուս, արհիվար (լատ.), հնադարանապետ. դիւանապետ։

Արիսօլօգիա (յուն.), ուսմունք հիմքի կամ սկզբի մասին. հիմնական փիլիսոփայութիւն:

Արկ, արկա (Ֆր.), կամար:

Արկադիա, Յունաստանում մի երկիր, որտեղ բնակիչները զբաղաւորաբար որսորդներ էին և հովիւներ: Այժմ Ա. ասելով հասկանում են մի երկիր, որտեղ տիրում է խաղաղութիւն և անմեղութիւն, իսկ բարքերը պարզ են և հապահանջ:

Արկան (թաթ.), պարան հիւսած ձիու մազից, որով նրանից ձի են բռնում:

Արկտիկ (յուն.), հիւսիսային, հիւսիսաբևեռային:

Արմադա (իսպ.), պատերազմական նաւատորմ Իսպանիայում: Մանաւորապէս՝ Փիլիպպ II Իսպանիայի թագաւորի նաւատորմիղը ընդդէմ Անգլիայի Եղիսաբէթ թագուհու 1588 թ.:

Արմաղան, հիանալի, զեղեցիկ, ամենալաւ:

Արմեակ (ռուս.), ռուս պիւղացու վերնազգեստը:

Արմենաշկա (ռուս.), հայուհի. անարգական անուն հային:

Արմէնիոհի, մարդաբանութեան մէջ՝ հայկական տիպին նման ցեղ:

Արմէնիոֆիլ, հայասէր:

Արմէնիոֆոբ, հայատեաց, հայակեր:

Արմիա (Ֆր.), զօրաբանակ

Արշին (թաթ. ռուս.), ռուսաց երկարութեան չափ= 0,711 մէտր:

Արշիննիկ, (արշինով առուտուր անող, վաճառական.), խաբեբայ, կեղեքող:

Արշիսվէտազ, տես արխիսվէտազ:

Արպագօն տես Հարպագօն:

Արսենալ (Ֆր.), զինապահեստ, զինարան. զինական թանգարան:

Արսէնիկ (յուն.), մկնդեղ:

Արտէզեան ջրհոր, խոր ջրհոր, որից ջուրը յաճախ շատրուանով վեր է խփում:

Արտել (թաթ. ռուս.), գլխաւորաբար Ռուսաստանում դրծազրւող անտեսական միութիւնների մի ձևն է, որի յատկանիշները են՝ պայմանագիր անդամների մէջ. բոլոր անդամների հաւասարապէս մասնակցութիւնը ձեռնարկութեան մէջ աշխատանքով և դրամագլխով և եկամուտի բաշխումը համեմատ անդամների աշխատանքի և դրած դրամագլխի. ամրողջութեան երաշխաւորութիւնը և պատասխանատուութիւնը անդամներից իւրաքանչիւրի համար: Ա. հիմնւում են արդիւնաբերական, սպառողական և վարկային նպատակներով:

Արտիլէրիկ (ռուս.), արտելի անդամ.—ընտրւած գինւոր, որը գնում է իր խմբի համար կաթսայ պիտոյքները:

Արտէմիա տես Դիանա:

Արտէրիա (յուն.), զարկերակ. շնչերակ:

Արտիլէրիա (Ֆր.), թնդանօթաձիգ զօրք. թնդանօթները իրենց բոլոր պարագաներով:

Արտիշօկ (իտալ.), կանդար, արտիճուկ. կազամբանման մի բոյս:

Արտիան (Ֆր.), արւեստագէտ:

Արտիստիկ, արտիստական, արւեստագիտական:—Նրբաճաշակ:

Արրիէրգարդ (Ֆր.), զօրքի կամ նաւատորմիղի մի մասը, որ գալիս է գլխաւոր ուժերի հետից և պահպանում է նրա թիկունքը:

Արրօնդիրունգ (գերմ.), կլոր պատակայարմար կազմակերպութեան համար միևնոյն հոդատերոջ զանազան տեղերում ընկած հողակտորների միացումը, ամրողջացումը, հարթացումը գնման, փոխելու և այլ ճանապարհով, և այդպիսով ցրիւ մանր կտորներից մի մեծ հողատարածին կազմելը:

Արփալըգ (թուրք.), թխբքիայում գաւառանական շրջան, որից առացած եկամուտը փաշայի հասոյքն է:

Արր մանրիկը բառերի սկզբում նշանակում է աւագ, մեծ, հին. օր. արքեպիսկոպոս:

Արքիսվէտազ տես արխիսվէտազ:

Արօմատ (յուն.), բոյր, բուրմունք. հոտ, անուշահոտութիւն:

Արֆա (լատ.), քնար:

Ագէտիլէն (լատ. յուն.), մի գաղշահոտ, անգոյն գազ, որը սակայն շատ պայծառ լոյս է տալիս:

Աւ, օվ (թուրք.), որս, որսորդութիւն:

Աւալ-ամար (թուրք.), վերջ ու առաջ:

Աւանգարդ (Ֆր.), յառաջապահ զօրք, առաջապահիկ գունդ:

Աւանպօստ (Ֆր.), առաջապահակ, թշնամուն ամենամօտ զբաղուած պահակը:

Աւանս (Ֆր.), նախապատուութիւն. յառաջացում:—Կանխավճար, կանխավարձ, կանխադրամ:

Աւանսէնա (Ֆր.), բեմի առաջակողմը:

Աւանտաժ (Ֆր.), նախապատուութիւն, առաւելութիւն, գերակշռութիւն, գերազանցութիւն:

Աւանտի (իտալ.), յառաջ.

Աւանտիւր, աւանտիւրա (Ֆր.), արկած, պիմադրաւութիւն. մի անսովոր, արտակարգ դէպք. մի տարօրինակ, արտառոց պատահմունք:—Յանդուգն առևտրական ձեռնարկութիւն:

Աւանտիւրիստ, արկածախնդիր, բախտախնդիր:

Աւարա (պարսկ.), անգործ, պարապ. ուրիշին գործից գլող:

Աւարիա, Հաւարիա (Ֆր.), նաւարեկութիւն. նաւին հասած վնասը:—Նաւարեկութեան ժամանակ փրկած ապրանքների տիրոջ պարտականութիւնը՝ վարձատրել նրանց, որոնց ապրանքները կորել են.—Նաւահանգստի մաքս նաւերի համար:

Ազիեանախտ, յոյն դիցաբանութիւնից. Ազիաս թագաւորը ունէր 3000 գլուխ անասուն, որոնց գոմը 30 տարի չէր մաքրած. Հէրկուլէսը այդ բոլորը մի օրւայ մէջ մաքրեց:—Անհոգութիւնից առաջացած խառնափնթոր, որին կարգի բերելու համար արմատական և դժւար միջոցներ են հարկաւոր:

Ազոտ (լատ.), հին Հռովմում քրմերի մի դասակարգ, որոնք թռչունների ազազակից և թռիչքից գուշակութիւններ էին անում. հաւազուշակ, թռչնագուշակ, հաւահաբց:—Գուշակող. քաղդեայ:

Աղաստ տես արղաստ:

Ալ Մարիա (լատ.), ողջոյն Մարիամ. կաթոլիկական աղօթք Աստուածածնին նւիրւած:—Այդ աղօթքին կոչող զանգահարութիւնը:

Ալէգրիա (լատ.), զուարճք, նոզկանք, խորշանք:

Ալէստաս տես Զէնոդալէստաս:

Ալընիւ (Ֆր.), ծառահետ, ծառագարդ ճանապարհ:

Ալմաֆա, բարակ խողովակով պղնձէ աման, որից ջուր են ածում ձեաքին:

Ալիսատիկա (լատ.), գիտութիւն նաւագնացութեան մասին օդից ծանր թռչող մեքենաներով: Տես նաև աէրոնաւտիկա:

Աւիատոր, օդապնաց։

Աւիացիա, թռիչք օդաչու նաւով։

Աւօնել, աֆսօնել, թովել, կախարդել։

Աւօնչի, թովիչ։

Աւղուշ, որսորդութիւն թըռչուններու։

Աչի, օվչի (թուրք.), որսորդ։

Աւտօբիօգրաֆիա (յուն.), ինքնակենսագրութիւն. հեղինակի կենսագրութիւնը իր իսկ ձեռքով գրած։

Աւտօգրաֆ (յուն.), ինքնագիր մեքենայ,—Յայտնի անձանց ձեռագրերը։—Հեղինակի իր ձեռքով գրած շարադրութիւնը։

Աւտօգրաֆիա (յուն.), մի ձեռագրի նոյնանման քարտաւպը. նոյնը և մի նկարի։

Աւտօդիդակտ տես աւտօդիդակտ։

Աւտօդիդակտ (յուն.), ինքնուս. մի մարդ, որ ինքը իր ուսուցիչն է եղել։

Աւտօթերապիա (յուն.), ինքնաբուժութիւն բնութեան օգնութեամբ։

Աւտօկէֆալ (յուն.), ինքնագլուխ։

Աւտօկէֆալիա (յուն.), ինքնագլխութիւն, անկախութիւն. եկեղեցական իրաւունքի մէջ այդպէս կոչւում է մի որևէ եպիսկոպոսի անկախութիւնը պատրիարքից։ Աւտօկէֆալիա ունին սլաւոնական եկեղեցիները, որոնք ստորագրեալ չեն յունաց սրեզերական պատրիարքին, թէև օրթոդոքս եկեղեցիներ են։

Աւտօկրատ (յուն.), ինքնիշխան, անսահման իշխանաւոր, միահեծան։

Աւտօկրատիա (յուն.), միահեծանութիւն, ինքիշխանութիւն, որտեղ օրէնսդրական և կատարողական իշխանութիւնները կենտրոնացած են իշխողի ձեռքում։—Ըստ Կանտի՝ բանականութեան իշխանութիւնը ըզպայականութեան վրայ։

Աւտօկրատիզմ, ինքնիշխանականութիւն։

Աւտօկրիտիկա (յուն.), ինքնաքննադատութիւն. ինքնագնահատում։

Աւտօմատ (յուն.), ինքնագործ մեքենա. ինքնաշարժ արձան մարդի կամ կենդանու։

Աւտօմատիկ կամ *աւտօմատ* շարժում, անգիտակից, ակամայ շարժում, որ մեքենայաբար է կատարւում, առանց գրսի գըրգիռների, նեարդերի կենդրոնից ծագող, ինչպէս սրտի, աստամոքսի, աղեան շարժումները կենդանական մարմնի մէջ։

Աւտօմօրիլ (լատ.), ինքնագործ կառք, որ շարժւում է էլէքտրականութեան կամ մի գազի միջոցով։

Աւտօնօմ (յուն.), ինքնօրէն, ինքնավար։

Աւտօնօմիա, ինքնօրէնութիւն, ինքնավարութիւն. մի ժողովրդի կամ երկրի մի մասի իրաւունքը իր համար լայն կամ նեղ սահմաններում օրէնքներ հրատարակելու և ինքնիրեն կառավարելու ձևալով հանդերձ մի պետութեան մաս։ Ա. ունեցող երկիրը չունի անկախութիւն արտաքուստ, բայց ներքուստ նա վայելում է այդ աւել կամ պակաս չափով. օր. Գերմանիայի տէրութիւնները, շէյցարական կանտօնները, հիւսիսային Ամերիկայի նահանգները աւտօնօմիա ունեցող երկրներ են։—Ըստ Կանտի աւտօնօմիա է բանականութեան կարողութիւնը ինքն իրեն բարոյական օրէնքներ տալու։

Աւտօտիպ (յուն.), մի շարադրութեան առաջին հրատարակութիւնը կատարած հեղինակի իրեն ձեռքով։

Աւտօտիպիա (յուն.), լուսանկարի կամ պատկերի տպագրութեան մի եղանակ, որի կաղապարը (կլիշէն) ցինկէ տախտակ է, նրա վրա տաւէրային մասերը մաշեցնում են լուսաւորները ծուռ են բարձր։

Աւտօր (լատ.), հեղինակ։

Աւտօրիզացիա (ֆր.), լիազօրութիւն, արտօնութիւն։

Աւտօրիտէտ (լատ.), հեղինակութիւն. հեղինակաւոր անձն, որի խօսքը կշիռ, ազդեցութիւն ունի։ Մի մարդ, որի խօսքին նշանակութիւն են տալիս նկատի առնելով նրա գիտութիւնը և փորձառութիւնը։ Իշխանութիւն, իշխանութեան ներկայացուցիչ։—Ա.-ի հաւատալ, կուրօրէն հաւատալ հեղինակաւոր մարդկանց և գրքերի։

Աւրօրա (լատ.), արշալոյս։ արևածագ։ Աւրաւօնան աստուածուհին, յունաց Իօսը։

Ախալ-թէքինայ (թուրք.), ըստտալով, ազնիկալի։

Ախաչկապա (պարսկ.), բոլորովին ակնյայտնի, ակներև։

Ախիօն տես աֆիօն։

Ախոյ, հայր, հայրիկ։

Ախրոյիտէ, յունաց գեղեցկութեան և սիրոյ աստուածուհին. հռոմայեցոց *Վէնէրան* կամ *Վէնուսը*։

Աքէրօն, սգոյ գետը աստրերկրեայ աշխարհում յոյն դիցաբանութեան մէջ։—Դժոխք, աստուտրոս։

Աքիլէս, յունաց ամենամեծ հերոսը Տրովական պատերազմում. արագոտն, խարտեաշ, թշնամիների համար ահ ու սարսափ, իսկ բարեկամների համար ապաւէն. անառակ իր բարկութեան մէջ, բայց մեծահոգի, մեղմ. հնազանդ աստուածներին. փառքի սիրահար և արհամարհող մահուան վտանգները։—*Աքիլէսի գարշապարը* նրա միակ խոցելի տեղն էր, որովհետև նրա մայրը նրան լացել էր կախարդական ազդեցութեամբ, որպէսզի նա անմահ մնայ. միայն նրա կրունքը, որտեղից նա բռնել էր, մնաց խոցելի։ Թոյլ կողմը մարդի։

Աքսիօմա (յուն.), անվիճելի ճշմարտութիւն, որը ապացոյցի կարօտ չէ և ոչ էլ կարող է ապացուցել. բայց ինքը ծառայում է այլ ճշմարտութիւններ ապացուցելու համար։

Աօրիստ (յուն.), անսահման անցեալ ժամանակ, պատմական անցեալ յունարէնում։

Ապֆկա, ապֆկա (լատ.), յոյզ։ կիրք, բորբոքում. հոգեբանութեան մէջ արտաքին կամ ներքին պատճառից առաջ եկած մի անցողակի ուժեղ շարժում արտայայտութեան, որը իր հերթին ապդում է մեր հոգու վրա և մարմնի մէջ փոփոխութիւն առաջ բերում. օր. բարկութիւն, ուրախութիւն, ոգևորութիւն, ատելութիւն, երկիւղ, յուսահատութիւն, անհամբերութիւն, յոյս, զարմանք, չանկարծահաս վիճակ, ահաճութիւն, սքանչանք, շփոթութիւն, վրդովմունք, պիղծ, համարձակութիւն, հպարտութիւն, նախանձ, չարախնդրութիւն և այլն։

Ապէկտացիա (լատ.), կեղծ, շինծու վարմունք։ կեղծ շինծու ձևեր խօսակցութեան, շարժումների մէջ. կեղծ ոգևորութիւն։

Ապէրա (ֆր.), շռնդալիտական ձևնարկութիւն անմաքուր ճանապարհով։

Ապէրիմ (պարսկ.), ապրեմ, կեցցէ։

Ապէրիտ, ապերաններով ըզբաղուող, շահախնդիր, արկածախնդիր։

Ա.ֆինիտէտ (լատ.), ազգակցութիւն. մանաւանդ՝ տրամաբանական և հոգեբանական մտքով։

Ա.ֆիշ աֆիշա (ֆր.), պատին կամ սիւներին կպցնելու յայտարարութիւն։

Ա.ֆիրմատիվ (լատ.), դրական. այն պատասխանող։—Դատողութիւն, որ հաստատում է առարկայի այսինչ որակը ունենալը։ Հակառակը՝ նէգատիվ։

Ա.ֆիօն, ափիօն, օպիում (լատ.), հնդկական որոշ տեսակի խաշխաշի հատիկներից թմրեցուցիչ նիւթ։

Ա.ֆասն և այլն տես աւազն։

Ա.ֆտօր և այլն տես աւտօր։

Ա.ֆրօդիզա (յուն.), հիւանդոտ զգայականութիւն։

Ա.ֆրօդիտէ տես Աֆրօ...

Ա.ֆրօնտ (ֆր.), նախատինք, վիրաւորանք։

Ա.ֆօրիզմ (յուն.), կարճ, յատկիրճ արտայայտուած մի իմաստալից խօսք։

Ա.ֆօրիստական պրուիթին կամ խօսք, կարճ, կտրուկ կերպով արտայայտուած։

Բ.

Բա, բաա (թուրք.), իմարկէ։

Բաադ, բահադ, հնթանոտական աստուած վիւնիկեցիների, քանանացիների և երբայեցիների։

Բաբա (պարսկ.), հայր։

Բաբա-նազա, պառաւ կախարդ ռուս հեքիաթների մէջ։

Բաբալը, լաւ, կարգին։

Բաբէլ, բաբէլոնական խառնակութիւն, խառնաշփոթ, անկարգ վիճակ.—*Բաբէլոն* ասում են նաև այն մեծ քաղաքները, որոնք անբարոյականութեան և անառակութեան բուն են հանդիսանում։

Բաբը-ալի, Թիւրքիայում ասում է նախարարների խորհրդատեղին։—Թիւրք կառավարութիւն։

Բաբի (արաբ.), *բաբիզմի* հետևող։

Բաբիզմ, 1839 թուին Ալի Մուհամէդ Շիրազեցու (1820—1850) հիմնած մի մահմեդական աղանդ է Պարսկաստանում. բաբիհանների գլխաւորը անուանում էր իրեն *բաբ*, այսինքն դուռն, համարելով ինքն իրեն միայն ճանապարհ դէպի ճշմարտութիւնը։ Բ.-ը քարոզում է արտաքին ծիսական մասի դէմ, կողմնակից է կանանց ազատութեան և մահմուդիհան քրիստոնեաների հետ։

Բարկի (ռուս.), կոճախաղ, ռակրախաղ ռուս ժողովրդի մէջ։

Բարոլ, Թիւրքիայում և Կովկասի մի քանի մասերում զորածառական կոշիկ է տան մէջ հագնելու, բոլորովին տափակ, ծածկում է միայն ոտքի մատները։

Բարոմէիզմ, ուսմունքը Բարէօֆի, որ ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ քարոզում էր, թէ յեղափոխութեան նպատակը կատարելապէս իրագործած կլինի միայն այն ժամանակ, երբ չեն բաւականանայ միայն իրաւական և քաղաքական հաւասարութեամբ, այլ կիրագործեն նաև ունեցուածքի հաւասարութիւն։

Բազած (ֆր.), բեռ, ծանրոց. ճանապարհորդութեան մէջ հետը վերցրած իրերդ։

Բազէա (ֆր.), գունաւոր կամ ոսկեզօծ ձոյ, որ գործ է ածւում իրրև երիզ կամ շրջանակներ շինելու համար։

Բազին, հին հայոց մէջ՝ կըռատուն։

Բազշիշ տես բանշիշ։

Բաստամ (պարսկ.), նուշ. նըշամիջ։

Բաղդրջան (պարսկ.), ամբուկ, «տօմաթէս», սիրախնձոր. միամեայ մի բոյսի պտուղ է. մեծ մասամբ կանաչ կամ կարմիր, թթուշ համով, գործ է ածւում կերակրի մէջ։

Բաղիա պղնձէ խոր աման։

Բազա, բազիս (յուն.), հիմք, յենարան. հիմնաքար. կայան.

Բազազ (արաբ.), կտաւավաճառ.—Ճոթիղէնի վաճառական։

—*Բազազխանա*, խանութների շարք շուկայում, որտեղ ճոթիղէն են վաճառում։

Բազար (պարսկ.), շուկա, վաճառքի հրապարակ։ Արևելքում յաճախ նա մի ծածկած փողոց է երկու կողմը խանութներով։—Բարեգործական նպատակով կազմած վաճառք ձեռագործների և այլ իրերի։

Բազարտուրը, շուկայի մարդիկ։

Բազարբաշի (թուրք.), քաղաքային վարչութեան պաշտօնեայ, որ վերահսկում է կարգ ու կանոնին քաղաքային շուկայում. շուկայապետ։

Բազի (արաբ.), երբեմն։ Մէկ քանի. մի կարգի։

Բազիլիկա (յուն.), հին Ա.-Թէնքում հրապարակային դատաստանատունը։—Հռովմում մի երկարաձև քառանկիւնի շէնք երկշարք սիւներով, որտեղ առևտրական յարաբերութիւններ, դատեր էին տեղի ունենում։—Քրիստոնէական շրջանում Բ. կոչւում էին նոյն ձևի մատուռներ կառուցած սրբերի գերեզմանների վրայ։—Այժմ ճարտարապետութեան մէջ՝ նոյն ձևի երկշար սիւնազարդ սրահ։

Բազրգեան (պարսկ.), վաճառական։

Բալմման (թուրք.), պարակաստանում և Թիւրքիայում գործածական կշռաչափ. թէհէրանի բ.—2,9376 կիլօգրամ։

Բալմիշ լինել (թուրք.), խըրւել, խորասուզւել։

Բալ (արաբ.), թթու կեռաս։

Բալ (ֆր.), պարահանդէս։

—*Բալ մասկէ, բալ մասկարատ*, դիմակահանդէս, ուր մարդիկ յայտնւում են դիմակներ հագած կամ փոխած զանազանաձև հագուստներով։

Բալ, բալլ (ֆր.), քէֆ։—*Բալա նշան*. վարքի, յառաջադիմութեան թուանշան։

Բալա (թուրք.), զաւակ, որդի։—*Զադուկ բալամ*, որդիս։

—*Բալամ չան*, հոգեակս, սիրելիս։

Բալա, բէչա, հոգս, վիշտ։ *Փորձանք։ Տես խալթաբալա։*

Բալագան (ռուս. պարսկ.), տախտակից կառուցած հասարակ շէնք Ռուսաստանում, որտեղ ժողովրդական ցածր տեսակի զբաղմունքներ են ցոյց տրւում։

Բալագուր (ռուս.), զբաղաբան. ծաղրածու։

Բալալայկա (ռուս.), ռուսական նւագարան նման սազին։

Բալախանա (արաբ.), վերնատուն. թեթև կառուցած և շատ կողմերից բաց վերնատուն. պատշգամբ։

Բալանս (ֆր.), *բիլանց* (գերմ.), հաշուեկշռութիւն։ Հաշիւների վերջնական եզրակացութիւնը, որտեղ մուտքը և ելքը իրար դիմաց են բե-

թած։—Առևտրական բալանս, միջազգային առևտրի մէջ՝ մի երկրի ապրանքային փոխանակութեան արդիւնքը առհասարակ արտահայտմանի հետ. կամ որևէ մի երկրի հետ մի որոշ ժամանակի ընթացքում, սովորաբար՝ մի տարի։ Բալանսը յաջողակ է համարւում, երբ արտահանած ապրանքների արժէքի գումարը աւելի մեծ է, քան ներմուծածի. (և անյաջող՝ երբ ընդհակառակն է տեղի ունենում). այսինքն, երբ մի երկիր իր սեփական արտադրութիւններից աւելի շատ արտահանմանն է վաճառում, քան նրանից գնում է։—Առևտրական բալանսի ուսմունք աւում է մէրկանտիլ ուսմունքը։

Բալանսէօր (ֆր.), լարախաղաց։—Աչքակապութիւն անող։

Բալասան (արաբ.), դեղ, դարման։—Որոշ ծառերից առացած անուշահոտ խէժ։

Բալատիրօվկա (ռուս.), քէչարկութիւն։

Բալաբ, խայտապղէտ։

Բալտախին (իտալ.), ամպհովանի, դիակառք։

Բալդրիան տես վալերիան։

Բալզամ տես բալասան։

Բալէս, բալէն, բալէթս և այլն քալա—զաւակ, ձագուկ-բառից են։

Բալէտ (ֆր.), բեմական ներկայացում, ուր գլխաւոր տեղն է բռնում պարը և երաժշտութիւնը։—Բալետմայստեր, բալետի պարերի դեկավար։

Բալէրինա, պարուհի. բալետում ծառայող և պարող կին։

Բալղր (թուրք.), ձուկ։

Բալի տես բալքի։

Բալի ասել, այո ասել. հլու լինել։

Բալիկ (թուրք. ռուս.), որոշ ձկան մէջքի փափուկ մասերը ապխտած.

Բալիկ (թուրք. հայ.), բալա բառի փաղաքշական ձևն է, որդեակ, ձագուկ։

Բալլադա, բալլատ (ֆր.), մի բանաստեղծական կտոր, որի բովանդակութիւնն է մի աւանդութիւն կամ մի առասպել։ Ժողովրդական բնոյթ ունեցող մի ոտանաւոր։

Բալլաստ (անգլ.), աւելորդ բեռ, ծանրութիւն. նաւերը վերցնում են իրենց յածի մասում իրրև Բ. ջուր, որպէսզի նաւը շատ չբճճայի։ Նոյնպէս վերցնում են օդանաւորդները աւազի տոպրակներ իրրև Բ.։—Ամէն մի աւելորդ բեռ, որ կարելի է դուրս դնել առանց վնասի։

Բալկօն (ֆր. իտալ.), պատշգամբ։—Հուսամուտի դուրս ընկած մասը, որտեղից կարելի է փողոց նայել։

Բալնէօլօգիա (լատ.), ուսմունք բաղնիների մասին։ Բաղնեխնամութիւն։

Բալշևիկ, բոլշևիկ (ռուս.), Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան երկրորդ համագումարին (1903) առաջ եկած մի հոսանք—մեծամասնական,—որը կազմակերպչական հարցում խիստ կենտրոնացման կողմնակից էր, հակառակ մենշևիկների, որոնք պաշտպանում էին կուսակցութեան աւելի ժողովրդական կազմակերպութիւն և աւելի համբերատար էին դէպի ոչ „Искра"-ականները։

Բալնէատրաղա (ֆր.), յենասիեն, սիենաշարից կազմած վանդակապատ. նոյնպիսի պատով պատշգամբ։

Բալսան (ռուս.), խրտուիլակ։—Յիմար, դաւարկագլուխ մարդ։

Բալքի, բալքամ, բալի, գուցէ, թերևս։

Բալօն (ֆր.), փնդակ, գունդ։—Օդապարիկ։

Բախախալ (արաբ.), բախալ, նպարավաճառ։

Բաշխիլ (պարսկ.), պարգևել։—Բախշիշ, բագշիշ, պարգև, ընծայ, նուէր։—Թիւրքիայում, պարգև պաշտօնական անձանց, որը նաև կաշառքի բնաւորութիւն ունի։

Բախչա (պարսկ.), պարտէզ։

Բախտակյա (արաբ. ռուս.), նպարեղէն։ Մրգեղէն։

Բախտար (ֆր.), Թղթախաղի մի տեսակը։

Բակալաւր (լատ.), բակալաւր. եւրոպական համալսարաններում (ոչ գերմանական տիպի) առաջին գիտական աստիճանը։

Բակէնարդ (գերմ.), այծամորուս ծնոտը ածելած, իսկ կողքերից թողած մորուս։

Բակտէրիա (յուն.), մանրէ. հազարաւոր աչքով անտեսանելի փոքրիկ աթարածներ, որոնք շատ հիւանդութիւնների պատճառ են դառնում։ Տես բացիլ։

Բակտէրիօլօգ, բակտէրիաների ուսումնասիրութեամբ պատրաստող անձն։

Բակտէրիօլօգիա բակտէրիանների ուսումնասիրութեամբ պարապող գիտութիւն. մանրէաբանութիւն։

Բակֆիշ (գերմ.), մատաղահաս աղջիկ 14—17 տարեկան։

Բահադ տես բահաղ։

Բահար (պարսկ.), գարուն։

Բահար (արաբ.)։ համեմունք։

Բահ (պարսկ.), այո։—Բահշիս, պարտէզ։

Բահման (պարսկ.), բահմանէի (պարսկ. թուրք.), այդեպան։

Բահնագէյ տես բօնագէյ։

Բահրուս, բահրուկ, երկար և հասած եղեգնածառ Հնդկաստանում, որից յաճախ կարասիք են պատրաստում։

Բահիա (թուրք.), կուտաւուկ. մի տեսակ բանջարեղէն է։

Բայադէր (փօքթ.), պարող և երգող հասարակաց կանայք Հնդկաստանում։

Բայան, թափառական երգիչ, գուսան հին Ռուսաստանում։

Բայաթի, թուրքական ոտրաձայն երգ։

Բայացցօ տես պայաց։

Բայդուշ (թուրք.), բազ։

Բայրաղ (թուրք.), դրօշակ։—Բայրաղտար, դրօշակակիր։

Բայրամ (պարսկ.), մահմետականների երկու մեծ տօները կոչւում են այդ անունով. առաջինը, որ տեւում է երեք ծր. ծոմապահութեան ամիս՝ ռամազանից յետոյ, կոչւում է մեծ բ., իսկ երկրորդը դրանից 70 օր յետոյ զոհաբերութեան տօնը, որ կոչւում է կուրբան-բայրամ։—Նովրուզ բայրամ, նոր տարւայ տօն։

Բայրոնիզմ, 19-րդ դարի առաջին կեսի եւրոպական գրականութեան մէջ տարածած ուղղութիւն բանաստեղծութեան մէջ անգլիացի բանաստեղծ Բայրընի ազդեցութեան տակ. յատկանիշներն են հերոսապաշտութեան տրտունջն և համաշխարհային վիշտ։ Հայ բանաստեղծներից Բ.-ին ենթարկւել է Սմպատ Շահազիզը։

Բայօնէտ (ֆր.), նիզակաւոր հրացան։

Բանալ (ֆր.), սովորական, առօրեայ, հասարակ, անհամ, անճաշակ, համն ու հոտը կորցրած։ Բ. արտայայտութիւն, խօսք—հասարակ, արտրած, իր գործածութիւնը կորցրած խօսք։

Բանալիտէտ։ բանալ ասելու ձանի հասած մի խօսք։

Բանան, ադամաթուզ, վաղուընկաձև դեղին պտուղ, խիտ համեղ, որ բուսնում է Հնդկաստանում։

Բանքանիէրկա (ֆր. ռուս. ուղիղը բօնբօն...), շքեղ տուփ քաղցրաւէնիների համար։

Բանղա, հրոսակախումբ։

Բանդաժ, (ֆր.), վիրակապ. կապ։ Մետաղէ ձողերից և կաշուց շինած զոթիք, որ կոտրած անդամները կամ մարմնի թուլացած մասերը պահում է իսկական դիրքի մէջ։

Բանդաժիստ, բանդաժագործ։

Բանդէրօլ, բանդըրօլ (ֆր.), թղթից ծրարակապ պօստով ուղարկուող գրքերի կամ թղթերի համար նամակագրօշմուկ։ Մաքսադրօշմ, թղթի մի շերտ, որ փակցնում են ծխախոտի արկղներին կամ այլ իրերի, որոնք մաքսի են ենթակայ։

Բանդիտ (իտալ.), փախստական, աքսորական։ Աւազակ, ճանապարհների կողոպտիչ։

Բանդուրա (ռուս.), Ուկրայինայում (փոքր Ռուսիայում) գործածական մի բազմալար երաժշտական գործիք։

Բանզայ, եապօնացոց՝ ուռա, կեցցէ։

Բանի, ռումանական դրամական ամենափոքր միաւորը (100 բանի = 1 լէյ = 1 ֆրանկ) = 1 սանտիմ = $^1/_3$ կոպ.

Բանկ (իտալ.), դրամատուն, դրամատեղ. հաստատութիւն, որ նպատակ ունի դրամական, վարկային և արժէթղթային գործառնութիւններ կատարել։ Բանկային գործառնութիւնները են դէպառորապէս՝ դումարների այնպիսի դրամագլուխների, որոնք շահեցման կարիք ունին և գործադրութիւն են փորում, և նրանց փոխառութիւնը դրամագլխի կարիք ունեցող անձանց կամ գործադրութիւնը դանազան ձեռնարկութիւնների մէջ։ Բանկը ըրաղւում է դրամափոխութեամբ, օտար դրամի առևտուրով. վերցնում է դրամագլուխներ պահպանելու. յանձնն է առնում հաշւապահութիւն և գործադրութիւն դրամատիրոջ համար. արծաթի և ոսկու առևտուր է անում. հանդիսանում է վարկի միջնորդ գործ դնելով թէ իր սեփական և թէ ուրիշներից պարտ վերցրած դրամագլուխը՝ այսպիսով հանդիսանում է միաժամանակ և՝ պարտատէր և՝ պարտապան. բաժնեթղթական ձեռնարկութիւններ է անում և իր սեփական բաժնեթղթերի առևտուրով է զբաղւում. իրագործում է պետական և համայնային փոխառութիւններ։

Բանկ, թղթախաղի մի տեսակը։

Բանկա (լհհ.), պղնձաձև անօթ ապակուց կամ կաւից։ —Մօտաւորապէս նոյն ձևով յատուկ անօթ, որ գործում են մարմնի որևէ մասի վրա, արիւնը այնտեղից դուրս քաշելու կամ այնտեղ կենարոնացնելու նպատակով,

Բանկէտ (ֆր.), հանդիսաւոր խնճոյք ի պատիւ մի հասարակական գործիչի։

Բանկիր (ֆր.), տեղանաւոր. բանկի դրամագլխի սեփականատէր կամ գլխաւոր բաժնետէր։

Բանկնօտ (գերմ.), բանկային տոմս. որևէ բանկի կողմից դուրս թողած տոմս, որի մէջ նշանակած է մի կլոր գումար և որի տէրը ամէն րոպէ կարող է այդ գումարը ստանալ տոմսը ներկայացնելով։

Բանկրօտ, անանկ. պարտքերը վճարելու անկարող։

Բանտ (պերս.), ժապաւէն մի քանի ծալ արած և մէջտեղից ձգած. կապ, փողպատ։

Բաշ (պարսկ.), ձիու վզի վրայի երկար վարսը։

Բաշ, բաշի (թուրք.), բանակի վերջից միացած նշանակում է պետ. գաղաթ, կատար։

Բաշարկել, մի գործ յաջողեցնել, գլուխ բերել։

Բաշի բուզուկ (թուրք.), թիւրքական անկանոն զօրք, մասամբ ժողոված, մասամբ կամաւոր։ —Վայրագ գազանաբարոյ պինդար։

Բաշիբեարթմա, բէշիբ... (թուրք.), օրօրոցից տղայ ու աղջիկ նշանելու խօսք տալ. պիւղերում տարածւած մի սովորութիւն է։

Բաշլըղ (թուրք.), գլխանոց. մի տեսակ գլխակապ է, որով լեռնցիները և առհասարակ կովկասցիք կապում են գլուխները. կամ ցրտից և անձրևից պաշտպանելու համար ծածկում են գլուխն և ուսերը։ —Գլխագին, փրկանք։ Ժողովրդական մի սովորութիւն. վիճակի ծնողները դրամական և այլ տեսակի վճարում են անում հարսի ծնողներին իրրև ամուսնութեան մի պայման։ Թիւրքաց Հայաստանում առում է խալաթ։

Բաշկիր, մի թաթարական ցեղ է Ռուսաստանում։

Բաշմակ, (թուրք.) քաշմակ, կանանց ոտամանի մի տեսակը։

Բաշտատա (թուրք.), գլխից վրա. ծառայելու պատրաստակամութիւն արտայայտող խօսք

Բաշպօրթի տես պաապօրտ։

Բապտիստ (լատ.), աղանդաւոր, որ մերժում է երեխաների կնունքը և ընդունում է միայն չափահասներինը։

Բաղանաղ (թուրք.), քենակալ։

Բաղէի (թուրք.), քոյր։ Նաև պատուանուն տարիքաւոր անձանօթ կանանց։

Բաղջողլի (թուրք.), քեռորդի։

Բաս (ֆր.), ցածր ձայն, խումբ։

Բաս մանել, մրցել, գրազ գալ։

Բասեակ, բօսեակ (ռուս.), բոկոտն. պատառոտուած շորերով անգործ թափառաշրջիկ։

Բասմա, անասուններէի աղբը ձմեռը հատ շերտով տափակ փռած, որը ոտքերի տակ կոխ տալուց ամրանում է, և նրան կտրատելով գործ են ածում իբրև վառելանիւթ։

Բատուման (ռուս.), մահմեդական, Անհաւատ։ Օտարական։

Բատտ տես բէտտ։

Բատտա (իտալ.), բաւական է։

Բատտիլիա, Կարլոս V-ի կառուցած ամրոցը, աշտարակներով շրջապատուած, ուր քաղաքական յանցաւորներն էին պահւում և որը 1789 թուին յեղափոխութեան ժամանակ կործանեցին —Այժմ ը. կոչւում է առհասարակ բանտութեան կենտրոնը։

Բատիօն, ամրոցի պարսպի վրա դուրս ընկած աւելի ամուր մասերը «բուրջ»։

Բատտուրմա (թուրք.), քացախով և համեմով պատրաստուած մսից խորոված։

Բատալիօն (ֆր.), մի քառորդ գունդ զօրք։

Բատարէա (ֆր.) 6—8 թընդանօթից կազմած բաժանմունք թնդանօթաձիգների։— Մարտկոց թնդանօթների։

Բատիատ (ֆր.), ամենանուրբ և խիտ գործած քաթան։

Բատիշկա (ռուս.). հայրիկ։ —Տէր հայր։

Բատրակ (ռուս.), օրավար-

ձով աշխատող երկրագործական բանուոր. մշակ։

Բար, պուռւղ, բերք։—Բարատու, պտղատու։

Բարաբար, բարբբար, գուգընթաց հաւասար։

Բարաթ, մուրհակ։ Տես նաև բերաթ։

Բարակ (ֆր.), տախտակէ թեթև շէնք, տաղաւար, որի մէջ ժամանակաւորապէս տեղաւորում են զօրք, հիւանդանոց և այլն։

Բարատ առուտուր, ապրանքների փոխանակութեամբ առուտուր։

Բարաթեաթ (արաբ.), օրհնութիւն, լաւութիւն, առատութիւն։—Խէրուբարաթեաթ, յաջողութիւն, առատութիւնը։

Բարաթեապլա, բարիքեապլա, Առուած օրհնի, քաջալերական բացականչութիւն։

Բարբար, բէրբէր (թուրք.), սափրիչ։

Բարբարոս (յուն.), բիրա, վայրագ, անկիրթ, քաղաքակրթութեան պատուհասը չգնահատող մարդ։ — Հին յոյների հայեացքով ը. բոլոր ոչ յոյներն էին։

Բարբարիզմ, օտարաբանութիւն մի լեզուի մէջ. օտարոտի դարձուածք։

Բարբարիս (լատ.), կծախառն, թթու և փշոտ պտուղներով մի բոյս։

Բարբարոսաս. կարմրամօրուս, շիկամօրուս. Ֆրէդրիխ I կայսրի մականունը.

Բարդակ տես բօրդէլ։

Բարդուղիմէոսեան գիշեր, 1572 թ.ի օգոստոսի 24 գիշերը. երբ Պարիզի կաթոլիկները կոտորեցին բողոքականներին։— Արիւնոտ տեսարաններով լի կոտորած, ջարդ։

Բարէլիէֆ, ցած ուռուցիկ քանդակ, որ ընդհանուր մակերևոյթից քիչ է բարձրանում. խորաքանդակ։

Բարժ (անգլ.), թևաւոր մեծ նաւակ, որի օգնութեամբ մեծ նաւերը բեռնում են կամ դատարկում։

Բարիէր (ֆր.), ցանկապատ։—Բարձրութիւն, վերան կամ պատ, որի վրայից ձիերին թռցնում են։—Սահման, պիծ, որից անցնելը արգելւում է, շինած մի վերանից, ձողից կամ իրրև ցածր պատ։

Բարիկադ (ֆր.), պատնէշ, պատուար, որանցով փողոցների անց ու դարձը կարում են յեղափոխութիւնների ժամանակ և նրանց յետևից կռւում թշնամու դէմ։

Բարիշ (թուրք.), հաշտ։—Բարիշել, բարշել, հաշտուել։ Գնի վրա համաձայնութեան գալ։

Բարին (ռուս.), տէր, ազա։

Բարիտօն (յուն.), առնական կիսաբամբ ձայն։—Այդ ձայնով երգող երգիչ։

բարիտօնիստ. բարիտօն ձայնով երգիչ։

Բարիքեապլա տես բարաթեապլա։

Բարխանա (պարսկ.), ապրանք, առուգուածք։—Բարկ ու բարխանա, ծանրոցք, բեռնուով ապրանք։

Բարկ, բեռ։

Բարկա (ֆր.), սալը բեռնակիր նաւակ գետերի վրա։

Բարկաս (իտալ.), բեռնակիր մեծ նաւակ.

Բարօն (ֆր.), ազատատէր, ազատ իշխան. ազնուական, որ միայն թագաւորից կախումն ունի և ոչ մի իշխանից կամ կոմսից։ Հայերէն պարոն գրա ազատազուրկ է։

Բարօնէասս, բարօնէս, բարօնուհի։

Բարօսկօպ (յուն.), եղանակի որպիսութիւնը ցոյց տուղ մի գործիք, բարօմէտրից տարբեր կառուցուածքով. ծանրացոյց։

Բարիտարօլա (իտալ.). Վենետիկի գօնդօլավարների երգը։

Բարշչինա (ռուս.), անվարձ ծառայութիւնը կալուածատէրերի համար Ռուսաստանի ճորտատիրական շրջանում։

Բարում (թուրք), վառօդ։—Բարումխանա, վառօդատուն։

Բարօմէտր (յուն.), ծանրաչափ. մի գործիք, որ օդի ճնշման աստիճանով եղանակի որպիսութիւնն է ցոյց տալիս։

Բացիլ (լատ.), ձողաձև մանրէ, անտեսանելի փոքրիկ բոյսկենդանիներ են, որոնք առաջ են բերում նեխում և փթում. կոչւում են նոյնպէս միկրօբ, բակտէրիա։

Բաբմազ (թուրք.), մաթ, քաղցուց. խաղալի կամ թթի հիւթից եփած թանձր հեղուկ։

Բաբու, պինու առաւածք. կոչւում է նոյնպէս Դիօնիսոս։ Բաբուանալ, բաբուական պիտիներ, զարճութիւններ,—արբենալ, արբեցութեամբ պարապել։

Բաբաք, մի խոտ հատ ծառ Աֆրիկայում, ունի զովացնող պտուղներ։

Բեկուզա (ռուս.), ճանապ, մեծ ձուկ է։

Բերկովեց (ռուս.), ծանրութեան չափ=10 պուդ=164 կիլօգրամ։

Բէարուն տես բիարուն։

Բէատիզմ (լատ.), կեղծ բարեպաշտութիւն։—Երանաւէտութիւն։

Բէբի (անգլ.), բէբէ (ֆր.), մանկիկ, երեխայ, որին պես ձեռքի վրայ են կրում։

Բէբուն, փոքրիկ գաշտոն։

Բէդուին (արաբ.), թափառաշրջիկ արաբ։

Բէգ, բէյ (թուրք), հնուս շատ բարձր տիտղոս էր, իշխան, տէր. ներկայումս Թիւրքիայում տրւում է կրթած մարդկանց և պետական պետերին։ Կովկասում առհասարակ, թուրքերի և քրդերի մէջ գա կոչումն է ասակ ազնուականի և ցեղապետի։

Բէգական հողեր, բէգլին, կալուածատիրոջ պատկանող հողեր, որ գիւղացիներին կապալով են տրւում։

Բէգզադէ (պարսկ.), իշխանազուն. ազնուականի զաւակ. բէգի սերունդ։

Բէգհան կամ կօն ու բէգհան անվարձ աշխատանք, որ գիւղացիք կատարում են հողատիրոջ և պետութեան համար իրրև մի տեսակ տուրք։

Բէգլերբէգ, բէյլերբէյ. էին ժամանակ այդպէս էին կոչւում Թիւրքիայում ընդհանուր նահանգապետները, որոնցից կային երեքը՝ Անատօլիայի, Ռումելիայի և Սիրիայի. Իշխանաց իշխան։

Բէղաղ, անարդարութիւն, անիրաւութիւն։— Դատ բէղաղ, դատաբիղամ, բողոք անարդարութեան դէմ։

Բէղամաղ, գժգոհ, վիրաւորւած։

Բէղէլ, Թիւրքիայում քրիստոնեաների և հրեաների տուրքը պետական ծառայութեան տեղ։

Բէղէլը իլմիհալ (առաջ.), Թիւրքիայում հարկերի կապալավարձը. այն գումարը, որ կապալառուն վճարում է։

Բէղէկբը, կոչւում են ճանապարհորդական ուղեցոյց գրքերը այդպիսիների մի նշանաւոր հրատարակիչ անունով։

Բէղուտուր, վառարան. չարուշակ։

Բէղովլամի, անառակ։ — Վատ զաւակ։

Բէզարել (թուրք.), յոգնել։ — Ձանձրանալ։

Բէզէ (ֆր.), շաքարահացի մի յատուկ տեսակը ձւի սպիտակուցից պատրաստած։

Բէզիկ, մի տեսակ թղթախաղ։

Բէզզրգեան տես *բազրրգեան*։

Բէլմար (պարսկ.), աւելի վատ, վատթարագոյն։ — *Բէլմհար*, անկերպ, ապեր։

Բէլէտաժ (ֆր.), տան առաջին յարկը, ամենալաւը բնակութեան համար։

Բէլէտրիստ (ֆր.), գեղեցիկ գրականութեան արտադրութիւնների հեղինակ։

Բէլէտրիստիկա (ֆր.), գեղեցիկ գրականութիւն՝ գեղարուեստական գրականութիւն՝ վէպ, պատմուածք, պօէմա և այլն։

Բէլէրօֆոն, յոյն պիցցարաներութեան մէջ այն հերոսը, որը թռչնաձի Պէգասին հեծած սպանեց Քիմէռ հրեշին։

Բէլլ-Լանկաստէրեան տես *Լանկաստէրեան*։

Բէլէղէր (խաալ.), փոքրիկ զարդարուն բարձրութիւն շինութեան վրա գեղեցիկ տեսարաններ դիտելու համար. գեղադիտարան, արեգակնակ։ — *Բէլէւէդերեան Սպօլլօն*, Վատիկանի (Հռովմի պապի պալատի) մի մասում, որ կրում է բէլէղէր անուն, Ապօլլօնի մի հին արձանը, որ ճանաչւած է առնացի գեղեցկութեան կատարեալ տիպ։

Բէմ տես *բէղ*։

Բէմսաբար (պարսկ.) անտեղեակ։

Բէմէբէ (պարսկ.), անօգուտ, փորձանք բերող։

Բէկաս (ֆր.), փոքրիկ ճանճային թռչուն երկար կտուցով. կոցար։

Բէն, կանխաւճար. մի գումար փող, որ տրւում է մի բան գնելիս կամ վարձելիս իբրև ապահովութիւն։

Բէնամ, տկար։

Բէնէմօն, ձիապահ. մի մեծ կենդանի։

Բէղ (թուրք.), ընչանգք։

Բէղաքէլ, անապատելի, յանկարծակի։

Բէմոբատ, անմուրազ, անեծք է. իղձ, փափակդ չըկատարուի։

Բէմօլ (իտալ.), կիսվար։

Բէյ և այլն տես *բէգ*։

✓ *Բէնզալեան կրակ*, գոյնզգոյն լոյս արձակող կրակ, որ վառում են հանդիսաւոր օրերին կամ հրավառութիւնների ժամանակ։

Բէնգին (լատ.), կնդբիա, բենակնդբիա. ածխածնից և ջրածնից բաղկացած մի հեղուկ ուժգնագոյն հոտով, որ գործադրւում է այլևայլ, բծեր մաքրելու և այլ պէտքերի համար։

Բէնէդիկտեան, միաբան կաթոլիկ հոգևորականների բէնէդիկտեան ուխտ, որ հիմնարկւել է 529 թւին և գոյութիւն ունի մինչև հիմա։

Բէնէդիկտին, քաղցրահամ խմիչքի մի տեսակը, որ պատրաստւում է Բէնէդիկտեան մի վանքում։

Բէնէֆիս (լատ.), նպաստ, օժանդակութիւն։ — Ներկայացում ի նպաստ մի դերասանի կամ երգչի։

Բէնէֆիցիանտ, դերասան ի նպաստ որի ներկայացում է տրւում։

Բէնուար (ֆր.), թատրօնական օթեակների առաջին կարգը, որ բեմին հաւասար բարձրութիւն ունի։

Բէնօրէմ-Թիմար, աւազանի կալւածք Թիւրքիայում, որ տրւում էր մի քանի պետրատականների միաժամանակ, որոնք հերթով, փոխ-փոխ պարտաւոր էին պատերազմի դաշտ դուրս գալ։ Տես նաև *Թիմար* և *Միլր-Թիմար*։

Բէշիրեարթժա տես *բաշիր*...

Բէշլըղ (թուրք.), Թիւրքիայում արծաթէ դրամ — 5 պիաստրը կամ 5 զուռուշ — 1,14 ֆր բանկ — 41 կոպէկ։

Բէշմէմ (թաթար.), արիաւորդի մի տեսակը, երկար, որ հագնում են Հիրկիզիայի տակից։

Բէջասել, մշակել, հոգ տանել։

Բէատ կամ բատա մանել։ Պարսկաստանում մի սովորութիւն է, երբ յանձագործը պատիժից ազատւելու համար ապաւինում է մի որևէ սրբատեղի կամ եւրոպական դեսպանատուն կամ հիւպատոսարան և անձեռնմխելի է համարւում, քանի դեռ նա բնաւում է գաղնւում։

Բէատիա (լատ.), անասուն. գազան. անբան։

Բէվախտ, անժամանակ. ուշ դիշերով։

Բէտօն (ֆր.), ցեմէնտ կամ կրի և խոշոր աւազի խառնուրդից կազմած շաղախ, որից պատրաստում են տարբերակ որմեր, արհեստական քարեր, խողովակներ և այլն։

Բէրաթ, *բարաթ* (թուրք.), փոխանակագիր. նախապէս վըճարած դրամի կամ վաճառած ապրանքի համար մի այլ տեղ կամ այլ մարդից ապրանք կամ փող առանալու իրաւունքով Թուղթ։ — Սուլթանական վկայագիր տրւած պատրիարքին կամ եպիսկոպոսին, որ նա իր պաշտօնը ազատ կատարելու իրաւունք ունի։ — *Բրիատոնեայ վաճառականներին* դեսպանի միջնորդութեամբ տրւած թուղթ նրանց ապահովութեան համար Թիւրքիայում։

Բէրաթլի բէրաթ ունեցող։

Բէրբէր (ֆր.-թուրք.), բարբարոս, սափրիչ։

Բէրդան, բէրդանկա ամերիկացի Բէրդանի հնարած հրացան արձիձէ գնդակով, մի հարւածանան։

Բէրնհարդտեանութիւն կոչւում է գերմանական սօցիալ-դէմօկրատական մէջ այն ուղղութիւնը, որը իր մի շարք քննադատական յօդւածներով հիմնաւորեց Էդուարդ Բէրնշտայնը անցեալ դարի 90-ական թւականներին։ Կարլ Մարքսի փիլիսոփայական, սօցիոլօգական և տնտեսական ուսմունքների դէմ մի շարք առարկութիւններ անելով նա եկաւ այն եզրակացութեան, որ արդիւնաբերական կեանքը չի ընթանում Մարքսի գծագրած ուղղութեամբ և որ ցանկալի տնտեսական յեղաշրջումը մօտ ապագայում սպասելի չէ։ Ուստի առաջարկում էր՝ բուրժուական դէմօկրատ կուսակցութիւնների հետ միացած ձգտել ամրակապացնել ներկայ պետական հաստատութիւնները։ Նա պահանջից նաև վերաքննութիւն, *ըէֆիզիա*, կուսակցութեան ծրագրի, այդ պատճառով նոյն ուղղութիւնը կոչւում է նաև *ըէֆիզիոնիզմ*։

Բէքեար, *բէքեարա* (պարսկ.), անպէտք, անօգուտ, անգործ, ապարդ։ — Ընտանեզուրկ, պանդուխտ։

Բէօլիզ (թուրք.), զինւորական գումարտակ. վաշտ։ — *Բէօլիզ-բաշի*, վաշտապետ։

Բիաբուտ, *բէաբուտ*, անառաքինի։

Բլբուլ (պարսկ.), *բիւլբիւլ*

ոխակ։

Բլղղուր (թուրք.), ձաւար։

Բլղղում (արաբ.), մաղաս, խուճ։

Բրոնօթի (թուրք.), քթախոտ։

Բիբար (թուրք.), պղպեղ։

Բիբլիա, բիբլէ (յուն.), Սուրբ գիրք, Աստուածաշունչ։

Բիբլիատ, Աստուածաշունչ մեկնող։

Բիբլիօգրաֆ, գրախօս, մատենախօսող, գրագէտ։

Բիբլիօգրաֆիա (յուն.), մատենախօսութիւն, գրախօսութիւն. հրատարակուած գրքերի մասին ծանօթութիւն գնահատութեամբ։

Բիբլիօթէկ, գրադարան, մատենադարան։

Բիբլիօմանիա, գրամոլութիւն, ընթերցամոլութիւն։ — Հազուագիւտ գրքեր ձեռք բերելու իղձ։

Բիզամնա (լատ. յուն.), երկհնութիւն. երկամուսնութիւն։ Մի մարդ երկու կնոջով, կամ մի կին երկու մարդով ապրութիւնը։

Բիզ (Փր.), հին ոսկի արևելեան առած քամի։

Բիզ տես բիս։

Բիզ (թուրք.), խթան, խայթոց։

Բիզարը (Փր.), պաթրիկակ, պրատարդ. զարմանալի, քմահաճոյ։ Խելագար։

Բիզօն (յուն.), եզագոմէշ, վայրի գոմէշ, ամերիկեան գոմէշ։

Բիթէիզմ (լատ. յուն.), երկասուածութիւն։

Բիժուտըրի (Փր.), զարդեղէն. մանր զարդարանքի տպրանքներ։ — Զարդեղէնի վաճառատուն։

Բիլազիւկ (թուրք.), ձեռքի ապարանջան. օղակ։ — Ջրհորի բերանի քար։

Բիլակ (թուրք.), դատաստակ։

Բիլանց տես բալանս։

Բիլէտ (Փր.), տոմսակ, տոմս։ —Վկայական։

Բիլիարդ (Փր.), դնդախաղ, մակնախաղ. 17-րդ դարում Փրանսիայում հնարուած մի խաղ, երկար ձողերով հարուածում են ոսկրէ գնդակներին։

Բիլլ, բիլ (անգլ.), Անգլիայում (և Հ. Ա. Միացեալ Նահանգներում) օրէնք. օրինագիծ, որ երեք անգամ կարդացուում է երկու պալատներում էլ և ապա առաջարկուում է թագաւորին իբրև ժողովրդական ներկայացուցչութեան վճիռ։

Բիլլիարդ=1000 միլիարդ։

Բիլլիօն=միլիօն անգամ միլիօն։ Ֆրանսիացիք բիլլիօնը հաշուում են 1000 միլիօն։

Բիմետալիզմ (լատ.), պետական կազմի երկպատահան ձեւ. մի պետութիւն, որի պաշտամունքը ունի վերէն և ներքին պալատ։

Բինա (վրաց.), հօրեղբայր. նաև պատուանուն է հաւասարների։

Բիմէտալիզմ (լատ.), երկմետաղեան ուղղութիւն։ Դրամատնական քաղաքականութեան մի ուղղութիւն է, որ առաջ է եկել իբրև հետեանք արծաթի դնի անկման և այն հանգամանքի, որ ոսկին ներկայումս համարեա ամեն տեղ միակ սիրուողուող դրամն է դարձել։ Ը-ը ձգտում է առաջ բերել քաղաքակրթեալ պետութիւնների մի միջազգային դաշնադրութիւն, որով արդնք պարտաւորուին ոսկու հետ միաժամանակ թոյլատրել և արծաթի դրամ կտրելը. որևէ արծաթի դրամ պիտի ճանաչուի իբրև վճարման միջոց առանց գումարի սահմանափակութեան։ Մի հաստատուն յարաբերութիւն սահմանել ոսկու և արծաթի արժէքի (օրինակ՝ $15\frac{1}{2}:1$) և իրաւունք տալ վճարել ցանկացած մետաղով, եթէ նախապէս հաստատուն պարտաւորութիւն չէ կայ այս կամ այն մետաղով վճարելու։ Ը-ի կողմնակիցները հանդիսանում են աւելի ապրանային — երկրագործական շահերի պաշտպանները։ — Սրա հակառակ այն ուղղութիւնը, որ կողմնակից է մետաղներից միայն դերակշռութեան, արծաթի կամ ոսկու, կոչւում է *մոնոմետալիզմ*։

Բինա, հիմք։

Բինարշի (թուրք.), հապարապետ։

Բինա (գերմ.), կապան, վիրակապ։

Բինօկլ (Փր.), թատերադիտակ. կրկնադիտակ։

Բիպսան տես սէբօպսան։

Բիջ (թուրք-վրաց.), ծառայ, սպասաւոր։

Բիա (լատ.), կրկին, էլի մի անգամ։

Բիսէր (արաբ.), ուղտնք։

Բիսիկիա (իտալ.), կրկնեփ, փունջ, պարթիմաթ։ Թխած և կրկին անգամ հնոցում չորացրած շաքարատնայ։ — Միանգամ թրծած կաւից շինած ամանեղէններ և զարդեր։

Բիտտի, պարսկական դրամ=$\frac{1}{100}$ ղրան=$\frac{1}{3}$ կոպէկ. իրանուհիան մէջ գոյութիւն չունի, այլ միայն հաշիւներում։

Բիվուակ (Փր.) *բիվակ*, դիշերատնական, դիշերուայ բացօթեայ պահակախումբ։ — Բացօթեայ տեղ, ուր դիշերը զօրքերը հանգստանում են։

Բիրդան, բիրդանբիր (թուրք.), յանկարծակի, մէկէնմէկ։

Բիրժա տես բօրսա։

Բիրժա, քաղաքատեսութիւնից և առեւտրականութիւնից նշանակուած որոշ տեղ, ուր կատարողները կանգնում են և ապրանք գործի։

Բիրժևիկ (ռուս.), բօրսայում խաղացող, գործառնութիւններ անող։

Բիցիկլ (լատ. յուն.), *բիսիկլէտ* (Փր.), երկանիւ, հեծանիւ։

Բիւջէ, բիւդջէտ, բիւջէ (անգլ.), եկեմտացոյց, նախահաշիւ. որևէ հասարակական մարմնի (պետութեան, շրջանի, քաղաքի կամ գիւղական համայնքի) մի որոշ ժամանակամիջոցում նպատակադրած ծախքերի և այդ ծախքերը ծածկելու համար նախատեսած եկամուտների զուգակշռուած կանխահաշիւը։ Նաև պետական ծախսերի որևէ ճիւղի վերաբերեալ կանխահաշիւը, օր.՝ կրթական, երկաթուղային բիւջէ և այլն։ Ը. գործ է սեւում նաև մասնաւոր տնտեսութիւնների վերաբերմամբ, նաև փոխաբերաբար։

Բիզանդական ոճ ճարտարապետութեան մէջ կոչւում V — VI դարերում զարգացած քրիստոնէական ոճը, որի ընդհանուր կողմերն են՝ չորս մեծ սիւների վրա շէնքի կենտրոնում բարձրացած գմբէթի, կիսաշրջանաձև գլխարկներ և կամարներ. այդ ոճի ամենակատարեալ օրինակն է ս. Սոֆիայի տաճարը, այժմեան Այա Սոֆիայի մզկիթը Կ. Պոլսում,—*Բիզանդականութիւն*, արտաքին շուք, փառք առանց ներքին բովանդակութեան. կեծաւորութիւն, շողոքորթութիւն։

Բիլիարդ (Փր.), կարճ ափղեկութիւններ մի շահադիպ դէպքի մասին։

Բինջ տես բիւջէտ,

Բլեան (Փր.), կէսարծան, որը պատկերացնում է գլոբը և կլծքի վերի մասը. *Գի-*

սանդրի։

Բիւրգէր (գերմ.), մեջին դաբերում բուրգերում — գործակ, ամրոց, քաղաք—ապրող արհեստաւոր և առևտրական դասը։ Այժմ՝—քաղաքացի։—*Բիւրգեր, բիւրգերական* և այլն այժմ համանիշ է դարձել բուրժուա, բուրժուական և այլն բառերին։ *Բիւրգերմայստէր* (գերմ.), քաղաքապետ։

Բիւրօ (ֆր.), գրասեղանի մի տեսակը։—Գրասենեակ, գրասան։ Պաշտօնատուն։—Մի ընկերութեան վարչութիւն։

Բիւրօկրատ (ֆր. յուն.), պետական, պետական քաղաքացիական պաշտօնեայ։—*Բիւրօկրատիզմի* կողմնակից։

Բիւրօկրատիա (ֆր. յուն.), պաշտօնէութիւն։

Բիւրօկրատիզմ կամ *բիւրօկրատիա*, վարչութեան կամ պաշտօնավարութեան մի այնպիսի եղանակ, ուր գործը դրած է մանրապիսօրէն պատրաստած պաշտօնեաների ձեռքը, անկախ հասարակական վերահսկողութիւնից։ — *Բիւրօկրատական* եղանակը, հակառակ *կօլլեգիալ* — *համրական* — պաշտօնավարութեան եղանակի վճռական նշանակութիւն վարչական գործերի մէջ վերապահում է անհատ պաշտօնեայի։

Բիւֆէ տես *բուֆէտ*։

Բիֆշտէկս (անգլ.), ջնջած տապակած միս։

Բիօգէնէտիկական հիմնական օրէնքը էրնստ Հէկկելի հիմնադրած այն կենսաբանական օրէնքն է, որ անհատի զարգացումը իր սաղմից սկսած մինչև վերջը — *օնտօգէնէզիսը* — կրճատ և արագ կրկնութիւն է տոհմի զարգացման նրա սկզբից մինչև վերջը—*ֆիլօգէնէզիսի*։

Բիօգենիա, զարգացման պատմութիւնը լայն մաքով, թէ *օնտօգենիզիսի* և թէ *ֆիլօգենիզիսի*։ Էրնստ Հէկկելի գործածած տերմինը։ Տես *բիօգենետիական*...

Բիօգրաֆ (յուն.), կենսագիր. մէկի կենսագրութիւնը, կեանքի պատմութիւնը գրող։—Նոյնպէս՝ շարժուն լուսանկարներով ներկայացում. տես *կինեմատօգրաֆ*։

Բիօգրաֆիա (յուն.), կենսագրութիւն։

Բիօլօգիա (յուն.), կենսաբանութիւն, կենսախօսութիւն. գիտութիւն կեանքի մասին. լայն մաքով սրա մէջ մտնում են բոլոր գիտութիւնները, որոնք վերաբերում են օրգանական—գործարանաւոր էակներին, այսինքն՝ բուսաբանութիւնը, կենդանաբանութիւնը և մարդաբանութիւնը իրենց բոլոր ճիւղերով։ Նեղ մաքով *Բիոլոգիան* մի մասն է, գիտութիւն կենդանի էակների յարաբերութեան մասին դէպի արտաքին աշխարհը. նրանց բնակավայրի, նրանց սովորութիւնների, ընկերների, թշնամիների մասին և այլն։ (Հէկկել)։

Բիօլօգիական կենսաբանական, կենսախօսական։

Բլամաժ (ֆր.) եպիբանք, մի վարմունք, որով ծաղր և արհամարհանք են առաջ բերում։

Բլանդինկա տես *բլօնդ*։

Բլանկիզմ, դաւադրական յեղափոխական գործունէութիւն։ *Բ.*-ը հնարաւոր է համարում վոքրամասնութեան բռնի և յանկարծական հարուածներով առնել շուտ նպատակի հասնել, քան թէ սպասելով հասարակութեան դանդաղ զարգացմանը։ Բառը ծագում է ֆրանսիայի յեղափոխական Օգիւստ *Բլանկիի*—(1805 – 1881) անունից, որ եղբայրն էր անհասպէտ Ադոլֆ Բլանկիի։ Այդ վարդապետեան հետեւողները կոչւում են *բլանկիստներ*։

Բլյուդ (պարսկ.). սխալ։

Բլինի (ռուս.), իւղով տապակած խմորիկէն Ռուսաստանում, որ ուտում են թաւիթաով (ձուզպով) կամ թթու սերով (ամանաով) պէտերբուրգեր բարեկենդանին։

Բլուզ (ֆր.), վերնաշապիկ գունաւոր կտորից շապիկ, որ հագնում են իբրև վերևի զգեստ։

Բլօկ (ֆր.), քարաժայռ. ճախարակ։—Իրար վրա դարսած հատ հատ թերթիկներ, որոնք մի կողմից միացրած են թոյլ կերպով և հեշտութեամբ առանձին առանձին պոկւում են դրծածութեան համար։—*Բլոգաքանութեան* մէջ ր. կոչւում է պանագան կուսակցութիւնների ժամանակաւոր դաշնը որևէ մօտաւոր ծրագիր իրագործելու նպատակով։

Բլօկադա (ֆր.), պաշարումն. բերդի կամ ծովափնեայ քաղաքների շրջապատումն կարելով նրա յարաբերութիւնը դրսի հետ։

Բլօնդ (ֆր.), շէկ, շիպտեր այր կամ կին։

Բլանդինկա (ռուս.), շիպտեր կին։

Բլօսէ, կողպէք։ Ոսքերին կողպած շղթայ։—*Բլօսէլ*, շղթայել։

Բնար, համեմունք. տես *բահար*։

Բոբրիկ (ռուս.), օղակաձև հացիկ։

Բոբօն (լատ.), աճուկի գեղձերի բորբոքում. սնոտական հիւանդութեան մի տեսակն է։

Բոդհիզմ, բուդդայականութիւն, *Բուդդայի* քարոզած կրօնը, որ տարածւած է Ձինաստան, Սիամ, Եապոնիա։

Բուդկա (ռուս.), փայտեայ անակ պահապանի կամ մանր վաճառքի համար։

Բուդուար (ֆր.), պճնասենեակ. զարդարուն առանձնասենեակ կանանց, որ նրանք միայն շատ մօտիկ շրջանից հիւրեր են ընդունում։

Բուզ (թուրք.), սառոյց։—*Բուզխանա* սառցատուն։

Բուզա, բօզա (պարսկ.), կրնկկից, երբեմն էլ գարուց պատրաստած մի աբրեցուցիչ ըմպելի Բուրքերի և թաթարների մէջ գոլ ծածական. կորեկաջուր։

Բուլմիկ (ֆր.), շիշ (գինու)։

Բուլղարիա, անգամ գէնէրալ բուլղարժէլի (1886 թ. պատերազմական մինիստր Ֆրանսիայում) կազմած կուսակցութեան, որ հասարակութիւնը պրպտում էր հանրապետութեան դէմ և պահանջում էր սահմանադրութեան վերաբերութիւն։

Բուլլօզ (անգլ.), մեծ անգլիական շուն. գլաշուն։—Ամերիկական մի հասարակ տեսակը։

Բուլիօն (ֆր.), մաջուր։

Բուլլա (լատ.), մոմից կամ մետաղից կնքապրոշմ, որ կախած է լինում հրովարտակներից կամ այլ կարգի պաշտօնաթղթերից։—Հռոմայ պապի կոնդակը։ — *Ոսկէ բուլլա*, կայսր Կարլոս IV-ի օրէնսդրական մի հրովարտակը 1356 թուին.

Բուլկի (ռուս.), իւղով, կաթով և շաքարով պատրաստած մի տեսակ հաց։

Բուլսար (ֆր.), ծառուղի զբօսարան։ Երկշար ծառերով լայն փողոց։—*Բուլսարային*, փողոցային, ամբոխին հաճոյանալու դիտաւ ունեցող։

Բուխարի, բուխերիկ, առջևը բաց վառարան — եւրոպական՝ կամին։

Բուխհալտերը (գերմ.), հաշվապահ։

Բուխհալտերլիա, հաշվապահություն։

Բուկէտ (Ֆր.), փունջ, ծաղկեփունջ։

Բուկէֆալ (յուն.), Ալեքսանդրը Մակեդոնացու կայտառ և սաքգլուխ ձին։

Բուկինիստ (Ֆր.), հնապրաճառ։

Բուկսիր (անգլ.), երկաթէ պաթան կամ շղթայ, որով մի նաւը իր յետևից ձգում է մի ուրիշը։

Բուղա (Թուրք.), ցուլ։

Բուղգալտերը, բուղհալտերը տես բուխհալտերը։

Բուդաղէյ տես բօմպազէյ։

Բուժաբար (Թուրք.), մաժբար (պարակ.) լցրած ազիբից կերակուր է։ Բարակ երշիկ։

Բուլյուլմի (Թուրք.), հրամանագիր։

Բունդ (գերմ.), հրկիզական ռոցեալ դեմոկրատական բանուորական կուսակցութիւն, որ առաջ անջատուեց Բուսաստանի ս. դ. կուսակցութիւնից և պահանջում է կուսակցութեան դաշնակցական—ֆեդերատիվ—կազմակերպութիւն ազգային ըստ կղբունքով կազմուած ինքնավար մասերով։

Բունտ (ռուս.), խռովութիւն, ժողովրդական յուզմունք. ապստամբութիւն։

Բունտովշչիկ (ռուս.), խռովարար, ապստամբ։

Բուշել (անգլ.), ծանրութեան չափ հացահատիկների = 36 1/3 լիտր = 1,36 հեկտերիկ։

Բուջախ, պուճախ (Թուրք.), անկիւն։

Բուռնուզ (Ֆր.), կանեփի հատուած մի տեսակը։

Բուռնուլը պահել, լռեցնել, ծածուկ սպասել, հակել. դարան մտնել։

Բուտաֆօր (Ֆր.), այն անձը բեմի վրա, որ տալիս է դերասաններին և պատրաստում է նրանց համար խաղում հարկաւոր բոլոր իրերը։

Բուտէրբրօտ (գերմ.), կարագով հաց. երբեմն էլ վրան դրած այլևայլ տեսակի մսեղէն կամ պանիր։

Բուտօն (Ֆր.), կոկոն, կոճակ։

Բուրբօն, ֆրանսիական թագաւորական հարստութիւն. որ այժմ միայն իսպանիայում է իշխում։

Բուրգոմիստր (գերմ. բիւրգերմայստէր), քաղաքագլուխ։

Բուրժուա (Ֆր.), քաղքենի, քաղաքացի։ Ժամանակակից սեփականատէր դասակարգ։ Ժամանակակից հասարակութեան այն դասակարգը, որը կազմած է սեփականատէրներից՝ վաճառական, կալուածատէր, դրամատէր, խոշոր արհեստաւոր. սրան են պատկանում նաև մասնաւորական և պաշտօնական խմբերից նրբանք, որոնք թէև սեփականութիւն չունին, բայց իրենց ռոճիկով և այլ եկամուտով սրենս շատ բարձր են աշխատաւորութիւնից և իրենց հայեացքներով սեփականատէրների հետ համերաշխ են. այսպէս՝ փաստաբաններ, բժիշկներ, արուեստագէտներ, պետական պաշտօնեաներ և այլն։ Բ. հակադրւում է մի կողմից ազնուականութեան և հոգևորականութեան, միւս կողմից՝ աշխատաւորութեան՝ բանուորներին, մանրագործական պետական և մանրավաճառական ուրեմն և մանրաբուրժուազիային։ Ժամանակակից Բ. թէև ձգտում է միջնադարեան քաղաքացի, այսպէս կոչուած երբորդ դասից, որոնք էին արհեստաւորներ և առևտրականներ, բայց չունի այլևս նախկին ազնուականութեան, հոգևորականութեան և քաղքենիութեան նման իր որոշ դասային-իրաւական առանձնաները. նա այժմ այլևս դաս չէ, այլ՝ իրաւաբանական հասկացողութիւն, այլ դասակարգ՝ անտեսական հասկացողութիւն։ Քրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ նա առաջ եկաւ իբրև կուռ ազնուականութեան և միապետութեան դէմ, այժմ հանդիսանում է բոլոր առաջաւոր երկիրներում տիրապետում է և պայքարում է մի կողմից ազնուականութեան և հոգևորականութեան դէմ, միւս կողմից աշխատաւորութեան դէմ։ Տես նաև բիւրգը, բիւրգերական և այլն։

Բուրժուական, բուրժուազական, բուրժուազիային վերաբերեալ, նրա շահերին համապատասխան, նրա նման մտածող. քաղքենական։

Բուրիդանի էշը, 14-րդ դարում ապրող Բուրիդանի բերած մի օրինակը կամքի անազատութիւնը ապացուցելու համար. եթէ մի էշ կանգնած է երկու իւրաքանչիւր խոտի մէջ տեղ հաւասար հեռաւորութեան վրա նրբանցից, իսկ խոտերը հաւասարապէս հաւասար են քանակով և որակով, ապա էշը չի իմանայ որից առաջ ուտել, և այդ պատճառով կմեռնայ քաղցած։ Գործ է ածւում իբրև ապացուցանք նման վիճակ պատկերացնելու համար։

Բուրլակ (ռուս.), վօլգա գետի ափերում աշխատող բանուորների որոշ դաս, որոնք պարապում ձգում են նաւերը գետն ի վեր։

Բուրլակ (թաթ.), ծաղրական։ Թաթերական գրուածք, որ ծաղրական ձևով պատկերացնում է մեծութիւնը։

Բուրկա (ռուս.), տառատուփ, «նափունջի»։

Բուրշ (գերմ.), ջերմանական համալսարանի այն ուսանողը, որը ընդունուած է մի ուսանողական կազմակերպութեան մէջ։ — Բուրշենշաֆտ կոչւում է այդպիսի ուսանողութիւն և նրանց կազմակերպութիւնը։

Բրակ, բրակտաած, իրբև անպէտք, գործածութեան համար անյարմար յիտ գցուած։

Բրանդմայստէր (գերմ.), հրշէջների պետուր։

Բրաունինգ, նոր տեսակի հօթհարեածեան ատրճանակի մի ձևը։

Բրասլէտ (Ֆր.), ապարանջան ձեռի։

Բուրսա (լատ.), հանրակացարան հոգևոր դպրոցի պիշերօթիկ սաների։

Բուրսակ, հոգևոր դպրոցի պիշերօթիկ սան։

Բուցէֆալ տես բուկէֆալ։

Բուֆ (Ֆր.), ծաղրական դեր կատարող երգիչ։

Բուֆ-թեատրոն, որտեղ դերերում են խիստ ծիծաղաշարժ օպերէտներ և ներկայացումներ։

Բուֆէտ (Ֆր.), մեծ պահարան, որտեղ պահւում են ամանեղէններ և ուտելիք։ — Կայարաններում և հասարակական տեղերում ը. կոչւում է սեղանատունը, ուր վաճառում են և սառը կերակուրներ ու խըմիչք։ — Բուֆէտչիկ (Ֆր. ռուս.), բուֆէտում կանգնած առուտուր անող մարդը։

Բուֆէը (անգլ.) վագոնի առաջին և յետևի մասում մի մի զոյգ մետաղեայ զսպանակաւոր սալեր, որոնք միւս վագոնի նոյնանմանների դիմաց գալով արգելում են վագոններին ուժեղ բաղխումներ անել։—*Փոքրիկ պետութիւն*, որ մեծերի մէջ ընկած արգելք է հանդիսանում դրանց ընդհարման։

Բուֆօն (ֆր.), կատակող, կատակասէր։—*Բուֆոնադ*, ծիծաղելի, կատակող ներկայացում։

Բրադեազա (ռուս.), թափառաշրջիկ, շրջմոլիկ. անգործ, տեղից տեղ թափառող. որոշ երկրների օրէնսդրութիւնով սըբանք համարւում են յանձագործներ։ Մասնաւորապէս այդպէս կոչւում են Սիբիրի բանտերից փախած և այնտեղի անտառներում թափառող փախըստականները։

Բրահմա, Հնդկաստանի կրօնի մէջ՝ բարձրագոյն էակ, որ ստեղծել է աշխարհը։

Բրահմանա տես *կաստա*.

Բրահմանիզմ, Հնդկաստանի կրօնը։

Բրահմին, բրաժին, բրահմային սպասաւորող հոգևորականներ, որոնք Հնդկաստանում կազմում են ամենաբարձր կաստան։

Բրաւուր (ֆր.), խիզախութիւն. քաջութիւն։—*Երաժշտութեան մէջ* համարձակ երգ կամ նուագ։

Բրաւո (իտալ.), գովասանական բացականչութիւն է. լաւ, գեղեցիկ։—*Բրաւիսիմո*, նոյն բացականչութեան ամենաբարձրը աստիճանը.

Բրէլօկ (ֆր.), ժամացոյցի շղթայից կախելու մանր զարդիկ։

Բրէզենտ (հօլ), հաստ գործուածք թաթախած որոշ հիւթով, որ անթափանցելի անձրևի համար։

Բրիգադա (ֆր.), երկու զընդից բաղկացած զօրամաս։

Բրիգադիր (ֆր.), զինուորական աստիճան. *բրիգադայի* հրամանատար ֆրանսիայում։

Բրիգան (ֆր.), կոչւում են այժմ իտալական աւազակները, իսկ XV—XVI դարերում՝ ֆրանսիական վարձկան զինուորները։

Բրիլիանտ (ֆր.), գոհար, թրաշած ալմաստ։ — *Բրիլիանտին* (ֆր.՝), մազերին քսելու մի իւղ։

Բրիկէտ (ֆր.՝), ածխաղիւս. մամլած ածխափոշուց վառելանիւթ։

Բրիշակ, աւերւած. հիմնայատակ կործանուած։

Բրիտանական մուզէում կամ *ը. թանգարան*, Լօնդօնի թանգարանն է հարուստ պետական և գեղարուեստական ժողովածուներով։

Բրիվ (հօլլանդ.), աղամարդի անարատաբարբիք։

Բրիւմէը, մառախուղի ամիսը։ Ֆրանսիական հանրապետական օրացոյցի երկրորդ ամիսը (հոկտեմբեր 22—նոյեմբեր 20), նշանաւոր գարձաւ նրանով, որ VIII տարւայ Բրիւմէրի 18-ին (1799 թ. նոյեմբերի 9-ին) Նապոլէօնը վերջ տւեց հանրապետութեան։—*18 բրիւմէրը* նշանակում է ընդհանրապէս պետական հարւած։ Տես *Ֆրանսիական տոմար*։

Բրինձէտ (ֆր.) թխադէմ և սևահեր։

Բրուդերշաֆտ (գերմ.), բառացի՝ *եղբայրութիւն*. թև թևի հագցրած խմելը, որից յետոյ խմողները «եղբայրանում են» և դու-ով են խօսում միմեանց հետ։

Բրուսիտանները կոչւում է «Ֆրանսիայի ազգիալիստական բանւորների գաղնակցութիւն» անունով կուսակցութիւնը։

Բրուտալ (ֆր.), կոպիտ, անասուն. *բիրա*։

Բրուտոս, Յուլիոս Կեսարի բարեկամը, որ նրը համոզեց նրա բռնակալական ձգտումներին, նրա դէմ դաւադրութիւն կազմեց և նրա սպանութեանը մասնակցեց։ Կեսարը սպանելու րոպէին կոչեց. «և դու *Բրուտոս*»։ Այս զարձւածքը այնուհետև զարձաւ սովորական, երբ հաւատարիմ մարդի դաւաճանութիւնն է երևան գալիս։

Բրուտոս, տպրանքի ծանրութիւնը իր ծրարով միասին։—*Բ. ակամուտ, ակամուտը* ծախսերը չընհանած։—*Բ. կարողութիւն*, կարողութիւնը պարտքով միասին։

Բրօմ (յուն.), կարմրաւուն գարշահոտ հեղուկ, պարզ մարմին, որ գործածական է բժշկութեան մէջ։

Բրօնզապա տես *բրանզապա*։

Բրօնզ (ֆր.), պղնձի և ցինկի խառնուրդից կազմւած մետաղ։

Բրօնզի դար է անւանւում նախապատմական քաղաքակրթութեան երկրորդ շրջանը, որ հետևել է քարի դարին. այդ ժամանակ զէնքեր և գործիքներ շինելիս են եղել բրօնզից։ Բրանից յետոյ գալիս է երկաթի դարը։

Բրօնխիտ (յուն.), ցնցղնամասղ. շնչափողի ցնցուղների (մանր խողովակների) բորբոքումն։

Բրոշ (ֆր.), մեծ գնդասեղի կամ մի այլ ձևով զարդարանք, որ կրում են օձիքի վրա։

Բրօշիւր, Բրօշիւրա (ֆր.), տետրակ, տպագրւած փոքր աշխատութիւն տետրակի ձևով։—*Գրքոյկ*։

Բրօշիւրօվկա (ֆր. ռուս.), տպագրած թերթերից համապատասխան ծալւածքներով գիրք կազմելու աշխատանքը։

Բօա, վիշապօձ. օձի ամենամեծ տեսակը, որ ունենում է մի քանի արշին երկարութիւն։—*Մազից կամ փետուրից շինած օձաձև երկար օձիք*, որ կանայք զործ են ածում ձմեռը։

Բօեար, բօեարին (ռուս.), կալւածատէր ազնւական սլաւոնական երկրներում։—*Բուսատանում* Ռնեները Պետրոս Մեծից առաջ պետական խորհուրդն էին կազմում բայց խորհրդակցական ձայնի իրաւունքով. բարձրաստիճան պաշտօնատարներ էին։

Բօզ (թուրք.), գորշ, մոխրագոյն։

Բօզա տես *բուզա*։

Բօզբաշ, մաՀջուբ. մի տեսակ ջրալի կերակուր։

Բօլ, բօլաձա, շատ, առատ։

Բօլթա տալ, գրօսնել։

Բօլշեւիզմ կոչվում է Թիւրքաց Հայաստանում վաշխառութեան մի ձևը, որ օգտւում է պանդխտի անճարութիւնից իր ընտանիքին գրամ փոխադրելու դէպքում, հանդիսանում է միջնորդ և իր ծառայութեան համար շատ մեծ տոկոս է վերցնում։

Բօլէ (անգլ.), թարմ պտուղներով համեմատ պինդ։

Բօլշեւիկ տես *բալշեւիկ*։

Բօխչա տես *բօղչա*։

Բօկալ, պօկալ (ֆր.) գաւաթ, սկիհ, բաժակ։

Բօհէմ Պարիզում անւանւում են այն գրագէտները և արուեստագէտները, որոնք մի կերպ իրենց օրապահիկը հայթայթում են։

Բօղազ (թուրք.), կոկորդ։

Բօղդիխան (մօնգօլ.), սուրբ թագաւոր. չինաց կայսրի տիտղոսը։

դռաբ։

Բողշա, բօխշա (պարսկ.), կապոց, ծրար։

Բօմազէյ (ֆր.), բամբակէ թաւ կտոր։

Բօմբ, բօմբա (ֆր.), առաւ. պայթուցիկ նիւթերով լեցուն երկաթէ գնդակ։

Բօմբօղ (ֆր.), ընաթոր, բարձր հասարակութիւն։

Բօյ (թուրք.), հասակ, բարձրութիւն։ *Բօյտուտամ*, արտաքին կերպարանք, հասակ և տեսք։

Բօյա (թուրք), ներկ։ *Բօյախանա*, ներկատուն։ —*Բօյախչի*, ներկարար. *կապոյտ գոյնով կտաւ ներկող*։

Բօյար տես *Բօեար*։

Բօյկօտ, յարաբերութեան դադարեցումն. անտեսական պայքարի միջոցներից մէկն է, գլխաւորաբար կազմակերպած բանւորութեան կողմից գործադրուղ, որով մի որոշ անձնաւորութիւն կամ հաստատութիւն ընկերների և համակրողների կողմից արհամարհանքի է դատապարտւում։ Բ–ի ենթարկուած գործարանում չեն աշխատում, նրա ապրանքը չեն գնում գործարանատիրոջը պիղման հարկադրելու համար։ Երբեմն և բանւորներն են ենթարկւում բոյկոտի գործատիրոջ կողմից։ Բ–ը գործադրւում է նաև շատ անգամ կեանքի և այլ երևոյթների մէջ։ Հակառակն է *լօկաուտ*։ (Բառը ծագում է Իռլանդիայում մի կալւածքի կառավարիչ Զարլզ Բօյկոթի անունից. կալտլառուները նրան հարկադրեցին փախչել, զգալով իրենց յարաբերութիւն նրա հետ)։

Բօնապարտիստներ Ֆրանսիայում կոչւում են այն քաղաքական կուսակցութեան կողմնակիցները, որը ձգտում է կործանել հանրապետութիւնը և վերականգնել միապետութիւնը դահ բարձրացնելով Նապոլէօն I–ի թոռնապաթի ներկայից մէկին։

Բօնբօն (ֆր.), շաքարատապիկ, շաքարեղէն։

Բօնժուր (ֆր.), բարի օր. բարև։

Բօննա (ֆր.), կրթւած դասակարգի փոքր երեխաների դաստիարակչուհի։

Բօնվիվան (ֆր.), զուարճալից կեանք վարող, կիւրեխաւմի մարդ։

Բօնտօն (ֆր.), կիրթ վարուցքութիւն, քաղաքավարութիւն, նուրբ նիստ ու կաց։

Բօշ (թուրք.), պարապ, դատարկ, թոյլ։ Ունայն։

Բօշա, գնչու։—Ինպրածքով անեղեսութեան հանդող մարդ։

Բօշրօղազ (թուրք.), դատարկապորտ. *դատարկաշրջիկ*։

Բօշկա (ռուս.), տակառ։

Բօսնակ տես *բասնակ*։

Բօստան (պարսկ), բանջարանոց։

Բօստանչի բանջարանոց մշակող. բանջարանոցապան։

Բօստօն, թղթախաղի մի տեսակը, որ խաղում են երեք կամ չորս հոգով։

Բօտանիկա, բօտանիկ (յուն.), բուսաբանութիւն. դիտութիւն, որ ուսումնասիրում է բոյսերի կազմութիւնը և կեանքը։

Բօտանիկական այգի, մի այգի, ուր բոյսերը դասակարգւած են գիտական եղանակով ըստ իրենց տեսակների։

Բօտֆօրտ (ֆր.) ,երկարաձիգ կօշիկ։ Կօշիկի ճաքեր, որ հագնում են սովորական կօշիկի վերից սրունքներին՝ ձնծնելու կամ ճանապարհորդութեան ժամանակ։

Բօրան (լատ. *բօրէաս*), ուժեղ քամի, ձիւնախառն փոթորիկ. *բուր ու բօրան*։

Բօրգէս, տպարանական տառերի մի խոշոր տեսակը, որ պէմիսի և կօրպուսի միջին տեղն է բռնում։

Բօրիվլ (ֆր.), անասնականոց, պոռնկատուն, հասարակաց տուն։

Բօրտօ, կարմիր գինու մի տեսակը, որ պատրաստւում են Ֆրանսիայի Բօրդօ նահանգում։

Բօրչաս (լատ.), հիւսիսային քամի։

Բօրշ (ռուս.), կաղամբապուր. *Ռուսաստանում շատ զործածական կերակուր է կաղամբից և մսից եփած*։

Բօրմնան (հոլ.), աւազ ենթապայ նաւատեղերի։

Բօրսա (ֆր.), *բիրժա*, տարկարան, հրապարակ, շուկայ։ *Հիմնարկութիւն է, ուր որոշակի ժամերին ժողովւում են խոշոր առևտրականներ ու միջնորդներ առևտրի նպատակով։ Բօրսայում չեն վաճառում առանձին գործածական իրեր, այլ մեծ քանակութեամբ ապրանքներ, որոնց անհատական յատկութիւնը նշանակութիւն չունի, այլ ամեն րոպէ միևնոյն լինող է փոխարինուել միևնոյն ապրանքից ուրիշով։ Այստեղ չի ցուցադրւում ապրանքի նմուշը, այլ նշանակութիւն ունի նրա տիպը. երեմն վաճառւում և գնւում են ապրանքներ, որոնք ոչ միայն ներկայ չեն, այլ մինչև անգամ դեռ պատրաստած չեն։—Բօրսային խաղեր կոչւում են այն անմաքուր, կեղծ ու պատիր միջոցները, որոնք արհեստական կերպով դուռ կամ բարձրացնում են մի ապրանքի գինը նրա առևտրից շահելու համար։—Աշխատաւորի բօրսաներ կոչւում են այն հաստատութիւնները, որոնք նպատակ ունին միջնորդ հանդիսանալ տէրերի և բանւորների միջև վերջիններիս վարձելու դէպքում։

Բօրս (անգլ.), բանջքամարտ. անգլիական ըմբշամարտ։—*Բռունցքին յարմարեցրած մետաղէ գործիք կռւի համար*։

Բօրսէր (անգլ.), Անգլիայում բանջքակռիւ անող։—Զինական մի հայրենասիրական միութիւն, որ ձգտում է երկիրը պատրաստել եւրոպացիների հարստահարութիւններից։

Գ.

Գաբր տես *գէբր*։

Գազ, մարմինների երրորդ, օդաձև վիճակը (առաջինը՝ կարծրը, երկրորդը՝ հեղուկ.). օդ. օդացած հեղուկ։—Շատ բարակ, նօսր և թեթև գործւածք։

Գազ, գէզ, իրկարութեան չափ= 1¹/₄ արշին։

Գազա տես *կազա*։

Գազաւաղ (արաբ.), *ղազաւաղ, գազիջա, մահմեդականների սրբազան պատերազմը ընդդէմ անհաւատների ոչ մահմեդականների*։

Գազի (արաբ.), անհաւատների դէմ կռւող զօրական մահմեդականներ։

Գազէլ (ֆր.), *գազնաս, լրագիր*։—*Գազէլճուչի* (ֆր.-թուրք.), լրագրող, լրագրական գործիչ։

Գազէլ, վիթ. եղնիկի ցեղից մի կենդանի։

Գազ ղին, նաւթային մի նիւթ։

Գազօմէտր, գազաչափ. գոր-

ծիք տարածութեան օդային պարունակութիւնը չափելու համար։

Գազօն (ֆր.), սիզամարգ. արհեստական կերպով աճեցրած մարգագետին, որ կազմում է պարտէզի մի մասը։

Գաժ (ֆր.), վարժ, ոռճիկ։ Գրաւական։

Գալա (իսպ.), շքեղ հագուստ, պճնազարդ զգեստ. — Շքեղ, հանդիսաւոր։

Գալաւա, գօլօվա (ռուս.), քաղաքագլուխ։ Տես նաև գլաւա։

Գալակտօմէտր (յուն.), կաթնաչափ. գործիք, որով որոշում են կաթի և նրա խառնուրդի յատկութիւնը։

Գալանտ (ֆր.), ճաշակով հագնւած, քաղաքավարի։— Ուշադիր, քաղաքավարի և ասպետօրէն վերաբերւող դէպի կանայք, կնամեծար։

Գալանտէրիական խանութ, որտեղ վաճառւում են արդուզարդի առարկաներ։

Գալեօրկա (լատ. ռուս.), թատրոնի ամենավերին և ամենաժան յարկը։—Աղմկարար և ցուցարար հանդիսատեսներ։

Գալէտ (ֆր.), զանազան ալիւրներից պատրաստած և խիտ չորացրած հացիկներ, որոնք շատ երկար դիմանում են առանց փչանալու. գործ են ածւում տարբեր նպատակով, գլխաւորաբար զօրքի համար։

Գալէր (ֆր.), տաժանակիր աշխատանքի մի տեսակը Ֆրանսիայում։

Գալէրէյա, գալերի (լատ.), նեղ ու երկար սրահ, միջանցք։ —Պատկերների և այլ գեղարւեստական իրերի ցուցադրութեան սրահ։—Գեանուղի։

Գալլիական արաղաղ, յեղափոխութեան ժամանակ Ֆրանսիական ժողովրդի խորհրդանշանը։

Գալլիկանական եկեղեցի, Ֆրանսիական կաթոլիկ եկեղեցի։

Գալլիցիզմ, Ֆրանսաբանութիւն. Ֆրանսերէնին յատուկ ոճ, դարձուածք։

Գալստուկ (գերմ. ուղիղը՝ հալստուխ), վեղպատ, վղկապ, վղնոց։

Գալլօման, Ֆրանսամոլ. մեծ սիրահար ամեն մի Ֆրանսիական բանի։

Գալլօֆիլ, Ֆրանսասէր։

Գալլօֆօբ, Ֆրանսատեաց։

Գալուն (Ֆր.), ոսկուց կամ արծաթից երիզ, որ նշանակութիւնների թևքերին և օձիքներին է կարւում։

Գալւանիզմ, գալւանականութիւն, էլէքտրականութեան մի տեսակն է, որ առաջանում է երկու այլատեսակ մարմինների միմեանց շօշափումից։ (Գալւանի պիտանակի գիւտն է 1791 թ.)

Գալւանոպլաստիկա, գալւանական հոսանքի միջոցով մետաղների լուծւածքից ցանկալի մետաղը նստեցնում են որևէ առարկայի վրա, կամ մի առարկայից որևէ մետաղ վերցնում և այս կերպ պատրաստում են պատկերներ։

Գալօշ (Ֆր.), ձիւս քառասմբակ վագրը։—Արագաշարժ մի պար։

Գալօշ (Ֆր.), կալօշ, կրկնակօշիկ, լաստիկ։

Գամաշ (Ֆր.), կամաշ, հիւսած կամ կարած ճաքեր, որ հագնում են կօշիկների վրայից սրունքները տաք պահելու համար։

Գամակ տես Համակ։

Գամմա (յուն.), հօթը հիմնական ձայների աստիճանական դասաւորումը ցածրից մինչև բարձր. հօթնեակ։

Գայդամակ տես Նայդամակ։

Գայմազամ տես կայմակամ։

Գանգլիօն (յուն), նեարդային հանգոյցներ մարմնի մէջ։

Գանգրէնա (յուն.), հիւանդութեան մի տեսակն է, որի հետևանքով մարմնի որևէ մասը սկսում է սևանալ և փտել նախիչ մանրէների պատճառով. փտախտ։

Գաոուղամուս իգիպտուր.(լատ.) ուսանողական մի երգի առաջին բառերը և անունը։

Գասապա, ընակչավայր։

Գասկօնադի, գասկոն, պարծենկոտ, մեծախօս, անձնագով։ (Ֆրանսիայի Գասկոն գաւառի բնակիչների բնաւորութիւնն է)։

Գասկօնադ (Ֆր.), մեծախօսութիւն, պարծենկոտութիւն, ինքնագովութիւն։

Գասուղար (ռուս.), տէր, թագաւոր։

Գաստրիտ (յուն.), ստամոքսի բորբոքումն։

Գաստրիցիզմ (յուն.), ստամոքսի հիւանդութիւն։—Մի ուղղութիւն բժշկականութեան մէջ, որը հիւանդութիւնների մեծամասնութեան պատճառը համարում է ստամոքսի խանգարւած վիճակը։

Գաստրօլ (գերմ.) վերտանի խաղը օտար բեմի վրա, օտարաքաղաքացիների հրաւէրով կամ սեփական նախաձեռնութեամբ։

Գաստրօլեօր, իրրև հիւր օտար քաղաքում խաղացող դերասան։

Գաստրօնօմ (յուն.), նրբաճաշակ. համեղ կերակուրներ և խմիչքներ սիրող և հասկացող։ —Աբեհատպէտ խոհարար։

Գաստրօնօմիա, նրբաճաշակութիւն, պորտաբուծութիւն։ Նուրբ կերակուրներ պատրաստելու համառութիւն։

Գարադաօղ (ռուս.), քաղաքապահ ոստիկան։

Գարադնիչեյ (ռուս.), քաղաքապետ։

Գարաժ (Ֆր.), կառքերի և մանաւանդ աւտոմօբիլների կայան և պահպանութեան տեղ։

Գարանտիա, գարանտի (Ֆր.), երաշխաւորութիւն, ապահովութիւն։

Գարդին (լատ.), լուսամուտի կամ անկողնի վարագոյր։

Գարդէրօբ (Ֆր.), զարդրոբ, մինի հագուստի ամբողջութիւնը։—Հագուստի պահարան։— Թատրոնի այն բաժանմունքը, ուր կոխում են վերարկուները։

Գարնից ռուսաց չափ հայտհատիկների = 3, 28 լիտր։

Գարնիզօն (Ֆր.), մի բերդում կամ մի քաղաքում բնակեցրած զօրքը. բերդապահ գունդ։

Գարնիտուր, գարնիտուրա (Ֆր.), հագուստի կամ գլխարկի արդ ու զարդը, որ լրացնում է նրանց։—Միևնոյն ոճով շինւած մի խումբ իրեր, որոնք միասին մի ամբողջութիւն են կազմում. օր. կարասիք, ամանեղէն, գրասեղանի պարագաներ և այլն։

Գարուս տես Հարուս։

Գարսօն (Ֆր.), հիւրանոցի, ճաշարանի, սրճարանի և նման հաստատութիւնների սպասաւոր։ Տղայ։

Գասաս տես կասաս։

Գասօս, Ֆրանսիական մի պար է 4/4 տակտ երաժշտութեամբ։

Գեաբր տես գէբր։

Գեաղա, ծառայ։

Գեաղայութիւն, ծառայութիւն։—քաոս, բծնոց, տորաքարշ վարմունք. գեաղայավարի, ծառայաբար։

Գեազ տես գազ (չափ)։

Գեալաջաղ (թուրք.), գալ

տարբ, առաջիկայ տարբ։

Գեամ (թուրք.), սանձ։

Գեամի (թուրք.), նաև։

Գեաուր, գեաուր (արաբ.), քրիստոնյա, անհաւատ. մահմեդականները այդպէս են անուանում նախատօրէն բոլոր ոչ մահմեդականներին։

Գեօզալ, գիւզել, գեղեցիկ. գեղեցկուհի։

Գեաւազա (թուրք.), շատախօս։

Գեօզլուկ (թուրք.), ակնոց։

Գեօլ (թուրք.), լիճ։

Գեօմբրուզ (թուրք.), մաքս։

Գեօն (թուրք.)· գերեզման։ —Գեօռբէգիօն լինել, գերեզմանում հանգիստ չունենալ· (իբրև անէծք)։—Գեօռխանա, գերեզմանատուն։

Գեօվղան, յաղթանդամ մարմին։

Գեօրա, համեմատ։

Գգիր (պարսկ.), գիւղական ոստիկանութեան սարքին պաշտօնեայ, որը ծառայում է գիւղապետին և նրա հրամանով գանազան յայտարարութիւններ է աղաղակում գիւղում և մարդկանց կանչում։

Գէրներ, գեաբրներ (պարսկ.), Զրադաշտի կրօնին դեռ հաւատարիմ մնացած կրակապաշտներ Պարսկաստանում և Հընդկաստանում։

Գէտան-գեալմազ (թուրք.), գնացողը էլ յետ չի դառնալ։ —Յաւիտենական աքսոր։

Գէղհատներ կոչւում են «Ֆրըթանսիական բանուորական կուսակցութեան» անդամները, իրենց պարապմունք ծիւլ Գէդի անուանով, մինչև միանալը ընդհանուր սոց. կուսակցութեան մէջ. հետևում էին մարքսիզմին։

Գէզ տես զազ (չափ)։

Գէհէն (եբր.), դժոխք։

Գէմարա տես Թալմուդ։

Գէմօրօյ տես հէմօրօյ։

Գէյգէր, տաք ջերմուկ, որ պարբերաբար շատրւանակերպ խիտում է, պիտուարարար իւանդիա կոչու վրա. չհաղորիւր։

Գէյրա (նապօն.)։ Եապօնական թէյատներում պարուհիներ, որոնք օտարականների հետ ժամանակատարապէս ամուսնանում են։

Գէնէալօգ (յուն.), ծննդարան. առնմատէս, առնմագիր։

Գէնէալօգիա (յուն.), ծննդաբանութիւն. գիտութիւն ազգերի, գերդաստանների ազգակցական կապակցութեան մասին։—Տոհմածառ. մի տոհմի բոլոր անդամների միմեանցից սերիլը ցոյց տուղ ցուցակ կամ բազմաճիւղ ծառի ձևով նոյն բանը պատկերացնող նկար։

Գէնէգիա (յուն.), ծագումն, յառաջացումն, սկզբնաւորումն։

Գէնէտիկ, ծննդական, ծագման վերաբերող։

Գէնէրալ (լատ.), ընդհանրական, ընդհանուր. նաև՝ զէնէրըլ։ —Բարձր պինւորական աստիճանաւոր, որ հրամանատար է զօրքի մեծ բաժանմունքի։—Գ. մայօր, գ. լէյտէնանտ, գ. ադիւտանտ, գ. ֆէլդմարշալ և այլն պինւորական բարձր աստիճաններ են։—Գէնէրալ գուբէրնատօր, ընդհանուր նահանգապետ որին ենթարկւում են աւելի քան մի նահանգ։

Գէնէրալիզացիա, ընդհանրացում։

Գէնէրալիտէտ (լատ.), բարձրագոյն պինւորականների ամբողջ կազմը։

Գէնէրալնի) շտաբ, պինւորական մի վարչութիւն է, որի մէջ եղած սպանների պարտականութիւնն է զօրքի բարձրագոյն

պինավարութիւնը, զօրքի մէջ պինւորական պիտութիւնը իր բարձրութեան վրա պահպանելը, օտար զօրքերի զարգացման հետևելը և այլն։

Գէնէրալիսիմուս (լատ.), գէնէրալապետ. պիտութեան բոլոր զօրքերի հրամանատար պէտք է։

Գէնէրացիա (լատ.), սերունդ։ Սերուցիւն։

Գէնիալ (լատ.), հանճարեղ. ամենաբարձր հոգևկան կարողութիւններով օժտւած. ստեղծագործող։

Գէնիտուս (լատ.), գէնիյ, ոգի (բարի կամ չար.)։—Հանճար։ Հանճարեղ մարդ։—Դիցաբանութեան և գեղարուեստի մէջ մի էակ, որին պատկերացնում են թեւաւոր պատանու կերպարանքով։

Գէնճ, երիտասարդ, պատանի։

Գէնա (լատ,), ցեղ։—Գէնտիլ, ցեղային։

Գէզէֆտ (գերմ.), առևտրական գործառնութիւն յաջողակ աշխատանքով. հետևօրէն գործ է ածւում սովորաբար այնպիսի դէպքերի նկատմամբ, երբ հասարակական և գաղափարական քօղի տակ անձնական մի լաւ շահ են առանում։

Գէջալըղ (թուրք.), պիշերազգեստ։

Գէջաղուշի (թուրք.), չղջիկ։

Գէսէրեան զինարկ, Շէյեսպիրայի բռնակալ Գէսէրը իւր զինարկը հագցնել էր ուել մի ձողի և տնկել ուել հրապարակում, իսկ ժողովրդից պահանջում էր նրա մօտով անցնելիս գլուխ իջեցնել։ Վիլհելմ Տէլը ըմբոստացաւ այդ պահանջի դէմ, սպանեց Գեսլերին և ապատեց իր հայրենիքը բռնակալից։—Մարդկային ինքնասիրութիւնը վիրաւորող, բռնութեան նշանակ։

Գէտման տես հէտման։

Գէտտօ, հրէական թաղ եւրոպական քաղաքներում։

Գիրր, որևէ գործոցի, հաստատութեան, ազնւական ցեղի յատուկ խորհրդանշան, որ կրում են իրենց պատկանելը դրանց ցոյց տալու համար։

Գիրմանական լիզուներ, որոնք գերմանական արմատներ ունեն՝ գերմաներէնը, անգլիերէնը, շէդերէնը, նօրւէգերէնը, դանիերէնը։

Գերմանիզացիա, գերմանականացումն. մանաւորաբար այդպէս է կոչւում գերմանիայի ուղղութիւնը արևելեան և հիւսիսային գաւառների վերաբերմամբ, ուր աշխատւում են լեհական և դանիական ազգաբնակութիւնը գերմանացնել։—Գերմանիզմ, գերմանասիրութիւն. գերմաներէնին յատուկ դարձուած։—Գերմանիայի համաշխարհային գերիշխանութիւն։—Գերմանիստ, գերմանագէտ, գերմանական լեզուի, գրականութեան, իրաւունքի, պատմութեան մասնագէտ։—Գերմանոմանիա, գերմանամոլութիւն։—Գերմանոֆիլիա, գերմանասիրութիւն։—Գերմանոֆոբիա, գերմանոատելութիւն։

Գերունդիում (լատ.), բայից կազմւած գոյական լատիներէնում, որը գործողութեան անհրաժեշտութիւնն է արտայայտում։—Գերունդիվում, բայական։

Գէօգրաֆ (յուն.), աշխարհագիր։—Գէօգրաֆիա, աշխարհագրութիւն։

Գէօմէտրող (գերմ.), մէտրիչ յանուն Գէօթէի. գերմանիայի գանազան քաղաքներում տարածւած ընկերութիւններ են, որոնք սկսեցին հիմնարկւել 1900

թափ նպատակ դնելով պայքարել այսպէս կոչուած Լէքս Հայնցէ-ի դէմ ի պաշտպանութիւն գիտական և գեղարուեստական ազատ ստեղծագործութեան ընդդէմ օրէնքի և ոստիկանութեան միջամտութիւնների:

Էէօլոգ (յոյն.), երկրաբան:— Էէօլոգիա, երկրաբանութիւն. գիտութիւն երկրակեղեւի ձեւագոյացման, զարգացման և կազմութեան մասին:

Էէոմէտրիա, երկրաչափութիւն. մաթեմատիկայի այն մասը, որ զբաղւում է գծերի, մակերեսների և մարմինների ձևերով:

Էէոսկոպ, երկրադէտ:

Էէօրգինա, դահլեակ, աստղածաղիկ:

Էէօցէնտրիզմ, այն ուղղութիւնը, որ երկրագունդը համարում է մոլորակային աշխարհի կենտրոնական կետը. երկրակենտրոնականութիւն:

Էէօցէնտրիկ, երկրակենտրոն:

Էլամէթ, ղամաթ, ղամէթ (թուրք.), վիճակ, բաղդ, ճակատագիր:

Էիբբօն, երկայնաբազուկ կապիկ Հնդկաստանում:

Էիբէլիններ, միջնադարեան Իտալիայում պապերի և կայսրների կռիւների ժամանակ այսպէս էին անուանւում կայսրի կուսակիցները: Տես նաև Գվէլֆներ:

Էիզանտ (յուն.), յոյն զիջանութեան մէջ վիշապ, ոտերով հսկաներ, որոնք յարձակւեցին Ոլիմպոսի վրա, բայց այնտեղ բնակւող աստուածներից պարտութիւն կրեցին:—Հակայ:

Էիլ (Ֆր.), առաջնորդ, օտարականների և անծանօթների համար պատրաստած ուղեցոյց գիրք որևէ երկրում կամ քաղաքում շրջելու:

Էիլդ... տես Հիլդ...

Էիլա, խաղողի հատիկ:—Աչքի խնձոր:

Էիլաս, բիրազ (թուրք.), կռան:

Էիլահա, զիլահ. (գերմ.), միջին դարերում, քան ոմանց՝ աւելի հին ժամանակներում, գոյութիւն ունեցող միութիւններ էին զանազան նպատակներով կազմւած, որոնք նայած տեղին և պայմաններին կամ ճանաչւած և իրաւական հաստատութիւններ էին կամ արգելւած կառավարութեան կողմից: Դրանց նպատակն էր երբեմն կրօնական՝ մի հովանաւոր սրբի պաշտամունք և փառաբանութիւն, անդամների հոգու փրկութեան մասին հոգացողութիւն. երբեմն զբանք միութիւններ էին վաճառականների, մանրավաճառների և արհեստաւորների. երբեմն էլ փոխադարձ աջակցութեան և ընկերական նպատակներ ունէին:— Ռուսաստանում ներկայումս զ. վաճառական դասի մէջ երկու կարգ է, առաջին և երկրորդ, նայած վաճառականի առևտրական զբաղմունքի քանակութեան, վճարած առուքի, առաջին կամ երկրորդ գիլդիան տալիս է համապատասխան ոչ մեծ արտօնութիւններ և իրաւունքներ:—Մերձբալտեան երկրում, երևի իբրև ճնացորդ հին գերմանականից, զ. առում են նաև հասարակական դասերը և գործակցութիւնները:

Էիլզա, զիլգի (գերմ. ուղիղը՝ հիւղէ), պատիճ, պատեան, գլանաձև թղթէ կամ մետաղէ պատեան ծխախոտի, հրացանի փամփուշտի և այլն:

Էիլիօտին (Ֆր.), գլխատման մեքենայ: Անունը ծագում է նրա գիւտարար Ֆրանսիայի

բժիշկ Գիյօտէնից, 1792 թ.ին:

Էիմնազիա,զիմնազիօն(յատ.), միջնակարգ դպրոցի մի տեսակը: Կլասիկական գ., որտեղ աւանդւում են կլասիկական լեզուները՝ յունարէն և լատիներէն:—Հին յոյների մօտ՝ մարմնամարզարան:

Էիմնազիատ, գիմնազիայի աշակերտ:

Էիմնազիատկա (ռուս.), գիմնազիայի աշակերտուհի:

Էիմնաստիկա (յուն.), մարմնամարզութիւն:

Էինեկոլօգ (յուն.), կնաբոյժ. կանանց հիւանդութիւնների մասնագէտ բժիշկ:

Էինեկոլօգիա (յուն.), կնաբուժութիւն. գիտութիւն կանանց մարմնակազմի, նրանց հիւանդութիւնների և սրանց բժշկութեան մասին:

Էիպա (յուն.), գաճ:

Էիտար (Ֆր.), լարաւոր նուագարան, որով ձայնակցում են երգին: Տես նաև կիթառ:

Էիրլանդ, զիրլանդ (Ֆր.), ծաղկաշղթայ. ծաղիկներից և տերևներից հիւսւած երկայն շղթաներ տօնական զարդարանքի համար որևէ շէնքի, դահլիճի և այլն: Ծաղկահիւս:

Էիրը բցել (պարսկ.), բնորոշ արտայայտութիւն է Պարսկաստանի վարչական բարքերի համար. նահանգապետութիւնը գրաւած նահանգապետները եկամուտի աղբիւրներ ստեղծելու համար որևէ ունևոր մարդի մի պատրւակով դատի են ենթարկում, դատը անվերջ շարունակւում է և մշտական աղբիւր է դառնում բազմաթիւ իրար յաջորդող նահանգապետների:

Էիլ (պարսկ.), վարդ, ծաղիկ:—Էիլաբ (պարսկ.), վարդաջուր:—Էիլիստան (պարսկ.), վարդանոց, վարդապարտէզ:—Վարսից Սաադի բանաստեղծի մի երկի անունը:

Էիլասթին, ասկեթել բանւածք:

Էիլաչ (թուրք.), ըմբշամարտ:

Էիլէնգի, վարդից եփած կամ առնաստակ քաղցրաւէնի:

Էիլիլա, զիլլա (թուրք.), ռումբ, գնդակ հրացանի:—Էիլլախորով, գնդակահար:

Էինդալըզ (թուրք.), օրավարձ:

Էիրջի, վրացի:— Էիրջիստան, վրաստան:

Էլազօլիցա, հին սլաւոնական մի այբուբէն:

Էլանիատօր (լատ.), սրամտարուիկ, մենամարտում էին հին Հռոմի կրկէսներում, ըստ որում նրանից էին կամ պատրաստվում պատերազմական դերիներից:

Էլանտօնեաններ կոչւում է յաճախ ազատամիտ կուսակցութիւնը Անգլիայում սկսած այն ժամանակից, երբ 1886 թ.ին նրանից բաժանւեցին իմիջնիստները:

Էլազուր (գերմ. լատ.), կաւեղէն ամանների վերին ապակեփայլ ներկը:—Սառնիների վերին կարծր և փայլուն շերտը:

Էլասէ (Ֆր.), փայլուն. փայլուն մետաքսէ կտոր:—Փայլուն կաշի և դրանից պատրաստած ձեռնոց:

Էլասս, զլաւին (ռուս.), գիւզապետ, տանուտէր:

Էլէշէր, սառցադաշտ:

Էլինտէյն, շաքարով և զանազան համեմներով եփացրած գինուց պատրաստած խմիչք:

Էլիսա, մարդի և կենդանիների ստամոքսում և աղիքներում գոյացող ժապաւէնաձև որդը. փորի ճիճու:

Էլիցէրին (յուն.), քաղցուտ, քաղցէնի. քաքցրահամ իւղա-

յին բաղադրութիւն է.

Գլօբուս (լատ.), երկրագնդակ, աշխարհագրութիւն սովորեցնելու համար երկրագնդի դնուածձև պատկերացումը

Գլօսմանիա (յուն.), լեզուամոլութիւն. անզուսպ տենչ շատ օտար լեզուներ սովորելու։

Գլօրիա (լատ.), հռչակ, փառք։ —Լուսապսակ։—«Փառք ի բարձունս» երգը կաթոլիկ եկեղեցում։

Գնօզիա (յուն.), բարձրագոյն ճանաչողութիւն, իմացութիւն, որ ցանկանում է հաւատքի վրա հիմնուած դաւանական դրութիւնները փիլիսոփայելով հիմնաւորել։

Գնօմ (Ֆր.), Գնօմիդա տես էլէմէնտար ոգիներ։

Գնօսէօլօգիա (յուն.), ճանաչողութեան տեսութիւն, իմացաբանութիւն. փիլիսոփայութեան այն մասն է, որ զբաղւում է ուսումնասիրելով, թէ ինչպէս է ծագում, կազմակերպւում և ինչ սահմաններ ունի մարդկային ճանաչողութիւնը, իմացութիւնը։

Գնօստիցիզմ (յուն.), քրիստոնէութեան երկրորդ դարում գնօստիկեանների ուսմունքը, որ ձգտում էր քրիստոնէութիւնը կերպարանափոխել համաձայն հեթանոսական բնական կրօնի սկզբունքների։

Գուանօ (իսպ.), հուանօ, Պէրուի ափերում բնակւող անթիւ բազմութեամբ թռչունների աղբը, որը նաւերով այնտեղից արտահանում են այլ երկրներ և գործ են ածում իբրև հողը պարարտացնող մէջոց։

Գուբէրնատօր (լատ.), նահանգապետ։

Գուբէրնիա (լատ.), նահանգ։

Գուլօկ (ռուս.), հեալթ ռուսական ջութակ։—Սուլիչ։

Գուլաշ, ունգարական մի կերակուր է պատրաստած մանր կտորած համեմած մսից։

Գուլդէն, գործածութիւնից դուրս եկած աւստրիական դրամ= 92 կոպէկ= 2,5 ֆրանկ։

Գումի (յուն.). խէժ։ Ռետին, լաստիկ։

Գումիարաբիկում՝, արաբական խէժ, փակցնելու համար են գործածում։

Գունդստապլ (Ֆր. աղաւաղած connétable բառն է), սպարապետ, ախոռապետ։

Գուսար տես Հուսար։

Գուսլեա (սլաւ.), սլաւոնական ցեղերի գործածած լարաւոր մի գործիք երգին ձայնակցելու համար։—Գուսլեար, այդ գործիքը նուագող և երգող։

Գուտապէրչա, մի տեսակ ճկուն նիւթ, որ գոյանում է Մալակկա և Բօրնէօ կղզիների վրա բուսնող պէրչա ծառի կաթնահիւթից և գործածական է զանազան իրեր պատրաստելու համար։

Դուման (Ֆր.), ազգ, շատակեր։

Դուէրնանտ (Ֆր.), գուէրնանտկա (ռուս.), դաստիարակչուհի. անային ուսուցչուհի։

Դուէրնէօր (Ֆր.), դաստիարակիչ. անային ուսուցիչ։

Դուէրնմէնտալ (Ֆր.), կառավարչական։

Դջլել, պոկել, փրցնել։

Դրաակ, սրբազան անօթ, որ շատ երգւում է միջնադարեան բանաստեղծութիւնների մէջ Եւրոպայում. նրա մէջ, ըստ աւանդութեան Յովսէփը ժողովել է Քրիստոսի կողից հոսած արիւնը։ Սկիհ։

Դրաղացիա (լատ.), աստիճանաւորութիւն։—Շրջանի 1|360 մասը։

Դրաղուէլ, աստիճանային։

Դրադուս (լատ.), աստիճան։

Դրադուանիկ (ռուս.), չափաչափ։

Դրադունաչալնիկ (ռուս.), քաղաքապետ։

Դրամ (յուն.), ծանրութեան չափ է, որ հիմք է կազմում Ֆրանսիական տասնորդական քաշին. հաւասար է մի քառորդ սանտիմէտր գոտած (սառցած ջրորշուց առացած) և իւր խտագոյն վիճակում անօդ տարածութեան մէջ կշռած ջրի քաշին.= ռուսական 0,00244 ֆունտի։ Դէկագրամ= 10 գր. Հէկտօգրամ= 100 գ.։ Կիլօգրամ, բիլօ, կիլօ= 1000 գ.= ռուսաց 2,44 ֆ.։ Միրիագրամ= 10000 գրամ։ Տօնն= 1,000,000 գ.= ռուսաց 2440 ֆունտ։ Դէցիգրամ= 1/10 գ.։ Ցենտիգրամ կամ սանտիգրամ= 1/100 գ.։ Միլիգրամ= 1/1000 գ.։

Գրամատիկա (յուն.), քերականութիւն։

Գրամօֆօն (յուն.), խօսամեքենայ, գործիք, որը ընդունում է ամեն տեսակ ձայն և նոյն ձայնը կարող է ամեն րոպէ արձակել՝ միաժամանակ շատերին լսելի կերպով։

Գրան (լատ.), զրէն, դեղատան կշռաչափ= 0,061 գրամ. ցորեն։—Սկրուպլ= 20 գրան։—Դրախմ= 60 գր.

Գրանատիր տես գրէնատիր։

Գրանատ (լատ.), թանկագին քարի մի տեսակը յաճախ նըռան հատիկի գոյնով։—Թնդանօթաձգութեան մէջ գործածական, մէջը պայթուցիկ նիւթով լցրած մի ռումբ, որը պայթում է կամ արձակուելուց որոշ ժամանակ յետոյ կամ վայր ընկնելիս։

Գրանդ, իսպանական բարձր աղնուականութեան տիտղոս է։

Գրանդիոզ (իտալ.), վեհ, մեծ։

Գրանիտ, հատաքար։

Գրան-սէյնիօր (Ֆր.), Ֆրանսիական բարձր աղնուականութեան կոչանունը մեծ յեղափոխութիւնից առաջ։ Մեծ տգա։—Ֆրանսիացիք այժմ այդպէս են կոչում Թիւրքաց Սուլթանին։

Գրատիս (լատ.), ձրի, անվարձ։

Գրատիֆիկացիա (լատ.), շնորհ, շնորհուածք։

Գրացիա (լատ.), շնորհ, նազանք, վայելչութիւն։ Երեք գրացիա կամ խարիտներ կոչւում էին յոյն-հռոմէական դիցաբանութեան մէջ սիրոյ և գեղեցկութեան աստուածուհի Վէներային (յունական Ափրոդիտէին) ուղեկցող վայելչութեան աստուածուհիները՝ Ագլայա, Թալիա և Եփրոսինէ։

Գրացիօզ, շնորհալի վայելուչ, նազելի (արտաքինով)։

Գրաֆիտացիա, ձգողականութիւն. մարմինների ձգողական ուժից առաջ եկած ճնշումը։

Գրաւիւր (Ֆր.), փորագրութիւն. քարի և մետաղի վրա փորագրած կաղապարով տպած պատկեր։

Գրաւֆ, կօնտ, կոմս, հնում այդպէս էին կոչւում արքայի սպայակոյտի անդամները։ Այժմ դա մի տիտղոս է, որ տրւում է պետական օգտակար ծառայութիւն կատարած մարդկանց. շատ երկրներում, ինչպէս Իտալիայում, ձեռք է բերւում այդ տիտղոսը նաև խոշոր գրամական նւէրով։

Գրաֆին (իտալ.), երկաթափող ապակէ անօթ ջրի կամ այլ հեղուկի համար։

Գրաֆինեա (ռուս.), կոմսուհի։

Գրաֆիտ (յուն.), գրաքար, ուրւագար. ածխանիւթից բաղկացած մի հանք է, որից մա-

ախտ են պատրաստում։

Գրաֆիլօգիա (յուն.), մարդի բնաւորութիւնը ձեռագրից մեկնելու արուեստ։

Գրէնապիր, գրանապիր (ֆր.), հնում՝ ամրաձիգ զօրք։ Ներկայումս՝ ընաիր, մարմնեղ զօրք։

Գրէցիզմ, յունաբանութիւն. յունարէնին յատուկ դարձուածք։

Գրիգորեան կամ նոր տոմար, Գրեգոր XIII պապի 1582 թուին ընդունած և գործածութեան մէջ մտցրած օրացոյցն է, որը նախկինն՝ յուլեան կամ հին տոմարից 13 օր առաջ է։

Գրիժա, հեւանդութիւն է, որ առաջանում է մեծ ծանրութիւններ բարձրացնելուց, որի հետեւանքն է այն, որ ներքին գործարանները, օր. աղիքները իրենց բնական սահմանից դուրս են ընկնում։

Գրիմ (ֆր.), դէմքի արհեստական կերպարանափոխութիւն դնովի մազերով, ներկերով և այլն դերակատարութեան և այլ նպատակով։

Գրիմաս (ֆր.), դէմքի ծամածռութիւն։

Գրիպ տես ինֆլուէնցա։

Գրիվեննիկ (ռուս.), ռուսաց 10 կոպէկանոց արծաթ դրամ։

Գրիֆ (յուն.), արծւացեղ մեծ գիշատիչ թռչուն։—Առասպելական կենդանի արծւի գլխով և թեւերով, առիւծի մարմնով, ձիու ականջներով և ձկան փետրից բաշով. արծւառիւծ։

Գրիֆել (գերմ.), քարկոփիչ։

Գրիֆօն, ճարտարապետական զարդարանք գրիֆի կերպարանքով։

Գրոանա (գերմ.), հող, գետին։

Գրուպպա, գրուպ (ֆրանս.), խումբ։

Գրանքա, հալկասում անուանում է ռուսական 1 ֆունտը։

Գրօբիան (գերմ. լատ.), գրուբիան (ռուս.), կապիտ, բիրտ, բոի մարդ։

Գրօզ (անգլ.), ոսմից, շարաբից և տաք ջրից պատրաստած խմիչք։

Գրօմնապա, Մալաթօսիայում —Փոքր Ռուսիայում— ժողովրդական հաւաքոյթ, հասարակական ժողով, համագիք։

Գրօշ (գերմ.), ռուսական $^1/_2$ կոպէկանոց պղնձէ դրամ։ — Գերմանիայում 10 պֆենիգ = $4^1/_2$ կոպէկ։ — Գրօշանոց, անարժէք, անպէտք, չնչին։

Գրօս (գերմ.), 12 դիւժին = 144 հատ։

Գրօսիատ, անգրօսիատ, մեծաքանակ վաճառական, որը մանրածախով չի պարապում, այլ վաճառում է հակերով ոչ թէ սպառման, այլ կրկնավաճառութեան համար։

Գրօտ (իտալ.), այր, քարայր, քարանձաւ։

Գրօտէսկ (իտալ.), գեղարուեստի մէջ՝ արտառոց, տարօրինակ, անօրինակ, հրեշաւոր, ծիծաղելի նկար կամ անգրի, քանդակ, թատերախաղ և այլն։

Գուարդեց (ֆր. ռուս.), թիկնապահ գնում ծառայող պինդ տղաներ։

Գուարդիա (ֆր.), թիկնապահ գունդ, որ բնակեցրած է լինում մայրաքաղաքում։

Գուէլֆներ կամ Վէլֆեր, միջնադարեան Իտալիայում պապերի կողմը պահող կուսակցութիւնը հակառակ գիբէլինների, կայսրների կուսակցութեան։

Գօբլէն (ֆր.), ֆրանսիական ձեռագործ խալիներ և պատուհաններ գեղեցկանկարներով 17-րդ դարում Գօլբէրի հաստատած արհեստանոցներից։

Գօգրա (վրաց.), դղում։ — Յիմար, դատարկագլուխ մարդ։

Գօզօլ-մօզօլ, զօզլի-մօզլի, ձուի դեղնուցը հարած շաքարով և երբեմն էլ մի քիչ ոսմով։

Գօլմական, հին դերմանական ժողովուրդ՝ գօթերին վերաբերեալ։ — Գ. նստարարապետութիւն, ոճ, որ ածայր կամարներով և բազմաթիւ մանր սրածայր աշտարակներով, սրակամար պատերով և լուսամուտներով ճարտարապետութիւն։ — Գ. տառեր, գերմաներէնի ոչ լատինական տառերը։ Առհասարակ միջնադարեանին նման զարդարուն գրքեր։

Գօլօվա, տես գլուխ, գլուա։

Գօլֆստրէմ (գերմ.), ծովային ասք հասանը Սալանտեան ովկիանոսում, Ամերիկայի արեւելեան ափերից դէպի Եւրոպայի հիւսիս-արեւմտեան ափերը, որ մեղմում է Անգլիայի և Նորւէգիայի կլիման։

Գօղգօթա (քաղդ.), պլխատման տեղը Երուսաղէմի մօտ, ուր խաչեցին Քրիստոսին։ — Տանջանք և մահ դաժանների համար։

Գօղիասմ, փղշտացիների աստուածորդը, որին Դաւիթը սպանեց։ — Հսկայ, մեծամարմին մարդ։

Գօմօր, շռայլութեամբ, ցոփութեամբ և ամէն տեսակ ապառնիներով լցած քաղաք։ Պատճառներ Գոմոր քաղաքից է ծագում այդ դարձուածքը, որը Սոդոմի հետ միասին ծծմբով այրուեց իր բնակիչների մեղքերի համար։

Գօնտօլ (իտալ.), վէնետիկի ջրանցքներում լողացող գեղանի նաւակները։

Գօնօկօկ (յուն.), մանրէներ, որոնք գոնում են ժահրի մէջ. սրանք են պատճառում սուսանակը կամ տրիպէրը։

Գօնորէ (յուն.), սեռական հիւանդութիւն, է ժահրախառն սերմնահոսութեամբ. սուսանակ, ջերմամիզութիւն, սերմնակաթութիւն։ Ասում է նոյնպէս տրիպէր։

Գօսուդար, տես գասուդար։

Գօրգօնները երեք քոյր էին հրէշաւոր կերպարանքով, որոնցից մինն էր Մէդուզան։ — Գօրգօնական, սոսկալի, հրէշաւոր, քարացնող։

Գօրդեան հանգոյց, կնճիռ, խառնաշփոթ մի հարց, անքակտելի հանգոյց։ (Գօրդիոս թագաւորը Ազէքսանդր Մակեդոնացուն ցոյց տուց մի խիստ բարդ հանգոյց և ասաց, ով որ սա քանդէ, աշխարհի տէրը կըլինայ. սա էլ փոխանակ երկար աշխատելու իր սրով կըտրեց)։

Գօրիլլա, աֆրիկեան ամենամեծ մարդակերպ կապիկը։

Գօրնիշնայա (ռուս.), սենեակում սպասաւորող աղախին։

Գօրօդնիչիյ տես զարատնիչիյ։

Դ.

Դաբաղ, անասունների հարբուխ. հիւանդութեան մի տեսակը։

Դաբաղ, կաշեգործ։—Դաբաղխանա, կաշեգործարան։

Դաբան (թուրք.), նրբան, կրունկ։

Դաբանչա, Թաւիանչա, սարճանակ։

Դազա, թաղիքէ վրան թափառական ցեղերի։

Դազանակ, մահակ, ցուպ։

Դաղ, դաստաման։ Դաղըբէդաղ, դաղըբիղամ, տես բէդաղ։

Դաղարգուն, թափառական։ Տանից տեղին ընկած։

Դազգահ (պարսկ.), մեծ սեղան, որի վրա գերձակները շոր են ձևում։ Առհասարակ արհեստաւորի կամ վաճառականի սեղան. փող վաստակելու տեղը։

Դալալ, թէլալ (արաբ.), մուհնեվիկ։ Փեսեղակ։

Դալայ լամա, բուդհայական կրօնի բարձրագոյն հոգևորականը, որ ապրում է Տիբէթում։

Դալի, դէլի (թուրք.), խենթ, գիժ։

Դալիկանլի (թուրք.), երիտասարդ։

Դալլաք, սափրիչ հասարակ տեսակի։—Բաղնիսում լողացնող սպասաւոր։ — Անշնորք արհեստաւոր։

Դալղա (թուրք.), ալիք։

Դալտոնիզմ, դալտոնականութիւն, աչքի մի որոշ պակասութիւն է, որի հետևանքով մարդը մի քանի գոյներ ամենևին չի տեսնում, ինչպէս էր անգլիացի գիտնական Դալտոնը, որը ընդամենը երեք գոյն էր տեսնում։

Դալո՛յ (ռուս.), կորչի՛ր, անկի՛ր։

Դախըլ, խանութի երկար սեղանը, որի յետևը կանգնած ծախս են անում։—Դախըլդար, խանութում դախլում կանգնած ծախս անողը, մանաւանդ գրամ ստացողը։

Դախօղ (ռուս.), եկամուտ։— Այսպէս անուանում է ժողովուրդը նաև եկամտային տուրքը։

Դակլադ, դօկլադ (ռուս.), զեկուցում, տեղեկագիր։

Դակտիլ (յուն.), տեղն. տաղաչափութեան մէջ ոտք երեք վանկից, որոնցից առաջինը երկար է, միւսները կարճ։

Դանա, դրնա (թուրք.), գետնաս, տակաւին. աւելի։

Դանիրա, թմբուկի մի տեսակը արևելքում։

Դաղ (թուրք.), սար, լեռ։

Դաղբաշի (թուրք.), իրրև տիտղոս ընծայել է էջմիածնի վանքի մի աւագ սպասաւորի համար։

Դաղնել (թուրք.), խարանել, այրուածք դնել։

Դամա (թուրք.), քառակուսիների վրայ կոճկերով մի խաղ նման շախմատի։

Դամա (ֆր.), տիկին, տիրուհի։

Դամաղ (պարսկ.), քիմք։ — Տրամադրութիւն։

Դամաստրօյ (ռուս.), XVI դարում Ռուսաստանում գրած օրէնսդրութիւն տնային կարգուկանոնի մասին։ Յատուկ տեղ են գրաւում դ. մէջ կնոջ վերաբերեալ հրահանգները, որոնց համեմատ կինը անպայման հրաժարվում է լինելու իր ամուսնուն, հօրը և առհասարակ տան բոլոր տղամարդկանց։

Դամար (թուրք.), երակ, դարկերակ։ Թոյլ տամարը, թոյլ կողմը։

Դամասօյ (ռուս.), ռուս հասարակութեամբ տնային տոլի։

Դամբ, դամբա (գերմ.), ամբարտակ, պատնէշ ջրի ափին։ Հողով և ծառի ճիւղերով լցրած, հանապարհ ճահճային տեղերում։

Դամիրչի (թուրք.), դարբին, երկաթագործ։

Դամլա, տամլա (թուրք.), կաթած։

Դամղա (թուրք.), դրօշմ, նիշ։

Դամօկլեան սուր, վտանգ, որ ամեն րոպէ կարող է պայթել մարդի գլխին, չընայած նրա բարեկեցիկ վիճակին։ (Սիրակուզայի բռնակալ Դիոնիսիոսը ուզելով իր դիրքի հաճոյքը և վտանգաւորութիւնը միանգամայն ցոյց տալ, հրաւիրեց իր փառքին նախանձող Դամոկլեսին ճոխ սեղանի և նստեցրեց իր գահի վրա. իսկ նրա գլխի վերևը մի մազով կախել ուց մի սուր)։

Դայազ (թուրք.), նեցուկ։

Դայի (թուրք.), քեռի, մօրեղբայր։

Դայիրէ, տես դաֆիրա։

Դայմա (թուրք.), որևիցէ, ամեն։

Դանապիների աշխատանք, անպտուղ, անհետևանք, անվերջ շարունակուղ աշխատանք։ (Դանայոսի 50 աղջիկները միաժամանակ ամուսնացան և առաջին իսկ գիշերը իրենց հօր հրամանով սպանեցին իրենց վեհանեբին — բացի Հիպէմնեստրայից.— դրա համար դատապարտուեցին դժոխքում ջրով լցնելու մի անծակ տակառ)։

Դանայոսի ընծայ, դանայեան պարգև, այնպիսի մի նէր, որի արտաքին բարեացակամութեան տակ թագնուած է թշնամութիւն բերող մի հանգամանք։ (Դանայները — այսպէս են կոչւում յոյները Համերոսի երկրում—. Տրոյան տիրելու համար խորամանկութիւն գործածին։ Նրանք կառուցին մի մեծ փայտէ ձի և ընծայեցին տրոացոց, որոնք ձին ներս տարան քանդելով իրենց քաղաքի պարիսպը. բայց գիշերը դուրս եկան ձիու մէջ թագնուած յոյն զինուորները, կատրեցին պահապանները, իրենց մարդկանց ներս թողին և տիրեցին քաղաքին)։

Դանդէն կամ Ժօրժ Դանդէն, ասում են այն մարդին, որը ինքը իր ապարմունքով անախորժութիւնների մէջ է ընկել։ (Մօլիէռի մի կոմէդիայի հերոսն է. հարուստ գիւղացի, ամուսնացել է մի ազնուական օրիորդի հետ, որը նրան շատ անախորժութիւնների պատճառ է դառնում, ինքն իրեն կշտամբելով բացականչում է. «Դու ինքդ կամեցար, Ժօրժ Դանդէն։ Tu l'as voulu George Dandin»։

Դանտիատ (լատ.), առաւիտ։

Դանօս, դօնօս (ռուս.), մատնութիւն, լրտեսութիւն. իշխանութեանը հաղորդած տեղեկութիւն որևէ մէկի յանցաւոր գործողութեան մասին մի մասնաւոր մարդի կողմից, որը ինքը անմիջապէս շահագրգռած չէ և այդ յանցագործութիւնից ձեռս չէ կրել։ Դանօսի հետևանքով կարող է օրինական ճանապարհով դատ սկսել այն մարդի դէմ, որի վրա դանօս է տրուած. դանօսչին, այսինքն դանօս տուողը, պարտաւոր է իր տեղեկագրութիւնը դնել։

Դանօսչիկ (ռուս.), լրտես, մատնիչ։

Դաշտ (ռուս.), ամառանոց։ Ամառանոցում կառուցած տուն թեթև ոճով։—Դաչնիկ (ռուս.), ամառանոցատէր. ամառանոց դնացած մարդ։

Դաւդին, մի տեսակ համեմունք։

Դաւտա, խումբ։—Փունջ։ — կոթ։

Դաստախօն (պարսկ.), սրվուռց։

Դաստուր, արձակուրդ։

Դաստուր, դէստուր (պարսկ.), ճանապարհ տուր. մի կողմ կաց։

Դատ, դաստամ (լատ.), քաւական, ամսաթիւ կամ տարեթիւ։

Դատարգուն տես դաղարգուն։

Դարբա (թուրք.), ձող։

Դարբաս, դարտագա (պարսկ.),

բակի մեծ դուռ, որտեղով կարող են նաև սայլեր անցնել։

Դարբեզոլ (պարսկ.), թափթփված։

Դարբիահանները, 1820-ական թվականներին Անգլիայում ծագած և այնտեղից հալածվելով 1840 թվին Ցրտաբնական Շեյեյենում Դարբիի ձեռքով հաստատված մի աղանդի հետևողներ, որոնք հաւատում էին Քրիստոսի հազարամյա թագավորության երկրիս վրա, քարոզում էին խիստ ժուժկալությունն և բարեպաշտությունն և մերժում էին եկեղեցական կազմակերպությունը ու ծեսերը։

Դարը ոլ Տաջ (արաբ.), ուխտագնացության ճանապարհ Դամասկոսից դեպի մահմեդականության սրբազան քաղաքները՝ Մեկկա և Մեդինա։

Դարգահ, մեծ դուռ։—Ողորմության դուռ. ողորմություն։

Դարդ (պարսկ.), ցաւ, վիշտ։ Այստեղից՝ դարդոտ, դարդոտել, դարդամիտ և այլն։—Դարդասարսամ, վշտացած, հոգսոտ։

Դարդիմանդ, առատաձեռն, վճռանձն. մի տեսակ չքնաղմէնի։

Դարեհա տես դարհիրա։

Դարմանդ (պարսկ), դեղ, ճար։

Դարմօնդ (ռուս.), ձրիակեր։

Դար ու դուրան, սար ու ձոր։

Դարաւզա տես դարբաս։

Դարբինիզմ, դարբինականություն, ակնկալության կամ ղեկավարության թէօրիա, անգլիացի բնագէտ Չարլզ Դարբինի (1809—1882) ուսմունքը բուսական և կենդանական ներկայ տեսակների աստիճանական զարգացման մասին։ — Մինչև Դ. տիրապետում էր տեսակների կօնստանտության և մարդիվաստուածային ծագման ուսմունքը, այսինքն, որ տեսակները սկզբից և եթ իրենց այս կերպարանքով միանգամ ստեղծվել են և անփոփոխ պոյությունն ունեն մինչև հիմա։ Դրան հակառակ Դարբինը 1859 թվին հրատարակած «Տեսակների ծագումը բնական ընտրության ճանապարհով» իր գրքով յոտաձգվից այն տեսությունը, որ տեսակները ընդհակառակը առաջացել են ամենի պարզ և միքանիսի համար ընդհանուր ձևերից, մեկը մեսից և ժամանակի ընթացքում բարելաշխության ճանապարհով համակերպելով փոփոխված պայմաններին։ Մեզ համար անթացատրելի ժառանգական օրենքներից և շրջապատող պայմանների ազդեցության տակ սերունդները միշտ նման չեն սերողներին, այլ երեան են բերում յաճախ նոր յատկություններ. որոնք եթե ամենի օգտակար են կենդանուն կամ բոլորին, օգնում են նրան գոյության կռւում, որով և առաջ է գալիս բնական ընտրությունն այդ օգտակար յատկություններով օժտված անհատների. որոնք ունենալով ամենի յարմարություն ապրելու թողնում են ամենի բազմաթիվ սերունդ, քան նրանք, որոնք չեն օժտված այդ օգտակար յատկություններով։ Դրա հետ միասին կենդանի պայմանների և միջավայրի փոփոխությունը պահանջ դնելով որոշ գործարանների ամենի յաճախ գործադրության և մեսանների անգործության պատճառով զարգացնում է առաջինների և յետադիմել տալիս մեսներին. այսպես պիշատիչների մօտ զարգանում են ատամները և արագաոտությունը, իսկ խոտերները և այրերում ապրող ձկները բոլորովին կորցնում են տեսողությունը։ Միլիոնաւոր տարիների ընթացքում այս աստիճանական կերպարանափոխությամբ միևնոյն տեսակի կենդանուց առաջ է բերում բոլորովին տարբեր տեսակներ։ Բնական ընտրության հետ այս ուղղությամբ գործում է և տեսական ընտրությունը, որը նոյնպես արուների և էգերի որոշ տեսակների զարգացման և որոշ տեսակների ոչնչացման պատճառ է լինում։

Դարսիշ տես ղերսիշ։

Դաւա, դաւի (արաբ.), կռիւ, վէճ. դաւս։ — Դաւի դատարա, կռիւ ու վէճ։

Դաւաս (թուրք.), ուղտ։—Դաւաչի, ուղտապան։

Դաւթար տես դէֆթար։

Դաւնօսա (ռուս.), որոշ ժամանակամիջոցում իրաւունքի գործադրելու կամ չգործադրելու հետևանքով այդ իրաւունքը կորցնելը կամ ձեռք բերելը։ (Լատիներէն usucapio և praescriptio)։ Ռուսաստանում՝ 10 տարի է հողային սեփականության համար։ Վաղեմություն։

Դաւուլ (թուրք.), դնօլ, թմբուկ։—Դնօլչի, թմբկահար։

Դաւրէշ տես դէրվիշ։

Դափ, թմբուկ։ — Դափաչի, թմբկահար։—Դափ ու զուռնա, թմբուկ և փող. ասիական նւագածության գործիքներ են։

Դափնի (յուն.), Դաֆնէ, գեսերի աստւած Պէնէոսի դուստրը յոյն դիցաբանության մէջ. Ապօլլօնը հետևում էր նրան, իսկ Իպպիտէրը նրան զարձրեց դափնի ծառ։ — Որոշ տեսակի ծառ, որի տերևներով զարդարում էին մրցության մէջ յաղթողի գլուխը։—Փառք. հռչակ։

Դաֆ անել (արաբ.), վանել, ոտք անել։ Հեռու մղել։

Դաֆտար տես դէֆթէր։

Դեկաբրիստ տես դէկաբ...

Դենեժկա (ռուս.), ռուսաց պղնձէ դրամ=$^1/_2$ կոպէկի. կոչւում է նոյնպես դենգա։

Դենշչիկ (ռուս.), սպանների սպասաւորելու համար կարգած զինուոր։

Դեսեատինա (ռուս.), Ռուսաստանում հողի մարածության չափ=2400 քառակուսի սաժէն = 10,925 քառակուսի մէտր կամ 109$^1/_4$ ար.։

Դեսեատնիկ, դեսետնիկ, դեսեատկի (ռուս.), գիւղական ատիկանության սաորին պաշտօնեայ. տասնապետ։ Վերակացու։

Դեսատ = 24 թերթ գրելաթուղթ։

Դեսժատա (ռուս.), ռուս քաղաքների իշխանության նշանակներից մինն է, որ երկրագունդ պատկերացնող գնդակի կերպարանք ունի։ — Իշխանություն։

Դէբսակ (ֆր.), կործանութիւն, աւերումն։

Դէբատ (ֆր.), բանակութիւն, բանավէճ. վիճաբանություններ որևէ գիտական, օրէնսդրական, հասարակական խնդրի մասին մեծ ժողովներում, համագումարներում և այլն. մանաւորապէս դ. տալիս են վիճաբանությունները պարլամէնտներում նոր օրինագծերի վերաբերմամբ։

Դէբարկադէր (ֆր.), նաւամատոյց։—Այն տեղը երկաթուղու կայարաններում, ուր կանգ են առնում մարդատար գնացքները ճանապարհորդներ վերցնելու և իջեցնելու համար։

Դէբէտ (լատ.), պահանջ, ըստանալիք, առնելիք. հաշւապահության մէջ՝ այն գումարները, որ ուրիշները պարտք են, որոնք գրւում են հաշւեմատեանի ձախակողմեան երեսի վրա. այս եբեսը նոյնպես կոչւում է դ.։

Դէբիտ (ֆր.), առհասարակ

արեւստագէտի, մանաւանդ բեմական գործիչի, հասարակական գործիչի, հեղինակի և այլն առաջին հերթը հասարակութեան առաջ նրա պատասխանին հնթարկելու համար։ Առաջին բեմիկ։

Դէբիւտանտ, դէբիւտի ելած անձ։ Թատրոնական սկսնակ։

Դէբօշ (ֆր.), ազմուկ, խռովարարութիւն. անկարգութիւն։

Դէգէնէրատ, այլասերուած ապրած։

Դէգէնէրացիա (լատ.), այլասերում, սերհատութիւն։ Սերունդի փչացումը, կորցնելը ցեղին յատուկ լաւ, բարձր յատկութիւնների։ Վատասերում։

Դէգրադացիա (լատ.), ապատիճանում. իջեցում, անկում։ Պաշտօնեայի աստիճանի ցածրացումը իբրև պատիժ։

Դէգրէսիոն կամ դէգրէսիվ հարկատուութիւն կոչւում է հարկաբաշխման այն եղանակը, որը, պրոգրէսիվ հարկատուութեան հետ միևնոյն սկզբունքի վրա հիմնած լինելով, իրագործման մէջ նրանից զանազանւում է նրանով, որ այն ինչ պրոգրէսիվ հարկատուութեան մէջ քանի շատ է եկամուտը այնքան էլ աճում է նրանից առացած տոկոսը իբրև հարկ, այստեղ վերցւում է եկամուտի ամենամեծ քանակի մի մասին թիւ և որոշւում նրանից առանալիք հարկի բարձրագոյն տոկոսը. ապա դրանից պակաս եկամուտներից առանալիք հարկը հետզհետէ տոկոսապէս պակասում է։ Օրինակ, եթէ 50000 եկամուտից իբրև հարկ առնւում է դրա 4%-ը, 30000-ից առնւում է $3\frac{1}{2}$%, 15000-ից 2% և այլն։ Տես նաև պրոգրէսիվ հարկատուութիւն.— Կոչւում է նաև դէգրէսիոն կամ դէգրէսիվ հարկատուութիւն։

Դէդա, դէդի (վրաց.), մայր, մայրիկ։

Դէդաք, առասպելական արեւստագէտ հին Յունաստանում. նա բազմաթիւ հոչակաւոր շէնքերից և այլ գործերից զատ շինեց մոմից և թաթանից թևեր իր և իր որդի Իկարոսի համար։ Մինոս թագաւորը նրան բանտարկեց նրա իսկ կառուցած լաբիրինթոսի մէջ, որտեղից նա իր որդու հետ փախաւ իր շինած թևերի օգնութեամբ։

Դէդէկտիւ (անգլ.), գաղանի ոստիկան յանցագործներ գտնելու համար։

Դէդուկցիա (լատ.), արտածութիւն. ապացուցելու և մտածողութեան այն եղանակը, որով մենք ընդհանուր դրոյթիւններից եզրափակութեան միջոցով մասնաւորի ենք յանգում. ընդհանուր դրոյթիւնները իրենց հերթին բազմաթիւ փորձերից և առանձին օրինակներից վերացականացրած ճշմարտութիւններ են, ապացոյցի ոչ կարօտ ակնյայտնի դրոյթիւններ (ակսիօմ) կամ բարոյական ընդհանուր հասկացողութիւններ, որոնցից հետևում են մասնաւոր դրոյթիւններ։ Դ. գործադրւում է մաթէմատիկայի և տրամաբանութեան մէջ գլխաւորապէս և մասամբ էլ բարոյագիտական բնոյթ ունեցող գիտութիւնների մէջ։ Օրինակ. բոլոր մարդիկ մահկանացու են. կայսրը մարդ է. ուրեմն կայսրը մահկանացու է։ Դ-ին հակադրւում է ինդուկցիան։

Դէդուկտիվ, դէդուկցիայի և դանակով։ Արտածական։

Դէզաբիլէ (ֆր.), անալին հագուստով։

Դէզէրտեօր, դէզէրտիր (ֆր.), ծառայութիւնից փախուստ տուած զինուոր. դասալիք։

Դէզիդէրատա (լատ.), ցանկութիւններ, ցանկալին. մի պակաս, որ ցանկալի էր լրացնել։

Դէզինֆէկցիա (ֆր. լատ.), ախտահանութիւն. հակահեռումն. Հիւանդութիւն և նեխուն պատճառող սաղմերի ոչնչացումը մարդու մարմնից և նրա շրջապատից այլ և այլ դեղերի միջոցով։

Դէզօրգանիզացիա (ֆր.), քայքայումն կազմակերպութեան. կուրդ-կանոնի խախտումն։ Ամրողջութեան մասերի կապակցութեան,

Դէժուրնի (ֆր. ռուս.), օրապահ, հերթապահ։

Դէիզմ (լատ.), այն ուսմունքը, որ ընդունում է, թէ բանականութեամբ կարելի է Աստծու գոյութիւնը ապացուցել. նա ընդունում է մի աստուածութիւն իբրև սկզբնապատճառ բոլոր իրերի, որը սակայն չի միջամտում իրերի ընթացքին. մերժում է հրաշքը և յայտնութիւնը։ Բ. հակադրւում է մի կողմից ամէիզմին, որ ժխտում է Աստծու գոյութիւնը, և միւս կողմից թէիզմին, որը ընդունում է կենդանի Աստծու գոյութիւնը։

Դէիստ, դէիզմի հետևող։

Դէ իւրէ (լատ.), իրաւապէս, իրաւօրէն. իրաւունքով։ Հակառակը՝ դէֆակտօ, փաստօրէն։

Դէլէգատ (լատ.), պատւիրակ, պատգամաւոր։ Անձն, որ ուղարկած է որոշ յանձնարարութեամբ իբրև ուղարկողների ցանկութեան համաձայն որևէ բան իրագործելու համար։

Դէլէգացիա (լատ.), պատգամաւորութիւն, պատւիրակութիւն։ Մի քանի ընտրեալ մարդկանցից կազմած խումբ, որ ուղարկած է որոշ յանձնարարութիւն կատարելու։ — Աւստրօ-Հունգարիայում դ. ասում է այն հաստատութիւնը, որ հանդիսանում է իբրև կապ Աւստրիայի և Հունգարիայի մէջ. բաղկացած է երկու երկրների պատգամաւորական ժողովների ներկայացուցիչներից, գումարւում է իւրաքանչիւր տարի և պարտականութիւն ունի զբաղւելու այն հարցերով, որոնք վերաբերում են դաշնակցութեան երկու մասերին։

Դէլիբալ (թուրք.), խունաւոր մեղր, որ մեղուները ժողովում են Սև ծովի ափերից։

Դէլիբաշ (թուրք.), գէլիների, այսինքն խենթերի պետ։ Հին թիւրքական զօրքերում յատուկ պահակ էր կազմում հրամանատարի անձի պահպանութեան համար շատ քաջ և համարձակ զինուորներից, որոնք կոչւում էին դէլիներ։ Այժմ դէլիբաշ կոչւում է մեծ վէզիրի թիկնապահների պետը։

Դէլիկատ (լատ.), փափկանկատ, նրբազգաց, ուշադիր։ — Նուրբ, փափուկ, համեղ։

Դէլիկատէս (ֆր., համատամ, նրբահամ ուտելիք։

Դէլտա (յուն.), յունական այբուբենի չորրորդ տառի (Δ) ձևով հատակագիծ ցամաք, որ կազմւում է մեծ գետերի գետաբերանում շնորհիւ նրանց ճեղքաւորումների. օրինակ Նեղոսի դէլտան։

Դէլֆեան կամ պիթեան պատգամախօս, հին Յունաստանի Դէլֆի քաղաքում, Պառնասի սոորտում, Ապօլլօնի տաճարում Պիթիա քրմուհին նստած արրպան ետուտանու վրա, արբնցած գաւիթով, գուշակութիւններ էր անում. նրա խօսքերը քրմերը մեկնում էին իրենց ա-

պագան պիտնալ ցանկացողնե-
բին։

Դէլֆին (լատ.), կետացեղ մի
ծովային կենդանի է, մեծ ձկան
նման, որ սերտում է ուղևկցել
նաւերին նրա ցատկի մօտով
երկար ժամանակ լողալով։

Դէկ (գերմ.), նաւի տախտա-
կամած։

Դէկաբրիստներ (ռուս.), Փրան-
սիական մեծ յեղափոխութեան
գաղափարների ազդեցութեան
տակ ռուս ազնուականութեան և
մտաւորականութեան մէջ կազ-
մուեց մի գաղտնի միութիւն, որ
նպատակ ունէր պետական
ժողովրդական ապստամբու-
թեամբ հաստել սահմանադրու-
թեան։ 1825 թվի դեկտեմբեր
14-ի անցյալող ապստամբական
փորձից յետոյ, Նիկոլայ I կայ-
սեր գահակալութեան ժամանակ,
որոնք ձերբակալուեցին և գա-
տապարտուեցին ոմանք կախա-
զանի, ոմանք աքսորի և ոմանք
էլ տաժանակրութեան։ Այս ապ-
ստամբութեան մասնակիցները
կոչուեցին դ., իսկ շարժումը դէ-
կաբրիզմ։

Դէկագրամ տես գրամ։

Դէկաղանա (ֆր.), անկումն,
վատացումն։

Դէկադէնտ (ֆր.), այն անձը,
որ պատկանում է գեղարուեստի
դէկադէնտական ուղղութեան։
Այս ուղղութիւնը առաջ եկաւ
վերջին տասնամեակներում և
ձգտում է պատկերացնել մարդ-
կային հոգու այնպիսի կողմերը,
որոնք հասկանալի չեն լայն
շրջաններին, և որոնց համար
նա ձգտում էր գտնել արտա-
յայտութեան նոր ձևեր և եղա-
նակներ. յաճախ իբրև միջոց
նա գործադրում էր սիմբոլը, ո-
րի պատճառով և այս ուղղու-
թիւնը նոյնպէս կոչւում է սիմ-
բոլիզմ։ Դէկադէնտների առեղծա-
գործութիւնները իրենց նոր,
մինչ այժմ անասելի արտայայ-
տութիւնների հետևանքով
շատերին անհասկանալի են և
մեկնութեան կարիք ունեն։

Դէկադէնտիզմ, դէկադէնտա-
կան ուղղութիւն։

Դէկապիտը տես լիտր։

Դէկամետր տես մէտր։

Դէկամէրօն (յուն.), իտալա-
կի բանաստեղծ Բոկկաչիօի
(1313—1375) նորավէպերի ժո-
ղովածուի անունը. դրանց մէջ
բ. 5 ապամարդի և հինգ կնոջ
բերանով պատմում է 100 պատ-
մուածք իր ժամանակի բարքե-
րից շրեղ լեզուով և հաւատարիմ
բնորոշումներով. մեքենիսը դը-
րանցից գրած են խիստ բաց
և պարունակում են սեռական
բարքերի նկարագրութիւն։

Դէկան (լատ.), տեսուչ հա-
մալսարանական ֆակուլտէտի։
— Հին հռոմայեցիների տաս-
նապետ, վերահսկող մի վրանի,
որի մէջ տաս զինուոր կար։

Դէկանատ (լատ.), ֆակուլ-
տէտի տեսչի պաշտօնը։

Դէկար տես ար։

Դէկլամացիա (լատ.), տան-
նախօսութիւն, ճառասացու-
թիւն։ Ընթերցուածք արտայայ-
տիչ շարժումներով և ձայնի
ելևէջներով։

Դէկլամատօր, դէկլամացիա
անող։

Դէկլարացիա, դէկլարասիօն
(լատ.), յայտարարութիւն. մի
թուղթ, որի մէջ ընդհանրու-
թեանը կամ որոշ ճիւղի պաշ-
տօնէութեան յայտարարւում է
մի բանի բովանդակութիւնը,
օր. մաքսատուն հասած ապ-
րանքների, վաստային ծրարի և
այլն։ — Յայտարարութիւն դիւա-
նագիտական յարաբերութիւն-
ների հետևանքի։ — «Դէկլարա-
ցիա մարդի և քաղաքացու իրա-

ւունքի», 1789 թվին ֆրանսիա-
կան մեծ յեղափոխութեան ժա-
մանակ իրաւունքների հռչակա-
գիրն էր, որի բովանդակու-
թիւնն էր՝ խօսքի, խղճի, մա-
մուլի ազատութիւն. իրաւահա-
ւասարութիւն, անձի անձեռն-
մխելիութիւն և այլն։ — Դ. է
կոչւում նաև քաղաքացիների
պարտականութիւնը յայտարա-
րելու պետական իշխանութեան
իրենց եկամուտի և անշարժա-
նութեան քանակը համապա-
տասխան հարկի ենթարկելու
համար. յայտարարանք։ — Մի-
նիստր նախագահի ծանուցումը
կառավարութեան ծրագրի և ա-
ռաջիկայ ընթացքի մասին պար-
լամէնտական նստաշրջանի ըս-
կզբում։ Յայտարարութիւն,
յայտարարուիլ, դեկուցում, ծա-
նուցում։

Դէկտեմբերեաններ, դէկեմ-
բրիաններ, 1851 թվի դեկտեմ-
բեր 2-ին Լուի Նապոլէոնի ձեռ-
քով կատարած յեղաշրջման
կողմնակիցներ։

Դէկրէտ (լատ.), հրաման,
հրահանգ. բարձր իշխանութեան
կարգադրութիւնը ուղղած որոշ
պաշտօնական հաստատութիւն-
ների գործադրութեան համար։
Դ.-ը օրէնքից զանազանւում է
նրանով, որ օրէնսդրական սո-
վորական կարգից դուրս է լի-
նում։ Ուկազ։

Դէկրէտիստներ, միջնադա-
րեան պետուն իրաւաբաններից
նրանք, որոնք հակառակ հռով-
մէական իրաւունքի կողմնակից-
ների — լէգիստների — կանոնա-
կան իրաւունքը համարում էին
հիմք պետական կեանքի և այն
էին գործադրում։

Դէկօլտէ (ֆր.), լանջամերկ։
Կանացի հագուստ բաց վզով,
լանջով և թիկունքով։

Դէկօրատիվ, զարդարանքի
համար. տպաւորութեան համար
ծառայող։

Դէկօրատօր, զարդարող, պէ-
կօրացիա պատրաստող։

Դէկօրացիա (լատ.), արգու-
զարդ սենեակի, պարտիզի և
այլն։ — Բեմի վրա նկարուած
պատեր, որոնք ներկայացնում
են ըստ պահանջի անտառ, լեռ,
ջուր, սենեակ և այլն և դրանց
հարկաւոր այլ պարագաները։
Առհասարակ ի ցոյց դրուած շքեղ
արտաքին։

Դէկօրում (լատ.), արտաքին
վայելչութիւն։

Դէմագոգ (յուն.), ժողովրդա-
կան զանգուածային (մասսային)
շարժումների ժամանակ, երբ
օրինական կառավարութիւնը
այլևս կորցնում է իր օրէնքնե-
րը կառավարելու և ուղղութիւն
տալու ժողովրդին, հրապարակ
են գալիս մարդիկ, որոնք յար-
մարելով ամբոխի պահանջնե-
րին, շոյելով նրա թոյլ կողմե-
րը կանգնում են շարժման գլ-
խին և սովորաբար ձգտում են
անձնական նպատակների. դը-
րանք դէմագոգներ են։

Դէմագոգիա, վարչական ձև,
ուր իշխում է դէմագոգը։

Դէմարկացիա (ֆր.), սահ-
մանագծում, սահմանորոշում։

Դէմասկէ (ֆր.), դիմակա-
զարդ, դիմակազերծ եղած. դի-
մակը պատռած։

Դէմէնտի (ֆր.), հերքում,
շտկում։

Դէմէտրա կամ Յերբա։

Դէմիմիէրժ, դրմիմիէրժ (ֆր.),
կիսակոյս օրիորդ, որը արդէն
ծանօթ է սեռական կեանքի բո-
լոր ներքին գաղտնիքներին,
թէև մասնակից կոյս է մնա-
ցել. demi-vierges.

Դէմիմնող, դրմիմնող (ֆր.),
պառնիկ, արտաքուստ վայելուչ
հասարակութեան կերպարանք

կրող, բայց նեղքուսա վաճառական կին։ Դիամա-որդու մի թաաերախաղի վերնապրից է ծագում անունը, ուր նկարագրած են այդ տիպի կանայք և ազամարդիկ, որոնք արտաքինով հեռանում են բարձր հասարակութեան նախատեսից, բայց նեղքուսա պռոնիկներին, գողեր և թղթամոլներ. կիսաշխարհիկին։

Դէմիուրգ (յուն.), տիեզերքի հարտարապետ։ Գնոստիկեաններ և այլոց հայեացքով դ. ոչ թէ տիեզերքի առեղծողն է, այլ նրան ամենաբարձր Աստուածը, այլ նա, որ քաոսից կերպարանաւորեց աշխարհը։

Դէմոգրաֆիա (յուն.), ժողովրդագրութիւն. նկարագրութիւն ժողովրդների և ցեղերի։

Դէմոկրատ, դաւանող դէմոկրատական սկզբունքների. ռամկավար։ — Ժողովրդի ցածր խաւերին պատկանող։

Դէմոկրատի, դէմոկրատիա, (յուն.), ժողովրդապետութիւն, ռամկավարութիւն. ժողովրդի կառավարչութիւն, հակառակ արիստոկրատիայի, որ ընտրեալների, փոքրաթիւների կառավարչութիւնն է։ Մի անդամ պետական կարգ, ուր բարձրագոյն իշխանութիւնը, թէ օրէնսդրական և թէ կատարողական, գտնւում է ամբողջ ժողովրդի ձեռքին։ Հին Աթէնքում և հելլէնական քաղաք-պետութիւններում դէմոկրատիայի մէջ իշխանութիւնը գտնւում էր դէմոսի ձեռքին, այսինքն ազատ քաղաքացիների, որոնք ամբողջ ժողովուրդը չէին կազմում՝ դրանց մէջ չըկային բանւոր-ըստուկները և արիստոկրատիան, այսինքն՝ դրամատէր, հարուստ և բարձրատիճան դասակարգը։ Ժամանակակից մոքով դէմոկրատիան չի ընդունում այդպիսի բացառութիւններ, ժողովրդի անդամ է պետութեան ամէն մի քաքաքացի, որոշ տարիքի հասած, առանց խտրութեան սեռի, ազգութեան, կրօնի, դասակարգի։ Սօցիալական դէմոկրատիա տես սօցիալ-դէմոկրատիա։

Դէմոկրատական վարչութիւն, որտեղ բարձրագոյն իշխանութիւնը գտնւում է կամ ամբողջ ժողովրդի ձեռքին անմիջապէս և օրէնսդրութեան մասնակցում է ամբողջ ժողովուրդը իր ժողովներով, մի բան որ հնարաւոր է միայն ազգաբնակութեան փոքրաթուութեան պայմանով, ինչպէս հին Յունաստանում, այժմեան Շէյցարիայի մի քանի կանտոններում. կամ օրէնսդրութիւնը կատարւում է ամբողջ ժողովրդի կողմից հատուկ ձայնատուութեան սկզբունքով ընտրած ներկայացուցիչների միջոցով, որոնք վերընտրելին են և ենթակայ են ժողովրդի վերահսկողութեան։

Դէմոկրատիզացիա, ռամկավարացում, ձգտումն մի պետութիւն վերածել կատարեալ դէմոկրատական կարգերի վերացնելով նրա միջից այլ պետական կազմերին յատուկ ձևերը։

Դէմոն (յուն.), դև, չար ոգի։

Դէմոնիզմ, դևերի հաւատք։ Դիւահանութիւն, չարոգութիւն։

Դէմոնատրատիվ (լատ.), ցուցական. ուշադրութիւն դրաւելու համար կատարած։

Դէմոնատրացիա (լատ.), ցոյց, ցուցական գործողութիւն։ Հրապարակային մի գործողութիւն, որի նպատակն է, հասարակական ժողովներով, թափորներով, բարձրաձայն կոչերով, բազմաթիւ սուորագրութիւններով կամ այլ կերպ դիմումներով, կառավարութեան ներկայացուցիչների ուշադրութիւնը դրաւել ժողովրդական մի կանկռութեան վրա կամ արտայայտել դժգոհութիւն և բողոք մի օրէնքի, մի կարգադրութեան, կառավարութեան մի անդամի դէմ և այլն։ Առ ի ցոյց, ոչ երբեմն կատարած մի գործողութեան հակառակորդի ուշադրութիւնը շեղելու նպատակով։ Օտար մի պետութեան դէմ ճնշում գործադրելու նպատակով նրա ափերը պատերազմական նաւատորմիղի առաքում։ — Բնապատական պահանջ փորձեր կատարած ժողովականների կամ ակընդհանների առջև խնդրի լուծիչը նրանց ցոյց տալու նպատակով։

Դէմոնոմանիա (յուն.), դիւամոլութիւն. հոգեկան հիւանդութիւն է, որ առաջ է գալիս այն համոզմունքից, որ իբր թէ դևերը բուն են գրել իր մէջ։

Դէմոս (յուն.), ժողովուրդ։ — Ամբոխ։

Դէմոսթենէս, չորրորդ դարում Քրիստոսից առաջ Աթէնքում ապրող մի հռչակաւոր ճարտասան և քաղաքագէտ. այժմ դ. բառը գործ է ածւում մեկի մասին իբրև հռչակաւոր հռետորի։

Դէմօրալիզացիա (ֆր.), անբարոյականացում. բարքերի անկումն. քայքայումն։

Դէյ (արաբ.), Ալժիրի և Մարոկկոյի նախկին իշխանների տիտղոս։

Դէյի (թուրք.), երը, ասելով։

Դէն (պարսկ.), կրօն։

Դէնար, դինար (լատ.), հին հռոմէական արծաթէ դրամ, որ հաւասար էր 10 աս = մօտաւորապէս 23 կոպէկի։

Դէնդի (անգլ. dandy), շքեղ հագնուող, նորաձևութեան մոլի։

Դէնդրօլօգիա (յուն.), ծառաբանութիւն. տիտղոսն մի ամբողջ ծառատեսակութեան մասին։

Դէնոմինացիա (լատ.), կատարած յանցանքի մասին իշխանութեան տեղեկութիւն տալ. ամբաստանութիւն։ — Մատնութիւն։

Դէոս (լատ.), Աստուած։ — Դէոս էքս մաշինա, բառացի՝ Աստուած մեքենայի միջոցով. (հին Յունաստանի թատրոնում գործողութեան խիստ կիճռոտ տեղում աստուածները մեքենաների միջոցով իջնում էին և միջամտելով լուծում խնդիրը)։ — Մի մարդի անսպասելի յայտնելը, որ պատճառ է լինում մի կիճռոտ տարցի լուծման։

Դէպարտամէնտ (ֆր.), ընդհանրապէս բաժանմունք մի որևէ հիմնարկութեան. գործակատարութեան։ Մինիստրութեան մասը, որ յատկապէս վարում է գործերի մի տեսակը։ — Ֆրանսիայում՝ վարչական բաժանմունք է, նահանգ։

Դէպէշ (ֆր.), շտապողական պրութիւն. հեռագիր։

Դէպիտէ տես դէպուտատ։

Դէպուտատ (լատ.), պատգամաւոր, պատիւրակ. երեսփոխան։

Դէպուտացիա, պատգամաւորութիւն. մի քանի մարդկանցից կազմուած մի խումբ, որ որոշ յանձնարարութեամբ ուղարկուում է։

Դէպրէսիա (լատ.), ծովի մակերևոյթից ցածր ցամաք։ — Ճնշուած, ընկած վիճակ։

Դէպօ (ֆր.), ապրանքի պահեստ։ — Երկաթուղային վարչութեան ձեռքին եղած այն խոշոր արհեստանոցները, ուր պահւում և վերանորոգւում են շոգեկառքերը։ Բանկերում պահ տուած կամ կառավարիչու համար յանձ-

նած դրամներ, արժեթղթեր թանկագին իրեր և այլն։

Դեպոզիտ (լատ.), պահպանութեան համար կամ իբրև ապրաշխատավորութիւն բանկում կամ կառավարական պանձարանում տրուած դումարը կամ թանկագին իրը։

Դեպոզիտ բանկ կոչւում է դեպոսական գործառնութիւնները կատարող բանկը, այսինքն՝ որը վերցնում է իր յաճախորդների արժեթղթերը և թանկագին իրերը և պահում է նրանց կրակից և գողութիւնից բոլորովին ապահով յատուկ մետաղեայ պահարանների մէջ, դրա համար որոշ վարձատրութիւն առնելով։ Կամ թէ չէ վերցնում է նրանց արժեթղթերը պահպանելու միևնոյն ժամանակ նրանց կառավարելու՝ առնելով տոկոսները, ժամանակին կտրելով կուպօնները և այլն, դրա համար գարձեալ որոշ վարձատրութիւն առնելով։

Դեպոնէնտ, *դեպոզիտօր*, դրամները, արժեթղթերը կամ թանկագին իրերը պահպանութեան յանձնող անձն։

Դեպոսուլացիա, ապգարնակութեան աճեցման կանգ առնելը կամ նրա նւազելը, ինչպէս օրինակ Ֆրանսիայում։

Դեպէրա (Ֆր.), քաղցր կերակուր, միրգ, քաղցրաւէնիք և նման բաներ ճաշից յետոյ։

Դեսկրիպտիվ (լատ.), նկարագրական։

Դեսպօտ (յուն.), բռնակալ. անսահմանափակ, իր կամքով և ցանկութիւններով միայն գլխավարող, ուրիշների վերաբերմամբ ոչ մի պարտականութիւն չընձանաչող, հպատակներ տարբերացնող կառավարիչ, իշխանաւոր։ *Դեսպօտիզմ*, դեսպօտական բնաւորութիւն կրող վարչական կազմակ. այդպէս կառավարող պետութիւն։

Դեսպօտի, դեսպօտիա (յուն.), բռնակալութիւն, բռնապետութիւն. պետութիւն, որի մէջ կառավարողը մի անձնաւորութիւնը է, դեսպօտ, որի վարչական սկզբունքներն են իր կամքը և քմահաճոյքը. նա չի սահմանափակւում, ոչ օրէնքով —բուտ Մօնտեսկիէօի՝ դեսպօտիի մէջ օրէնքներ և կանոններ գոյութիւն չունին — ոչ սովորութեամբ և ոչ էլ կրօնական աւանդութիւններով։ Այդպիսի պետութեան մէջ ամբողջ պետութիւնը ծառայում է պետութեան գլխի — դեսպօտի — անձնական շահին. հպատակները, զուրկ կամքից և ազատութիւնից, ծառայում են դեսպօտի նասիրական նպատակներին. իշխող սկզբունքն է ոչ թէ իրաւունքը և պարտականութիւնը, այլ երկիւղը։

Դեսա, = 24 թերթ պրկլատուղթ։

Դեստիլացիա (լատ.), քաշելը. պտում, թորում։ Որևէ հեղուկ գոլորշիացնել և առացրած գոլորշուց առանձալ նոյն հեղուկը միայն առանց հանքային և այլ բաղադրութիւնների։—Գերմանիայում՝ օղեվաճառատուն։

Դեսցենդենտ (լատ.), ժառանգ. սերունդ. ապագան։

Դեսցենդենցիայի թէօրիա, կենդանական և բուսական աշխարհի տեսակների ծագման ուսմունք աստիճանական զարգացման եղանակով։ Տես նաև *Դարվինիզմ*։

Դետալ, դետայլ (Ֆր.), մանրամասնութիւն. ընդհանուրից գատած առանձին մասեր։—Մանակի հարց։

Դետայլ առեւտուր, դետալ-վաճառք, առեւտուրի այն ձևն է, որ վաճառում է իր ապրանքները ուղղակի սպառողներին և փոքր քանակութեամբ, հակառակ մեծաքանակ վաճառքին, որ մեծ քանակութեամբ ապրանքներ վաճառում է առևտրական ձեռնարկողներին կրկնավաճառութեան կամ արդիւնաբերութեան համար։

Դետալիստ, փոքրաքանակ վաճառական։ Հակառակը՝ գրոսիստ, մեծաքանակ վաճառական։

Դետաշմանտ (Ֆր.), գլխաւոր գօրաբանակից անջատած և որոշ նպատակով գործադրուող գօրախումբ։

Դետերմինիզմ (լատ.), լայն մտքով՝ այն ուսմունքը, որը ընդունում է, որ բնութեան մէջ բոլոր երևոյթները պայմանաւորուած են պատճառականութեան օրէնքով, իւրաքանչիւր երևոյթ հետևանք է մէկի և պատճառ մի ուրիշի։ Մասնաւորապէս դ. անւանւում է կամքի անպատասխանութեան ուսմունքը. մարդկային կամքը և նրա արտայայտութիւնները պայմանաւորուածեն նախքին և արտաքին պատճառներով (մօտիվներով)։ Հակառակը՝ *ինդետերմինիզմ*։

Դետերմինիստ, դետերմինիզմի դաւանող։

Դետ սպիրիտի, հանրային պարտքը և նրա վարչութիւնը Թիւրքիայում։ Պետական պարտքերը և նրանց վճարումը ապահովող, պետական եկամուտները կառավարող վարչութիւնը։

Դերբի, ձիարշաւ, (անգլ.), Լօնդօնի մօտ տարեկան մի անգամ տեղի ունեցող ձիարշաւային մրցութիւնը։ Ծագում է իր հիմնադիր Կոմս Դերբիի անունից։

Դերեբէյ (թուրք.), հոլոի իշխան, Թիւրքիայում անւանւում էին այն քուրտ իշխանները, որոնք ապահի ժամանակից հետզհետէ մեծ հողեր իւրացնելով վերջիվերջոյ ամբողջ հովիտների էին տիրում և կիսանկախ տէրերը էին հանդիսանում։ Սրանց իշխանութեան վերջ դրեց անցեալ դարի 40-ական թուականներին։ Կոչւում էին նաև *խանէդան*։—*Բունակալ*։

Դերիա, կանանց շրջազգեստ։

Դերիշ, *դարուիշ* (պարսկ.), մահմեդական կուսակրօն հոգեւորական, որոնք ապրում են աղքատ, ողորմութիւն ժողովում և ժողովածը բաժանում աղքատներին. ունին տարբեր միաբանութիւններ։

Դեցեմվիր (լատ.), կոչւում էին հին Հռովմում 10 անձերը, որոնք միասին բաղկացնում էին մի հասարակական վարչութիւն պետական գործերը վարելու և օրէնսդրելու համար, 451 թուին ք. ա.։ —*Դեցեմվիրատ*, այդ տեսի վարչութեան ժամանակաշրջանը։

Դեցենիում (լատ.), տասնամեակ. տաս տարեայ ժամանակաշրջան։

Դեցենտրալիզացիա (լատ.), ապակենտրոնացում, կենտրոնախոյտութիւն։ Մի այնպիսի գործողութիւն, որ ձգտում է կառավարական իշխանութեան կենտրոնացումը — *ցենտրալիզացիան* —պակասեցնել, բաժանելով նրան գլխաւոր կենտրոնի և նրանից դուրս մանր կենտրոնների մէջ։ Բառը գործ է ածւում նաև ինքնավարութեան մասին։—Մի այնպիսի պետական և վարչական կազմ, երբ պետութեան զանազան մասերը ունին որոշ ինքնօրէնութիւն, ինքնավարութիւն. երբ պետական իշխանութեան որոշ գործառնութիւններ չեն բղխում

կենտրոնական իշխանութիւնից, այլ վերապահած են համայնքներին, քաղաքներին և այլն. կամ պետութեան զանազան մասերը, նայած իրենց քաղաքական, տնտեսական պայմաններին, ազգաբնակութեան և այլն, կառավարում են տեղական պահանջների համեմատ տեղական օրէնքներով, առանց կենտրոնական իշխանութեան միջամտութեան։ Դ. զանազանւում է աւտոնօմիացիայ—ինքնավարութիւնից նրանով, որ առաջինը վերաբերում է վարչական կողմին, երկրորդը՝ օրէնսդրական և վարչական։

Դէցիար տես ար։

Դէցիգրամ տես գրամ։

Դէցիլիտր տես լիտր։

Դէցիմալ (լատ.), տասնորդական. տասնապատիկութեան վրա հիմնւած։ — Երաժշտութեան մէջ՝ տաս ձայն միակերպ տեւողութեամբ մի բաղադրման մէջ։

Դէցիմէտր տես մէտր։

Դէւալւացիա (լատ.), դէւալիասիօն կոչւում է պետութեան դրամական վարչութեան այն գործողութիւնը, երբ նա պաշտօնապէս ճանաչում է թղթադրամի արժէքի անկումը այս կամ այն պայմանից և գործածութեան է հանում նոր տեսակի դրամ, որը կարելի է թղթադրամի հետ փոխել համաձայն նրա նոր գնի։ Օր. Ռուսաստանում ֆինանսների մինիստր վիտտէի ժամանակ, երբ թղթադրամը ընկաւ իր արժէքի ¹/₃-ով, նախկին 5 և 10 րուբլիանոցի քաշով և մեծութեամբ կարգեցին նոր դրամներ, որոնք արժէին ոչ թէ 5 և 10 րուբլի, այլ 7¹/₂ և 15 րուբլի։

Դէվիզ (ֆր.), նշանաբան. մի զգալիօր արտայայտած մի խօսքի կամ մի կարճ նախադասութեան մէջ, որ մի մարդի, մի հաստատութեան կամ գրւածքի ընթացքի համար բնորոշիչ է։

Դէւօլիւցիա, ազատամիտների նոր ծրագիրը Անգլիայի պետական կազմը դաշնակցական դարձնելու վերաբերմամբ՝ կազմւում տեղական զարգացմունքներ Անգլիայում, Ռէչլոում, Իռլանդիայում և Շօտլանդիայում։

Դէ ֆակտօ (լատ.), փաստօրէն, իրապէս։ Հակառակը՝ դէ իւրէ, իրաւապէս։

Դէֆեկտ (լատ.), պակասութիւն. սխալ. ձեռագործ տեղ որևէ առարկայի վրայ։

Դէֆենզիվ (լատ.), պաշտպանողական։ Հակառակը՝ օֆֆենզիվ, յարձակողական,

Դէֆինիտիվ, վերջնական, վճռական. հաստատուն։

Դէֆինիցիա, դէֆինիցիօն (լատ.), սահմանումն. մի կարճ նախադասութեան մէջ որևէ հասկացողութեան էական յատկութիւնները և բովանդակութիւնը ներկայացնելը. սկզբում տրւում է հասկացողութիւնների այն սեռը, որին պատկանում է դէֆինիցիայի ենթարկւող հասկացողութիւնը, ապա նրա տարբերութիւնը իրեն տեսակի միւս հասկացողութիւններից և ապա այլ էական յատկութիւններ, եթէ կան։ Օրինակ՝ «շրջան» հասկացողութիւնը այսպէս կը սահմանւում. — շրջան կոչւում է այն կոր գիծը, որի բոլորը կէտերը հաւասարապէս հեռու են կենտրոնից։ Կոր գիծը գծերի այն սեռն է, որին պատկանում է շրջանը, իսկ նրա բոլոր կէտերի հաւասար հեռաւորութիւնը կենտրոնից այն յատկութիւնն է, որը նրան տարբերւում է նոյն տեսակի այլ կոր գծերից, օր. ձւաձևից, որի ծայրերի կէտերը

տեսակի հեռու են կենտրոնից, քան մէջտեղը։

Դէֆիցիտ (լատ.), ելումուտքի մի այնպիսի վիճակ, երբ դրանց մէջ հաւասարակշռութիւն չկայ. երբ ծախքը եկամուտից աւելի է և այդ պատճառով կարիք կայ բացը ծածկելու։ Ընդհանրապէս պետական, քաղաքային եկամուտքի մասին է ասւում. բաց։

Դէֆթէր, դաֆթար (արաբ.), տետրակ։ Եկամից մատեան. հաշւեմատեան։

Դէֆտէրդար, հաշւապահ։ — Թիւրքիայում՝ ֆինանսների մինիստր և նահանգային եկամտի տեսուչ։

Դէֆտէրխանէ, դիւանատուն։

Դէֆօրմացիա (լատ.), տգեղութիւն. ախտմութիւն. ապկութիւն։

Դրնա տես դրնա։

Դէվիկա (լատ.), յանգանք, ոճիր. իրաւաբեկութիւն իրաւունքի խախտում։ Այնպիսի գործողութիւն, որի հետևանքով մի ուրիշը նիւթապէս, անձնապէս կամ բարոյապէս տուժում է, և յանցագործի կողմից այդ վարմունքը կատարւել է կամ նախապէս մտածւած եղանակով կամ իրրև հետևանք անփութութեան, երբ նա պիտի ենթադրէր, որ իր վարմունքը կարող է ուրիշին վնաս պատճառել։

Դիագնօզ (յուն.), ախտորոշում. հիւանդութեան որոշումը նրա արտաքին յայտնութիւնների համեմատ։

Դիագնօստիկա, բժշկութեան մի մասը, որը որոշում է հիւանդութեան տեսակը նրա նշաններով։

Դիագրամ, դիագրամմա (յուն.), երկրաչափական մի ձև գծագրւած։ — Երևոյթների փոփոխութիւնը միմեանց համեմատելի հետ։

Դիադեմ (յուն.), թագ, պսակ։

Դիադոխ (յուն.), յաջորդ, հաջորդող. կանոցի խոյր։

Դիալէկտ (յուն.), բարբառ, գաւառաբարբառ։

Դիալէկտիկ, համառօտ բանակուռ։

Դիալէկտիկա (յուն.), վիճաբանելու եղանակ, համոզելու արուեստ. գաղափարներից զուտ տրամաբանական մտածողութեամբ ճշմարտութիւններ գտնելու եղանակ. յաճախ դ. նշանակում է այնպիսի գատողութիւն, որ նպատակ ունի հակառակորդին համոզել, զինաթափ անել առանց փորձով հաստատւած հիմքեր ունենալու։ Դ. շատ փիլիսոփաներ այլևայլ կերպ են հասկանում։ Սակայն նորագոյն մտաւոր հոսանքների համար նշանակալից է Հեգելի դ., որով գաղափարները (իդէա) ոչ թէ անշարժ են յաւիտենապէս, այլ յառաջադիմուժ են շնորհիւ նրանցում ներքնական հակասութեան։ Իւրաքանչիւր գաղափար կրում է իր մէջ իր իսկ հակասութիւնը, որը նրանից առեղծում է այդ գաղափարի հակադրութիւնը (անտիթեզիս) և այս երկուսի միացումից առաջանում է մի բարձրագոյն միութիւն՝ համադրութիւն (սինթեզիս, սինթեզ). վերջինս

դառնում է մի նոր եռեակի համար դրութիւն, ապա նեբրնակած հակասութեամբ կերպարանափոխում է հակադրութեան, ապա առացում է կրկին համադրութիւն և այսպէս անվերջ։ Մարքսիզմը կիրառեց Հեգելի դիալէքտիկական մէթոդը հասարակական գիտութեան մէջ. նախնական համայնատիրութիւնը դրութիւնն է, ժամանակակից մատնատիրական ձեւակազմութիւնը հակադրութիւնն է, ընկերվարութիւնը լինելու է համադրութիւնը։

Դիալոգ (յուն.), տրամախոսութիւն. երկախոսութիւն։ Թատերական գրուածքների մէջ խոսակցութիւն երկու կերպարների։

Դիակօն (յուն.), սարկաւագ։ —Դիակոնիա, սարկաւագուհի։ Եկեղեցու ծառայութեան նուիրուած կին քրիստոնէութեան հին դարերում։—Գիտութեան քոյր։

Դիամանտ (ֆր.), թանկագին քար։ ադամանդ. ալմաստ։

Դիամէտր (յուն.), տրամագիծ. շրջանի երկու կէտը միացնող և կենտրոնից անցող գիծ։

Դիամէտրալ, տրամագծային, տրամագծօրէն։

Դիանա, յունական Արտեմիսը կամ Արտեմիդան, որսորդութեան և լուսնի աստուածուհին, պաշտպան ողջախոհութեան։

Դիապազօն (յուն.), կամ կամէրտոն. ձայնը իր ամբողջութեամբ ամենացածր հնչիւնից մինչև ամենաբարձրը։ Երկճիւղ երկաթեայ գործիք, որը հարուած առանալով միևնոյն ձայնն է հանում միշտ. նա ծառայում է երգեցողութեան ժամանակ ձայն տալու և գործիք լարելու համար։

Դիապլագիա (յուն.), դուրս ընկած անդամը տեղը գցելը։—Դիապլազմա, բժշկութեան մէջ՝ ամբողջ մարմինը դեղով օծելը։

Դիապօրա (յուն.), մի կրօնական կամ ազգային տաճարից դուրս, ցրուած ապրող համայնակիցներ։

Դիատօր (խալ.), աստանայ. իբրև հայհոյական խօսք։—Ժողովրդի մի տեսակը։

Դիաֆրագմա (յուն.), միջնորմ — Սառծանի. այն թաղանթը, որը կրծքի խոռոչը՝ թոքերով, սրտով և այլն, բաժանում է սաամոքսի խոռոչից՝ աստամոքսից և աղիքներից։—Դիտակների մէջ այն որմը, որ արդելում է լոյսի ուղղուղ ճառագայթների անցնելը և իր մէջ տեղում ունի մի անցք պէտքական քանակութեամբ լոյս բաց թողնելու համար։

Դիգամի, դիգամիա (յուն.), ամուսնութիւն երկուսի հետ։

Դիգէստ տես պանդէկտ։

Դիդակտիկա (յուն.), մանկավարժութեան այն մասը, որ ուսուցանում է դաստիարակութեան եղանակը, արուեստը։—Խրատ, հրահանգութիւն։—Դիդակտիկական բանաստեղծութիւն, ոտանաւորով խրատ։

Դիզգին (Թուրք.), սանձ։

Դիզէնտէրիա (յուն.), արիւնախառն լուծ. արիւնոտ փորհարինք. թանչ։

Դիէզ (ֆր.), կիսվեր. ձայնագրութեան մէջ այն նշանը, որը ձայնը կէս աստիճան բարձրացնում է։—Բառորդ ձայն։

Դիէտա, դիէտ (յուն.), բժշկի կարգադրութեամբ, համաձայն հիւանդութեան տեսակի, կենցաղավարութիւն ուտել-խմելու, քնի, զբօսանքի վերաբերմամբ և այլն։

Դիէտէտիկա, բժշկականութեան այն մասը, որ զբաղւում է դիէտի ուսմունքով։

Դիէտներ, այն դրամը, որ տանում են պաշտօնեաները ակնկրդ աշխատանքների համար և պատգամաւորները իրրև ապրուստի միջոց աշխատած օրերի համեմատ։

Դիմիւիզմ (յուն.), երկատուածութիւն, երկատուածային կրօն։

Դիմիրամբ (յուն.), գովերգ, օրհներգ. դովասանական բովանդակութեամբ բանաստեղծութիւն։

Դիրրանդ, թարգման։

Դիվիդիա (յուն.), տրամաբանութեան մէջ միևնոյն եզրակացութիւն երկու իրար կատարելապէս հակադիր դրութիւններից։ Օր. եթէ — 4 քառակուսի արմատ դոյութիւն ունի, նա պիտի լինի կամ — 2 կամ + 2. բայց որովհետև թէ — 2 և թէ + 2 քառակուսի ստիճան բարձրացրած տալիս են + 4, ուրեմն — 4 քառակուսի արմատ դոյութիւն չունի իրապէս։ — Դ. նշանակում է նաև մի դժուարին վիճակ, դժուարին ընտրութիւն երկու հաւասարապէս անհաճոյ իրերի մէջ։

Դիվանատ (խալ.), սկզբ. որևէ արհեստի կամ զեղարուեստի սկզբով և նրանով զբաղող ոչ իբրև մասնագէտ կամ իբրև իր գլխաւոր գործը, այլ ի միջի այլոց, ժամանցի համար։

Դիվէտանտիզմ, մի գործով իբրև սկզբ զբաղող պարապելը։

Դիվիժանա (ֆր.), մեծ կառք, որի մէջ կարող են ճանապարհորդել զանազան մարդիկ իւրաքանչիւրը մի տեղ գրաւելով. հանրակառք։

Դիվիմ (Թուրք.), շերտ, տապակ։

Դիկտանտ (լատ.), թելադրութիւն. աշակերտական գրաւոր աշխատանք, որ գրւում է ուսուցչի թելադրութեամբ։

Դիկտատուրա (լատ.), այն ժամանակամիջոցը, երբ իշխանութիւնը գտնւում է դիկտատորի ձեռքին։—Պրօլէտարիատի դիկտատուրա, բան կարլ Մարքսի այն ժամանակամիջոցը, երբ սոցիալական յեղափոխութիւնը իրագործելու համար պրօլէտարիատը իր ձեռքը կառնի ժամանակաւորապէս երկրի ամբողջ իշխանութիւնը։

Դիկտատոր (լատ.), բառը և հասկացողութիւնը ծագում է հին Հռոմի ժամանակներից, երբ պետութեան արտակարգ նեղ վիճակի ժամանակ, արտաքին պատերազմների կամ ներքին խռովութիւնների պատճառով, իշխանութիւնը յանձնւում էր մի մարդի, որը և կոչւում էր դիկտատոր։ Կառավարելու մէջ նա չունէր ընկերակիցներ, ունէր ամենալայն իրաւունքներ և զօրութիւն. քաղաքացիների կեանքը, գոյքը, ազատութիւնը նրա ձեռքումն էին, բայց հասարակական դրամների ծախսելու համար նա պիտի տանար Սէնատի և ժողովրդի հաշիւները։—Մեր ժամանակներում էլ արտակարգ դէպքերում դիկտատորներ են նշանակում, որոնք ունեն ժամանակաւորապէս անսահման իշխանութիւն պետութեան արտակարգ նեղ վիճակի ժամանակ։

Դիկցիա (լատ.), արտասանութեան եղանակ. արտասանութիւն. դերասանի կամ երգչի արտասանելու կերպը։

Դիմիլիպիտո տես տիմպիպիտո։

Դիմէնգիոն (լատ.), մարմնի տարածութիւնը, որով նրան կարելի է զատել. երիք գ. են երկարութիւն, լայնութիւն և խորութիւն կամ բարձրութիւն։

Դին, հաւատք, կրօն։

Դինամիզմ (յուն.), այն փիլիսօփայական աշխարհահայեացքը, որը բոլոր երևոյթների մէջ ուժն է համարում հիմնական սկզբունքը։

Դինամիկա, դինամիկ, դինամիկա (յուն.), մեքենայագիտութեան այն մասը, որ ուսումնասիրում է մարմինների շարժման օրէնքները — Սօցիօլօգիայի մէջ՝ ըստ Կոնտի՝ հասարակական երևոյթների փոփոխութեան, շարժման պրօցեսը, հակառակ ստատիկայի։

Դինամիտ (յուն.), ուժանակ. մի պայթուցիկ նիւթ է.

Դինամօմետրիա (յուն.), մեքենայ, որ էլեքտրական հոսանք և լոյս է արտադրում։

Դինաստիա (յուն.), հարբուտութիւն. թագաւորող, կառավարող թագաւորական ընտանիքը, ցեղը։ Միևնոյն ցեղից կամ ընտանիքից ծագող բոլոր թագաւորների, իշխանների շարքը, որ թագաւորել է մի երկրում ։— Դինաստիական վէճ, խնդիր, զանազան դինաստիաների վէճը իրար հետ թագաւորելու իրաւունքը պահպանելու կամ ձեռք բերելու նպատակով։

Դինար, (պարսկ.), սերբիական դրամական միութիւն. հաշուում է մի ֆրանկի հաւասար. =34 կոպէկ։

Դինջ (Թուրք.), հանգիստ, հանդարտ։ Առողջ, առոյգ։ — Դինջութիւն, դինջանալ և այլն այստեղից են։

Դիպլօմ (յուն.), վկայագիր. բարձրագոյն դպրոց աւարտած լինելը վկայող թուղթ։—Բարձր կոչման վկայական։

Դիպլօմատ (յուն.), դիւանագէտ, քաղաքագէտ. պետութեան այն պաշտօնեան, որ յանձնարարութիւն ունի վարել արտաքին քաղաքականութիւնը և յարաբերութիւններ պահպանել օտար պետութիւնների հետ։ — Խորամանկ, հնարամիտ, յատկին մարդու դիակավարուող մարդու։

Դիպլօմատիա (յուն.), երկու նշանակութիւն ունի. 1) դիւանագիտութիւն, քաղաքագիտութիւն. արտաքին քաղաքականութիւնը վարելու, օտար պետութիւնների հետ յարաբերութիւն պահպանելու կամ առհասարակ քաղաքականութիւնը վարելու արուեստը։ 2) Այն բոլոր պետական պաշտօնեաները և հաստատութիւնները միասին առած, որոնք ծառայում են օտար պետութեան մօտ նորմակայուցչութեան համար, վարում են պետութեան արտաքին քաղաքականութիւնը և յարաբերութիւն են պահպանում օտար պետութիւնների հետ։ — Յատկին մարդու առաջնորդուող, ոչ անկեղծ գործունէութիւն։

Դիսէրտացիա (լատ.), շարադրութիւն, որ ներկայացնում են պետական մի կոչում ստանալու համար։

Դիսհնտէրիա տես դիզէն...

Դիսիդէնտ (լատ.), պետական եկեղեցուն չը պատկանող։ Մասնաւորապէս՝ Լեհաստանում ոչ կաթոլիկները։

Դիսկուսիա (լատ. յուն.), անձներքաշնակութիւն. անհամաձայնութիւն։

Դիսպէնսացիա (լատ.), նեղութիւն, ազատութիւն, ազատ արձակութիւն։ Ընդհանուր կարգից բացառութիւն անելը։

Դիսկ, դիսկոս (լատ.), ափսէի նման կլոր տափակ շրջան, որ հին յոյները խաղերի ժամանակ նետում էին։

Դիսկանտ (լատ.), զիլ բարակ ձայն, գլխաւորաբար՝ կնոջ կամ երեխայի։

Դիսկուսիա (լատ.), վիճաբանութեամբ, մարելի փոխանակութեան միջոցով քննութիւն որևէ խնդրի։

Դիսկուսային, վիճելի. մի խնդիր, որի մասին դեռ պիտի վիճել։

Դիսկրէտ (Ֆր.), խոհեմութեան, բանականութեան։ Ճառ։

Դիսկրէտիա (լատ.), վարկաբեկութիւն. վատ անուն։

Դիսկրէտ (լատ.), զգոյշ, լուռ, համեստ։

Դիսկրէտիոն (լատ.), զգուշաւորութիւն արտայայտութեան ճառերում և գործողութեան մէջ։ Համեստութիւն, լռութիւն։

Դիսպուտ (Ֆր.), հրապարակային վիճաբանութիւն. բանավէճ, բանակռիւ։ Դիւտական վէճ։

Դիսկօնտո (իտալ.), զեղչ. մուրհակից զեղչած գումար։ Երբ մուրհակում նշանակած գումարը վճարում է նրա ժամանակը լրանալուց առաջ, պահում ժամանակի տոկոսը գուրս են գալիս գրամապլխից. այս գուրս եկած գումարը կոչում է դիսկօնտո կամ դիսկօնտ։

Դիսպօզիցիա (լատ.), դիրք. դասաւորութիւն։ Հրաման զօրքի և նաւատորմիղի գասաւորութեան վերաբերեալ։

Դիսսօլուցիա (լատ.), դիսօլվսիօն (Ֆր.), քայքայուիլ. Լուծուցիայի հակառակը։

Դիստօնանս (լատ.), անձներդաշնակութիւն ձայների։

Դիստանցիա (Ֆր.), տարածութիւն։— Ճանապարհի, գետի, գաւառի մի մասը։

Դիստրիկտ (լատ.), վարչական միութիւն, գաւառ, Գերմանիայում և Ֆրանսիայում։

Դիսցիպլին, դիսցիպլինա (լատին.), կարգապահութիւն. հնազանդութիւն, առանց քննադատութեան, առանց գիտակցութեան հետևողութիւն մեծի, հեղինակաւորի, ասելիքանով բարձրի հրամաններին և կարգադրութիւններին փոքրերի և ստորադրեալների կողմից։ Դիսցիպլինը զանազանւում է ընդհանուր օրէնսդրութիւնից նրանով, որ մինչդեռ ընդհանուր օրէնսդրութիւնը միայն բացասական պահանջներ է առաջադրում և արգելում է կատարել անպատի գործողութիւններ, որոնք ընդհանրութեան կամ անհատի ազատութեան դէմ են, և պահանջում է միայն այդ բացասական պահանջների դէմ կատարուած յանցանքները, դիսցիպլինը իր մէջ պարունակում է բացի բացասական պահանջներից, նաև դրական պարտականութիւնների մասին ցուցմունքներ, որոնց չը կատարումը պատժւում է յատուկ սեփական պատժում է յատուկ սեփական միջոցներով։ Դիսցիպլինի նպատակն է ոչ թէ ընդհանրութիւնը, ամբողջ ազգը, այլ նրա ներսում համամասնարար մանր միութիւններ՝ պաշտօնեութիւն, վանք, եկեղեցական համայնք, զօրք, ընտանիք և այլն։— Դ. նշանակում է նաև որևէ պետութեան մի ճիւղը։

Դիսցիպլինար բատալիոն, զինուորական գասարանով գատապարտած զինուորականների տեղը, ուր նրանք պիտի կրեն իրենց պատիժը։

Դիվա (լատ.), աստուածայինը։ — Այդ անունով պատւում են հռչակաւոր երգչուհիները։

Դիվան (պարսկ.), Թիւրքիայում պետական խորհուրդը, որի անդամները էին, համաձայն Մուհամէդ II-ի օրէնսդրութեան, Մեծ վէզիրը, 4—7 վէզիրներ, Ռումելիի և Անատոլիի Բէգլէր-

բէյները, Գարագան Փաշան և Ենիչէրիների աղան։—Ընդունելութիւն բարձրաստիճան անձի մօտ։—Գրաւոր յիշատակարանների ժողովածու. հնատարան, արխիվ։—Երկար փափուկ բազմոց։—Դատարան. դատաստան։—Դիվանապաշի, դատաւոր։—Դիվանխանա, դատարան, պետական պաշտօնատուն։

Դիվէրտիսմէնտ (Ֆր.), զբաղմունք։ Թատերախաղերի վերջում դուրս մի մաս, որը բաղկացած է լինում երգից, ոտանաւորից, պարից, արտաստնութիւնից, մանր խոսից և այլն։

Դիվիդէնտ (լատ.), շահաբաժին. մի բաժնեիրական ձեռնարկութեան ընդհանուր եկամուտի այն մասը, որ բաժին է ընկնում իւրաքանչիւր բաժնեպրոջ համաձայն նրա դրած դրամագլխի. սովորաբար՝ մի տարւայ մէջ։

Դիվիզիա (լատ.), չորս գնդից կազմած զօրաբաժին։

Դիվինա կոմէդիա (իտալ.), աստուածային կատակերգութիւն. իտալացի բանաստեղծ Դանտէի նշանաւոր երկի անունն է։

Դիրէկտ (լատ.), ուղղակի։

Դիրէկտիվ (Ֆր.), ուղեցոյց, հրահանգ. որևէ գրւածքի կամ գործի ուղղութիւնը նախորոշող սկզբունքային հրահանգ։

Դիրէկտորիա (Ֆր.), տեսչութիւն։

Դիրէկտօր, տեսուչ. վերատեսուչ դպրանոցի, բանկի և կամ որևէ հաստատութեան։

Դիրէկտօրատ, տեսչական գերատեսչութիւն։

Դիրէկտօրիա (Ֆր.), Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից յետոյ 1795 թւին հաստատուած կատարողական իշխանութիւնը, որ ունէր 5 դիրէկտօր. վերացաւ Նապոլէօն Բօնապարտի ձեռքով։

Դիրէկցիա, վարչութիւն, տեսչութիւն։

Դիրիգենտ, վարիչ, առաջնորդ. դեկավար։

Դիրիժաբլ (Ֆր.), օդանաւ. դիմաւոր օդապարիկ։

Դիրիժօր (Ֆր.), կառավարիչ պարերի. երաժշտական կամ երգեցիկ խմբի դեկավար, խմբապետ։

Դիւզ, դուզ (թուրք.), հարթ, ուղիղ. նոյնպէս դիւզգիւն, հարթավայր։—Դնել, ուղղել, շիտակել։

Դիւժին (Ֆր. ռուս.), 12 հատ։

Դիւրգեար տես դուրգար։

Դիւյմ, ռուսաց երկաթուղիների չափ=10 լինիա=2½ սանտիմէտր։

Դիւն (գերմ.), աւազարկուներ։ Աւազոտ լայն ծովափ։

Դիւնիա տես դունիա։

Դիւշէս (Ֆր.), տանձի մի տեսակ։

Դիւվէ (Ֆր.), թռչունի մանր փետուրը, ագռամազը և դրանից պատրաստած վերմակ։

Դիւրրին (պարսկ.), հեռադիտակ։

Դիւրգեար (թուրք.), հիւան։

Դիվի, ամբողջ, դիմումներ, բոլորեքեան։

Դիօգէնէս, յոյն փիլիսոփայ հինգերորդ դարում Ք. ա., որը հետևում էր այն սկզբունքին, որ ամենից լաւն է ոչ մի բանի կարիք չունենալը. ինքը ապրում էր մի տակառում, ունէր մի վերարկու և մի փայտէ ամանի ջուր խմելու համար, բայց երբ մի անգամ տեսաւ, որ երեխան բռով է ջուր խմում, այդ ամանն էլ դէն գցեց։

Դիօնիս կամ Բաքոս, բնութեան արտադրող ուժի աստուածը հին Յունաստանում։ Ր. մտցրեց գործածութեան մէջ խաղողի օրթը և առաջին անգամ գինի պատրաստեց, այդ պատճառով նա մանաւորապէս համարում է գինու աստուածը, որ հաճոյք և զւարճութիւն է պատճառում։

Դիօսկուրներ, յունական դիցաբանութեան մէջ Զևսի որդիքը՝ երկօրեակներ Կաստօր և Պոլլուքս կամ Պոլիդևք, որոնք իրար շատ սիրում էին և անբաժան էին։—Մօտիկ ընկերական կամ եղբայրական սիրով կապած մարդիկ։

Դիֆամացիա (լատ.), մեկի մասին վատ համբաւ տարածելը, դիտաւորեալ մամուլի միջոցով. զրպարտութիւն։

Դիֆերէնցիալ (լատ.), տարբերական, տարբերութիւն ցոյց տուող։—Դիֆերէնցիալ ռէնտա, տարբերական հասոյթ։ Տես ռէնտա։—Դիֆերէնցիալ մարսելը համարւում են, երբ միևնոյն տեսակ ապրանքի վրա երկու տեսակ մարք է նշանակւում, մինը բարձր, միւսը ցածր, նայած թէ այդ ապրանքը ինչպիսի ճանապարհով է ներմուծւում՝ ջրով թէ ցամաքով, որ երկրից է ներմուծւում և այլն. նպատակն է կամ դների հաւասարեցում, կամ դիւրութիւններ տալը և կամ մաքսային հակառակորդութիւնը։

Դիֆերէնցիացիա, տարբերաւորում. շերտաւորում։ Միապաղաղ, միաձոյլ երևոյթից զարգացման ճանապարհով բազմաեռակի, տարբեր առանձնայատկութիւններով, առանձնակի դերերով օժտւած նների կազմելը։ Բոյսերի և կենդանիների կազմութեան ժամանակի ընթացքում տարբեր դերեր կատարելը աշխատանքի բաժանման սկզբունքով։ Նախնական միակերպ հասարակութեան շերտաւորումը տարբեր դասերի և դասակարգերի։

Դիֆիրամբ տես դիթիրամբ։

Դիֆթերիտ (յուն.), մազաւային թաղանթի բորբոքումից առաջ եկած վտանգաւոր և վարակիչ բկացաւ։

Դիֆթոնգ (յուն.), երկբարբառ. երկու հնչիւն միացած իրրև մի ձայն, օր. այ, ոյ։

Դիֆուզիա (լատ.), ծաւալումն. հեղուկների և օդաձև մարմինների խառնուելը չնայած իրենց տարբեր խտութեան, երբ իրար հետ շփման մէջ են։—Ճառագործութիւն գրի և խօսքի մէջ։

Դ՚օլ տես դաւոլ։

Դոգմատիզմ (լատ.), փիլիսոփայութեան մէջ այն հայեացքն է, որ աշխարհի և նրա երևոյթների բացատրութեան համար երկու սկզբունք է ընդունում. որի համար հոգին և մարմինը, նիւթը և ոգին, իրականութիւնը և երևոյթը բոլորովին տարբեր, իրար հակադիր էութիւններ են, որ չունեն ընդհանուր արմատ և ոչ էլ իրարից են բղխում։ Արարչագործութեան մէջ երկու սկզբունքների՝ բարի և չար ոգիների, խաւարի և լոյսի գաղանքը, ինչպես հին պարսից և մանիքէացիների կրօնը։ Երկուաստիութիւն։—Քաղաքական դաւանքի պետական կազմի այն ձևն է, երբ իշխանութիւնը կամ պատկանում է երկու պետական ազգերի միևնոյն տէրութեան մէջ, ինչպես Աւստրօ-Հունգարիայում, կամ հաւասարապէս բաժանւած է միապետի և ժողովրդական ներկայացուցչութեան մէջ։

Դուալիստ, գ. վարդապետութեան հետևող,

Դուալիստական, երկուական. երկակողմանի։

Դուայան (Ֆր.), աւազ, երեց.

տարիքով, ծառայութեան տարիներով աւագագոյնը։ Դիպլոմատիական կօրպուսի դուռեայանը, մի պետութեան մօտ այլ պետութիւններից ուղարկուած բոլոր դեսպանների, հիւպատոսների և այլն աւագագոյնը իր ծառայութեան տարիների համեմատ։

Դուբարա (պարսկ.), զոյգ երկու նարդախաղի մէջ։ — Կրկին, կրկնակի։

Դուբլ (ֆր.), կրկին, զոյգ։

Դուբլէտ (ֆր.), արևէ առարկայի, երևոյթի, գործողութեան և այլն կրկինը, զոյգը։

Դուբլիկատ տես դուպլիկատ։

Դուզ, ուղիղ, շիտակ։ — Հարթավայր։

Դուէլ (ֆր.), մենամարտ։

Դուէտ (իտալ.), երկձայն երգեցողութիւն կամ նւագածութիւն. երկերգ։

Դումման, սեթի մի տնական տեսակը։

Դումպաղ, կալանաւոր, բանտարկեալ։ — Դումպաղխանա, բանտ։

Դուլցինէա, սիրուհի։ — Դոն-Քիշոտի սիրուհու անունն է։

Դուխան (թուրք. ռուս.), պիհեհաուն։ — Իջևան։ — Հասարակ ճաշարան։ —Դուխանշչիկ (ռուս.), գինեվաճառ. գինեհաուն պահոց։ —Իբրև հայհոյական խօսք՝ անկիրթ, հայհոյախօս։

Դուխի (ռուս.), հոտառէտ, անուշահոտ ջուր։

Դուխօբօր (ռուս.), հոգևմարտ. ռուս ժողովրդի մէջ տարածուած մի աղանդ է, որ չի ճանաչում Քրիստոսի աստուածութիւնը, մերժում է եկեղեցական խորհուրդները և սրբերի պատկերների երկրպագութիւնը։ Դ. համար մարդիկ բոլորը հաւասար են, այդ իսկ պատճառով նրանք ձգտում են իրագործել և կեանքի մէջ օգտակար հաւատարութիւնը. հրաժարւում են գինետական ծառայութիւնից և առհասարակ պետական պարտաւորութիւններից։

Դուկատ, ասպարիսկան դրամ, որ գործ է ածւում երկրից դուրս միայն առևտրական նպատակով =4,42 րուբլի=11,71 ֆրանկ։

Դումա (ռուս.), Ռուսաստանում քաղաքային խորհուրդը, քաղաքային ազգարնակութիւնից ընտրուած ներկայացուցչական ժողով, որ քաղաքի ներքին գործերը վարելում ընդհանուր է։—Պետական դ., Ռուսաստանի ներկայացուցչական ժողովը, պարլամենտը։

Դուման (թուրք.), մէկ, մանախուղ, մշուշ։

Դում-դում վտանգուշան, անպլեական գիւտ է. արձիճէ գինպակը զարնելով մարմնին իր կպած տեղը պատառ պատառ է անում։

Դունիա (արաբ.), ամէն մարդ։ —Աշխարհ։

Դուշ (ֆր.), ցնցուղ, ջրցիր. լողանալու համար պատրաստած որոշ գործիք, որը վերևից և կողքերից բազմաթիւ մանր հոսանքներով ջուրը թափում է մարդի վրա։ Դուշ ընդունել — դուշով լողանալ։

Դուշխ (պարսկ.), զոյգ վիզ նարդախաղի մէջ։—Յաջողակութիւն, բաղդ։

Դուշման (պարսկ.), թշնամի։

Դուպլիկատ, դուբլիկատ (լատին.), արևէ թղթի, վաւերագրի երկրին օրինակը։

Դուր (իտալ.), միևնոյն է թէ մնաժօր։

Դուրա (ռուս.), յիմար, արբեցար կին կամ աղջիկ։

Դուրակ (ռուս.), յիմար, արբեցար։

Դուրզար տես դիւրզիար։

Դուրան, խանութ, կրպակ։ Դուրանչի, խանութպան։—Դուրան բազար, առուտուր, վաճառանոց։

Դուրս կամ ւլրջօզ, բարձր ազնւականութեան տիտղոս, որ ցած է մեծն արքայական աստիճից։ — Հին Գերմանիայում պատերազմի ժամանակ ընտրուած զինավարն էր։

Դրագոմն, դրագօն (ֆր.), հեծելազօրքի մի տեսակը, արագ օգնութեան համար, որոնք ասկարի կարիքի դէպքում կարող են և յետիոտս կռւել։

Դրագօմնն, թարգման արևելեան պետութիւնների մէջ եւրոպական դեսպանատներում։

Դրահմ (յուն.), դիզատան կշռաչափ=60 գրամ։

Դրահմն, յունական գրամական միաւորութիւն=34 կոպէկ. համարւում է հաւասար մէկ ֆրանկի։

Դրակօն, վիշապ. առասպելական թեաւոր մեծ օձ, որ բերանից կրակ է ժայթքում։

Դրամօնական օրէնքներ, չափազանց խստասիրտ օրէնքներ։ (Աթէնքում, եօթերորդ դարում Ք. ա., Դրակօն անունով օրէնսդիրը հրատարակեց անգութ օրէնքներ ժողովրդի դէմ, որի անունից և ծագում է այդ արտայայտութիւնը)։

Դրամա (յուն.), թատերական գրւածք։ Զգայմունքների վրա ազդող մի թատերախաղ։ Ողբերգութիւն։ Տխուր, արիւնոտ պատմութիւն։

Դրամատիրական, ողբերգական, թատրոնական, թատերագրական։

Դրամատուրգ, թատերագիր. թատրոնական երկերի հեղինակ։

Դրամատուրգիա, թատերագրութիւն

Դրամ, դրամի (ֆր.), հատ

րդել կտոր, որից սովորաբար վերարկուներ են կարում։ Հատ մանուշ։

Դրապիր (ֆր.), գեղեցիկ ծալքերով վարագոյր։ Շորից պատրաստ պատերին։

Դրէյնօվ (անգլ.), պատերազմական զրահաւոր նաւերի մի մեծ տեսակը։

Դրէնաժ (անգլ. ֆր.), անջրդեւացում. խոնաւ հողերը, ճահիճները և այլն առուներով յամաքեցումը։

Ռեմոնէ խողովակներով վերից թարախը դուրս քաշելը։

Դրէսսար (ֆր.), անասնաննպաստ կրթութիւն, վարժեցում. անասնամարզ։

Դրուժինա (ռուս.), հին Ռուսաստանում իշխանի ամրողջ զօրքը, իսկ մանաւանդ պէս՝ նրան միշտ ամենամօտիկում, նրան միշտ շրջապատող զօրարաժինը, թիկնապահները։ Ընկերութիւն, ընկերակցութիւն. խումբ։

Դրուան, ուղիղ, շիտակ։ — Դրուանել, շիտակել, ուղղել։

Դրօզ (ռուս.), երկաթաւուն կաւը, որի վրայ երկու կողմից նստում են մէջք մէջքի։

Դրօգիստ (ֆր.), գեղեր և քիմիական արտիւնքներ վաճառող։

Դրօժ, դրօժի (ռուս.), խմորը թթուեցնելու համար մի տեսակ բոյսից պատրաստած խաշու. բուսախաշ, թթխմոր։

Դրօշկա, դրօժկա (ռուս.), փոքրիկ միաձի կառք։

Դւօր (ռուս.), բակ. կայան, կէլեան ճանապարհորդական կառքերի, սայլերի և այլն։

Դւօրեանին (ռուս.), ազնւական։

Դւօրնիկ (ռուս.), զննապան. բակի մաքրութեան հետևող մի ծառայ, որը նաև պարտականութիւն ունի տան բնակիչների անցագրերը ներկայացնել ոս-

սիկանութեան վաւերացման համար և ոսոիկանութիւնը շարունակ տեղեակ պահել հիզդնացողի մասին։

Դօ (կամ ուա), լէ, մի, ֆա, սօլ լա, սի, ձայնասիճանի եօթ ձայների անուններըը։

Դօգ (անգլ.), անգլիական շների մի ցեղ, շատ ուժեղ և կատաղի։

Դօգմա, դօգմ՛ (յուն.), դօգմատ, հիմք, ճշմարտութիւն. դաւանանք. անապացոյց պընդուածք։—Որևէ գիտութեան կամ ուսմունքի հիմնական սկզբունքը, որ ընդունւում է իբրև ճշմարտութիւն և ծառայում է հիմք եզրակացութիւնների համար։—Քրիստոնէական կրօնի և հաւատքի որոշ գծագրած ուսմունք։

Դօգմատիզմ, դաւդութեան այնպիսի եղանակ, երբ եզրակացութիւնը հիմնւում է իբրև ճշմարիտ ճանաչւած, փորձով չստուգւած դրութիւնների վրա, հակառակ էմպիրիզմի, որը մեկնում է գիտողութիւնից և փորձից։—Այն փիլիսոփայական ուղղութիւնը, որը մարդկային բանականութեան ճանաչողական կարողութիւնները անսահման համարելով առանց քննադատութեան և ապացոյցի ընդհանուր դրութիւնների վրա հիմնում է իր ուսմունքը, հակառակ կրիտիցիզմի, որը մեր բանականութեան ճանաչողական կարողութեան սահմաններն է որոշում։ Հակառակը կրիտիցիզմ և սկէպտիցիզմ։ — Անհաւերատութիւն դէպի հակառակորդի գաղափարները։

Դօգմատիկ, դօգմատիզմի հեւտևող։—Դաւանական խնդիրների մեկնաբանող։—Հին յունաց մէջ այն փիլիսոփան, որը հակառակ սկէպտիցիզմի, որոշ եզրակացութեան է յանգում։

Դօգմատիկա, դաւանաբանութիւն. գիտութիւն դաւանանքների մասին։—Քրիստոնէական վարդապետութիւն։

Դօզա, դօզիս (յուն.), դեղի այն քանակը, որը միանգամ ընդունում են։

Դօժ (իտալ.), Գէնուայի և Վենետիկի նախկին հանրապետութիւնների մէջ նախագահի կամ վարչութեան գլխի տիտղոսը։

Դօլար (պարսկ.), պահատան։

Դօլաղ, արնաքամպ։

Դօլիա (ռուս.), Ռուսաստանում ծանրութեան չափ=0,044 գրամ։

Դօլլար (անգլ.), Ամերիկայի Միացեալ Նահանգների դրամական միութիւնը=2 րուբլի=5,34 ֆրանկ։

Դօլմա, տօլմա (թուրք.), կիսրակուր է. ծեծած մսով, բրնձով և այլն մէջը լցրած բազրջան, դդում, փաթաթած տերև, կաղամբ, ձուկ և այլն։

Դօլու, տօլու (թուրք.), ջուր խմելու աման։

Դօկ (անգլ.), նաւահանգստանիստում յատուկ տեղը ջրով լցրած, ուր վնասւած նաւերը տանում են նորոգելու համար։ — Մեծ նաւեր բոլոր հարկաւոր գործիքներով նաւաշինութեան համար, որոնց մօտեցնում են վնասւած նաւին։

Դօկլատ տես դակլատ։

Դօկումէնտ, դօկիման (լատ.), փաստաթուղթ, վաւերագիր. ապացուցագիր։

Դօկումէնտալ, դօկումէնտով ապացուցելի։

Դօկտրին (լատ.), վարդապետութիւն, ուսմունք։

Դօկտրինեօր, գործնական կեանքից չըհասկացող և միայն որևէ ուսմունքի վրա յենւած

երևոյթների մասին դատող։ — Ֆրանսիայում 19-րդ դարի ըկզբում դ.-ներ կոչւում էին այն քաղաքական գործիչները, որոնք հաւատարակես հետ էին թէ ձախակողմեան ամկավարականներից և թէ աջակողմեան, հին ռէժիմի կողմնակիցներից և ձգտում էին պետութեան կարգ ու կանոնը հաստատել գիտական տեսութիւնների համեմատ։ Սրբոյնց պարագլուխներն էին Գիզո և Ռոյէ—Կոլար։—Դօկտրինարիզմ՛, գօկարինեօրական ուղղութեամբ մտածողութիւն։

Դօկտօր (լատ.), վարդապետ. գիտական աստիճան։—Բժիշկ։

Դօկտօրշա (ռուս.), բժշկի կին։

Դօկտօրանտ, գօկտօրութեան թեկնածու. այդ գիտական աստիճանը ստանալու դիտաւորութիւն ունեցող։

Դօկտօրատ, գօկտօրի գիտական աստիճան։

Դօմ՛ (լատ.), տաճար, մայր եկեղեցի։

Դօմէն (լատ. ֆր.), պետութեան սեփականութիւնը կազմող այն հողերը, որոնք եկամուտ են բերում։ Ըստ ամենայ դ. համարւում են նաև անտառները, ձկնորսատեղերը, և հանքատեղերը, որոնք պետութեան են պատկանում. սակայն լայն մտքով վերցրած՝ դ. հասկացողութեան մէջ մտնում են բացի վերոյիշեալներից նաև պետութեան սեփականութիւն կազմող փողոցները, գետերը, կամուրջները և այլն։

Դօմինանտ (լատ.), ութնեակի առաջին ձայնից հաշւած հինգերորդ ձայնը։—Իշխող, տիրապետող։

Դօմինօ (իտալ.), խաղ ոսկրեայ քառանկիւնիներով, որոնց վրա 1—6 հատ կետեր են նշանակած։—Սև զգեստ, հոգևորականի վարքուբարքի նման և այդ զգեստը հագած մարդը դիմակահանդէսում։

Դօմինիկեան, կուսակրօն հոգևորական, որ պատկանում է 1215 թւին հիմնած Դօմինիկեան ուխտին։

Դօմօստրօյ տես դամոստրոյ։

Դօմօվօյ տես դամուոյ։

Դօն (փորթուգ.), պատւանուն ազնւականների և պատւաւոր մարդկանց Իսպանիայում և Փորթուգալիայում. որ գրւում է անունից առաջ։

Դօնատօր (լատ.), պարգևատրող, ընծայաբերող։

Դօն Ժուան, (իսպ.), կնասէր, սիրային արկածներով զբաղւող, միամիտ աղջիկների մոլորեցնող. իսպանական մի աւանդութեան հերոսն է, որ այդպիսի կեանք է վարել. Մօլիէր, Բայրըն, Պուշկին և այլն իրենց գրւածքներում պատկերացրել են այդ տիպը։

Դօնկիխօտ տես Դօն-Քիշօտ

Դօննա (իտալ.), պատւաւոր կանանց անուններից առաջ դրւող տիտղոս։ «Դօն»-ի իգական։

Դօն-Քիշօտ, Դօն-կիխօտ, իսպանացի բանաստեղծ Սէբաստիանոյ երգիծաբանական վէպի հերոս, որ տալեատական արկածների մէջ էր ընկել։ Այդ անունը այժմ գործ է հասարակ անուն իւրաքանչիւր երազող արկածախնդրի, որը ապարդիւն պայքարում է։

Դօնսօ տես դանսօ։

Դօշ, դէշ (թուրք.), կուրծք, լանջ։—Ջկան որոշ մասը ապտուած։—կրծկալ, նաև դօշլուղ։

Դօշակ (թուրք.), մահիճ։—անկողին։

Դօսսիէ (ֆր.), որևէ գործի վերաբերեալ բոլոր փաստաթղթերի, գրութիւնների և այլն

ամբողջութիւնը:

Դօսո. բարեկամ, ընկեր, սիրելի:—Դօսո ու դուշման բարեկամ ու թշնամի, ծանօթ անծանօթ:

Դօվլաթ (արաբ.), հռչակութիւն, փարթամութիւն: — Հարստութիւն, ունեցուածք: Մալ ու դօվլաթ, ապրանք և հարստութիւն:

Դօվլէ, դաուլ (արաբ.), իւկապէս նշանակում է թագաւորութիւն. Պարսկաստանում գործ է ածւում իբրև սիրտոս բարձրաստիճան անձանց, միացած այլ անուան հետ:

Դօր, հերթ: Դօրէդօր, հերթով:

Դօրխանան ոն, հարստաբապատութեան մէջ կոչւում է հին յունական աձը գօրխական սիւնով, որոնք ցածից վերև աստիճանարար նեղանալով վերջանում են պարզ թագադրնիերով, առանց պատուանդանի, և վերից վար ունեն գոգաւոր գոլեր:

Դօցէնա (լատ.), գասատու համալսարանական ուսուցիչ:

Դօֆէն (ֆր.), ֆրանսիական գահաժառանգի տիտղոսը 1349 թուից մինչև 1830 թիւը: — Դօֆէն, գօֆէնի տիտղոսը:

Ե.

Եա (թուրք.), կամ, թէպէ:

Եաբանի (պարսկ.), վայրենի:

Եաբու, հաստաբակ բեռնակիր ձի:

Եազօ (իսպան.), Շէքսպիրի «Օթէլլօ» ողբերգութիւնից վերցրած անուն. խորամանկ միջոցներով նախանձ գրգռող և ընտանեկան երջանկութիւնը քայքայող:

Եագուար (բրազիլիական), ամերիկական վագր, ինձ:

Եագուաշ (գերմ.), որսորդական պայուսակ:

Եաղ, օտար:

Եագդան տես Որմիզդ:

Եագըշի (թուրք.), գրագիր:

Եազմա (թուրք.), ծաղկանկար վարշամակ:—Մանուածոյ:

Եազօն, յունաց դիցաբանութեան մէջ՝ Թէսալիայի թագաւորի որդին, որ արգօնաւորդների գլուխ անցած գնաց Կոլխիս և բերից ոսկեգեղմը:

Եաթաղ (թուրք.), անկողին:

Եաթաղան (թուրք.), կարճ և կեռ թուր:

Եալ, բաշ, ձիու վզի երկար մազերը:

Եալդուզ (թուրք.), ասկեղջուղ, ասկեզօծութիւն,—Դրամի մի տեսակ, որ շատ լաւ ոսկուց է:

Եալլա, կամ Ալլահ (արաբ.), քաջալերական և Աստծու աջակցութիւնը խնդրող բացականչութիւն է:

Եալլի, կլոր պաբ: Նալլիբաշի, կլոր պաբը դեկավարողը, որ շարքի ծայրին է լինում:

Եալլար-եախա (թուրք.), ապաչէլ պագատակ:

Եախա (թուրք.), օձիք:—Եախասամիշ անել, օձիքից բռնել, խստապէս պահանջել:

Եախնի, եաՒնի (պարսկ.), ջրալի կերակուր մսով. դանդան տեղը տարբեր է պատրաստուում:

Եախտ, ապեզանի. մարմնի կարճած անդամի կապ ապեզանով:

Եախտա (անգլ.), թեթևաշարժ նաւ:— Նախնական, նաւաշինութեան սիրողների ամբողջութիւնը:

կումբ:

Եակ, գոմէշի և եղի մէջքին պատկիր ունեցող մի կենդանի է:

Եակօբին, անգամ մի ծայրայեղ արմատական և ամենամեծ դրական կուսակցութեան ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ, որ մեծ ազդեցութիւն ունէր և զեկավարում էր յեղափոխութիւնը: Անունը առացել է նրանից, որ իր առաջին նիստը Պարիզում ունեցաւ Նակօբինների (Յակովլեանների) վանքի մի դահլիճում: Եակոբինների կլուբը իրեն անուանում էր նաև «Ամենանպաստութեան բարեկամների ընկերութիւն»:

Եակօբինիզմ, ծայրացեղ յեղափոխականութիւն. յեղափոխամոլութիւն:

Եալլըշ (թուրք.), սխալ:

Եալլի (թուրք.), խզուած իւղով եփած բլիթ:

Եալտու, սուտ, խոյն:

Եալտուրի, յակոբեան, ժակօբին, կրօնական մի աղանդ, որ տարածւած է մեծ մասամբ տարբերների մէջ, նոյնպէս այլ վայրերում. Քրիստոսի մէջ ընդունում է մի աստուածային բնութիւն: Անունը ծագում է ազանդի հիմնադիր Յակովբ (Եակոբ) եպիսկոպոսից, որ ապրում էր 6 դարում:

Եալտրմ, յակինթ:

Եամանի, պատիւն կամ օգնութիւն ակնկալող բացականչութիւն է:

Եամանի (թուրք.), ոտնամանի մի տեսակը, հողմաթափ, չուստ:—Բրդի կամերան մի տեսակը:

Եամբ (յուն.), տաղաչափութեան մէջ երկվանկ ոտք, առաջինը կարճ, երկրորդը երկար. մեծավանքի:

Եամբօս (խալ.), մի ամերիկացուց և մի վէստիցոնոց ծնուած:

Եամշիկ տես Եմշիկ:

Եամլա, եամլաղ, եղլաղ (թուրք.), ամառանոց լեռներում. Արտավայր, ապարակ:

Եանի (արաբ.), այսինքն:

Եանկի, Ամերիկայի միացեալ նահանգներում այդպէս անուանում են Նոր-Անգլիայի բնակիչներին, իսկ ներքայում առհասարակ Հիւս. Ամերիկայի բնակիչներին: Իրեն բնաւորութիւն համարձակ, հպարտ, գործունեայ, խելօք, հնարագէտ, գործնական, ուրիշների վիճակով շատ չգոհացողներ:

Եանուա, հռովմայեցոց առաւօտը տարու, պատերազմի և խաղաղութեան, դռների, մուտքի և ելքի. նա ունէր երկու երես, մինը ուղղած դէպի առաջ, միւսը դէպի յետ:—Երկերեսանի, կեղծաւոր:

Եանվարիզմ, 17-րդ դարում Հոլանդիայում կօրնելիուս Եանսենիուս եպիսկոպոսի հիմնած աղանդ, որը ժխտում էր մարդկային կամքի ազատութիւնը և պայքարում էր ներքաւութեան դէմ:

Եաշ, հասակ, տարիք:—Նաշով, տարիքով, տարիքաւոր:

Եաշա, եաշասըն (թուրք.), տարի, կեցցէ:

Եաշմաղ, եաշմագ (թուրք.), շղարշ, որ գործ են անում թուրք կանայք գլուխը, բերանը, կզակը մինչև աչքերը ծածկելու համար. բերնակալ:

Եասաղ (թաթար.), տուրք բնաբերքով, որ առնում էին մանգոլ խաները առանձինից, իսկ այժմ ռուս կառավարութիւնը՝ թաթառական ցեղերից:—Սրդեւած:

Եասաղոլ, եասաւոլ, գիւղական ասպետութեան առա-

բին պաշտօնեայ. հարկահան։ —Եաուտուխանա, այդ պաշտօնեաների կայանը, ընդհանուր կացարանը։

Եաուման, յաւմիկ։

Եար (պարսկ.), սիրուհի, սիրեհար։

Եարա (թուրք.), վէրք։ —Եարլալու, վիրաւոր։ —Եարատ, վէրքոտ։

Եարար, արդիօք։

Եարասան, առիւծոյ։

Եարատ, դէնք։ Գործիք։

Եարաւազ (թուրք.), խարտեաշ, վարպետապետ։ Անհանդարտ, անառակ։

Եարդ (անգլ.), երկաթուխան չափ = 3 ոտնաչափի։

Եարլըկ, ապրանքի տեսակը ցոյց տուղ նրա վրա կպցրած թուղթ։

Եարմարկա (գերմ.), տարեկան մի կամ մի քանի անգամ ըստ երեւոյթին կրկնուող, մի որոշ վայրում տեղի ունեցող վաճառական շուկայ, ուր գանազան տեղերից ժողովւում են վաճառականներ և գնողներ իրենց պահանջին և առաջարկին բաւարարութիւն տալու նպատակով։

Եարուս, թատրոնական յարկ։

Եաւաշ (թուրք.), մեղմ, կամաց, հանդարտ։

Եաւիշլան (թուրք.), տոպինձ։

Եաւիտ (թուրք.), շինութիւն. կիսաշէն շէնք։—Եաւիջի, որմնադիր։

Եաւունջի, եաւինջի, այծի մազից թաղիքաձև գործած վերարկու. տառատակ։

Եբէնոս, եպէնոս, սեւ փայտ, որ շատ ամուր է, առաջւում է մի հնդկական ծառից։

Երբայեցերէն, հին հրէական լեզուն։

Եգեան (թուրք.), եղջերուղի, քնարուղի։

Եգէր (գերմ.), որսորդ. որսորդական բանակի պետ։ —Եգէրմայստէր (գերմ.), որսորդապետ։

Եգիպտական աշխատանք, ծանր տանջալի ա.։ Եգիպտոլոգիա, եգիպտագիտութիւն. պիտութիւն Եգիպտոսի պատմութեան, գրականութեան, հնադիտութեան մասին և այլն։

Եղէմ (Աբր.), դրախտ. այն գեղեցիկ պարտէզը, ուր ապրում էին Ադամը և Եւան մինդանչելուց առաջ։

Եգիպ, եգիպի, քրդական մի ցեղ է, որ իր տարօրինակ կրօնով զանազանւում է մահմեդականներից. նրանց կրօնը նման է պրոտեստանեան, բայց ունի քրիստոնէական և մահմեդական խառնուրդներ. շատ մահմեդականները նրանց համարում են այն եզիդի սերունդը, որ սպանեց Հասանին և Հիւսէյնին. այդ իսկ պատճառով նրանց մէջ թշնամութիւն կայ։ Եզիդները իրենց շատ մօտ են համարում հայերին։

Եգոիզմ, եգոիմ (Ֆրանս.), Յիւսուածական ընկերութիւն, կաթոլիկութեան տարածման համար Իգնատիոս Լօյոլայի ձեռքով 1539 թուին հիմնուած և Պօղոս III Պապի կողմից 1840 թուին հաստատած կաթոլիկ միաբանութիւն է։ Նպատակին հասնելու համար թոյլատրելի են համարում և գործադրում են ամեն միջոց՝ կաշառք, խաբեութիւն, կեղծիք, սպանութիւն, դրամ. դպրոցների և բարձրագոյն ուսումնարանների միջոցով, մանաւոր կապերով պետութիւն են ձեռք բերում և առաջ տարածած էին առաջ։ Այժմ հալածւում են շատ տէրութիւններից։

Եգիպտ, եգիպտոմիմին, եգիպտական միջոցներ բառերը այժմ գործ են ածւում այնպիսի մարդկանց և գործողութիւնների նկատմամբ, ուր մի ջոխների խաբեութիւն չի ճանաչւում նպատակին հասնելու համար։

Եգիպտոս. յոյն առակախօս, որ ապրել է Ք. ա. վեցերորդ դարում։—Եգիպտական, այլաբանական, առակով. սրամիտ, կծու, խայթող։

Երկրորդ տես կրկրդ։

Եթեր, (յուն.), տես էթէր։

Եթիմ (արաբ.), որբ։

Երկրդ բիւշկ, կամ ուղղակի կրկրդ, Սուլթան Աբդուլ Համիդի պալատը, մինչդեռ ժամանակակից դահճապետական թիւրքիայում այդ սուլթանի անձնական լէժիմը։

Եկերտրոն, էկերտրոն (յուն.), սաթ։

Եհուդա (Աբր.), Աստուած հրէաների կոչումով, որ խստասիրտ է և նախանձախնդիր։

Եղբայր Յոհաննան, ծաղրական անուն ամերիկացի ժողովրդի։

Եղիսեան դաշտեր կամ էլիզէում, հին յունաց և հռովմայեցոց հաւատքով այն տեղը, ուր տեղափոխւում էին արդարների հոգիները։—Պարիզի մի արւարձան-պրօսավայր։

Եմ (թուրք.), անասունների կեր։

Եմիշ (թուրք.), մրգեղէն։—Սեխ։

Եմշիկ, եամշիկ, կատապան. փոստային սայլապան։

Ենիշ (թուրք), դաւիվայր, պարիվայր, էջք։

Երկաղ տես եաչլաղ։

Ենիչերի (թուրք. «նոր զօրք»). 14-րդ դարում հաստատւած մի յատուկ զօրաբանակ թիւրքիայում։ Ե—ները բանի կերպով մահմեդականութեան դարձած գերի առած կամ իրրև հարկ ժողոված քրիստոնեայ պատանիներից էին կազմած, օգտւում էին յատուկ արտօնութիւններով, դաստիարակւում էին իրենց համար յատուկ հիմնւած դպրոցներում. սրանք կազմում էին թիւրքայ զօրքերի ամենալաւ մասը. բայց ժամանակի ընթացքում այնքան երես առան և յանդգնացան, որ սուլթաններին դարձրել էին իրենց ձեռքը խաղալիք, բոլոր պալատական դաւերի կազմողներն էին և քմահաճոյ կերպով, դրամի պահանջի չըզոհացնելու պատճառով կամ կաշառքով գահընկեց էին անում սուլթաններ և նրերը կարգում. իրենց սան. ձարձակութեամբ և անկարգապահութեամբ դարձել էին մի չարիք երկրի համար, 1826 թուի յունիս 16-ին Սուլթան Մահմուդ II ահից առնելով նրանց ապստամբութիւնը աչնչացրեց այդ բանակը կոտորելով նրանցից 15000 մարդ և վերացրեց բոլորովին ենիչէրիական զօրքը։ —Փոխաբերական մտքով և. կոչւում է առնաադրակ սանձարձակ, անպատասխանատու և բարբարոսութիւններ գործող պինդրը։

Եպարքոս (յուն.), թիւրքիայի հայերը անւանում են մեծ վէզիրին կամ նախարարապետին։

Եպիկուրեան տես էպիկուրեան։

Եպիսկոպոսատ, կաթոլիկ եպիսկոպոսների ամբողջութիւնը, երբեմն Պապն էլ մէջը հաշւած։ —Եպիսկոպոսական կոչում օծմամբ շնորհւած։

Եպիսկոպոսական եկեղեցի տես անգլիական եկեղեցի։

Եսաուլ (թուրք. ռուս.), կազակների ստամանի օգնական. կազակ զօրքի մէջ գինւորական սպայի աստիճան է, հաւասար

կապիտաններ:

Եսիր (արաբ.), գերի: Մարուկ, ճոպան:

Երազմանի (Թուրք.), գեներալ-ադյուտանտ:

Երարխա տես հիվրարխա:

Երևմիական, երևմիապա, ոդր, կած. Երուսաղեմի կործանման ատիճով Երեմիա մարգարէի ողբի նմանութեամբ:

Երիշ (Թուրք.), ընթացք, քայլածք:

Երօգլիճ տես հիվրօգլիճ:

Եւա, կին. կանացի յատկութիւնների մարմնացում:

Եւանգելիստ (յուն.), աւետարանիչ:

Եւնուխ (յուն.), ներքինի:

Եւտախեան խորհուրդ, այն անցքը, որ միացնում է ականջի թմբկաթաղանթի խոռոչը բերանի հետ, կոչուում է իտալացի Եւստախի գիտնականի անունով, որ մեռել է 1574 թ.:

Եփեմերոն տես Էֆեմերիս:

Երա, մեծ, ահագին:

Եօղ, եօղօֆօր և այլն տես իօղ...

Եօլ (Թուրք.), ճանապարհ:—Մէջց, էշանակ, ձև, կերպ:—Եօլա գնալ (գալ, տանել), կառավարուիլ, մի կերպ գլուխ հանել. անցկացնել. վարուիլ. բաւականանալ:

Եօլկա (ռուս.), սօնտաժառ.

Եօխուշ (Թուրք.), գոհունակ, գարխուր:

Եօնջա, առուցտ. անասունների կերակուր մի տեսակ խոտ:—Եօնջալուղ (Թուրք.), առուցտի արտ:

Եօրդան (Թուրք.), վերմակ:

Եֆիմերիս (գերմ.), պետութեան ծառայութեան մէջ հաստատուած պետերից մի տարեկան բաժին:

Զ.

Զաբաւտովկա (ռուս.), գործադուլ.

Զաբոն (պարսկ.), նեհար, վախտ:—Զաբնիլ նեհարել:

Զաղրուգա (սերբ.), բալկանեան պատերազմների մէջ գոյութիւն ունեցող մի տեսակ զերդաստան-համայնք, որը կապուած է մի քանի ընտանիքներից, ընդհանուր անտեսական կապերով:

Զալիմ (արաբ.), արդէն մահնատանոց:

Զալ (ֆր.), գանգիճ:

Զալատնիկ (ռուս.), կամ միւսական, Ռուսաստանում ծանրութեան չափ — 96 ղօլիա — 4,268 գրամ: 96 զ. = ռուսական մի ֆունտ կամ գրանեա:

Զալում (արաբ.), խորամանկ, հաբեպիկ անգամ, անզգաստ, խիստ չար:

Զալպ, համազարկ. շատ հրացանների կամ թնդանօթների միաժամանակ արձակելը:

Զալօգ (ռուս.), գրաւ. գրաւական.

Զախատա (ռուս.), յափշտակած և ապօրինի ուրած հոգ:

Զակազ (ռուս.), պատւէր. արհեստաւորներին, վաճառականին, կապալառուին և այլն:

Զակուսկա (ռուս.), թևթև նախաճաշ սովորաբար սառը ուտելեղէններից:—Զակուսկուղէն, նախաճաշի համար պատրաստած ձկնեղէն, ապխտած մսեղէն և այլն:

Զակօն (ռուս.), օրէնք:—Զակօնագէտ, օրէնագէտ:

Զանդա տանել, ձանձրացնել:

Զանիմէ (արաբ.), նեղութիւն:

Զանրումար (պարսկ. զրնարր մար, օձի թոյն), անէծք է:

Զաղա այր, քաբայր. քաբանճառ:

Զաղրկղ (պարսկ.), շուշան:—Մեծ, մանիշակագոյն ներքակազմ ծաղիկ:

Զաղին, հրաշքառուր:

Զաղչ, նուրբ պատրաստած փափուկ կաշի, որից ձեռնոցներ և այլ իրեր են պատրաստում:

Զալ անել, փչացնել:

Զալիմ (արաբ.), Թիւրքական ատատական իշխան, որ տիրում էր գիւղերի և որոշ պարտականութիւններ ունէր պատերազմի ժամանակ:

Զալչիկ (ռուս. նապաստակ.), երկաթուղիներում առանց տոմսակի ճանապարհորդողներին այդպէս են անուանում Ռուսաստանում, որոնք նապաստակի պէս ամեն րոպէ երկիւղի մէջ են, թէ կորռնեն

Զանգին (Թուրք.), հարուստ:

Զանիամէ, սանիամէ (արաբ. սանատամէ), տրհեան:

Զանջաֆիլ (արաբ.), կոճապղպեղ:

Զանօս (ռուս.), հեղեղատի կամ անձրեւոջրի պատճառած փլուքը ոտմով, քարերով, աւազով:

Զապասնիկներ (ռուս.), արհմատականներ. 40-ական Ռուսական գերդաստանում մի մեծաւոր հոսանք, որի գլխաւոր ղեկավարն էր Բելինսկին: Ըստ նրա քարոզում էին, որ առանց քաղաքակրթութեան միայն ժամանակ կարող է իր կատարելութեան հասնել, երբ նա նախապէս կը իւրացնի արհմատական քաղաքակրթութիւնը. այդ իսկ պատճառով կողմնակից էին արհմատական քաղաքական և հասարակական կարգերի: Դրանց հակառակորդներն էին սլաւեանոֆիլները:

Զապաս (ռուս.), պաշար:

Զապիմէ (արաբ.), ռաթիկան դիւուր Թիւրքիայում:

Զապրօս (ռուս.), հարցապնդում:

Զառ (պարսկ.), ոսկի:—Զառգնար, ոսկեքիչ:—Զառվարաղ, ոսկեզօծ:

Զառաֆ տես ատաֆ:

Զառատա (ռուս.), արգելարան. խճուղիների վրա պահականոց, որտեղ ճանապարհորդներից սահմանուած վճարն են վերցնում խճուղու պահպանութեան համար:

Զար (Թուրք.), նարգիլեի մէջ գործածական ոսկրէ խողովակ — Բախտ, յաջողութիւն:

Զարատուստրա, զ...շտրա տես Զրադաշտ:

Զարար (Թուրք.) վէրք:

Զարր, հարուած, զարկ. ոյժ:

Զարրազան, Թնդանօթ:

Զարգեար տես զառ:

Զառալ (ռուս.), ձնահիւսերի Թափուածք լեռներում, որ վտանգում է ճանապարհը:

Զարգագ, զիւգէկ (Թուրք.), Թեթեւամիտ:

Զաւթել, ուժով, յափշտակելով իւրացնել:

Զաւօդ (ռուս.), գործարան:

Զաֆրան (արաբ.), շաֆրան, հոտաւէտ ծաղիկ է, որից պատրաստում են դեղին գոյն, իսկ նրա չորացրած վարսանդը գործ են ածում իրրև համեմունք. քրքում:

Զեմկ (ռուս.). զեմստուօական գործիք:

Զեմսկի սաբօր (ռուս.), 1550 Թուից մինչև 1653 Թուը Ռուս-

աստանում խորհրդակցական համագումարներ էին, բաղկացած պաշտոնեաներից և հոգևորականներից, որոնք կչեում էին թագաւորների հրամանով և խորհրդակցական իրաւունքներ ունէին պետութիւնը դրամական և պետական նեղ վիճակից ազատելու աշխատանքում։

Զեմսկի Նաչալնիկ (ռուս.), գիւղական ոստիկանութեան վրա վերահսկելու նպատակով կարգած պաշտօնեայ Ռուսաստանում։ Նրան նշանակում է նահանգապետը տեղական կալւածատէր ազնւականներից և իրաւունք ունի վերահսկել գիւղական բոլոր վարչական գործերին. ունի դատաւորական և վարչական իրաւունքներ։ Այս պաշտօնը գոյութիւն ունի 1889 թւի օրէնքով։

Զեմստւո (ռուս.), գաւառական և նահանգական ինքնավարութիւն Ռուսաստանում հիմնուեց «մեծ բարենորոգումների շրջանում» կայսր Ալէքսանդր II-ի օրով Ղրիմի անյաջող պատերազմից յետոյ։ Իրաւասութիւնն է գաւառական և նահանգական ներքին բարեկարգութեամբ զբաղել, ինչպէս քաղաքային ինքնավարութիւնները քաղաքների համար։ Բացում է դպրոցներ, հիւանդանոցներ, կառուցանում է ճանապարհներ և զբաղւում է կուլտուրական այլ գործերով։ Ընդհանրապէս ազատամիտ արամադրութիւն ունի և նախասահմանադրական Ռուսաստանում համարւում էր յառաջադէմ հաստատութիւն։

Զիրցալո (ռուս), ռուսաց պաշտօնատներում, դատարաններում և այլն պարտաւորիչ դրւելիք մի խորհրդանշան է, եռանկիւնի հատածակողմի ձեով, որի երեք կողմերում գրած են Պետրոս Մեծի հրահանգները, իսկ գլխին պետական երկգլխանի արծուենշանն է։

Զերու, հնդկական ոսկեայ մուր եզ։

Զերր, զերրա, վագրածին. վագրի էշի մի տեսակը, որը վագրի նման շերտաւոր մորթ ունի։

Զէլաէրսիան կամ Սէլաէրսիան ջուր, ածխաթթուաւոր պղպեղով հարուստ հանքային ջուր Զէլտէրս գիւղից. գրա նմանութեամբ պատրաստում է և արհեստականը։

Զէյրէկ (թուրք.), Փոքր Ասիայի արեւմտեան կողմը ապրող մի ժողովուրդ է. սրանք առաջ ծառայում էին թիւրքական անկանոն զօրքի բաշիբոզուկների մէջ։

Զէյթուն, ձիթապտուղ։

Զէնդաւէստա կամ սաւաստա, այն սրբազան գիրքը, որտեղ ամփոփւած է Զրադաշտի վարդապետութիւնը։ Զ. պարունակում է իր մէջ հատուածներ իրանի հնագոյն կրօնական ընդարձակ գրւածքներից։

Զէնդերէն, այն լեզուն, որով գրւած է Զէնդաւէստան։

Զէնիաթ տես զանիաթ։

Զէնիթ (արաբ.), երկնակամարի վրա այն կէտը, որ գտնւում է դիտողի ուղիղ գլխի վերեւը, այսինքն ուղղահայեաց է դիտողութեան կէտին, գտնւելով այդ կէտով անցնող երկրի շառաւիղի գծի վրա։

Զէրզաւերի, ներքնատուն, նկուղ։

Զէւզէզ տես զաւզազ։

Զէւս, յոյների գլխաւոր աստուածը, երկնքի և երկնաւոր լոյսի աստուածը, որ բազմած է Օլիմպոսում և համարւում է բոլոր աստուածների և մարդկանց հայր։

Հռովմայեցոց Իպիտերը, իսկ հայոց Արամազդը։

Զըվկում, մի տեսակ ատեձք է։

Զիմար (պարսկ.), թոյն։

Զիմբա, սիմբա (պարսկ.), պայլիկան, ծակիչ մկրատ։

Զիմչում (տաթար.), գմբուխտ բաբը։—*Զիմչում դուշ*, արծւի մի տեսակը։

Զինգրա-գինգրա (Թուրք.) դրոշակ, ցնցուղներով, տատիկ դրոշակ։

Զինդան, կապան։ Բանտ։

Զինջիլ (պարսկ.), շղթայ։

Զրանէխ (պարսկ.), զաւրկ։

Զիսամէլմ (Թուրք.), Թիւրքիայում այն հոգևորը, որոնք առատական իրաւունքներով յանձնւում էին հնձելագործքին, որպէսզի նրանից առացած եկամուտը փոխարինէ նրան արեւելեան թօշակը։ Այս երկրները, համաձայն Մուրադ I օրէնսդրութեան, սեփականութիւն չէին, այլ յանձնւած էին ցմահ եկամուտից օգտւելու համար. օգտւողի մահից յետոյ գ.-ը դառնում էր կրկին արքունի կալւածք։ Զիամէթի աւատատէրը կոչւում էր *զայիմ*, որը պարտական էր պատերազմի ժամանակ որոշ քանակութեամբ զօրք ու զրամ հայթայթել։

Զիան (պարսկ.), ջլատ։

Զիարէմի, արբատեղի, ուխտատեղի. մահմեդականների ուխտագնացութիւն։

Զիբիլ (արաբ.), աղբ։

Զիգգազ(ֆր.),կատրւած գիծ, որը սուր անկիւններ է կազմում։

Զիլ (արաբ.), սուր ձայն.—Լարաւոր գործիքի ամենաբարձր ձայն հանող լարը։

Զիրա, մի տեսակ համեմունք։

Զմրուխտ, իզումրուդ, սմարագդ (պարսկ.), կանաչագոյն թանկագին քար է։

Զնախալ (ռուս.), կախարդութեամբ և ոչ գիտական ճանապարհով բժշկութիւն անող. «ջառա», «հէքիմ»։

Զիւղ (գերմ.), հարաւ, հարաւային քամի։—*Զիւղ-օստ* (գերմ), հարաւարեւելք, հարաւարեւելեան քամի.—*Զիւղ-վէստ* (գերմ.), հարաւարեւմուտք, հարաւարեւմտեան քամի։

Զուրատովշչինա (ռուս.), ռուս կառավարութեան գործակալ Զուրատովի ձեռքով և նրա ծրագրով առաջ տարւած բանւորական շարժում Ռուսաստանում, որի էութիւնն էր բանւորներին զուտ տնտեսական հողի վրա կազմակերպելով նրանց հետ պահել քաղաքական պահանջներից։

Զուրը, վայրի ցուլի մի մեծ տեսակը, որ այժմ գոյութիւն ունի միայն Ռուսաստանի Գրօդնօ նահանգում. օրէնքով արգելւած է նրանց սպանելը։

Զուրբաև (ռուս.), առանց հասկանալու դառն անգիր անող աշակերտ։

Զուրբովկա, մի տեսակ օղի։

Զուլալ (արաբ.), պարզ, վճիտ, ակնաձկիտ։

Զուլում (արաբ), մեծ վտանգ, պատուհաս։—*Խիստ չար, անպատրոյն*։

Զուռնա (Թուրք.), նւագափող. արեւելեան նւագարան, որ ածում են փչելով, ունի խիստ սուր ձայն.—*Զուռնաչի*, փողհար, զուռնա ածող երաժիշտ։

Զուրզիլ ապխտած ձկնեղէնի մի տեսակը։

Զրադաշտ, Զօրօաստր, Զարատուշտրա, համարւում է մազդէզանց կրօնի հիմնադիրը. Որմիզդը և Արհրմնը այդ կրօնի երկու սկզբունքներն են, բարի և չար,

որոնք ստեղծել են աշխարհը դրա հետևող կրակապաշտներ կան մինչև հիմա Պարսկաստանում և Հնդկաստանում։ Ըստ աւանդութեան Զ. իր վարդապետութիւնը ամփոփել է Ձէնտաւէստա կամ Աւէստա գրքի մէջ։

Զօդիակ (յուն.), կենդանակերպ 12 համաստեղութիւնների գօտին, որի միջով անցնում է արեգակը իր տարեկան շրջանառութեան միջոցին։

Զօհիլ, մի նեղսիրտ, նախանձոտ և մանր քննադատ էր, որ ապրում էր Քրիստոսից առաջ երրորդ դարում և պարսաւեց Հոմերոսին։—Առհասարակ այդ պիսի քննադատ,

Զօլ, շերտ։—Զօլաւոր, շերտաւոր։

Զօլօտնիկ տես զալատնիկ։

Զօնդ (ֆր.), մետաղեայ ասեղ վէրքեր կամ մարմնի խորքերը հետազօտելու համար։ Զօնդել, նոյն զօնդով, փոխաբերաբար նշանակում է մաքրել շօշափել, տրամադրութիւնները իմանալ մի գործ ձեռնարկելուց առաջ։

Զօնտ, տան մուտքի դռան վրա փայտի կողմից ծածկ։

Զօնտիկ (գերմ.), հովանոց, անձրևանոց։

Զօո (պարսկ.), ժուռ, ուժ, բռնութիւն։ Զօոով, ուժով, բռնութեամբ։—Զօոաւոր, ուժեղ, բռնակալ։

Զօրօաստր տես Զրադաշտ։

Զօօլօգ (յուն.), կենդանաբան։—Զօօլօգիա, կենդանաբանութիւն։

Զօօտոմիա (յուն.), անասունների մարմնի ներքին կազմը ուսումնասիրող գիտութիւն. անատոմիա։

Է.

Էգալիզատօր (լատ.), հաւասարեցնող. հաւասարութիւն յանկացող։

Էգալիզացիա (լատ.), հաւասարեցում. միակերպաւորում. ողորկացում։

Էգալիտարիզմ, ընդհանուր հաւասարութեան վարդապետութիւն։

Էգալիտէ (ֆր.), հաւասարութիւն։

Էգիդա (յուն.), Զէւսի վահանը, որը նա ընծայել էր Մինէրւային։—Հովանաւորութիւն, պաշտպանութիւն։

Էգօ (լատ.), ես։

Էգօիզմ (լատ.), եսականութիւն, եսասիրութիւն. այնպիսի գործողութիւն, որի նպատակն է սեփական ես, իր անձը միայն, նրա մասին հոգալ, նրան բարձրացնել, յաճախ մինչև անգամ ի վնաս միւսների։ Հակառակը ալտրուիզմ։—Տեսական էգօիզմը փիլիսոփայութեան մէջ այն հայեացքն է, որ միակ գոյութիւն ունեցողը սեփական ես է, մնացած աշխարհը միայն պատկերացումն է, ֆէնօմէն է։

Էգօմէիզմ (լատ. յուն.), ես-աստուածաբանութիւն։ Ինքնաստուածացում։

Էգօիստ (լատ.), եսական, եսասէր մարդ։—Էգօիստական, եսական, եսասիրական։

Էգօտիզմ (ֆր.), ինքնապաշտողութիւն։

Էգօցէնտրիկ (լատ.), եսակենտրոն. վարդապետութիւն, որ ամեն բանի կենտրոն դարձնում է մարդի եսը։

Էդիմ տես եդեմ։

Էդիկտ (լատ.), հրաման, կարզադրութիւն բարձր իշխանութեան կողմից։ Հրովարտակ։

Հին Հռոմում պրէտորի հրապարակային փակցրած յայտարարութիւնը իր ապագայ գործողութիւնների մասին։

Էզան տես ազան։

Էթեր, եթեր (յուն.), ամենանուրբ և ամենաթեթև, անկշռելի նիւթ, որը լցնում է ամբողջ տիեզերքը և թափանցում է բոլոր մարմինները. այս ենթադրական նիւթի ալիքների արտադրութիւն է, կարծում են, լոյսը, ջերմութիւնը, էլեկտրականութիւնը և այլն։-Ոգիից (սպիրտից) պատրաստած մի ցնդող հեղուկ։

Էթէրային, շատ թեթև, նուրբ, օդեղէն։

Էթիկա (յուն.), բարոյագիտութիւն, բարոյախօսութիւն, որ ասում է նոյնպէս գործնական փիլիսոփայութիւն։ Փիլիսոփայութեան այն մասն է, որ ուսուցանում է բարոյականի օրէնքները և տալիս է մարդկային գործողութիւնների գնահատութիւնը բարու և չարի տեսակէտից։ Իրրև գիտութիւն է. առաջ առնում է բարոյականի հասկացողութիւնը և էութիւնը. ապա մարդկային գործողութիւնների այլ և այլ արտայայտութիւններից նա տալիս է այն, ինչ որ բարոյական կարող է անուանել և այսպիսով որոշում է այն կանոնները (նորմերը), որոնց հետևելով կարելի է հասնել բարձր երջանկութեան։ Գլխաւոր խնդիրները, որոնք է-ի մէջ տարաձայնութիւններ են առիթ տալիս, հետևեալներն են. ի՞նչ է բարին, ի՞նչ է չարը, ի՞նչ է առաքինութիւնը, ի՞նչ է պարտականութիւնը, ի՞նչ է խիղճը։

Էթիկական, բարոյագիտական։

Էթիկական կամ պատմական դպրոց, քաղաքական տնտեսութեան մէջ կոչւում է այն դպրոցը, որը ծագից իրրև հետևանք քննադատութեան դասական դպրոցի, որի անկարեւորից զուտ գիտական վերաբերմունքը դէպի տնտեսական երևոյթները է. դպրոցի ներկայացուցիչները անբաւարար գտան և սկսեցին տնտեսական կեանքում նշանակութիւն տալ նաև բարոյական կողմին։ է. պ. կողմնակից է, որ պետութիւնը միջամտի աշխատանքի և կապիտալի վէճի մէջ, կողմնակից է բարենորոգութիւնների յօգուտ բանուորութեան, բանուորական կազմակերպութիւնների և այլն, առանց սակայն վտանգելու ներկայումս իշխող եղանակարգը։ Այս դպրոցը զարգացաւ Գերմանիայում, այժմ ունի իր կողմնակիցները նաև այլ երկրներում։

Էթնօգրաֆիա (յուն.), ազգագրութիւն, ցեղագրութիւն. գիտութիւն, որը նկարագրում է զանազան ազգերի և ցեղերի նիստուկացը, բարքուվարքը, հաւատալիքները, նախապաշարումները, լեզուն, բարբառները և այլն։

Էթնօլօգիա (յուն.), ազգախօսութիւն, ցեղախօսութիւն. գիտութիւն, որ ուսումնասիրում է էթնօգրաֆիայի նկարագրած փաստերը և նրանց բացատրում։

Էլ (անգլ. ale), անգլիական մի տեսակ գարեջուր։

Էլ, էլամ, ժողովուրդ։ Թափառական ցեղ, վաչկատուն։ — Էլբաշի, հասարակութեան ղեկավար։ Թափառականների ցեղապետ։ — Էլչի, թափառական։

Էլ ալամ, համայնք, ընդհանուր ժողովուրդ։

Էլաստիկ (ֆր.), առաձգական, ճկուն։

Էլբէգի, ցեղապետ։

Էլղօրաղօ (իսպ.), մի առասպելական երկիր ոսկէ լեռներով և թանկագին քարերով, որ 16-րդ դարի իսպանացիների կարծիքով գտնուում էր Հարաւային Ամերիկայում.

Էլէատներ առում են Սակրատէսից առաջ յոնական էլէա քաղաքից, որ ծագումն էր Ք. ա. 540 — 460 թ., ծագած մի փիլիսոփայական դպրոցի հետեւողներ։ Ընդունում էին, որ էութիւնը մէկ է, միատեսակ և անփոփոխ, ժխտում էին ամեն տեսակ բազմութիւն, փոփոխութիւն և շարժում։ Հիմնադիրներն էին Պէրմենիդէս, Մէլիսօս և Զէնօն՝ ապա Բէհնօֆանէս։

Էլեգանս (ֆր.), պերճութիւն, շքեղութիւն։ — Էլեգանտ (լատ.), ընտիր, շքեղ, ճաշակով, վայելուչ, պերճ։

Էլեգիա (յուն.), եղկելութիւն. քնարական բանաստեղծութեան այն տեսակը, ուր արտայայտում է բանաստեղծի տխրութիւնը, հեռաթափութիւնը, ողբը։ — Էլեգիական, եղերերգական, տխուր։

Էլեկտօրալ (ֆր.), ընտրական։

Էլեմենտ (լատ.), տարր. մարմինների պարզ մասերը, որոնք այլ ևս բաղկացուցիչ մասերի չեն բաժանուում, այլ իրենք են հէնց ամենաակզբնականը, որոնց այլ և այլ միացումներից կազմում են բոլոր նիւթերը։ Հին յոյները ճանաչում էին միայն չորս տարր՝ կրակը, ջուրը, օդը և հողը։ Ներկայումս քիմիան պրոնց թիւը հասցրել է մինչև 70։ Կայ կարծիք, որ է֊ները բոլորը միևնոյն հիմնական նիւթըն են, միայն զանազան պայմաններում տարրեր ձևակերպութիւններ են առնում, է. բառը գրած է ածւում և մի առմանների ամենափոքր մասերի վերաբերմամբ։

Էլեմենտար, տարրական, պարզ։

Էլեմենտար ոգիներ, միջնադարեան հետաքրքիրներով չորս էին և ապրում էին չորս էլեմենտների — տարրերի մէջ. գնոմ, արական և գնոմիդ, իգական, ապրում էին հողի և լեռների մէջ և պահպանում էին այնտեղ եղած գանձերը. ունդինա, ջրային ոգի կնոջ կերպարանքով. սիլֆա, արական, և սիլֆիդա, իգական, ապրում էին օդի մէջ. և սալամանդր, կրակի ոգի։

Էլեւատօր (լատ.), վերամբարձ մեքենայ. բազմայարկ տների մէջ գործածական մեքենայ մարդկանց յարմարաւոր կերպով ցածից վերև բարձրացնելու համար։ — Յարկերի շահմարաններ նաւահանգստների մօտ, որտեղ նոյնատեսակ մեքենայով ցորենը բարձրացնում են և բարձում նաւերին ու վագոններին։

Էլեկտրականութիւն (յուն.), բնութեան մի զօրութիւն է, որ առաջանում է մարմինների շփումից և այլ և այլ քիմիական բազադրութիւններից. ըստ Հէրցի է պատճառը էֆէրի ճաճանչի է պատճառը էֆէրի ճաճանչի է։ Նա արտայայտւում է իրրև վառող և ձգող ուժ, իրրև կայծ, լոյս, ջերմութիւն և այլն։ Սաթականութիւն. տես նաև գալ-

ւանականութիւն։ — Էլեկտրական, է֊ից առաջ ունեցող։ — Էլեկտրականացնել, մի առարկայի էլեկտրականութիւն հաղորդել։ Փոխաբերական մտքով՝ լարել, ոգևորել, խանդավառել, կենդանացնել։

Էլեկտրաբարձր, թաղաքային հանրակառք, որ երկաթէ ուղիների վրայով շարժւում է էլեկտրականութեան զօրութեամբ։

Էլեկտրոմէքանիկ (յուն.), էլեկտրաբանուժութիւն։

Էլեկտրոմագնիտիզմ, ուսմունք էլեկտրականութեան և մագնիսականութեան փոխադարձ յարաբերութեան և այդ երկու ուժերի կապակցութեան մասին. (օր. պողպատի մագնիսացումը էլէկ. հոսանքի միջոցով)։

Էլեկտրօն, էլեկտրօն (յուն.), սաթ։

Էլեկտրօսկօպ, էլեկտրօսկէպ, էլեկտրաչափ. մի գործիք, որ ցոյց է տալիս որևէ առարկայի մէջ ամփոփած էլեկտրականութեան քանակը։

Էլեկտրօտէխնիկա, գիտութիւն, որ սովորեցնում է արհեստների մէջ էլ֊ութեան գործադրութեան եղանակները և էլեկտրական մեքենաների ու գործիքների պատրաստելը։ — Էլեկտրօտէխնիկ, մասնագէտ էլեկտրօտէխնիկայի։

Էլեկտրօքիմիա, ուսմունք էլեկտրականութեան յարաբերութեան մասին դէպի քիմիական բազադրութիւնները։

Էլիզէում տես եղիսեան դաշտեր։

Էլիքսիր (յուն.), բժշկականութեան մէջ անուն է գանազան հեղուկ դեղերի։ — Ալքիմիայի մէջ՝ այն խորհրդաւոր հեղուկը, որը ամեն հիւանդութիւն կըբժշկի և յաւէտ երիտասարդ կըպահի։

Էլիկ, համայնք։ Ազգաբնակութիւն։

Էլիմինիզմ տես հէլլենիզմ։

Էլմաս տես ալմաստ։

Էլճի, դեսպան, խնամախօս։ — Տես էլ։

Էլօժ (ֆր.), ներբող. գովասանական խօսք, ճառ։

Էլօղլի (թուրք.), այլորդի, օտար։

Էլֆ (անգլ.), գերմանական ժողովրդների դիցաբանութեան մէջ մանր ոգիներ բնութեան, որոնք կամ բարի են և ապրում են երկնքում, կամ չար են և ապրում են տորերկրեայ աշխարհում։

Էհօ (յուն.), արձագանք։

Էհտիար տես իխտիար։

Էկարտէ (ֆր.), թղթախաղի մի տեսակը։

Էկզ... տես նաև էքս։

Էկզալտացիա (լատ.), չափազանց բորբոքուածք, աստիճ գըրգիռ։ Բարձրացած, լարուած տրամադրութիւն։

Էկզակտ (լատ.), ճշգրիտ, կատարեալ։ Ը. գիտութիւններ համարուում են նրանք, որոնք կարող են հիմնուել թուական գիտութեան վրա և չափի են են.

թարկում. կամ ունին հատատուն օրէնքներ և ոչ թէ ենթադրութիւնն, հաւանականութիւնն վրա են հիմնուած. մաթէմատիկան, աստղաբաշխութիւնը, մեքենայագիտութիւնը և այլն:

Էկզամէն (լատ.), քննութիւն, հարցաքննութիւն: — *Էկզամենատօր*, քննող, հարցաքննող:

Էկզարխ (յուն.), բարձր հոգեւորական, արքեպիսկոպոս, որին մի քանի թեմ է ենթարկուում.—*Էկզարխատ* (լատ.), այն բոլոր թեմերը միասին առած, որոնց վրա կարգած է մի էկզարխ:

Էկզեկուատօր (լատ.), իրագործող դատարանական վճռի: — Տնտեսական մասը կառավարող պաշտօնեայ:—*Էկզեկուտիվ*, կատարողական.—*Էկզեկուցիա* (լատ.), կատարուած. բանի իրագործուած դատարանական վճռի:

Էկզեմա, թայ քօս. կաշւի հիւանդութեան մի տեսակը:

Էկզեմպլար (լատ.), օրինակ, մի հատ. որևէ բոյսի, կենդանու, գրքի կամ մի այլ առարկայի մի օրինակը:

Էկզերսիս (Փր.), վարժութիւն:

Էկզիլ (լատ.), էքսիլ, աքսորատեղի. մասնաւորաբար՝ հրէաների բաբէլօնեան գերութիւնը:—*Էկզիստենց* (Փր.), գոյութիւն:—*Էկզիստենցմինիմում*, այն փոքրագոյն եկամուտը, որը անհրաժեշտ է տնտեսութիւն վարող անձի և նրա ընտանիքի գոյութիւնը պահպանելու համար: Է. սովորաբար ապատ է ծնում ուղղակի հարկից, այսինքն եկամտային տուրքից: Պրուսիայում մինչև 900 մարկ, Անգլիայում 160 լիվր, Իտալիայում 400 լիրա, Աւստրիայում 600 գուլդէն եկամուտը ճանաչուում է էկզիստենցմինիմում:

Էկզոգամի (յուն.), շատ ժողովրդների մէջ գոյ պահպանուած սովորութիւնը, որ ամուսնի չի կարելի առնել այն ցեղից, որին պատկանում է ամուսնացողի մայրը:

Էկզոտիկ (յուն.), օտարերկրեայ:

Էկիպաժ (Փր.), այլ և այլ տեսակի կառքեր: — Մի նաւի վրայ ծառայող բոլոր նաւաստինները:—Ռուսաց նաւատորմիղի մէջ յատկապէս է. կոչւում է ծովային զօրքի մի որոշ քանակը, որ համապատասխանում է ցամաքային զօրքերի գնդին: — Ճանապարհորդական ամբողջ պարագան. կառք, ձիեր, պայուսակներ, ծանրոցներ և այլն:

Էկիվ (Փր.), գործածութիւնից ելած ֆրանսիական դրամ = 3 ֆրանկի:

Էկիվոկ (Փր.), երկիմաստութիւն. երկդիմի խօսք:

Էկլէկտիկ (յուն.) էկլէկտիզմի հետևող. ամբողջական աշխարհայեացքից զուրկ մարդ:

Էկլէկտիզմ (յուն.), էկլէկտիցիզմ, այն փիլիսոփայական ուղղութիւնը, որը չի առաջադրում մի սեփական ամբողջական փիլիսոփայական աշխարհայեացք, այլ վերցնում է իրաքանչիւր փիլիսոփայական սիստէմից այն, ինչ որ իր կարծիքով ճշմարիտ է և դրանց միացնելով կազմում է մի ամբողջութիւն: Յաճախ է. բառը գործ է ածւում իբրև յանդիմանութիւն մի փիլ. վարդապետութեան, երբ նա միաձոյլ շէնք չէ:

Էկլիպտիկ (յուն.), այն կոր գիծը երկնային տարածութեան մէջ, որով ըստ երևոյթին արեգակը շրջան է գործում մի տարեայ ընթացքում. ծիր խաւարման:

Էկսէլլանս տես ավսէլլանս:

Էկստազ (յուն.), հոգեկան յափշտակութիւն, ծայրայեղ ոգեորութիւն, այն աստիճանի, որ մարդին զարձնում է անզգայ դէպի իր շրջապատը, մինչև անգամ դէպի մարմնական ցաւը. է. մէջ ընկած մարդը հիպնոտիզմի ներգործութեամբ ստեղծած պատկերները իրականութեան տեղ է ընդունում:

Էկտ տես ակտ:

Էկտան (Փր.), լատ. երգել. մէջը սպիտակ շուր ձող՝ շրջանակ, որ դրւում է մագական լապտերի դիմաց նկարը վրան անդրադարձնելու համար: — Ջերմաչափ. նոյն ձևի այլ և այլ նիւթից պատրաստած, վառարանի դիմաց դնելու համար, որ ջերմութիւնը շատ զօրեղ չընդերգռծի:

Էկցէ Հօմօ (լատ.), ահա մարդը. այս խօսքերով Պիղատոսը փշեայ պսակով Քրիստոսին ներկայացրեց պանահոծութիւնից յետոյ: — Պատկեր տատապող Քրիստոսի փշեայ պսակը գլխին:

Էկսատօր (լատ.), հազարապետ. բևեռներից հաւասար հեռաւորութեամբ երկրագունդը պտտվող և նրան երկու հաւասար մասի բաժանող երևակայական գիծը:

Էկսիլիբրիստ (լատ.), լարախաղաց. հաւասարակշռութիւնը լաւ պահպանելով մարմնամարզական խաղեր անող արուեստական:

Էկսիմալենտ (լատ., համարժէք, փոխարժէք. համազօր արժէք: — *Էկսիմալենց*, համարժէքութիւն:

Էկսնօմ (յուն.), անատ. արև է հատատութեան, վանքի և այլն անտեսական մասի կատարիչ. — *Էկսնօմիկա* (ռուս.), անտեսուհի:

Էկսնօմիա (յուն.), անտեսութիւն. մարդի կանոնաւոր և պարբերական գործունէութիւնը, որով նա իր կարիքները հոգալու համար միջոցներ է ձեռք բերում և այդ միջոցները նպատակայարմար գործադրում է:

Էկսնօմիզմ, մի հոսանք էր ռուս մարքսիստների մէջ 1890-ական թուերին, որը տնտեսական պայքարին առաջնակարգ տեղ էր տալիս, իսկ քաղաքական կուսին՝ երկրորդական. գործադուլների կազմակերպումը ճանաչւում էր այդ հոսանքի գործելակերպը, հիմնուած այն բանի վրա, որ բանւորական շարժումը ինքնին պիտի օգտակար հնտեսութիւններ է տալու:

Էկսօդիսատ, տնտեսագէտ. տնտեսական հարցերով տեսակցական զբաղում: — *Էկսնօմիստներ տես ֆիզիոկրատներ:*

Էնտերաբ (արաբ.), յարդ, բարեկական արժէք. վարկ: Ե-բախտիկ:

Էմալ, էմայլ (Փր.), արծնապակի, կիսուած, «մինէ»: կաւէ կամ մետաղէ իրերի երեսը ապակենիւթ գոյնզգոյն պատուածք կամ զարդարանք: — Սառամի արտաքին կարծր և վայլուն մակերևոյթը:

Էմանացիա (լատ.), բղխուն, ծագուն. հակառակ *էօլիցիացիի*, այն փիլիսոփայական ուսմունքը, որ աշխարհի ծագումը բացատրում է բղխմամբ աստուածութիւնից: Աստուածութիւնից բղխած աշխարհը հետզհետէ հեռանում է կատարելութիւնից և աստիճանաբար վատանում. սրանով է բացատրում և չարի գոյութիւնը աշխարհիս երևոյն, որը չէր կարող Աստծուց լինել:

Էմանսիպ տես ամանսիպ:

Էմանսիպել (Փր.), ազատագրուած. նախապաշարմունքներ

և անոտիապաշտութիւններ թօթափած։ Մարդկանց հետ իրաւահաւասար կեանք վարող կին։

Էմանցիպացիա, էմանսիպասիօն, (լատ.), ազատագրութիւն։ Սարկութիւնից, ճորտութիւնից, հպատակութիւնից, կախումից, նախապաշարումներից ազատուելը։—կանանց է., կանանց իրաւահաւասարեցումը տղամարդկանց հետ։

Էմանցիպատօր, ազատագրող, էմանցիպացիայի քարոզիչ։

Էմբլէմ (յուն.), խորհրդանիշ, նշանակ. որ և է պատկեր կամ առարկայ, որ ծառայում է իրեն սիմբոլ մի գաղափարի. դափնի պսակը փառքի էմբլէմ է, ձիթենու տերեւը՝ խաղաղութեան, արօրը՝ երկրագործութեան և այլն։

Էմբրիօ, էմբրիօն (յուն.), սաղմ։—*էմբրիօլօգիա* (յուն.), սաղմախօսութիւն, սաղմագիտութիւն. գիտութիւն կենդանական սաղմի և նրա զարգացման աստիճանների մասին։

Էմիգրանտ (լատ.), գաղթական, վտարանդի, տարաշխարհիկ. կամաւոր կամ ակամայ իր հայրենի երկիրը թողած և այլ երկրում վերաբնակած անձնաւորութիւն. մանաւորապէս՝քաղաքական հալածանքի պատճառով։—Պատմութեան մէջ է. անունով յայտնի են այն ազնւականները և հոգևորականները, որոնք Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ փախան հայրենիքից և վերադարձան միայն 1815 թւին Բուրբոնների վերահաստատութիւնից յետոյ։

Էմիգրացիա (լատ.), գաղթ, տարագրութիւն, պանդխտութիւն. անհատական կամ խմբական տեղափոխութիւն մի երկրի սահմաններից դէպի այլ երկիր, որ կատարւում է կամ կամաւոր կերպով կամ ստիպմամբ իրրև հետևանք անտեսական նեղ վիճակի, քաղաքական համոզման, կրօնական հալածանքի և այլն։

Էմինենտ (լատ.), արտակարգ, առաջաւոր. սովորականից բարձր։—*էմինենց,* առեղծագործող անհատ. առաջաւոր անձնաւորութիւն։—Պատւաւոր տիտղոս է կարդինալի։

Էմիսար (լատ.), դաղտնի յանձնարարութեամբ ուղարկուած գեսպան։—Լրտես։

Էմիսիա, Էմիսիոն, (լատ.), բաց թողնելը (թղթադրամի կամ արժէթղթի)։

Էմիսիոն բանկ, կարճ ժամանակեայ վարկի հաստատութիւն, որը թղթադրամի գօրութիւն ունեցող արժէթղթեր է բաց թողնում, որոնք տոկոս և դիւիդենտ են բերում։

Էմիր (արաբ.), իշխող. տիտղոս է, որ կրում են անկախ ցեղերի պետերը արևելքում, նոյնպէս Մահմէդի աղջկայ — Ֆաթմէի սերունդից ծագածները։

Էմպիրիա (յուն.), փորձ փորձառութիւն. ձեռք բերած գիտակցութիւն այն առարկաների մասին, որոնցից մենք զգայարանքների միջոցով տպաւորութիւն ենք ստանում. գիտողութեան կամ մտածութեան միջոցով ձեռք բերած ծանօթութիւն։

Էմպիրիզմ (յուն.), փորձականութիւն. փիլիսոփայութեան մէջ այն ուղղութիւնը, որը փորձը համարում է հիմք մեր բոլոր ճանաչողութեան, մտածողութեան դերը ըստ է.-ի միայն նպատակն է, որ նա մեր գիտցածը ձևակերպում է և կարգաւորում։ Միայն գիտողութեամբ և փորձով ձեռք բերած ծանօթութիւններն են, որոնց

մենք ամփոփում ենք և կարողանում ենք լայն ընդհանրացումներ անել։ է.-ը չի ընդունում բնատուր ի ծնէ ստացած գաղափարներ, այլ սրանք բոլորը իրականութեան մէջ պատահած երևոյթների, փորձերի վերացականացումներն են։ Մտածողութեան մէջ ոչինչ չկայ, որ փորձից չբծաղի։ Այս ուղղութեան ներկայացուցիչներն են պէհաւորարար անգլիացի փիլիսոփաներ Բէկկըն, Լօկ, Իւմ, Ջօն Ստիւարտ Միլլ և այլն։

Էմպիրիկ կոչւում է նա, որ ձգտարիա է համարում միայն այն, ինչ որ հիմնւած է փորձի վրայ։ Միայն ծանօթ փաստերի վրայ հիմնւող իր ընդհանրացումները։—*Էմպիրիկական, էմպիրիստական,* փորձական, փորձառական. փորձից ծագող, փորձով հիմնաւորւած. փորձից հղրակացրած։

Էմպիրիոկրիտիցիզմ, Ռիխարդ Աւէնարիուսի (1843—96) հնարած բառն է, որ և բնորոշում է նրա փիլիսոփայութիւնը։ է.-ը հիմնւում է զուտ փորձի վրայ, որը ոչ այլ ինչ նրա համար չէ, եթէ ոչ փորձառական եղանակով ձեռք բերած ծանօթութիւնները, բայց զուտ ամէն տեսակ բնազանցական (մետաֆիզիկական, գերբնզգայական) հետաքրքիր բնագաւառներն է—կրիտիկան, — որ փորձը մաշրում է ամէն տեսակ անհատական, տրամաբանօրէն անհամապատասխանալի կողմերից։ է. չի ընդունում բնատուր, բնածին գաղափարներ. ժխտում է տարբերութիւնը հոգեկանի և մարմնականի, ենթակայի և առարկայի մէջ։ Ի ձգտում է զուտ փորձի վրա կառուցանել համաշխարհային մի գաղափար, զերծ բնազանցութիւնից և երկուութիւնից։

Էմպիրիոմոնիզմ անունն են էմպիրիոկրիտիցիզմի։

Էմօցիա, Էմօսիօն (լատ.), զգացմունքի շարժում, տրամադրութեան յոյզ։

Էյալէթ (արաբ.), ընդհանուր նահանգապետութիւն Թիւրքիայում, որ կազմւած է մի քանի *սանջագներից* և կառավարւում է *վալիների*։ Դրանց թիւը առաջ երկուս էր՝ Ռումէլի և Անատօլու. այժմ շատ է։

Էյզենախեաններ տես *այգենաւ.*..

Էյրաթի (թուրք.), խախուտ։ ժամանակաւոր, ոչ հաստատուն։

Էյտազ, այտազ, սպասաւոր։

Էնդազէ (թուրք.), կաղապար։ Թղթից կտրւած ձև հագուստի որևէ մասի, որի վրա ձևում են։ Տես նաև *անդազա*։

Էնդիկ (գերմ.), ընկերավարական շարժման վերջնական նպատակը։

Էնէիդա, Էնէական, Վիրգիլիոսի մի քերթւածը, Համէրոսի հետևողութեամբ, ուր նկարագրւած է Տրոյի պատերազմի հերոսներից մէկի թափառումները. նա փնտրում էր իր համար նոր հայրենիք Տրոյի անկումից յետոյ։

Էնթէրի տես *անթարի*։

Էնթուզիազմ (յուն.), մեծ ոգևորութիւն, խանդավառութիւն՝ գլխաւորապէս կրօնական։ Ոգու խիստ բարձրացում, իրրև հետևանք որևէ գաղափարով խիստ ազդւելու։

Էնթուզիաստ, մեծ ոգևորութեամբ, խանդավառութիւնով բռնւած մարդ։ Ոգևորութեամբ խիստ գրաւող մարդ։

Էնէրգիա (յուն.), էներգի, եռանդ, կորով, վճռականութիւն, խիստ ձգտումն մի բանի։—Մարմնի ընդունակութիւնը զոր-

ծելու։ Է. լինում է ակտուել կամ կինետիկ, այսինքն՝ գործոն, երբ նա շարժման հետևանք է. և պոտենցիալ, այսինքն՝ թաքուն, երբ նա ամփոփած է առարկայի մէջ և որոշ պայմաններում միայն հրապարակ է գալիս, ինչպես վառօդում։ Էնէրգիայի դանազան տեսակները փոխակերպւում են և մէկից միւսն է առացւում. այսպէս շարժումը կարող է փոխուել տաքութեան, լոյսի, այրման և այլն, և այս դէպքում է. քանակը անփոփոխ է։

Էնէրգիկ, էնէրժիկ, (ֆր.), ուռանդուն. խիստ գործօն։

Էնէրգետիկա, էնէրգիզմ, այն աշխարհայեացքը, որը էնէրգիան համարում է բոլոր բնական երևոյթների հիմքը։

Էնզումէն տես անզուման։

Էնատիտիւ տես ինատիտուտ։

Էնտուզիազմ տես էնթուզ...

Էնտոմոլոգիա (յուն.), միջատախօսութիւն. գիտութիւն միջատների մասին։

Էնցիկլիկա (յուն.), շրջաբերական. շրջագայող գրութիւն, թուղթ։ Հռոմայ պապի կոնդակ։

Էնցիկլոպէդիա (յուն.), հանրագիտակ, հանրագիտական բառագիրք. մի գրածք կամ բառագիրք, որ իր մէջ ամփոփում է ծանօթութիւնները բոլոր գիտութիւնների մասին։ Է. կարող է սահմանափակել նաև գիտութեան որևէ մի ճիւղով։

Էնցիկլոպէդիստներ, 18-րդ դարում Ֆրանսիայի մի շարք մտածողներ, որոնք հրատարակեցին Ֆրանսիական մեծ հանրագիտակը. հետևում էին բնապաշտական և բանական ուղղութեան. դրանք էին Դիդերօ, Դ'Ալամբէր, Ռուսսօ, Վօլտէր, Հոլբախ։

Էնօրմ (լատ.), անչափ, չափազանց։

Էշաֆօղ (ֆր.), տախտակամած, որի վրա հաստատւած են պլխատան գործիքները և որտեղ անգի է անցնում պլխատումը. կառափնարան, կառափնարան։ Աւելում է նոյնպէս շաֆօտ։

Էշլև (արաբ.), աշխոյժ, ուռանդ, աւիւն։

Էշարֆ, ևրևելեան, ջոջեր, իշխաններ։

Էպաթրա տես նապաթրա։

Էպիգամիա (յուն.), երկպսակ ամուսնութիւն։ — Ամուսնութիւն տարբեր երկիրների թագաւորների և տարբեր դասերի մարդկանց մէջ։

Էպիգենեզիս (յուն.), կամ ապլեֆօրմացիա (լատ.), այն հայեացքը, որ իբր թէ բոլոր գործարանաւորները ծնւում են այնպէս, ինչպես նրանց ներկայացնին են. որ սաղմի մէջ արդէն կան այն բոլոր յատկութիւնները, որոնք ապագայում կերպարանաւորւում են ծնողները նման իր ծնողներին։

Էպիգրամ (յուն.), կարճ ուսանուածոյ, յաճախ երգիծարանական, ուր սրամիտ կերպով, կարճ, պատկերացրած է մի գաղափար։

Էպիգրաֆ (յուն.), վերտառութիւն. բնաբան. որևէ գրքուածքի վերնագրից յետոյ գրքուած մի կարճ ուսանուածոյ, ուսուածք, առած, կամ յայտնի մարդի մի խօսք, որ ցոյց է տալիս գրուածքի ոգին։ — Սրբագրապրած մի իմաստալից խօսք։ Աւելում է նաև մօտտօ։

Էպիզօնները (յուն., յետնորդներ. յունաց առասպելներում՝ հօթը իշխանների որդիքը, որոնք իրենց հայրերի վրէժը լուծելու համար պաշարեցին Թէբէն, ուսան և այլեցին։ — Առհասարակ այնպիսի մարդիկ, որոնք գործ լինելով իրենց ուսուցչի կամ վարպետի սարդանդից և չբարգանդելով մի նոր բան ասել, բաւականանում են նրա հանճարեղ մտքերը սարդանդելով և գարգացնելով։

Էպիկվիա (յուն.), համաճարակ. հիւանդութիւն, որ սարդանդում է և բռնում շատերին։ — *Էպիկվիական,* ճարակող, սարդանդող, վարակիչ։

Էպիզօղ (յուն.), միջատկոր. որևէ ընդարձակ մեծ երևոյթից մի դէպք։ Պատահական կերպով սեղի ունեցած մի դէպք։

Էպիզօոտիա (յուն.), անասունների հիւանդութեան համաճարակ։

Էպիմէտ (յուն.), մակդիր, վերագիր. որևէ բառի յատկանշող սձական, որ բանասեղծութեան մէջ միշտ նոյն բառի հետ է գործ սձում. օր. կամար ունքեր, սիմ սչեր, կրտսիկ թուր։

Էպիկեպսիա (յուն.), ընկնաւորութիւն, վերնոտութիւն. հոգեկան հիւանդութիւն է, որ արտայայտւում է ջղային ցնցումներով և ուշաթափութեամբ, նեազկոտութեամբ։

Էպիկսպոկ, ընկնաւոր, վերնոտ. *Էպիկսպոկով հիւանդ։*

Էպիկսէքսիա (յուն.), կաթուած, անդամալուծութիւն, որ բռնում է մարմնի միայն մի կողմը։

Էպիլօգ (յուն.), վերջարան. եզրափակութիւն։ Թատերական գրուածքների մէջ յատուկ վերջին կտորը։

Էպիկուրեան (յուն.), IV դարում Ք. ա. ապրող յոյն փիլիսոփա Էպիկուրի վարդապետութեան հետևող. սովորական հասկացողութեամբ է. համարում է այն մարդը, որ զգայական հեշտանքի յետևից է ընկած. բայց իսկապէս է. է այն մարդը, որը ձգտում է վայելքներով լեցուն խաղաղ հանդարտ կեանքի։ — *Էպիկուրէիզմ,* Էպիկուրի վարդապետութիւնը։ Անձնական վայելքի հետևութիւն։

Էպիտէդ (լատ.), թուղթ, գրութիւն, նամակ։

Էպիստօլական, նամակագրական ձևով (գրուածք, վէպ և այլն)։

Էպիտաֆիա (յուն.), դամբանագիր։

Էպիտէտ տես էպիթէտ։

Էպիցիկլ (յուն.), շրջան, որի կենտրոնը ընկած է մի այլ շրջանի շրջագծի վրա։

Էպիքական, վիպական, դիւցազներգական։

Էպօլէտ (ֆր.), ուսադիր. զինուորականների և որոշ քաղաքացիական պաշտօնեաների ուսերին գրուած նշանը, որը նաև նրանց պաշտօնի աստիճանն է ցոյց տալիս։

Էպօխա (յուն.), դարագլուխ. դարաշրջան. մի արտակարգ դէպքով նշանաւոր դարձած ժամանակաշրջան, որից սկսած տարիները հաշւում են։ Մի ժամանակաշրջան, որի ամբողջ ուսուցութիւնը բնորոշում է որևէ երևոյթ։

Էպօնիմ, էպօնիմ (յուն.), մէկը, որ իր անունը մի բանի է տալիս. օր. Հայկը հայոց ազգի նկատմամբ. յետանուանեալ, անուանադիր։

Ինսուրէկցիա (լատ.), ժողովրդական զինւած ապստամբութիւն։

Ինտակտուա, ինտակտօ լատ (լատ.), անաչառութիւն, անաչառական պաշտօն։

Ինտակտիա (լատ. ֆր.), անաչառն։

Ինտակտօր (լատ.), անաչառ։

Ինտակցիա (լատ.), անաչառութիւն. անաչառի իրաւունքի տակ գտնւած մի մասը վարչութեան։

Ինտալիացիա (լատ.), ներշընչումն։

Ինտանգիբլ (լատ.), անկայուն. ոչ տևական, անհաստատ։

Ինտանգիա (լատ.), դատաստանական հաստատութիւնների այս և այն ատեաճաններ, որոնցով մի գործ անցնում է ցածրից մինչև վերև. օր., շրջանային դատարան, դատաստանական պալատ և սենատ։ Եւ առհասարակ մի վարչական հաստատութեան զանազան ատեաճաններ։

Ինտինկտ (լատ.), բնազդ. կենդանական արարածների ժառանգաբար ստացած այնպիսի գործողութիւններ, որոնք տեղի են ունենում թէև անգիտակից,

բայց նպատակայարմար կերպով, և կենդանի արարածի պայքարման պահպանութեան ծառայում։

Ինտրինսեկւիմ, բնազդօրէն, բնազդաբար։

Ինտրիգան (ֆր.), հաստատութիւն. որևէ վարչական մեքենայի մի մասը, օր., գաւառապետութեան ի., երդւեալ դատաւորների ի.։ Աղջիկների դիշերօթիկ փակ դպրոց։ — ի. անունը կրում են և բարձրագոյն դպրոցներից շատերը և մի շարք գիտական հաստատութիւններ։ Յատկութիւնները ի.-ներ կոչւում են հոմմէական իրաւունքի առաջին հիմքերի ժողովածուն, որ կազմեց Յուստինիանոս կայսրի հրամանով և հրատարակեց 533 թ.-ին։

Ինտրիտուկա (ֆր. ռուս.), ինտրիտուի անասուն։ Մակերևոյթային գաստրակութիւն առացած աղջիկ։

Ինտրուկտօր, գործի մէջ գիտուորական և մարմնամարզական վարժութիւնները առաջնորդող, գիտավարժութիւն տւողուհի. մարզիչ։

Ինտրուկցիա (լատ.), հրահանգ. կանոններ պարունակող մի ուղղեցոյց, որ տրւում է իշխանաւորից իր ատրպետներին, հեղինակաւորից անփորձին որոշ խնդիրներում վարելու եղանակը նախապատրաստելով։

Ինտրումէնտ (լատ.), գործիք, թէ արհեստաւորին և թէ փիտական ուսումնասիրութիւններին ծառայող։

Ինտրումէնտալ փիլիսոփայութիւն կոչւում է լոգիկան — տրամաբանութիւնը – իբրև ամբողջ փիլիսոփայութեան օգնող կործիք։

Ինտէգրալ (լատ.), ի մի ամբողջութիւն միացած. ամբողջական։

Ինտէգրացիա (լատ.), միաւորւելն ի մի ամբողջութիւն նախապէս գրւածների, որից յառաջ գալում է պիֆէրէնցիացիա։

Ինտէլէկտ (լատ.), միտք, իմացութիւն։ Բանականութիւն, մտածողութեան այժ։ Մարդի ճանաչողական կարողութիւնները հակառակ կամայինին։

Ինտէլէկտուալիզմ, այն ուսմունքը, որի հայեացքով միայն բանականութեան միջոցով կարելի է ճշմարիտ ճանաչողութեան հասնել։ Դրա հետևողը՝ *ինտէլէկտուալիստ*։

Ինտէլէկտուէլ, մտաւոր, իմացական։

Ինտէլիգէնտ (լատ.), մտաւորական. մտաւորապէս զարգացած մարդ։—Մտացի, զարգացած։

Ինտէլիգէնցիա, մտաւորականութիւն. հասարակութեան այն շերտը, որը մտաւորապէս զարգացած է և մտաւոր գործ վարութիւնը ունի. նա բոլոր դասակարգերից էլ կարող է լինել։ Սովորաբար ի.-ից են առաջ գալիս այն մարդիկ, որոնք յանուն արդարութեան իրենց դասակարգի շահերը թողած նըւիրւում էն ընդհանրութեան գործին։

Ինտէլիգիբլ, մտքով բանականութեամբ ձեռք ըմբռնելի։

Ինտէնդանտ (լատ.), պաշտօնեայ, որ գործի անհետաձգան հոգացողութեան գործով է զբաղւում։

Ինտէնդանտուրա, պետութեան վարչութեան այն մասը, որը պարտաւորութիւն ունի գործի ուշելիքի, հագուստի, ձիերի մնուցքի մասին հոգալու։

Ինտէնտէ աւս էքսէնտէ։

Ինտէնտիֆիկացիա, ներաժ —ինտէնտիվ — դարձնելը։ Հողի

արդիւնաւէտութիւնը շատացնելը։

Ինտէրվիկտ (լատ.), Հռոմի պապի բանագրանքը, որին նա ենթարկում է ամբողջ քաղաքներ և երկրներ։

Ինտէրէս (լատ.), շահ, օգուտ։

Ինտէրէսնի (լատ. առս), հետաքրքիր։ — Խաբեկան, գրաւիչ։

Ինտէրէսնա, շահագրգռած մարդ։

Ինտէրիօր (Ֆր.), ներսը։ — Սենեակի ներսը պատկերացնող նկար։

Ինտէրկօմմունալ (լատ.), միջհամայնական. համայնքների միմեանց հետ յարաբերութիւններին վերաբերեալ։

Ինտէրմեցցօ (իտալ.), *ինտերմեդիա*. միջադէպ, միջանկեալ փոքրիկ զուարճական նրաժշտական կտոր, որ խաղացւում է մեծ կտորների խաղամիջոցին։

Ինտէրն (լատ.), պիշերօթիկ. փակ դպրոցում սովորող և այնտեղ ապրող աշակերտ։ — *Ինտերնատ*, պիշերօթիկ դպրոց։

Ինտէրնացիօնալ (լատ.), միջազգային։ — Այս անունով յայտնի է «Բանւորական միջազգային ընկերութիւնը», որը իր հիմնաւորման ակզբնական քայլերը արեց 1862-ին և վերջնականապէս կազմակերպուեց 1864 թին, գլխաւորապէս կապ ի Մարքսի ջանքերով, նպատակ ունենալով աշխարհի զանազան մասերում եղած բանւորական կազմակերպութիւնները միացնել մի ընդհանուր կենտրոնի մէջ և միահամուռ, համերաշխ ուժերով տանել բանւոր դասակարգի իրաւունքների պաշտպանութիւնը և նրա ազատագրութիւնը։ 1873 թի կոնգրէսից յետոյ ներքին տարաձայնութիւնների պատճառով քայքայուած ի. փոխարէն այն անունը սկսեց կրել 1877 թից սկսած պարբերաբար գումարուող միջազգային սոցիալիստական կոնգրէսը։

Ինտէրնացիոնալիզմ, միջազգայնականութիւն։

Ինտէրպէլէացիա (լատ.), հարցապնդում։ — Պատգամաւորի հարցը ուղղած մինիստրին պարլամէնտի մէջ պահանջելով բացատրութիւն մինիստրի կամ այլ պաշտօնեանների գործողութեանց մասին, որին մինիստրը պարտաւոր է պատասխանել և բացատրութիւն տալ։

Ինտէրպրէտատօր (լատ.), մեկնիչ. մեկնաբանող. բացատրող օրէնքի և դժուարհասկանալի դրւածքի։

Ինտէրպրէտացիա, մեկնաբանութիւն։

Ինտէրրատ (լատ.), տարաձայնութիւն երկու տարրականների մէջ։

Երկու ձայների միջև տարաձայնութիւնը։

Ինտէրվիևցիա, *ինտերպանսիօն* (Ֆր.), քաղաքական միջամտութիւն։ Միջազգային իրաւունքի և քաղաքականութեան մէջ մի կամ մի քանի պետութեան միջամտութիւնը մի այլ պետութեան ներքին կամ արտաքին կնճռած հարցերի մէջ նրանց լուծելու նպատակով, մանաւանդ եթէ այդ հարցերը ընդհանուր խաղաղութիւնը վտանգելու բնոյթ ունեն։

Ինտէրտիս (անգլ.), լրագրի աշխատակցի տեսակցութիւնը որևէ ականաւոր մարդի հետ և նրա կարծիքներն ընթացիկ հարցերի մասին իմանալով հաղորդելը լրագրութեան մէջ։ — *Ինտերվիւէր*, *ինտերվիւ* անող։

Ինտիմ (լատ.), մտերիմ, սիրտ։

Ինտուիտիվ (լատ.), մտաւոր, ինքնիմաց, տուեալ ծառաներ։

Ինտուիցիա (լատ.), մտաւոր տեսութիւն, ներհայեցութիւն. անմիջական մտահայեցութեամբ ճանաչողութիւն։

Ինտուիցիոնիզմ, բարոյագիտական այն ուղղութիւնը, որ ընդունում է, որ բարու և չարի հատկացողութիւնները բնածին են։

Ինտրանզիժան (Ֆր.), անհաշտ, նեղսիրտ. ոչ մի զիջում չանող։ — Այսպէս կոչւում են առնաւարակ ծայրայեղ ձախակողմեան կուսակցութիւնները։

Ինտրիգ (Ֆր.), խարդաւանանք, որոգայթ. — Թատրոնական գրւածքում՝ հանգոյց։ — Սիրային կապ։

Ինտրիգան, որոգայթներ լարող, գաղտնի միջոցներով մի գործի մէջ անհամաձայնութիւններ սերմանող։

Ինտրոդուկցիա (լատն.), մեծ կրաժշտական կտորի փոքրիկ ներածութիւն։

Ինտօլէրանտ (լատ.), անհամբերատար դէպի ուրիշների կարծիքը. մանաւորապէս կրօնական անհամբերատարութեամբ բռնուած։

Ինտօնացիա (լատ.), շեշտ։

Ինցիղէնտ (լատ.), դէպք, յանկարծական պատահմունք։

Ինսագիօն (Ֆր.), պատերազմի ակզբում կամ ընթացքում մուտք գործելը թշնամու երկիրը։

Ինսաիդ (լատ.), պատերազմում կամ ծառայութեան ժամանակ ստացած վէրքերի պատճառով յաշմանդամացած և աշխատանքի անընդունակ զարձած զինուոր, որին պիտի պահել հասարակական հաշուով։ Ի. ընդհանրապէս կոչւում է մի մարդ, որ երկար ծառայութիւնից յետոյ այլևս անընդունակ է դարձել աշխատելու։ — Գործարանում յաշմանդամացած բանուոր։ — Անկար, խեղանդամ, յաշմանդամ։

Ինսարիսել (լատ.), անփոփոխելի։

Ինսէնսատ (լատ.), մի արհեստութեան բոլոր ունեցուածքի ցուցակը, կահկարասիք, անասուններ և այլն։

Ինսէնսատօր (լատ.), իրեղէնների ցուցակագրութիւն և նկարագրութիւն։ — Առևտրի մէջ ապրանքի ցուցակ։

Ինսիտացիա (լատ.), հրաւէր։

Ինսիսար (արաբ.), ուրացուհի, ժխտուհի։

Ին օկտաւօ (լատ.), ութածալ. գրքի մեծութիւն, որը հաւասար է տպագրական թերթի մի ութերորդ մեծութեան. կամ 8°։

Ինֆիալիբիլիտատ (լատ.), պապի անսխալականութեան ուսմունքի կողմնակից։ — *Ինֆալիբիլիտալ*, անսխալականութիւն։

Ինֆամի (լատ.), անպատուաբերպարտութիւն. վատ համբաւ։

Ինֆանտէրիա (Ֆր.), հետեւակ զօրք։

Ինֆէկցիօն (լատ.), վարակումն։

Ինֆէրիօր (լատ.), ստորադաս, ստորադրեալ։

Ինֆլուէնցա (իտալ.) կամ *գրիպ*, տարածուող հիւանդութիւն է, որի արտայայտութիւնները են հարբուխ և ջերմ։

Ինֆուզօրիաներ (լատ.), մանրէների մի տեսակը, անտեսանելի մանր կենդանիներ, որոնք լինում են ջրում և այլ հեղուկներում։

Ինֆօրմացիա (լատ.), տեղեկութիւններ ստանալը. վկայութիւն։ Հրահանգուհի։

Իշալլահ (արաբ.), Աստուծով, տայ Աստուած։

Իշարաթ, նշան։

Իշիաս (յուն.), կոնքի նեարդի ցաւը, որ զգալի է լինում նըս-

աստեղից մինչև ծունկը:

Իշմար (թուրք.), նշան, ակնարկ:

Իշտահ (արաբ.), ախորժակ:

Իշտեհ (թուրք.), ախուռածիկ:

Իպօ... տես Տիպօ ..

Իջեպաս, Իջեպատար տես ապլնդ, արլնպատար:

Իլմա, Մահմեդի առաջին հետևողների կրոնական մեկնութիւնները: Մի հարցի այն կերպ լուծումն, որ ամբողջ մահմեդական աշխարհի կողմից ընդունուած է:

Իսալ (արաբ.), փոքրահարիներ, փորլուծ:

Իսան, ինսան (արաբ.), մարդ:

Իսաֆ տես *ինսանֆ*:

Իսլամ (արաբ.), մահմեդական կրօնի մի այլ անունը:

Իսլամոլ-Իսլամիէ կամ կաթճառօ՝ իսլամոլ (արաբ.), վերանորոգութիւն հիմքից, հիմնական բարենորոգութիւն: Մի պաշտօնի կազմակերպութիւն էր Թիւրքիայում, կառավարութեան կողմից բացած և քայքայած 1910 թ. ամառը, որ իր մէջ հետաքրքրով ամէնապարակային կարգերից դժգոհներին նպատակ ունէր մի խառնակութիւն առաջ բերել, մի քանի նախարարներ սպանել և այդպիսով «կոմիտէի» (գաղտնի կազմակերպութիւնը, որ ընթացք է տալիս Թիւրքիայի գործերին սահմանադրութիւնից յետոյ) իշխանութիւնը չէզոքացնելով երկրի դէմը իր ձեռքն առնել:

Իսկեանջարի (պարսկ.), զուարճացուիչ օշարակ Պարսկաստանում գործածական:

Իսմայէլացի (երբ. հայ.), ազգ, որի Աբրահամի որդի Իսմայէլի սերունդից: — Շեխ մահմեդականների մի ազանդ, որի կարծիքով մահմեդական կրօնի բարձրագոյն ներկայացուցչութիւնը պիտի պատկանի Իսմայէլի որդիներին:

Իսպեմ (արաբ.), ապացոյց, փաստ:

Իսպրաթնիկ չինովնիկ (ռուս.), ի կատար ազոց պաշտօնեայ. Ռուսաստանում քաղաքային վարչութեան ուղղակի — արամադրութեան տակ պաշտօնեաներ են, որոնք իրագործում են նրա որոշումները: — *Ի. միատ*, կատարողական թիւրթ. գատարանական վճռից յետոյ պահանջատիրոջը տրուած մի թիւրթ, որի հիման վրա նա գատարանական ատեհիանի միջոցով կարող է իր պահանջը ստանալ պարտապանից, տարբերութեամբ նաև վաճառել տալով նրա գոյքը:

Իսպրաւնիկ (ռուս.), գատարական ատեհիանութեան դիմատոր բուն Ռուսաստանում, որ նշանակուում է և արձակուում նահանգապետի ձեռքով:

Իստէրիա տես *Տիստէրիա*:

Իստինաֆ, վճռարեկ ատեան Թիւրքիայում:

Իստօրիա (յուն.), պատմութիւն: — *Իստօրիօգրաֆիա* (յուն.), պատմագրութիւն

Իստօրիզմ տես *Հիստօրիզմ*:

Իտալիանիզմ, իտալերէնին առանձնայատուկ դարձուած. իտալարանութիւն:

Իտարէի ազա, Թիւրքիայում գատարանների քրխտոնեայ անգամները, առանց որոց հաւանութեան և ատրպրութեան գատարանը չի կարող վճիռ կայացնել քրխտոնեաների վերաբերմամբ: Սրանք ընտրուում են հաստատեհան ընտրողական իրաւունքով: — *Իտարէի ժողով*, վարչական ժ.:

Իտոգ (ռուս.), դումար. հաշուէկշիռ:

Իրադէ (արաբ.), տաճկաց Սուլթանի հրովարտակը, որը նա ուղղում է մեծ վէզիրին. վերջինս հրատարակում է նրան իբրև պարտաւորիչ կարգադրութիւն:

Իրանական ժողովրդներ համարում են պարսիկները, քրդերը, ալանները, օսները, թաթերը, հայերը և այլն, և դրանց լեզուները կոչում են իրանական լեզուներ, որոնք կազմում են հնդեւրոպական լեզուների մի ճիւղը:

Իրմնաս, խազադութեան ատեաձուհին հին յունաց:

Իրմս (յուն.), թեատր ատեաձուհի, որ ծառայում էր իբրև դեսպանուհի ատեաձնների: — Մի տեսակ քաղցրաւէնի,— Աչքի ձիաձանի թազանիք:

Իրղատ (յուն. թուրք.), բանուոր, վարձու մշակ:

Իրրատացիա (լատ.), տեսողական պատրանք, որով փայլուն առարկաները մութ տրաձութեան վրա աւելի մեծ են երևում իրենց իսկական չափից, իսկ մութ իրերը փայլուն տրաձութեան վրա՝ աւելի փոքր:

Իրրացիոնէլ (լատ.), ոչ բանական. հակառակ բանականութեան:

Իրրէալ (լատ.), անիրական:

Իրրէգուլեր (լատ.), անկանոն:

Իրօնիա (լատ.), հեգնութիւն. նուրբ ծաղր. որը արտայայտում է նրանում, որ մարդ հակառակն է ասում այն բանի, ինչ որ մտածում է:

Իրվիէ տես *Յօրվիան*:

Իրվկա, իւրկա (արաբ. ֆր. ռուս.), կանանց նեղքին կամ արտաքին հագուստի այն մասը, որ գօտկատեղին կապում է և իջնում է մինչև ոտքերը:

Իւղօֆիլ, հրէատէր: — *իւղօֆօր, հրէատեաց*:

Իւզբաշի (թուրք.), հարիւրապետ:

Իխթօպի տես *ուտօպիա*:

Իլէմա տես *ուլէմա*:

Իլիական տես *յուլեան*:

Իխտա տես *իւֆտ*:

Իմնօր տես *Նամօր*:

Ինիճիաններ, Անգլիայում մի քաղաքական կուսակցութիւն, որ 1886 թ. բաժանուեց ազատամիտներից, որովհետև հակառակ էր Իռլանդիայի ինքնավարութեան, որը Գլադստօնը պահանջում էր իր Իռլանդական Բիլլով:

Ինիօրատ տես *մայօրատ*:

Ինկիզը (գերմ.), կոչում են գերմանական կալւածատէր ազնուականները, որոնք կազմում են այնտեղի պահպանողական կուսակցութիւնը. ձգտում են գերակշիռ դիրքի, արտօնութիւնների և կասեցնում են ամէն մի յառաջադիմական քայլ եթէ դա իրենց շահերին նպաստաւոր չէ:

Ինոնու, հռովմայեցոց աւազ աստուածուհին, Իպիտէրի ամուսինը, (յունաց մէջ կոչւում է Հէրա), հպարտ, վեհապանծ.— Մի փոքրիկ մոլորակ Իպիտէրի և Մարսի միջեւ դում:

Իպիտէր, հռովմայեցոց հայր աստուածը (յունաց Զևսը, հայոց Արամազդը), մարդկանց և աստուածների հայրը. պատկերացնում են գահին բազմած, ձեռքին կայծակի շանթեր:

Իպկա տես *իւրկա*:

Իսա (լատ.), իրաւունք. արդարութիւն:

Իստիցիա (լատ.), արդարութիւն. իրաւախոհութիւն. Արդարադատութիւն: — Արդարադատութեան աստուածուհին, կապած աչքերով և կշեռքը ձեռին:

Իրկ, ուրկ, չեզ ցեղերի բնակատեղին, ուր ժամանակաւոր վիւղ է կազմում, իրենց

արօտատեղիով։ — Թափառական մի ցեղի, կազակի տաննեցայի (վիւղի) հոգաբաժին։

Իւրիսդիկցիա (լատ.), դատավարական իրաւունք։

Իւրիսկոնսուլտ (լատ.), խորհրդատու իրաւաբան. իրաւաբան, որ ծառայում է որևէ հաստատութեան մէջ և պարտաւորութիւն ունի իրաւաբանական խորհուրդներ տալու։

Իւրիսպրուդէնցիա, իրաւագիտութիւն։

Իւրիստ (լատ.), իրաւաբան, իրաւագէտ։

Իւրտա, հիւսիսային կիսավայրենիների վրանաձև բնակարանը։

Իւվէլիր (հնչ.), ակնավաճառ, ակնբիջ։

Իւվէնտա, երիտասարդութեան տաւեածուհին հռոմմայեցոց։ — Իւվէնտալիա, տօնախմբութիւններ հին Հռոմմում ի պատիւ Իւվէնտայի։

Իւթա, իւխա (գերմ.), կղզով պատրաստած եղան կաշի։

Իրա, անյայտ քանակութիւնը թուագիտութեան մէջ։ — Մի սմի։ — Իրա ճառագայթներ տես բլտազինան 6։

Իրիդիում (քիւբբ.), տաճկական դրամ երկու զուռուշանոց = 45 ամերիկ. — 16 կոպէկ։

Իրրամ (արաբ.), հիւրասիրութիւն։

Իօդ (յուն.), բժշկականութեան մէջ գործածւող մի դեղ է, որը միաժամանակ տալը է (էլեմինա), որ գտել են ծովային բոյսերի մոխրի մէջ։

Իօդիզմ, տաժմոքսի և ապիքների բորբոքում խիտ ցաւերով, փսխոց, լուծ, միզարգելութիւն և այլն, իրրև հետեանք իօդի հետ գործ ունենալու. այս հիւանդութիւնը յաճախ նկատւում է ներկալարների և իօդի գործարանների բանւորների մէջ։

Իօդոֆորմ, իօդից պատրաստած մի դեղ, որ վէրքի վրա են ցանում հականիխական նպատակով։

Իօլ (անգլ.), թիավարելի նաւ մի թնդանօթով։

Իօնական տես յօնիական։

Իօտա (յուն.), յովդ. յունական մի տառի անուն. փոքր։ — Աննշան մի իր, մի կէտ, մի մանրիկ։ Նշանախոց։

Լ.

Լա տես դօ։

Լադել տես լլդել։

Լաբիալ (լատ.), շրթնային։

Լաբիլ (լատ.), անկայուն, եռբերուն. հաւատարակշռութիւնը շուտ կորցնող։ Հակառակը աստրիլ։

Լաբիրինթոս, լաբիրինթ (յուն.), մեծ շէնք բազմաթիւ սենեակներով և միջանցքներով և մի միակ դռնով, որի մէջ կարելի է հեշտութեամբ մոլորուել. այս տեսակ շէնքեր կային Եգիպտոսում և Կրէտէ կղզում։ — Բարդ, խճճուած մի բան։

Լաբօրանտ (լատ.), լաբօրատօրիայում աշխատող. նրա վերանկիչ։

Լաբօրատօրիա (լատ.), լաբօրատուար (ֆր.), աշխատանոց. հաստատութիւն, որտեղ կատարում են քիմիական գործողութիւններ, պատրաստում են դեղեր, ձուլում են մետաղ և այլն։

Լազարիքմ տես լօգարիքմ։

Լագիան (պարսկ.), կոնք. լուացարան։

Լագէր (գերմ.), բանակատեղի։

Լագլագ (թուրք.), արագիլ։

Լագամի (արաբ.), համ։ Հաճոյք, զուարճութիւն։

Լագարէտա, հրատնդանոց։

Լագարիտա, մի հոգեոր միաբանութեան անդամ է Ֆրանսիայում։ Մոսկուայի Լազարեան ճեմարանի աշակերտ։

Լագուտիկ (առուս.), լրտես։

Լագար, լագարդի (լատ.), կապոյտ. կապուտակ. երկնքի կապուտակ. երկինք։ — Կապոյտ նեռի։ — Կապոյտ քար։

Լալ, համր։

Լալ (արաբ.), կարմիր գոյնով թանկագին քար. բուբին։

Լալա (պարսկ.), մանկատած. դաստիարակ, մանաւանդ իշխանազունների։

Լալագար, կակաչի մի տեսակը։

Լալէ, լալա (պարսկ.), կակաչ։

Լակ, լաք (պարսկ.), ներկի, խէժի կամ ձիւթի լուծւածք ոգու (սպիրտի) մէջ, որ գործ է ածւում կարասիք յղկելու համար. կամ քսում են այլ և այլ առարկաների վրա խոնաւութիւնից նրանց պաշտպանելու համար։

Լակ, Հնդկաստանում դրամական մեծ հաշիւների մէջ գործածական անուն — 100,000 րուպի։

Լակէյ (ֆր.), սպասաւոր, ծառայ։ — Լակէյտիմին, սպասաւորութիւն։ — Բուռեամբ մեծերի շահերին ծառայութիւն։

Լակմուս (գերմ.), կապտաներկ ներկ. գրանով ներկած թուղթը կարմրում է այն հեղուկի մէջ, որը թթուտ է պարունակում։

Լակա, շատ համեղ ձկան մի տեսակը։

Լակոնական (յուն.), հին լակոնացիների կամ սպարտացիների ձեով՝ կարճ, սեղմ, սակաւարտ (խօսք)։

Լակոնիզմ, կարճ, սեղմ, արտայայտիչ խօսելու կամ գրելու եղանակ։

Լամաթոնի (իտալ.), Նէապօլում և Սիցիլիայում սեփականագործ և որոշ պարապմունք չունեցող մարդիկ, օրական ապրուստ են հայթայթում բեռնակրութեամբ կամ մուրալով։ Իտալիայի պատմութեան մէջ դեր են խաղացել 1647 թուին ապստամբելով Նապոլիայի դէմ և 1799 թուին, երբ կառավարութիւնը նրանց գործիք գործեց և ապի հանեց ապստամբների դէմ։

Լամար արաբ.), մականուն։

Լամբդ, լամդա (քիւբք.), ական, կոյանոց։ Սարերիրևայ փոքրածք լեռներում, որի մէջ պայծառիկ ներթ են գնում և հանքերը պայթեցնում։

Լամիա (Պէրու), այծուզտ. ամերիկական մի կենդանի է։

Լամիա, Բուզդհայական հոգեւորական։ Տես Դալայլամա։

Լամինիզմ, լամայական կրօն, որ բուզդհայական կրօնի մի ճիւղն է և տարածւած է Տիբէթում և Ասիայի մօնղօլական ցեղերից ոմանց մէջ։

Լամէնտացիա (լատ.), ողբաձայն երգ. ազնկատուր, ազնխարշ կոչ։

Լամնակ, քրդի կամ թուրքի երեխայ։

Լամնպա (ֆր.), լամնի, նաւթով վառւող ճրագի զարգացած տեսակը. լամպար, զամբար։

Լամնպաս (գերմ.), ոսկեթել կամ բաց գոյնի կտաւից լայն շերտ, որ կաբւում է անդրավարտիքի դրսի կարերի երկա-

բութեամբ վերից վար։

Լամպիոն (ֆր.), գոյնզգոյն փոքրիկ լապտեր ապակուց կամ թղթից։

Լայր... տես լէյր...

Լայնղ (արաբ.), արժանի, վայել։

Լայկա, շան մորթից պատրաստած սեկ, որից ձեռնոցներ են պատրաստում։

Լայտմօտիվ (գերմ.), գնկավարող սկզբունք. գլխաւոր գաղափարը, որը մի գրւածքի միջով անցնում է նրա սկզբից մինչև վերջը։

Լանգաժ (ֆր.), լեզու, բարբառ։

Լանգեառի (թուրք.), պղնձի մեծ սան։

Լանդգէրիխտ (գերմ.), առաջին ատեհանի դատարանը Գերմանիայում։

Լանդգրաֆ (գերմ.). որոշ իշխանական տիտղոս է Գերմանիայում։

Լանդկարտ (գերմ.), աշխարհագրական քարտէզ։

Լանդմիլից (գերմ. լատ.), ժողովրդական կամաւոր զօրք Գերմանիայում եռանդամեայ պատերազմների ժամանակ։ — Կամաւոր զօրք Ռուսաստանի այլ և այլ մասերում 18-րդ դարում։

Լանդշաֆտ (գերմ.), կամ *պէյզաժ* (ֆր.), նկար, որի վրա պատկերացրած է գիւղական կամ դաշտային տեսարան բնական հարազատութեամբ։

Լանդշտուրմ (գերմ.), ժողովրդական ընդհանուր զօրակոչ Գերմանիայում և Աւստրիայում, երբ երկիրը պատերազմի ժամանակ արտակարգ կրկիքի մէջ է։

Լանդվէհէհատ (գերմ.), վարձու զօրական միջնադարեան Գերմանիայում. սրանք զինւած էին նիզակով, սրով և դաշոյնով։

Լանդտաինգ, Դանիայի պատգամէնաի վերին պալատը։

Լանդվէր (գերմ.), պահեստի զօրք Գերմանիայում և Աւստրիայում, որ ի զէն է կանչւում միայն պատերազմի դէպքում։

Լանդտագ (գերմ.), Գերմանիայի պետութիւնների պատգամէնաները։ — Տիզական, ոչ կնարհնական պատգամէնտ։ — Միւթբրատեան երկրի ազնւականների ժողովը Ռուսաստանում։

Լանդրատ (գերմ.), Պրուսիայում պետական պաշտօնեայ, համապատասխան մօտաւորապէս գաւառապետի։

Լանդրիխտէր (գերմ.), գաւառը գերմանական ատաջին ատիճանի դատարանում։

Լանդօ, սովորականից մի քիչ մեծ կառք, որի չորս անիւն էլ միևնոյն ձևով են շինւած, և երկու կողմից ծածկւում։

Լանդֆօգտ (գերմ.), փոխարքայ. կառավարիչ երկրի։

Լանկաստէրեան կամ *Իէլլ-Լանկաստէրեան* դատատւական եղանակ ատում է այնպիսի մանկավարժական մէթօդը, որով մի դասարանում տեղաւորւում են տարբեր հասակի մանուկներ, ուսուցիչը պարապում է միայն աւելի ընդունակների հետ, որոնք սովորելով սկսում են դասաւանդել և միւսներին. փոխադարձ դասաւութիւն։ Անունը ծագում է Իէլլ և Լանկաստէր (անգլ. Լէնկէսթըր) մանկավարժներից, որոնք գործադրել են այդ եղանակը։

Լանսիէ (ֆր.), ֆրանսիական մի տեսակ պար է։

Լանցէտ (ֆր.), փոքրիկ վիրաբուժական գործիք է ծակելու և կտրելու համար, փոքրիկ սրի ձևով. նշտար։

Լանօլին (լատ.), ճարպային

հիւթ է, որից պատրաստում են դեղեր, օծանելիք և սապոն։

Լաշ, լէշ (պարսկ.). դիակ։

Լասո-տէնիս տես *լոմն*։

Լաստակ, կանացի շղարշ, քող։

Լաստիտար (լատ.), արձանագրական. քանդակած գրէն յատկանշական. կարճ. սեղմ։ Միայն գլխապրերից կազմած դրութիւն։

Լապիս, խարիչ քար, գծոխաքար, բժշկականութեան մէջ գործ է ածւում կաշառք մաշիցնելու համար։

Լապտա, լապտի (ռուս.), մի տեսակ խաղ է. գնդակին հարւածում են թիակաձև փայտով։

Լաջվարդ (արաբ.), մանր կապոյտ ծաղկաւոր, երփնեղանդ։

Լատապեանններ կոչւում էին «Գերմանական ընդհանուր բանւորական միութեան» անդամները և կոմմունիկեները. միութիւնը հիմնել էր 1863 թւի մայիս 23-ին Լայպցիգում Ֆէրդինանդ Լասալի ջանքերով, որից և ծագում է այդ անունը։ Լ.-ը ընդունեցին 1869 թւին Այզենախում կազմած ծրագիրը և միացին ինքնաբերն, որից յետոյ սոցիալիստական բանւորութեան երկու հատւածները Գերմանիայում սկսեցին կոչել «Լասալեաններ» և «Այզենախեաններ»։ Տես նաև Այզենախեաններ։

Լասսո (իսպ.), արկանի մի տեսակը, որ գործ են ածում հարաւային Ամերիկացիք մարդ, ձի կամ այլ կենդանիներ բռնելու համար։

Լաստիկ (լատ.), ռետին։ — *Փայլուն կտոր բամբակից*։ — Ռետինէ կրկնակօշիկ։

Լատարիա տես *լօտերի*։

Լատէնտ (լատ.), գաղտ, թաքուն, թաքնւած։ Լ. *ջերմութիւն*, մարմինների մէջ թաքնւած ջ.-ը, որ գործադրւում է, երբ մարմինը կարծր վիճակից թոյլ վիճակի է փոխարկւում։

Լատէրալ (լատ.), շեղակի, կողմնակի, կողքի։

Լատին, լատիներէն, հին հռովմայեցոց լեզուն, որը այժմ մնած է և պահպանել է միայն հին գրքերում և կաթոլիկ եկեղեցում։ — Լատին եկեղեցի, կաթոլիկ եկ.։

Լատինական թիւեր, հին Հռովմում և այժմ էլ որոշ դէպքերում գործածական թւանշանները՝ I, II, III, IV, V և այլն։ Տես *արաբական թիւեր*։

Լատինիզմ, լատիներէնին յատուկ գարձւածք։

Լատինիստ, լատիներէնին յատուկ գարձւածք։

Լատինիստ, լատիներէնագէտ լեզուագան։

Լատիֆունդիա (լատ.), անասպին ծաւալ ատացած հողային սեփականութիւն, աճապին ծաւալ ատացած պիւզանտեական ձևնարկութիւն։ Հողերի անասպին տարածութիւններ, որոնք կենտրոնացած են մի մարդու ձեռք և գրկում են մանր և միջին հողագործին հողից օգտւելու հնարաւորութիւնից։ Լ. կարող է շատ մեծ տարածութիւններ ունենալ այն երկրներում, ուր հողը մեծ արժէք չունի և նրա վրա շատ մարդ չի աշխատում և ընդհակառակը նա կարող է համեմատարար փոքր լինել, բայց երկրի մի այնպիսի մասում, որ ազգաբնակութիւնը շատ խիտ է, հողի մշակութիւնը խիտ ինտենգիվ և նրա արդիւնաւէտութիւնը շատ մեծ, հետևաբար և լ. տիրոջը մի առանձին անտեսական գերակշռութիւն է տալիս այդ երկրում և բազմաթիւ մարդկանց նրանից կախւած վիճակի մէջ դնում։ Լատիֆունդիական սեփա-

կանութիւնը կարող է սակայն լաւիճանդիտ[illegible] մշակութիւն չունենալ, այլ [illegible] կատր տիրել սրանցից [illegible]ակով. ։ մշակութիւնը համարւում է այն պիսին, որտեղ մեծ կատր հողի վրա մի ընդհանուր կենտրոնի ղեկավարութեամբ և այնտեղից բղխած հրամանների բանիմացութիւ բանւորներ երկրագործական աշխատանքով են զբաղւած։

Լաւան (խոպ.), արդյր. խառնուրդ անագի և պղնձի։

Լարեր և պլնատներ, հին հռոմայեցոց անային սաւառնաձեւները։

Լարինգիտ (յուն), կոկորդի բորբոքում։ — Լարինգոլոգիա, կոկորդագիտութիւն։ — Լարինգոսկոպ, կոկորդի հայելի։

Լաւա (իտալ.), հրաբուխից արտահոսող հրակերպ հեղուկութիւը, որի սառածը քար է դառնում։

Լաւինա (գերմ.), ձեան հեւսեր, որոնք լեռների բարձունքից գլորւում են և ճանապարհին հետզհետէ մեծանալով ահագին ծաւալ են առնում և աւերած են գործում։

Լաւկա (ռուս.), խանութ, կրպակ։

Լան տէնիս տես լոմն ..

Լաւրա (յուն.), մայր վանք։

Լաւրէատ, դափնի տերեւներով պսակած բանաստեղծ։

Լափչի (Թուրք.), լափչին, կիսակօշիկ։ — Ասիական առնտուրի մի տեսակը, որի տակի կաշին սուր ծայրով շարունակւում է և առջևից բարձրանալով ծալւում է երեսի վրա. ունի կոճակաւոր ճաքիր։

Լարա (Թուրք.), բիծ։

Լաօկօօն, Ապօլլօնի քուրմը Տրօայում, որը իր քաղաքացիներին նախազգուշացրեց յոյնների խորհուրդ տրած փայտէ ձիուց և իր տէղով հարուածեց նրան կեղծին։ Երբ նա իր երկու որդոց հետ զոհաբերութիւն էր անում, երկու մեծ օձ յարձակեցին նրանց վրա և փաթաթելով խեղդեցին նրան և որդիներին։ Վատիկանում պահւում է մի հին մարմարէ արձան, որ պատկերացնում է այդ երեքի տանջանքը գալարւած օձերի սոսկ ներում։

Լաքիա, փռանսիական Բօրդօ նահանգի կարմիր գինու տեսակ։

Լիտին անուանում են Լաթինի ասմնները յհներին։

Լէբէլ (անգլ. label), դրօշի արհեստակցական միութեան պատրաստած ապրանքի վրա։ — Վերահսկողութեան դրօշմ։

Լէգալ (լատ.), օրինական. պետական օրէնքի կողմից ճանաչւած։ — Ոչ դատական։

Լէգալիզացիա, լէգալիզասիօն, օրինականացումն. մի գործողութիւն, որով մի տասատատութիւն լրին ինթարկում է օրէնքին, հպատակւում է նրան և նրանից ճանաչւում է։

Լէգալիտէտ, օրինականութիւն. համապատասխանութիւն օրէնքի։

Լէգատ (լատ.), Հռոմայ պապի դեսպան, լիազօր, պատգամաւոր։ — Հին հռոմէական պետութեան մէջ՝ զօրքերի հրամանատարի, վոխարքայի օգնական։ — Պատուիրակ, նէրքակ։

Լէգացիա (լատ.), դեսպանութիւն։ — Պապական տէրութեան գաւառ։

Լէգենդա (լատ.), հրաշապատում, աւանդութիւն, առասպել. հրաշքով լի պատմութիւն սրբերի կեանքից։ Ժողովրդական աւանդութիւն հրաշագործ տարրով։ — Գրութիւն դրամի վրա։

Լէգենդար (լատ.), հրաշալիր, առասպելական. անհաւատալի։

Լէգիսլատիվ (լատ.), օրէնսդրական ժողով. այդպէս կոչւում էր մանաւանդ ս. ժ. ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ 1791 — 2 թ. և 1849 — 51 թ. Օրէնսդրական։

Լէգիսլատուր, լէգիսլացիա, օրէնսդրութիւն։

Լէգիսլատօր, օրէնսդրող։

Լէգիտներ (լատ.), միջին դարերում ուսեալ իրաւաբաններից նրանք, որոնք կողմնակից էին հռոմէական իրաւունքին և նրան զարգացնելով դարձնում էին իրաւակարգի հիմք, հակառակ դէկրէտալների, կանոնական իրաւունքի կողմնակիցների։

Լէգիտիմ (լատ.), լէժիտիմ (ֆր.), օրինական. իրաւունքի վրա յենուղ։

Լէգիտիմացիա, ճանաչողութիւն օրինական իրաւունքի, փաստաթղթերի. իրաւատուութեան, ժառանգութեան իրաւունքի ճանաչողութիւն։ Փաստաթղթերով իր ով լինելը հաստատելը։ — Ամուսնութիւնից դուրս ծնւած երեխան իր օրինական դաւակը ճանաչելը։

Լէգիտիմիզմ, այն քաղաքական ուսմունքը, որը ընդունում է, թէ պետութեան մէջ բարձրագոյն իշխանութիւնը նոյնպէս պիտի ժառանգական լինի, ինչպէս մանաւանդ իրաւունքը, և ոչ թէ ընտրովի և ժողովրդի կամքից կախւած։

Լէգիտիմիտատ, լէգիտիմիզմի պետական ուսմունքին հետևող։ — Ֆրանսիայում լ. կոչւում են նրանք, որոնք պնդում են, որ այդ երկրի գահակալական իրաւունքը պատկանում է միայն Բուրբօնների ասպ ճիւղին։

Լէգիտիմիտէտ (լատ.), 1815 թւի վիէննայի կօնգրէսից յետոյ մնացած մի հասկացողութիւն է. որով շեշտւում է մի կողմից երկրի պետի՝ թագաւորի, իշխանի և այլն իրաւունքը՝ լինել երկրի գլուխ ընդդէմ յեղափոխական ձգտումների. միւս կողմից՝ որևէ թագաւորական տան, հարստութեան իրաւունքը՝ ինալ գահի վրա ընդդէմ գահընկեցական ձգտումների և այլ հարստութիւնների ոտնձգութեան։ Սրբազան դաշնակցութիւնը յանձն էր առնում պաշտպանել լէգիտիմիտէտը՝ գոյութիւն ունեցող կարգ-կանոնը, ընդդէմ ժողովրդական յեղափոխութիւնների, որոնք հետևողութեամբ ֆրանսիականի ծաւալւում էին Եւրոպայում։ — Առհասարակ՝ օրինականութիւն. իրաւունքի վրա հիմնւած դրութիւն։

Լէգիօն, լէգէօն (լատ.), հին Հռոմէական պետութեան զօրագունդ, որ կազմւած էր 3 — 5000 զինուորից։ — Բազմութիւն, խռնոն ամբոխ. մեծ բանակութիւն մարդկանց։

Լէգիօներ, լէգիօնում ծառայող զինուոր։ — Պատւաւոր լէգիօնի շքանշանը ունեցող։

Լէդա, յոյն դիցաբանութեան մէջ՝ Սպարտայի Տինդարէոս թագաւորի գեղեցկուհի կինը, որին սիրահարւեց Իւպիտերը և կարապի կերպարանքով մօտեցաւ նրան, երբ նա լողանում էր. Լ. մի ձւի մէջ ծնեց Կաստորին և Պոլլուքսին։ Տես դիօսկուրներ։

Լէդի (անգլ. lady), տիկին, տիրուհի. պատւանուն է, որ Անգլիայում կրում են տիկնոջ կամ օրիորդի անուան հետ։ Ազնուական ընտանիքից կին կամ աղջիկ։

Լէզգի, լէզգինկա (ռուս.),

կովկասեան մի արագաշարժ պար։

Էվծա, լվտա (յուն.), յոյն դիցաբանութեան մէջ՝ աստրերի-բնայ աշխարհում մի գետ, որից մոռացութիւն էին խմում էն աշխարհը փոխադրնելը։ — *Մոռացութիւն. անյուշութիւն։*

Էվթարգիա (յուն.), մահապուն, քնափութիւն։ Հիւանդութիւն է, որ արտայայտւում է նրանում, որ հիւանդը շատ խոր է և երկար քնում է. կեանքը նրանում համարեա դադարում է, այնպէս որ նրան չափազանց մեռած են համարում։ — *Թմրութիւն, անշարժութիւն։*

Էվկտիր (ֆր.), ընթերցանութիւն։ *Ընթերցանութեան համար չափագրած նիւթը։*

Էվկտօր, գաւախօս։

Էվկցիա (լատ.), *գաւախօսութիւն։*

Էվմմա (յուն.), մի գրութիւն, որ մի գիտութիւն, ապացուցութեան նպատակներով, առնում է մի այլ գիտութեան շրջանից և այդ վերջինիս ճշմարտութեան համար պատասխանատուութիւնը թողնում է գիտութեան այն ճիւղին, որից էմման վերցրած է։

Էվմցա, դերմանացի։

Էյ, ռումանական գրամական միութիւն, համարւում է հաւասար մի ֆրանկի = 34 կոպէկի։

Էյր (գերմ. ուղիղը՝ *լսար, մարմին, անձն*), բառերի սկզբում գրւած ցոյց է տալիս համապատասխան հասկացողութեան անձնական, պատասական լինելը։

Էյր-զաարդիա, թագաւորի թիկնապահ զօրք։

Էյր-խիրուրգ, պատասական վիրաբոյժ։

Էյր մէդիկ, պատասական բժիշկ։ Տիտոս, որ արւում է թագաւորական տան անդամներին բժշկող բժիշկներին։

Էյրկնեան անօթ, պատանի շիշ էլեքտրականութեան ուժեղացման համար, էլեքտրականութիւն կուտակելու համար։

Էյրկնանա (ֆր.), տեղապահ։ — *Զինուորական պաշտի առաջին աստիճանը Գերմանիայում և Աւստրիայում. այլ երկրներում դա ուրիշ աստիճան է։*

Էյտմօսիվ տես լատմօսիվ։

Էլն (գերմ.), *աւատ. միջնադարեան հողատիրութիւնը. հողը իրրև թագաւորի սեփականութիւն բաժանւում էր իր զօրականներին, որոնք դրա փոխարէն պարտաւորւում էին պատերազմի ժամանակ նրան օգնութեան գնալ իրենց զօրքով։*

Էնգլօրդ (անգլ.), *մեծ կալւածատէր Անգլիայում։*

Էնչ, էնճ, էնճօն (անգլ.), *նախաճաշ։*

Էչ տես լաչ։

Էպատա, յունական գրամի ամենափոքր միութիւնը. (100 լ.—մէկ դրախմէն) = մի ասեմի = $^1/_3$ կոպէկի։

Էպրա (յուն.), *բորոտութիւն։*

Էպրօզօրիում, բորոտանոց. տուն, ուր առանձնացնում են բորոտներին։

Էսթիական սէր կամ տրիբացիա, անբնական զուգաւորութիւն կանանց միմեանց հետ։ Տեղի էր ունենում Էսթոս կղզու վրա։

Էսէ ֆէռ և այլն տես ֆիզիօկրատիզմ, lessez faire...

Էտա տես Էթա։

Էէ, էէա, բուլղարական ղրամական միութիւն. համարւում է հաւասար մի ֆրանկի = 34 կոպէկի։

Էէանտա (իտալ.), *Աբեղը։ Ասիական Թիւրքիա։*

Էէանտին, Եգիպտոսում բրնակած եւրոպացու սերունդ։

Էէիսմեան տես Ղեիսմեան։

Էէսքիօն (յուն.), *բառգիրք, բառարան։ Էէսքիօգրաֆ, բառարան կազմող։*

Էէօնինական ընկերութիւն կամ դաշն, որի մէջ մէկին ընկնում է «առիւծի բաժինը», այսինքն նա առանում է ամբողջը։

Էօպտող (յուն.), *ինձ. ընձառիւծ։*

Էիանօս, ընդարձակ դաշտավայրեր Հարաւային Ամերիկայում հարուստ արօտով ծածկուած։

Էիբէր, մի այլ անուն Բարսի։ — Հոգսերից ազատուղ ասուած։

Էիբէրալ (լատ.), *ազատամիտ, ազատական (իրրև ածական)։ Ազատ մտածող ազատամիտ մարդ. լիբէրալ կուսակցութեան անդամ։ — Լիբէրալ վիտինգ, լ. ասօցիացիա, ազատական կուսակցութիւն է Բելգիայում։*

Էիբէրատիա (լատ.), *Բաքոսի տօնը մարտի 17-ին հին Հռոմում։*

Էիբէրալիզմ (լատ.), *այն ուսմունքը, որ ձգտում է անհատի քաղաքական, հասարակական, տնտեսական և մասնաւոր ազատութիւնն։ Այն մտքով և հետեւողական վերջրած՝ լ. քաղաքական հողի վրա պայքարում է այն բոլոր հասատատութիւնների դէմ, որոնք սահմանափակում են անհատի ինքնորոշման իրաւունքը, ֆէօդալական կարգերի, արտօնութիւնի, ռասիկանական և վարչական միջամտութեան և դիկտատուրայի դէմ և ձգտում է ինքնավարական ընտրողական սկզբունքի տիրապետութեան։ Հասարակական յարաբերութիւններ մէջ՝ անհատի ազատութիւն ընկերական կաշկանդումներից։ Տնտեսական հողի վրա լ. ձգտում է ազատ առևտրի հակառակ հովանաւորող մաքսային քաղաքականութեան. ազատ մրցութիւն տնտեսական հողի վրա անհատների մէջ մի կողմից և աշխատանքի ու կապիտալի մէջ միւս կողմից. իշխանութեան միջամտութեան վերացում տնտեսական յարաբերութիւնների մէջ։ Մտաւոր — հոգևոր ասպարիզում՝ մտքի կատարեալ ազատագրութիւն կրօնական և այլ նախապաշարմունքներից. բնապիտութեան վրա հիմնւած դաստիարակութիւն. կրօնի ոչ պարտադիր առաջնակարգ իշխող լինելը հասարակական կեանքի վրա։ Ժամանակակից լ. շատ է հեռացել իր այս մաքուր ձևից, տեղ-տեղ նոյնիսկ խիստ մտնելով կօնսէրւատիզմին — պահպանողականութեան։ (Տես նաև տնտեսական լ. համար՝ ֆիզիօկրատիզմ, Մանչէստէրեան դպրոց և կլասիկական դպրոց տնտեսագիտութեան)։*

Էիբէրտինիզմ, ազատասիրութիւն. ազատական ուսմունք։

Էիբէրտինները (լատ.), *ազատած սորուկներ, որոնք ընդունակին էրրայական կրօնը և իրենց համար տաճար կառուցին Երուսաղէմում։ — Սրմատականները լէֆօրմացիայի ժամանակ։*

Էիբրէտտօ, օպէրայի խօսքերը մի գրքոյկում։ — Էիբրէտտիստ, լիբրէտտօ գրող։

Էիգա, լիգ (իսպան.), *դաշնագրութիւն. միութիւն։ Քաղաքական լիգան դաշնագրութիւն է մի քանի կողմերի մի ընդհանուր նպատակի հասնելու համար։ Ֆեդերացիայից — դաշնակցութիւնից զանազանւում է նր-

լանով, որ ունի մի անմիջական և յատուկ նպատակ, որին հասնելուց յետոյ դադարում է գոյութիւն ունենալուց։ — Առնաադրակ միութիւն այնպիսի մարդկանց կամ հասատատութիւնների, որոնք ընդհանուր նպատակներ են ձգտում։ — «Լիգա ֆրանսիական հայրենիքի», Ֆրանսիայում մի ազգայնական կուսակցութիւն է։

Լիգատուր (լատ.) վիրաբուժութեան մէջ գործածական մետաքսէ թել երակը կապելու համար։ — Պղնձի խառնուրդը ոսկու կամ արծաթի հետ։ — Ձայնանիշների կապը։

Լիդէր (անգլ. leader), քաղաքական կուսակցութեան պարագլուխ, զեկավար, մանաւանդ՝ Անգլիայում։

Լիդիր, ծանրութեան չափ Անգրկովկասի քաղաքներում տարբեր ծանրութեամբ, սովորաբար — 12 ֆունտ մուսկոն։ Հաւանօրէն ֆրանսիական լիտր չափի ազաւաղումն է։

Լիեօ (Ֆր.), ֆրանսիական մղոն — 4 վերստ և 84 սաժէն — 4445 մէտր։

Լիէզօն (Ֆր.), կապ։ — Սիրային կապ առանց ամուսնութեան։

Լիթօգրաֆ (յուն.), վիմագրող։

Լիթօգրաֆիա, վիմագրութիւն. քարով տպագրութիւն պատկերների կամ գրերի։ — Վիմագրատուն։

Լիթօսկօպ (յուն.), զորժիք միջապարկի քարը գտնելու համար։

Լիժա, լըժա (առաւ.), նեղ և երկար փայտէ չմուշկ ձիւնի վրայ շրջելու և սահելու համար։

Լիլա (պերս.), յասմիկ։ — Յասմիկի գոյն։

Լիլիպուտ, Սւիֆթի «Գուլիվերի ճանապարհորդութիւնը» գրուածքի մէջ մի մասի մեծութեան մարդիկ և նրանց երկիրը։ — Թզուկ՝ մանրիապէս և հոգեպէս։

Լիլասէ (առաւ.), լաւ ձիեր ունեցող արագընթաց կառապան։

Լիլէօն տես լիլեում։

Լիլէօր (Ֆր.), քաղցրահամ խմիչք պատրաստած օղիից և որևէ մրգի հիւթից։

Լիլտօր (լատ.), պատուաւոր պատասխաններ և խիղճպահներ բարձրաստիճան անձանց հին Հռոմում. որոնք գնում էին առջևից և ցրում ամբոխը։

Լիմիտացիա (լատ.), առևտրական հատատատութեան պարտքերի հատուցումը, որով նա իր գործառնութիւնը դադարեցնում է մաքրելով իր բոլոր պարտքերը։

Լիման (յուն.), լայնացած գետաբերան ապի ջրով։

Լիմիտատիվ (Ֆր.) ըստ կանոնի կոչւում են այն դատողութիւնները, որոնք ըստ ձևի «այո» են, իսկ ըստ նշանակութեան «ոչ». օր. ժարգի հոգին անմահ է։ — Սահմանափակող։

Լիմիտացիա (լատ.), սահմանափակում։ — Որոշ սահմանափակ ժամանակ։

Լիմոն (իտալ.), կիտրոն, թթու պտուղ դեղին կեղևով։

Լիմոնատ, խմորած՝ լիմոնի հիւթից, շաքարաջրից պատրաստած գազով խմիչք, բայց առհասարակ նոյն տեսակ, բայց այլևայլ պտուղների հիւթից պատրաստած խմիչք։

Լինիա (լատ.), աւիշ. դեղնաւուն հեղուկ կենդանական մարմնի մէջ։

Լինիա, դիմ. առւսաց երկարութեան չափ — 0,0025 մէտր։ Մէկ դիւյմը ունի 12 լինիա։ — Դիմաչափ։

Լինգուիստ (լատ.), լեզուագէտ, լեզուաբան։ — Լինգուիստիկա, լեզուաբանութիւն, լեզուագիտութիւն։

Լինչի օրէնք (lynch law). *Լինչի պատասխան, Հիւսիսային Ամերիկայում ժողովրդական պատասխան. ժողովուրդը ձերբակալում է ոճրագործին, ամբաստանում, մեղադրում և ինքն էր իրագործում իր որոշած պատիժը, որ գանագան տեսակ է, մինչև մահապատիժ։ — Լինչել, պատել և պատժել Լինչի օրէնքով։*

Լիսկ կամ ասկեակ (արաբ.), մի քանի կտաւներից բաղկացած վարշական բաժանմունք Թիւրքիայում, որի կառավարիչն է մոմթեսէրիֆ։

Լիսկ-փաշա կամ միր-լիվա, պետութական բարձր աստիճան Թիւրքիայում. երկրպագուպետ։

Լիվրէյ, պատասխաններ, ծառաների հագուստ փայլուն կոճակներով և երիզներով։

Լիվր կամ ֆունտ ստէրլինգ, իբր դրամի քանակութիւն Անգլիայում հաւասար է 25 ֆրանկ — 9,20 րուբլի։

Լիտէրա (լատ.), տառ։ Տպարանական տառ։

Լիտէրատիզմ, տառակերութիւն. մի գրուածքի տառից կպչելը առանց նրա ոգուն ուշք դարձնելու։

Լիտէրատ, գրական. կրթած մարդ։

Լիտէրատուր (լատ.), գրականութիւն, մատենագրութիւն։

Լիտէրատօր, գրագէտ. գրական գործիչ. գրող, հեղինակ։

Լիտուրգիա (յուն.), պատարագ։

Լիտր, ֆրանսիական միութիւն հեղուկ և կարծր նիւթերի չափի, որ հաւասար է մի կիլոգրամ Ջրի ծաւալին — $^1/_{1000}$ խորանարդ մէտր — $^1/_3$ առւսական վեդրօ։ Դեկալիտր — 10 լիտր։ Հեկտոլիտր — 100 լիտր — 8,1 առւսաց վեդրօ կամ 0,4 չետվերտ։ Դեցիլիտր — $^1/_{10}$ լիտր։ Ցենտիլիտր, սանտիլիտր — $^1/_{100}$ լիտր։

Լիտօ... տես լիթօ...

Լիրա, իտալական դրամական միութիւն — մի ֆրանկ — 37 կոպեկ։ — Թիւրքիայում ոսկէ դրամ — մօտաւորապէս 20 ֆրանկ — $7^1/_2$ րուբլի։

Լիրա (յուն.), քնար։

Լիրիկ, քնարերգու։

Լիրիկա, լիրիկ, քնարական բանաստեղծութիւն. բանաստեղծութեան այն տեսակը, որը արտայայտում է բանաստեղծի զգացմունքները, տրամադրութիւնները, խոհերը և ոգևորութիւնը։

Լիրիկական, քնարական։

Լիցէնց, լիցենցիա (լատ.), թոյլատուութիւններ իրաւական և տնտեսական յարաբերութիւնների մէջ, որոնք մի շարք բացառիկ վիճակներ են ստեղծում, օրինակ մաքս չվճարելու արտօնութիւն։ — Թոյլատուութիւն, արտօնութիւն, ազատութիւն։ — Բանաստեղծական ազատութիւն, ոտանաւորի կանոններին և քերականական օրէնքներին չենթարկելու ազատութիւն։

Լիցենցիատ (լատ.), այն անձը, որ իրաւունք է ձեռք բերել դօքտորութեան քննութիւն տալու և դասախօսում է համալսարանում։

Լիցեում, լիցէյ, լիկէօն (յունար.), միջնակարգ կամ բարձրագոյն գպրոց նայած տեղին։

Լիլա (պարսկ.), ծորակ, խողովակ։ — Ծխափողի գլուխը, որտեղ ծխախոտ են լցնում։

Լիատրա (ֆր.), փայլ, ճաճանչ։—*Ջահ։*

Լիֆ (հոլ.), կամ *կօրսաժ (ֆր.)*, կանանց հագուստի վերին մասը, որ ծածկում է բունը։

Լիֆէրանտ (գերմ. լատ.), մատակարար։

Լիֆտ (գերմ.), վերամբարձ մեքենայ տան ցածի յարկից վերիններըը բարձրանալու համար։

Լլօյդ (անգլ.), այս անունով յայտնի են մի շարք նաւային, ապահովագրութեան, նաւերի մասին տեղեկութիւններ հաղորդող, նաւագնացութեան և այլ նման ընկերութիւններ զանազան երկրներում և քաղաքներում։

ԼՀէր, վերմակ։

Լուդիզմ (անգլ.), 19-րդ դարի առաջին կիսում անգլիական բանուորների շարժումը. սրանք իրենց անւանում էին *լուդիտներ*, ջարդում ու ոչնչացնում էին մեքենաները, համոզուած լինելով, որ դրանք զրկում են բանուորներին գործից, հետևաբար և հացից։

Լութերական, հետևող գերմանացի Մարտին Լութերի *(1483—1546)*, որը պապական եկեղեցու և ինդուլգենցիաների դէմ իր գրած քննադատականների պատճառով բանադրուեց պապից, հետացաւ կաթոլիկութիւնից և հիմք դրեց բողոքականութեան, վերանորոգուած քրիստոնէական եկեղեցու։ Տես *ըէֆօրմացիա:*

Լուիդոր (ֆր.), ֆրանսիական ոսկի. *դրամ=9,43 րուբլի։*

Լուլա տես *լիւլա։*

Լուկուլլեան խնջոյք, շատ ճոխ և փարթամ, ինչպէս այդ անում էր Ք. ա. առաջին դարում ապրող Լուկուլլոս հռովմայեցի զօրավարը, շնորհիւ իր անբաւ հարստութեան։

Լուկրէցիա, Տարկւինիա Կոլլատինոսի կինը, որը ինքն իրեն դաշունահար արեց, որովհետև Տարկւինիոս Հպարթ թագաւորի որդին նրան անպատւել էր։—*Ոգջախոհ*, անարատ կին։

Լումպէնպրօլէտարիատ (գերմ. լատ.), պրօլէտարիատի ամենացածր ստրիճանը, որը ոչ թէ մշտական տևական աշխատանքով է զբաղած արդիւնաբերութեան մէջ, այլ ապրում է օրէցօր, յաճախ մուրացկանութեամբ. ընդունակ չէ կազմակերպուելու։

Լունա (լատ.), լուսին։—*Լ. կամ Դիանա*, լուսնի աստուածուհին։

Լունատիզմ (լատ.), *լունատիզմ* կամ *սօմնամբուլիզմ*, լուսնոտութիւն. հիւանդութիւն է, որի արտայայտութիւնն այն է, որ հիւանդը քնած անպիտակ ցաբար շրջում է։

Լունատիկ, լուսնոտ։

Լուպա (ֆր.), կիպապակի, ոսպաձև խոշոռացոյց ապակի. ոսպապակի. երկուռուցիկ ապակի։

Լուվր, մի հին թագաւորական պալատ Պարիզում, որը մեծ յեղափոխութիւնից յետոյ վերածուած է թանգարանի։

Լուցիֆէր (լատ.), լուսաբեր աստղը։—*Դև, չար ոգի։*

Լուքսուս (լատ.), *լուքս, լիւքս (ֆր.)*, պերճանք. շքեղութիւն. նիւթական բարիքների այն աստիճի կամ այն չափով գործածութիւնը, որը մարդկային կարիքների և անհրաժեշտութիւնների սահմանից անցնում է։

Լօբրազ, պարծենկոտ, ինքնագով։

Լօբգիկ, պողպատի ադեղ, որի մէջ հագցնում են շատ բարակ սպոց նուրբ կորութիւններով բարակ տախտակը կարելու համար։

Լօգարիթմ (յուն.), այն աստիճանացոյցը, որքան աստիճան պիտի բարձրացնենք իրրև հիմք ընդունած մի թիւ, որպէսզի մեր ցանկացած թիւը ստանանք։ Այսպէս, եթէ իրրև հիմք ընդունում ենք 5, ապա 25-ի Լ.-ը կը լինի 2, որովհետև 5-ը երկու աստիճան բարձրացրած կըլինի 25. իսկ եթէ իրրև հիմք ընդունում ենք 10, ապա 1000-ի Լ.-ը կը լինի 3, որովհետև 10-ը երեք աստիճան բարձրացրած կըլինի 1000.

Լօգիկա (յուն.), տրամաբանութիւն. փիլիսոփայութեան այն մասը, որը գտնում է և ուսումնասիրում է մտածողութեան օրէնքները։

Լօգոմախիա (յուն.), բառակռիւ, բանամարտ. վէճ այնպիսի մարդկանց մէջ, որոնք ըստ էութեան համաձայն են, բայց վիճում են բառերի և անուանումների վրա։

Լօգօս (յուն.), բան. խօսք։

Լօղկա (ռուս.), նաւակ, մակոյկ։

Լօնալ, լօյալ (ֆր.), օրինական։

Լօգունգ (գերմ.), պայմանախօսք, որ զօրքի իւրաքանչիւր մարդը պիտի գիտենայ, որ պատասխանին յայտնելով իրաւունք ստանայ շրջապից անցնել։

—*Որևէ վայրկեանում մի քաղաքական կուսակցութեան էական պահանջը։*

Լօշի, սրիկա։—*Խորամանկ չարաճճի։*

Լօժա, լօժ (ֆր.), օթեակ. առանձին բաժանմունք թատրոնում, որտեղ կարող են նստել միայն մի քանի հանդիսատես։

—*Ֆրանկմասոնների ժողովատեղի, նրանց ընկերութիւնը։*

Լօխման, հրաշագործ բժիշկ։

Լօխում՝ լօխմա (արաբ.), խմորի նման փափուկ շաքարեղէն։

Լօկալ (լատ.), տեղական։—*Ժողովատեղի, սրահ։*

Լօկալիզացիա, կենտրոնացում մի որոշ տարածութեան վրա։

Լօկաուտ. (անգլ. lockout), գործատուների կողմից ձեռնարկած այն միջոցը, որով նրանք բազմաթիւ բանուորներ, ընդհանուր համաձայնութեամբ, արձակում են գործարաններից, որպէսզի այդպիսով կոտրեն բանուորների դիմադրական ուժը տնտեսական պայքարի մէջ. մի պայքարակերպ է գործատուների կողմից կիրառուած։ Տես հակառակը՝ *բօյկօտ։*

Լօկօմօբիլ (լատ.), շոգեշարժ մեքենայ, որը ծառայում է ուրիշ մեքենաների շարժում հաղորդելու համար. փոքրիկ շարժական շոգեկառք, որը հեշտութեամբ տեղափոխուում է և երկրագործական մեքենաներ շարժելու է ծառայում։

Լօկօմօտիվ, շոգեկառք. այն շոգեշարժ մեքենան, որը երկաթուղային գնացքի առջևից լծուում է և նրան ձգում։

Լօմ (ռուս). նիպ. հատ երկաթէ ձող. որը իրրև լծակ են ծառայեցնում ծանրութիւններ շարժելու համար, կամ նրանով պատ են քանդում։

Լօմբարդ (ֆր.), գրաւատուն. պետական կամ մասնաւոր հաստատութիւն է, որտեղ կարելի է գրաւով փոխարինաբար գրամ վերցնել։

Լօմբէրի սեղան, թղթախաղի սեղան կանաչ մահուդով ծածկած։

Լօյօլիա նոյնը *եզիլիա։*

Լօշ, լաւաշ հաց։

Լօուն—տէնիս կամ տէնիս (անգլ. lawn Tennis), անգլիական խաղէ. երկու կողմից գնատակներ են իրար դէմ մաղաձև թիակներով։

Լօպպազ տես լօբբազ։

Լօվելաս, կանանց յեսևից ընկած և նրանց գայթակղեցնող. բառը ծագում է Ռիչարդսօնի «Կլարիսսա Գարլօու» վէպի հերոսի անունից։

Լօտ (գերմ.), ծանրութեան չափ=3 զօլօտնիկ (3 մսխալ)=12,804 գրամ։

Լօտրրի, լօտէրէա (ֆր.), վիճակախաղ։ Մի միջոց է դրամական մեծ գումարներ ձեռք բերելու համար առանց մարդկանց վրա. ծանր բեռ դնելու. բազմաթիւ ոոմսակներ ժամն դնելով վաճառւում են հասարակութեան, առացած եկամուտի մի մասը, զգալապէս խոշոր գումար, վիճակով տանում են մի կամ մի քանի ոոմսատէրեր։ Մի քանի երկրներում պետութեան կողմից և գործադրւում է իրրև պետական եկամուտի աղբիւր։

Լօտօ (իտալ.). խաղ է. վիճակախաղի մի տեսակը։

Լօտօս (յուն.), Ջրաշուշան եդիպտացիների և հնդկացիների համար սրբազան մի ծաղիկ։

Լօրդ (անգլ.), Անգլիայի պատուական տիտղոս է. Լ. տիտղոսը կրում են նաև առաջին դատաւորները, եպիսկոպոսները և Լօնդոնի քաղաքագլուխը։ Լօրդ Կանցլերը, Անգլիայում առաջին պալատի՝ լօրդերի ժողովի նախագահ—և պետական դիւանի պետ։—Լօրդ մէր, տիտղոս է Լօնդոնի, Դուբլինի և Իօրկի քաղաքագլուխներին։

Լօրդերի պալատ, Անգլիայի ժողովրդական ներկայացուցչութեան բարձրագոյն հաստատութիւնը, որի անդամները լօրդեր են, այսինքն ժառանգական օրէնսդիրներ։

Լօրէլայ, Գերմանական ահասպիներով՝ յատկութեամբ, որ ապրում է Հռենոսում և նրա վրա նաւաղներին գրաւելով ներս է տանում։

Լօրնէտ (ֆր.), ժապաւէնով վզից կախած ակնոց է, որ կոթունի, որին կարիքի դէպքում մօտեցնում են աչքերին։

Լօցման (գերմ.), նաև ուղեցոյց մարդը, որը լաւ ծանօթ լինելով ծովային ճանապարհի վտանգաւոր տեղերին, առաջնորդում է նաւը։

Խ.

Խաբախ տես կաբակ։

Խաբար (արաբ.), լուր, տեղեկութիւն. համբաւ։—Խաբարչի, անգաղտնապահ, թուլ բերան. անտեղի լուր աւող, բամբասասէր։—Խաբարդար. զգոյշ, զգաստ. կառապանների կոչն է, որով անցորդներին զգուշացնում են վտանգից։

Խազախ տես կազակ։

Խազէին, խօզէին (ռուս.), ատր, գործատէր. գործատու. սեփականատէր։

Խազինա, խազնա (արաբ), գանձ. Գանձարան։—Ջրամբար։

Խազնադար, գանձապետ գանձապահ։—Խազնադար աղասի Սուլթանի գանձապետի տիտղոսը։

Խազ—փուշ (պարսկ սամոյրեան հսպնող), Թէհէրանում հեպնորէն այդպէս են անւանում ցնցոտիներ հագնող աղքատներին։

Խաիմա, փորձանք։—Խաիմաբալա, հոգս ու փորձանք, գլխացաւանք։

Խաիմը տես հատտը։

Խաիմէմի-շէրիֆ (արաբ.), տաճկաց Սուլթանի կնիքը, որը մեծ վեզիրը կրում է իր կրծքի վրա։

Խաիռուն, տիկին, պատուաւոր կին։

Խաիր (արաբ.), յարգ, ակնածութիւն։—Խաիրու, խաիրշուն, խաիրներ տալ, ի սէր, ի յարգանս։—Խաիր անել, նեղել։

Խալ, պոյտ. սև կէտ նման նիշ մարմնի վրա։

Խալաթ, պարգև։—Երկար հագուստ, որ տղամարդիկ առաջուց հագնում են անկոդնից վերկենալուց անմիջապէս յետոյ։

Խալան, Թիւրքիայում՝ տղայի ծնողներից աղջկայ հօր պահանջած գումարը իրրև պայման ամուսնութեան. տես բաշլըղ։

Խալի, խալիչա (պարսկ.), գորգ։

Խալիս, (արաբ.), զուտ, ընտիր. անխառն։

Խալիֆ (արաբ), տեղապահ, փոխանորդ. այսպէս էին անւանում իրենց Մահմէդի յաջորդները և արաբների առաջնորդները, այժմ այդ տիտղոսը կրում է Թիւրքաց Սուլթանը։ Խ. ունի հոգևոր և մարմնաւոր իշխանութիւն։

Խալիֆա, հին եղանակով պղպջոցների վարժապետ, որի բնորոշ յատկութիւններն են՝ անհասկանալի լեզուով գրած գրքերի և աշակերտների հասակին և հասկացողութեան անհամապատասխան նիւթերի դասատուութիւն հակամանկավարժական եղանակով և ձեռի միջոցով։ Այդտեղից և ծագում է խալիֆայական պլպղոց արտայայտութիւնը։—Խ. կամ խալֆա անւանումն պարսիկները հայոց հոգևոր առաջնորդներին պատկառանում։—Արհեստաւորի մօտ ծառայող բանուոր, որ բարձրը է սոկ աշակերտից։—Աւազ, մեծ, վարպետ։

Խալիֆատ, խալիֆի իշխանութիւնը, նրա պաշտօնը։—Մահմեդական տէրութիւն։

Խալխ (արաբ.), ժողովուրդ, մարդիկ։

Խալտար, ցորենի և նման բանների չափ է Պարսկաստանում և հարաւային Կովկասում=30 փութ=100 լիտր։

Խալօպ, խօլօպ (ռուս.), ծառայ, ճորտ հին Ռուսաստանում ճորտական պարտականութեամբ գիւղացիներ։—Սարկաւագի մարդ։

Խախամ (թուրք.), ապրի, հրէա քահանայ։

Խախան, խանների խան։

Խախօլ, խօխօլ (ռուս.), փոքր Ռուսիայի բնակիչներին են այդպէս անւանում։

Խամ, (ռուս.), նախատական խօսք է, ծառայական ոգով մարդ. տարուկ։

Խամ (պարսկ.), անվարժ անընտել։—Հասարակ, վատ տեսակի։—Տհաս, հում. չբանւած։

Խամէլէօն տես քամէլէօն։

Խամուտ, խամուտ (ռուս.), շրջակապը, որ հագցնում են ձիու վզին նրան լծելիս։

Խան (թաթար.), սկզբներում տիտղոսն էր թաթար և մօնղոլ թագաւորների, յետոյ՝ բարձր պաշտօնեաների։ Ներկայումս Պարսկաստանում Խ. կոչւում են ամենահասարակ պաշտօնեաները. այդ տիտղոսը այժմ դար-

ձել է վաճառելի։

Խան (պարսկ.), կարաւաններուն և ճանապարհորդներուն իջևանատեղ, որ սովորաբար ընդարձակ բակ է, շուրջը գոմեր և բնակարաններ։

Խանբաջի, խանում՝ — բաջի (թուրք.), տիկին քոյրիկ. պատւանուն է տիկիններուն։

Խանդակ, փոս տեղ. քանդուած։

Խանդրա (յուն.), տխրութիւն, միլամազձութիւն, թախիծ։

Խանզադա (պարսկ.), խանի պատակ, ազատորդի։

Խանէդան տես *դէրվէշ*։

Խանժա (ռուս.), կնդձ բարեպաշտ, կնդձաւոր։

Խանում, հանըմ, տիկին, տանտիկին։ — *Խանում-ադրա*, տիկին հարսիկ, տիկին քոյրիկ, գործածական է տիկիններուն համար իբրև պատւանուն։

Խանջար (պարսկ.), խանջալ, իէնջար, դաշոյն։

Խանջի, պանդոկապետ. խանի, կարաւաններուն, իջևանի տէր։

Խաշլամա (թուրք.), խաշած միս և նրա ջուրը։

Խաշլող տես *խարջլող*։

Խառատ, հիւսն, առաղձագործ։

Խաս (արաբ.), զուտ, ազնիւ տեսակի։ — *Մեհաքա*։

Խասաքի, ապօրինի կին. պիտուհի։

Խասէքի, — *Սալթանէ*, *Սուլթանի առաջին կինը*, գահաժառանգի մայրը։

Խասիաթ, բնաւորութիւն։

Խասիդ, ջերմեռանդ հրէա, հետեւող *խասիդիզմի*։

Խասիդիզմ (եբր.), հրէական կրօնական ազանդ, որը հեռանում է բարբիների վարդապետութիւնից և աւելի ջերմեռանդութիւն և ոգևորութիւն է մտցնում աստւածպաշտութեան մէջ։

Խասա (ռուս.), իրմիթ. մանուածրապէս՝ փոքր Ռուսիայում։

Խասար շէրիֆ տես *Հասար...*

Խարար (արաբ.), աւեր, փչացած։ — *Խարաբա*, աւերակ։

Խարագ, մաշկակար։

Խարակիրի տես *Հարակիրի*։

Խարակտէր (յուն.), բնոյթ, բնոյթագիր, նկարագիր։ — *Խարակտէրիստիկա*, բնոյթագրութիւն, բնորոշումն. բնաւորութեան նկարագիր։ *Յատկանիշ*։

Խարաչ, *Հարաչ*, գլխահարկը Թիւրքիայում, որ վճարում էին քրիստոնեաները. պաշտօնապէս վերացաւ 1854 թուին։ Բայց անունը փոխելով *Բէդէլ-ի-ասքէրի*, պինդ օրական տուրք, շարունակեց իր գոյութիւնը։

Խարաչի, գլխահարկ գանձող պաշտօնեայ։ — *Խարաչի-բաշի*, գլխահարկ գանձողների պետ և պատասխանատու այդ տագարկում վիճելի խնդիրների։

Խարաման (ռուս.), ռուսական ժողովրդական կլոր պար, որ կատարւում է երգի ձայնակցութեամբ։

Խարիբդա և սգիլլա, Մէսինայի մօտ երկու իրար հանդէպ ծովային ժայռեր են, որոնք մեծ վտանգ են ներկայացնում նրանց միջով անցնող նաւերին։ Հնում աւանդութիւն կար, որ դրանք հրէշներ են և իրենց մօտով անցնող նաւորդներին կուլ են տալիս։

Խարիաներ տես *զրացիա*։

Խարունժի (ռուս., կազակների զօրքում առաջին սպայական աստիճանը։

Խարչենկա, (ռուս.) տասրակ ճաշարան։

Խարջ (արաբ.), ծախս։ — *Հարկ*, տուրք։ — *Խարջել*, մսխել, ծախսել։ — *Խարջլող*, գրպանի փող մանր ծախսի համար։

Խարտալ (արաբ.), մանանեխ։

Խարտիա (յուն.), թուղթ, հրովարտակ։

Խարտիզմ տես *չարտիզմ*։

Խարօն (յուն.), յունական դիւցարանութեան մէջ այն անձը, որը վախճանուածների հոգիները սաորևրկրեայ աշխարհում նաւակով անց է կացնում դժոդքի գետի վրայից։

Խաս (պարսկ.). գործւածքի վրա ազատագը, թաւութիւնը։ — *Խալի*, թաւ, թաւապատ։ Այդպիսի գործւածքով երեսսրբիչ, ցամքոց և այլն։

Խասիար (թաթար.), ձկնկիթ, ձուղ որոշ տեսակի ձկների փորից հանած, որ ազում են և սառցւում է գորշագոյն շատ համեղ և թանկագին ուտելիք։

Խասիան տես *դասիան*։

Խաստիկ, քաօսային, անձև, խառնափնդոր։

Խաօս տես *քաօս*։

Խաֆիէ (արաբ.), լրտես։ Ծըպտեալ ոստիկան։

Խաֆիրութիւնը Թիւրքիայում աւանդաբար մնացած մի տուրք է, որ հայերը վճարում են քուրդ բէգերից մէկն ու մէկին իրրև վարձ այն հովանաւորութեան և պաշտպանութեան համար, որ բէգը ցոյց է տալիս նրան։ Ուրաքանչիւր բէգ ունի իր խաֆիրները, որոնց նա կարող է փոխանակել մի ուրիշի հետ կամ վաճառել, այսինքն նրանից սուացած տուրքի իրաւունքը։ Տուրքը վճարւում է բերքով և դրամով։

Խէդիվ տես *խդիվ*։

Խէլաղա, կուժ, սափոր, գաւ։

Խէնջար տես *խանջար*։

Խէր (արաբ.), բարիք, բարութիւն. յաջողութիւն, օգուտ։ Բարի, յաջողակ. նոյնպէս՝ *խէյր*։ — *Խէրով*, օգտաւէտ։ — *Խէրսըզ* (արաբ. թուրք.), անօգուտ, անպիտան։ — *Խէր ու բարաքեամ*, տես *բարաքեամ* — *Խէր ու շառ*, չար ու բարի։

Խէրէս. բաց գեղնաւուն խպանական գինի։

Խըդիվ, *խէդիվ* (թուրք.), մեծապատւոյ տիտղոս։ Տաճկաց Սուլթանի շնորհած տիտղոսը Եգիպտոսի փոխարքային։

Խըզմէթ (արաբ.), սպասաւորութիւն, տան ծառայութիւն։ — *Խըզմէթքեար* (արաբ. պարս.), ծառայ, սպասաւոր։

Խըմիզ տես *կոմիս*։

Խըռխաս (արաբ.), երկար մի տեսակ հագուստ։

Խըսիր տես *Հասիր*։

Խիար (պարսկ.), վարունգ։

Խիզան, հին ճորտատիրական կարգերի մնացորդներ վրաստանում. խ կոչւում են որոշ պարտաւորութիւններով կալւածատէրերի հետ կապած գիւղացիները, որոնք կալւածատիրոջ հողը մշակում են և նրան որոշ տուրքեր տալիս։ Սրանք զրկւած են ազատ տեղափոխութեան իրաւունքից։ — *Ընտանիք*. մասնաւորապէս ընտանիքի իգական անդամները։

Խիկար, մի իմաստուն մարդի անուն է։

Խիմէրա, (յուն.) *քիմէռ*, հին յունական դիւցարանութեան մէջ մի հրէշ, որ երեք գլուխ ունէր, առիւծի, այծի և վիշապի։ — Անբերքաբեր դաշտի իմաստով։

Խիմիա, *խիմիկ* և այլն տես *քիմիա*։

Խինա տես *հինա*։

Խինա, *խինին* տես *քինա*։

Խիտօն (յուն.), շապիկ, որ հագնում էին հին յոյները։

Խիրուրգ (յուն.), վիրաբուժ։ — *Խիրուրգիա*, վիրաբուժութիւն. բժշկութեան այն ճիւղը, որ բժշկութեան մէջ գործադրում է մեքենայական եղանակ կամ վիրահատութիւն։

Խիրոզրամնատոլոգիա (յուն.), աբեւնա մարդի ձեռագրից դուշակելու նրա բնաւորութիւնը և յատկութիւնները։

Խիրոլոգիա (յուն.), յամրերի խօսակցութիւնը ձեռքի մաթի և մատների շարժուձեւերով. մատնախօսութիւն։ — *Խիրոլոգ*, մատնախօս։

Խիրոմանտիա, դուշակութիւն մարդի ապագայի մասին նրա ձեռքի գծերով. ձեռնագուշակութիւն։ — *Խիրոմանտ*, ձեռնադուշակ։

Խլամ (ռուս.), գործածութեան անպէտք իրեր, որոնք իզուր տեղ են գրաւում։

Խլամիդա (յուն.), լայն վերարկու բրդէ կտորից, մի ուսի վրա կոճկուղ. կրում էին հին յոյները։

Խլոր, քլոր, (յուն.), դեղնաւուն կանաչ քիմիական նիւթ յեղձուցիչ հոտով։

Խլորիա, յունաց դիցարանութեան մէջ ծաղիկների աստուածուհին (հռոմայեցոց Ֆլորան), որ Զեփիւռի կինն էր։ — *Երիտասարդ հովուհի*։

Խլորոֆորմ (յուն. լատ.), *քլորոֆորմ*, մի հեղանիւթ, որից արտադրած գազի ներշնչումը անզգայութիւն է պատճառում. գործադրւում է ծանր անդամահատութիւնների ժամանակ։

Խուլիգան (անգլ. hooligan), շրջմոլիկ կողոպտիչներ Լօնդօնի փողոցներում։ Ռուսաստանում այդ անունը առացան յեղափոխութեան ժամանակ այն անգործ թափառաշրջիկները, որոնք աւերով և կողոպուտով էին զբաղւում։ — *Խուլիգանութիւն*, փոխաբերաբար՝ հասարակութեան տակնուվրայ, որ ամեն մի յետադիմական շարժումից օգուտ է յօգուտ իր շահերի։

Խումար, հարբածութիւնից յետոյ։

Խունհուզ (չին.), չինացի ապստամբներ, որոնք դումարւում են աթսորականներից և դասալիք զինուորներից։

Խուտօր (ռուս.), ապարակ։ Փոքր Ռուսիայում առանձնակի ընկած հողակտոր, վրան կառուցած մի անակ բնակչութեան համար և մի քանի այլ շէնքեր անասունների, գիւղատնտեսական գործիքների համար։

Խուտօրային անտեսութիւն Ռուսաստանում ասւում է համայնական հողաբերական սրընտեսութեան կողքին մի անջատ հողագործի անտեսութիւնը, որը չի ենթարկւում ընդհանուր հողագործանութեան մատնաւոր կրկրապործական անտեսութիւն հակառակ համայնականի։

Խուրմա (արաբ.), չոր շաքարահացի մի տեսակը, որ Նոր-Նախիջեւանում շատ ընդունւած է։

Խուրմա (պարսկ.), մանր մուներ։ — *Մանր գրամ. գրամի միացորդը*, որ յատ են տալիս։

Խուրմն (պարսկ.), արմաւ։

Խուրջին, իրար միացած հաւասար մեծութեամբ դոյզ պարկեր, որոնց մէջ իրեղէններ են դնում. դրում են ուսին, կամ ձիու գաւակին իւրաքանչիւր մասը մի կողմից։

Խրեն (ռուս.), կծիճ. մանանեխի նման կծու մի բոյս է։

Խրէատոմաթիա (յուն.), ընտիր հատուածներ այլևայլ հեղինակներից ամփոփուած մի ժողովածուի մէջ իբրև ընթերցանութեան նիւթ ընդհանրապէս, և մանաւորապէս իբրև լեզուի դասագիրք դպրոցներում։

Խրիզանթէմ (յուն.), ոսկեծաղիկ։

Խրիզօլոգիա (յուն.), ոսկեզուութիւն։

Խրիստինօններ, 19-րդ դարի 30—40-ական թուականներին Իսպանիայի թագուհի Խրիստինայի կողմնակիցներ, որոնք պայքարում էին նրա հակառակորդ Դօն-Կարլոսի կողմնակից կարլիստների դէմ։

Խրիստօլոգիա, գիտութիւն Քրիստոսի մասին։

Խրիստօսոֆիա, քրիստոնէութեան փիլիսոփայութիւն։

Խրուստալ (յուն.), բիւրեղ։

Խրօմ (յուն.), մոխրագոյն մի մետաղ։ — *Մոխրագոյն կաշու մի տեսակը*։

Խրոմատոլոգիա (յուն., գիտութիւն գոյների մասին։

Խրոմօլիթոգրաֆիա (յուն.), գունավիմանկար։ Գունաւոր վիմանկար։

Խրոմոֆոտոգրաֆիա, գունալուսանկար։

Խրոմոֆոտոտիպ, գունալուսատիպ։

Խրոնիկա, քրոնիկոն (յուն.), նշանաւոր դէպքերի տրամաբանական կարգով։ — *Օրեայ լուրերի բաժինը լրագրում*։

Խրոնիկական, պարբերական. ժամանակ առ ժամանակ կրկնուղ։

Խրոնիկոն, լրագրական խրոնիկա կազմող։

Խրոնօգրաֆ (յուն.). ժամանակի տեւողութիւնը նշանակող գործիք։

Խրոնօլոգիա (յուն.), ժամանակագրութիւն։ Պատմական նշանաւոր դէպքերի թուականների շարքը։ — *Խրոնօլոգ*, ժամանակագիր։

Խրոնօմէտր (յուն.), ժամաչափ. նաւերը և ճիշտ համացոյց։

Խրոնօս (յուն.), ժամանակ։ Տես նաև *Կրոնօս*։

Խօգէին տես *Խագէին*։

Խօլէրա (յուն.), տարափոխիկ մահաբեր հիւանդութիւն է, որ տարածւել է Հնդկաստանից. հիւանդը սկսում է փսխել. լուծել, կծկուիլներ անել և կապտանալ. վերջանում է մեծ մասամբ մահով։

Խօլերային տաղակտ, պրօֆէսօր Կօխի 1883 թ. գտած մանրէն, որ խօլերայի պատճառն է և տարածման ձև ունի։

Խօլէրիկ (յուն.), մաղձոտ, բարկացկոտ մարդ։ Տես նաև *ավիսպամֆիտ*։

Խօլէրինա, խօլերայի մեղմ տեսակը, որ շատ էլ վտանգաւոր չէ։

Խօլտեմ, գ. գանձ. ծածուկ տեղ. առանձնակի։

Խօլտպ տես խալտպ։

Խօխա (թուրք.), ախմար, անմիտ։ Երեխայ, տղայ։

Խօխոլ տես խախոլ։

Խօնախա, ծանօթ, բարեկամ. այսպէս են կոչում կովկասում հայերը անծանօթ թուրքին։

Խօնչա (պարսկ.), վայրկեան։ — *Մրգկերով կամ կերակրով լցրած մեծ մատուցարան, որ հարտանիքի կամ ուրախութեան ժամանակ ընծայ է տարւում*։

Խօշ (պարսկ.), հաճոյալի, դուրեկալի։ Այստեղից՝ *խօշը գալ, խօշը բերել* և այլն։ — *Խօշբէխտ, սիրալիր, խօսակցութիւն*։

Խօշաբ (պարսկ.), *խօշաֆ*, չամչարակ. պտուղներից եփած խմոր։

Խօջա, հօջա, (պարսկ.). մեծ, տարիքաւոր։ — *Հարուստ, վաճառական*։ — *Տաճիկ վարժապետ*։ *Ռուսուհնական մարդ*։

Խօր (յուն.), երգեցիկ կամ նուագածուների խումբ։ — *Հին յունական թատրոնում՝ երգիչների խումբ, որ ներկայացնում էր ժողովուրդ*։ — *Եկեղեցիներում պատուգամբ, որտեղ կանգնում է երգեցիկ խումբը*։

Խօրանիա (թուրք.), պրոյց, խօսակցութիւն։

Խօրալ (յուն.), հոգևոր երգ։

Խօրակ, խօսոազ, կիրակուբ ուտելիք։

Խօրասան (թուրք.), ծեծած ադիւսի փոշի։ — *Խօրասանի*, այդ գոյնը ունեցող։

Խօրասան, Պարսկաստանի խօրասան քաղաքից. օրինակ գաշոյն։

Խօրդա (յուն.), լար. երկրաչափութեան մէջ՝ այն ուղիղ գիծը. որ միացնում է շրջանի երկու կետը առանց նրա կենտրոնից անցնելու։

Խօրէյ կամ *սրօխէյ* (յուն.), մեծասար. առանուորի չափ, երկմանկանի ոռք, որի առաջին վանկը երկար է, իսկ երկրորդը կարճ։

Խօրէօգրաֆիա (յուն.), պարբերեան։ — *Բալէաներ հեղինակելը*։

Խօրէօմանիա (յուն.), պարամոլութիւն։

Խօրթլաղ (թուրք.), մեռելի ուրբանական. հոգեհէց։

Խօրիզօնտ (յուն.), քննադատ, որ միայն իլիականն էր համարում Համերոսի գործը, իսկ Ոդիսականը՝ մի ուրիշի։

Խօրիտա, երգեցիկ խմբում մասնակցող երգիչ։ Օպէրայի խօրում երգող։

Խօրունժիյ տես *խարունժիյ*։

Խօրօզ (պարսկ.), աքաղաղ։ — *Խօրօզվամիշ լինել*, աքլորանալ, սիգանալ, հպարտանալ։

Խօրօվօղ տես *խարաւօղ*։

Ծ.

Ծարլի (վրաց.), շապանակ։

Ծէրօ, սոսինձ։

Կ.

Կաաբա (արաբ.). Մէկկայում տաճար, որ բոլոր մահմեդականների ամենագլխաւոր սրբավայրն է. այդտեղ է գտնւում սրբազան սև քարը, որը ըստ աւանդութեան Գաբրիէլ հրեշտակապետը բերել է երկնքից պիտակ բայց նա սևացել է մարդկանց մեղքերից։

Կաբա, երկար զգեստի մի տեսակը, որ, օրինակ, հոգևորականները հագնում են ֆարաջայի տակից։

Կաբալա (արաբ.), անտեսական յարաբերութեան մի ձև էր հին Ռուսաստանում, որով պարտապանը իր վերցրած գումարի շահի փոխարէն պարտաւորութիւն էր յանձն առնում անձնական ծառայութիւն անել պարտատիրոջը ժամանակաւորապէս կամ ընդ միշտ նախապէս կապած պայմանի համեմատ. կարալւած գիւղացու ընտանիքը նրանից անբաժան էր և նրա հետ միասին հեռանում էր պարտատիրոջ ծառայութիւնից, երբ պարտքը լրացած էր։ — *Կ. Դ ալարալս*, գրաւաթղթեր, որոնցով որոշւում են գրաւի փոխառութեան պայմանները։ — *Կալաճագիր*։

Կաբալա, ցորենի տուրք, որ Թիւրքիայում իւրաքանչիւր գիւղ վճարում է բիւրդ ադային իբր վարձ այն բանի համար, որ նա պաշտպանում է գիւղը այլ ազգերի հարստահարութիւնից։

Կաբակ (թաթ. ռուս., գինեամուն։

Կաբարլ (ֆր.), գինեամուն բաց բեմով, որի վրա լինում են պարեր, խաղեր և երգում են երգիծաբանական երգեր։

Կաբբալա (եբր.), բերանացի աւանդութիւն. հրէական մի խորհրդաւոր ուսմունք էր միջին դարերում, որը իբր թէ ծագում էր հնագոյն ժամանակներից։

Կարէլ (գան., առորդեայ կամ առորեկրեայ հեռագրատար։ Պարան հիւսած շատ երկաթաթելերից։

Կարին (անգլ.), խցիկ, նաւախուց։

Կարինէտ (ֆր.), պաշտօնեաների խումբը, որը մի թագաւորի գիւանական գործերն է վարում։ — *Դահլիճ*, նախարարական. մի սահմանադրական երկրի մինիստրների խորհուրդը, ամբողջ կազմը, որ համերաշխօրէն վարում է պետական գործերը։ — *Առանձնասենեակ*, ղրադմունքների սենեակ։ — *Սենեակ*, ուր պահպանւում են պետական ժողովածուներ և գործերքներ։ — *Սև կաբինետ*, մի հաստատութիւն, ուր կառավարութիւնից նշանակւած գործակալներ մասնաւոր անձանց նամակները բացում էին քաղաքական խուզարկութեան նպատակով Լուդովիկոս XIV ժամանակ։

Կաբինետային հողեր, Ռուսաստանի կայսրի անձնական սեփականութիւնը կազմող հողերը։

Կաբինետ-իւտից, անմիջական պատասխան թագաւորի կողմից։ — *Ճնշումն պատասխանի վրա վերկից*։

Կաբինետ-մինիստր, նախարար, որ մասնակցում է նախարարական խորհրդին, բայց չունի իրեն առարկելու ճիւղ պետական գործերի։

Կաբրիոլէտ (ֆր.), երկանիւ միաձի կառք։

Կաբօտաժ (ֆր.), մերձափնեայ նաւագնացութիւն։ — *Նաւագնացութիւն միևնոյն պետութեան նաւահանգստների մէջ*։ — *Կ-ային նաւատորմիղը* կազմած է բաց ծովից խուսափող և ափերով միայն շրջող նաւերից։

Կազակ տես *կահալ*։

Կաղանա (ֆր.), երաժշտական չափ։ — *Շարժման համաչափութիւն*։

Կաղաստար (լատ.), կատալոգ, հարկամատեան. գրքեր, որտեղ նշանակւած են զանազան արհեստական ձեռնարկութիւնների ցուցակը, գրանցից իւրաքանչիւրի եկամտաւ աղբիւրը, թևեր և այլն, որոնց հիման վրա որոշւում է, թէ դրանց որքան կարելի է հարկի ենթարկել։

Կաղապար (լատ.), դիակ, մոդել։

Կաղէտ (ֆր.), վինտորական դպրոցի աշակերտ։ — *Կ-ների կօրպուս*, միջնակարգ վինտորական դպրոց։

Կաղէտական կամ *սահմանադրական ռամկավարական* (*կոնստիտուցիոնալ — դէմօկրատ բառերի սկզբնատառերից՝ կա և դէ, կազմած) կամ ժողովրդական պատութեան կուսակցութիւն անւանւում է Ռուսաստանում 1905 թւին արտասահմանեան «Ազատագրութեան Միութիւն» ասած կազմակերպու-

թիւնից ծագած կուսակցութիւնը, որը նոյն թւի հնկտեմբեր 12—18 Մոսկւայի իր համագումարում ընդունած ծրագրով հրապարակից անվերապահ ոամկավարական սկզբունքներ—առկախ թողեց միայն կանանց իրաւահաւասարութեանհարցը—և մի շարք արմատական անտեսական բարենորոգչական պահանջներ. բայց 1906 թւի ապրիլին Պետերբուրգում և նոյն թւի սեպտեմբերին Հէլսինգֆորսում և յետագայ համագումարներում կուսակցութիւնը հրաժարուեց իր առաջին ծրագրի մի քանի սկզբունքներից. այժմ կադէտները մի չափաւոր ազատամիտ կուսակցութիւն են, մերժում են վճռական կամ բռնի գործողութիւնը։ Տես նաև դէմոկրատի և այլն։

Կադի (արաբ.), մահմեդական երկրներում հոգևորական, որ դատավարում է զեկավարելով ղուրանի և այլ սրբազան գրքերի ցուցմունքներով։

Կադիասկէր, օրքի դատաւոր։

Կադի էլ ասկէր, երկու բարձրագոյն դատաւորներ Թիւրքիայում, մինը ասիական, միւսը եւրոպական մասի համար. ամենաբարձր պաշտօնական անձինքն են մեծ վէզիրից և մուֆտիից յետոյ։

Կադր (ֆր.), այն զինուորները և սպաները, որոնք պատերազմի և օրաժողովի ժամանակ գնդերի և վաշտերի կենտրոնն են կազմում։

Կադրիլ (ֆր.), ֆրանսիական պար. որի համար հարկաւոր են չորս հոգուց կազմած զէմ առ զէմ կանգնած խմբեր. ունի վեց ձև։—*Կադրիլ-բիտուէլ*, դրա մի ձևը։

Կազա (թուրք.), *զազա*. վարչական բաժանմունք Թիւրքիայում. գիւղախումբ, շրջանակ։ Կազաներից կազմուում է սանջակ կամ վիլա. Կազայում նստում է կայմակամ։ Կազայի մայ միւղիրի, գիւղախմբի գանձային տեսուչ Թիւրքիայում։

Կազակ, կօզակ, ղազաղ, խազախ (թուրք. ռուս.), Ռուսաստանի մի քանի մասերում, գլխաւորաբար հարաւում և արևելքում, ապրող ազգարնակութեան մի դաս է, որ իր յատուկ վարչական եղանակն ունի. միւս ազգարնակութիւնից առանձնանում է իր իրաւունքներով և պարտականութիւններով. ունի աւելի հող, որի դիմաց և պարտաւոր է իր սեփական միջոցներով զօրք տալ պետութեան (ձին, զէնքերը և հագուստը իրենցն են). կազմում են յատուկ զօրաբանակներ։

Կազաչօկ (ռուս.), ժողովրդական պար կազակների։

Կազարմա (իտալ.), զօրանոց. մեծ շինութիւն, ուր բնակւում է մշտական զօրքը։

Կազեննի (ռուս.), պետական, արքունի. գանձապետական։

Կազեննայա պալատա (ռուս.), պետական հաստատութիւն Ռուսաստանում, որը գանձում է տուրքերը և հարկերը և կառավարում պետական կալւածքները։

Կազէմատ (ֆր.), քարէ թաղերով կամարակապ ամուր շէնք բերդերում, որտեղ թնդանօթներ և այլ իրեր են պահում։

Կազիմիր տես *կաշմիր*։

Կազինօ (իտալ.), մնակ, ժողովատեղի կերուխումի, զուարճութեան և թղթախաղի համար։ Ակումբ։

Կազնա (ռուս.), գանձ, գանձարան. պետական գանձատուն։

Կազնաչէյ (ռուս.), գանձապետ, գանձապահ։

Կազնօկրատ (ռուս.), գանձագող. պետական գումարներից իւրացնող։

Կազուալիզմ (լատ.), այն ուսմունքը, ըստ որի աշխարհի ծագումը պատահականութիւնից է, պատահականութիւնն էլ շարունակում է նրան զարգացնել. դիպուածականութիւն։

Կազուար (մալայական), մեծ թռչուն Ջայլամի նմանութեամբ։

Կազուիստ (լատ.), վիճելի հարցերը լուծելիս կազուալիստիկայով առաջնորդող։ Ընդհանուրը թողած մանր դէպքերի հանից ընկած մարդ։

Կազուիստիկա (ֆր.), բարոյագիտութեան այն մասը, որը զբաղւում է այնպիսի առանձին դէպքերի լուծմամբ, ուր պարտականութիւնը և նրա կատարումը իրար հակասում են. խղճագիտութիւն, դիպուածագիտութիւն։ — Դժւար հարցերի լուծման այնպիսի եղանակ, որը չի զեկավարւում ընդհանուր չափով, այլ իւրաքանչիւր դէպք առանձին առնելով նրան լուծում է այս կամ այն կերպ. մանաւանդ գործադրւում է իրաւագիտութեան մէջ։—Խոշոր թողած մանր դէպքերի հանից ընկնելը։

Կազուս (լատ.), արտասովոր դէպք, պատահար։—*Իրաւաբանութեան մէջ կ.* են համարւում այնպիսի դէպքերը, որտեղ յանցանք չըկայ, այսինքն գրանք հետևանք չեն պետաւորութեան կամ անզգուշութեան։

Կազուս բէլլի (լատ. casus belli), մի դէպք որ կարող է հիմք ծառայել պատերազմ յայտարարելու։

Կալէդր (յուն.), *կալֆէդրա* (ռուս. արտասանութեամբ), ամբիոն. մի գիտութեան ուսուցչապետական պաշտօնը համալսարանում։—*Կալէդրալ*, մայր եկեղեցի, աթոռանիստ։

Կալէդրսօցիալիստ, մի ծագրական անուն էր 1871 թւին Օպէնհայմի կողմից տրուած գերմանացի այն անտեսագէտ պրօֆէսօրներին, որոնք իրր թէ համալսարանական ամբիոնից (կալէդրից) սօցիալիզմ են քարոզում։ Այս անունը վերջում դարձաւ ընորոշիչ գերմանական պրօֆէսօրների և այլ գիտնականների անտեսագիտական այն ուղղութեան, որ սօցիալիստական քննադատութեան մէջ որոշ ճշմարտութիւն գտնելով պահանջում է պետութեան կողմից միջամտութիւն սօցիալական հարցի լուծման իրագործելով բանւոր դասի համար որոշ բարենորոգումներ, բայց պահպանելով ներկայ ընկերական կարգերը։

Կալէտ (յուն.), ուղղանկիւն եռանկեան մէջ այն երկու կողմը, որոնք կազմում են ուղիղ անկիւնը։

Կալէտոր (յուն.), բարակ խողովակ մետաղից կամ ռետինից, որը անց են կացնում միզանցքի միջով դէպի միզափանփուշտը բժշկելու կամ մէզը դուրս թողնելու համար։

Կալթօլիկ, պապական եկեղեցու դաւանող։—*Կալթօլիկական մեծութիւն*, Իսպանիայի թագաւորի տիտղոսը։ *Կալթօլիկական* է կոչւում Բէլգիայի պապական կուսակցութիւնը, որովհետև սերտ կապ ունի կաթոլիկ եկեղեցու հետ։

Կալթօլիցիզմ (լատ.), ընդհանրականութիւն. պապականութիւն. կաթոլիկ եկեղեցու դաւանանքը։

Կաիւտա տես կայուտա:

Կալամբուր (Ֆր.), սրամիտ խօսք, երկիմաստութիւն: Բառախաղութիւն: — *Կալամբուրիստ*, այդպիսիներով խօսող:

Կալամինտ (յուն.), այժմ միայն իրենց քաղցած հատկութիւններով յայտնի եղեգնացեղ բոյսեր, որոնցից ժամանակով քաղածուխ է կազմւել:

Կալբաս (ռուս.), երշիկ. մսով լցրած աղիք:

Կալեասկա (ռուս.), ճանապարհորդական կառք:

Կալէյոսկոպ (յուն.), գեղադիտակ. մի գործիք է դիտակի ձևով, որը իր մէջ որոշ ուղղութեամբ դասաւորւած հայելիների շնորհիւ այնտեղ լցրած խառն ի խուռն բազմագոյն ապակու փշրանքներից կազմում է շատ կանոնաւոր գեղեցիկ համաչափ նկարներ, որոնք աւելն մի շարժման հետ փոխում են իրենց ձևը: Կոչւում է նոյնպէս *միրիօմօրֆոսկոպ*:

Կալէնդ (լատ.), հին հռովմայեցիների իւրաքանչիւր ամսւայ առաջի օրւայ անունը: — *Կալէնդար*, օրացոյց:

Կալէնկօր, նուրբ կտաւ ապիտակացրած:

Կալի (արաբ.), մեռած, որ օդի մէջ փափուկ վիճակում է լինում:

Կալիան կալիօն, *ղալիան* (Թուրք.), ծխելու մի գործիք արևելքում, որի ծուխը նախապէս անցնում է ջրի միջով և մաքրւում: — *Կալիոնչի*, կ. պատրաստող և մատուցանող սպասաւոր:

Կալիբը (Ֆր.), չափ, յարաբերութիւն. թնդանօթի, հրացանի և այլն բերանի տրամագիծ. դրանց համար գործածական գնդակի, վառօդուշտի, ռումբի և այլն մեծութիւն: — *Յատկութիւն.*

Կալիգրաֆ (յուն.), գեղեցկագիր, գեղագրիչ: — *Կալիգրաֆիա*, գեղեցկագրութիւն, գեղագիր:

Կալիպսօ, յոյն դիցաբանութիւնից, Ատլանդի դուստր դիցուհին, որ Ոդիսեասին սիրում էր, նրան փրկից նաւաբեկութիւնից՝ հօթ տարի պահեց իր կղզում և երբ նրան արձակեց, մեռաւ թախիծից:

Կալիտկա, դռնակ. մեծ դարբասի կողքին կամ հէնց նրա փեղկերից մէկի մէջ բացած փոքրիկ դուռ մարդկանց անց ու դարձի համար:

Կալիֆ, *կալիֆատ* տես *խալիֆ*...

Կալիօպա, 9 մուսաներից բանաստեղծութեան, վիպերգի և պերճախօսութեան մուսան, որի որպիքն էին համարւում Համերոսը, Որփէոսը. նրան պատկերացնում են գրելու տախտակ ձեռքին:

Կալիտա (յուն.), յոյն դիցաբանութեան մէջ՝ հռչակաւոր նախագուշակող, որ յոյների հետ գնացել էր Տրօա. երբ նրանից աւելի լաւ գուշակող Մօպսը յայտնւեց, նա մեռաւ վշտից:

Կալկուլացիա (լատ.), հաշիւ, հաշւեդատութիւն: — *Կալկուլատօր*, հաշւեդատ:

Կալպակ (Թուրք.), գլխարկ, որ սենեակում կամ քնելիս են հագնում:

Կալվինականութիւն, բողոքական եկեղեցու մէջ այն ուղղութիւնը, որը հետևում է *Կալվինի* (1509–1564) ուսմունքին. խորհուրդներից միայն հաղորդութիւնը և մկրտութիւնը. հակառակ լութերականութեան՝ ընդունում է, որ հաղորդութեամբ միայն հոգևոր են ճաշակում Քրիստոսի մարմինը. նաև այն, որ հաւատացեալները նախորոշած են փրկութեան, իսկ անհաւատները՝ կորսած: Ընտրական սկզբունք հոգևորականութեան, հասարակական կեանքում հանրապետական և ռամկավարական սկզբունքներ: Եկեղեցական ծիսակատարութիւնը մերժում է:

Կալօմել (յուն.), քացոյր սընդիկ, որ լայն ազդեցութիւնից սահմանում է. գործածւում է բժշկական միջոց է:

Կալօնիա տես *կօլօնի*.

Կալօշ տես *գալօշ*:

Կալօրիմէտրիա (լատ. յուն.), ջերմութեան ստուճանի չափելը:

Կալօրիֆէր (լատ.), մեքենայ, որ ջերմութիւնը խողովակներով տարածում է մեծ շէնքի այլևայլ մասերը:

Կախէթու գինի, Վրաստանի Կախեթիա կոչւած շրջանի գինին:

Կակաղու (մալայերէն), Թութակի մի տեսակը, խոպոպիկով, սովորաբար սպիտակ, բայց կան և այլ գոյները:

Կակաո (մեքսիկերէն) ամերիկական մի ծառի հատիկները, որից պատրաստում են շօկօլատ. գործ է ածւում մեծ չափով *կակաչիչքը* պատրաստելու համար:

Կակտուս (յուն.), կոպր. հաբաւային Ամերիկայի մի բոյս շատ հատ և փշոտ տերևներով:

Կահալ (եբր.), Բուսատատանում հրէական համայնքների ներկայացուցիչների ժողով, որը իրաւունք ունէր համայնական գործեր կարգադրել և քաղաքներում ապրող հրէաների հարկաբաշխութիւնը անել. որոշ տեսակի ինքնավարական մարմին էր:

Ադմկալի ժողով:

Կամաշ տես *գամաշ*:

Կամարադ (Ֆր.), ընկեր, ընկերակից:

Կամարիլլա (իսպ.), պալատում երեւեկող անձնաւորութիւնների մի շրջան, որ անպատասխանատու կերպով արտասահմանադրական ներգործութիւններ է անում միապետի վրա և այդպիսով ազդում է պետական կեանքի ընթացքին:

Կամարինսկի (ռուս.), ռուս ժողովրդական կենդանապար է:

Կամզօլ (Ֆր.), հին ժամանակ Ֆրանսիայում գործածական մի հագուստ էր, առանց թևերի և աւելի երկար, քան ժամանակակից *ժիլէտը*:

Կամէլիա, *քամէլիա*, արևելեան Ասիայից Եւրոպա փոխադրած մի ծաղիկ է: *Կամելեազարդ տիկին*, Դիւմայի մի ողբերգութիւնը, որտեղ թեթև վարքի տէր մի կին սիրահարւում է մի երիտասարդի և մեռնում թոքախտից: Գ. ա. ՚ի կամէլիա անւանում են նաև թեթև վարքի տէր կանանց:

Կամէնդանտ, տես *կոմէնդանտ*:

Կամէրա (լատ.), սենեակ: Իշխանական կալւածների կառավարութեան ժողովատեղի:

Կամէրալիա, կամ կամէրալ գիտութիւններ, գրանիկ գիտ., քաղաքական անտեսութեան ընդհանրական ձևը. իշխանական կալւածների կառավարութեան և պետական պաշտօնեաներ պատրաստելու դիտութիւններ, որոնց մէջ էին մտնում անտեսագիտութեան տարրերը, գիւղատնտեսութիւն, վարչական և պետական իրաւունք, ֆինանսագիտութիւն:

Կամէրալիստիկա, գիտութիւն պետական անտեսութեան

մասին։

Կամ՚ըրա օրակուրա (լատ.), մութ սենեակ. մի արկղ է, որի մի կողմից ոսպաձև ապակու միջով առարկաների պատկերը անցնում է և նկարւում դիմացի գծաւոր ապակու վրա։

Կամէրդինէը (գերմ.), սպասաւոր, սենեակի ծառայ տիրոջ անձնական սպասաւորութեան համար։

Կամ՚էլ, Ռումինիայի պառլամենտը։

Կամէրմինկէր, պալատական պատասխանատու տիտղոս է։

Կամէրհէռ (գերմ.), սենեկապետ. պալատական պատասխանատու տիտղոս է։

Կամէրմուզիկ, երաժշտութիւն, մի փոքր տեղում ընտրովի լսողների համար, որ կատարում են միայն մի քանի երաժիշտներ։

Կամ՚էր-պաժ, պալատական մանկավարժ. պաժերի դպրոցի տան, որ հերթապահութիւն է անում պալատում և հանդէսների ժամանակ կրում է արքայական ընտանիքի կանանց երկար փեշերը։

Կամէրտօն (գերմ.), մեծապէս երկճիւղ ձայնատու գործիք։

Կամ՚էր-ֆրաու (գերմ.), պալատական տիկին, որը վերահսկութիւն ունի արքայական տան կանանց հագուստեղէնին։

Կամ՚էր-ֆրէյլայն (գերմ.), պատասխանատու տիտղոս ազնւական օրիորդների կամ չայտնի պաշտօնեաների դուստրերի. պալատական օրիորդ։

Կամիլաւկա (յուն.), քահանաների իրրև պարգեւ տրւող գլխարկ սև կամ կապոյտ թաւիշից։

Կամին (յուն.), վառարան առանց բաց. «բուխարի»։

Կամիշ, ղամիշ, եղէգն։

Կամիսիա, *կամիտէտ* տես *կոմ*. .

Կամ՚ըրանիա (լատ.), ամբողջ ժամանակաշրջանը, երբ զօրքերը գտնւում են պատերազմական գործողութիւնների մէջ. արշաւանք։

Կամ՚ըրանիա տես *կոմպ*...

Կամ՚օրրա (իտալ.), գողերի և մարդասպանների մի գաղտնի ընկերութիւն Տարաւային Իտալիայում։—*Կամ՚օրրիստ*, *կամ՚որրայի* անդամ։

Կամ՚ֆօր (լատ.), սպիտակ նիւթ է ուժեղ հոտով, որը հագուստները պահպանում է ցցից. «քաֆիր»։

Կամ՚ֆօրկա, *կանֆօրկա*, ինքնաեռի գլխին տադցւող օղակը, որի վրա է դրւում թէամանը։—Մօտաւորապէս վերոյիշեալի նման կամ եռոտանի յարմարութիւն, որի վրա դնում են կիրակուբի ամանը և տակը գըրձակ կամ սպիրտ վառում։

Կայակ, Բրէնդենպուրգի նաւակ։

Կայզըր, *կայսր*, Յուլիոս Կեսարի (Ձէզար) անունից առաջ եկած կոչում, երկրի բարձրագոյն աշխարհական իշխանաւորի տիտղոս։ Մանաւանդ կայզըր անւանում են Գերմանիայի կայսրին։

Կայիկ, փոքր նաւ։

Կայմակ, *ղայմաղ* (արաբ.), եփած կաթի սեր. չոր սեր։

Կայմական, *զայմազամ*, *ղայմաղամ*, Տաճկաստանում կազայի կառավարիչը, գաւառապետ. *մութէսէրիֆին* առաջադրեալ։ — Փոխարքայապետին համապատասխան զինուորական սպայ տաճկաց զօրքում։—Փոխանորդ մեծ վէզիրի կօստանդնուպոլսում։

Կայտառ, նաւասհնեակ, նաւախուց. ճանապարհորդների և նաւի սպասաւորների համար սենեակներ նաւի վրա։

Կայսր տես *կայզր*։

Կանալ (ֆր.), ջրանցք. արհեստական գետ, որով միացնում են իրար հետ երկու ջրային ճանկւած՝ ծովեր, գետեր կամ գետ և լիճ, նաւատնտեսութիւնը դիւրացնելու համար։—Առու ճահիճներ ցամաքեցնելու, անմաքրութիւններ արտահոսեցնելու, ջրարշավական նպատակով։

Կանապէ, (ֆր.), անդրամ, ցածահոգի, արհեկած մարդ։

Կանապիզացիա, *կանապիզասիօն* (ֆր.), այն խոզովակների և ջրանցքների ցանցը քաղաքներում, որի նպատակն է քաղաքին ջուր մատակարարել և անմաքրութիւնները արտաքնոցներից և կոյուղիներից դուրս մղել քաղաքից։

Կանապէ (յուն.), փափուկ թիկնաթոռ։

Կանատ, պարան, թոկ։

Կանարէյկա (ռուս.), Կանարեան թռչուն, դեղձանիկ։

Կանաւ (ռուս.), առու, կոյուղի։

Կանգուրու տես *կենգուրու*։

Կանդէլաբր (լատ.), բազմաճիւղ մոմակալ, աշտանակ։

Կանդիդատ, (լատ.), թեկնածու. մի պաշտօն, մի կոչում ստանձնելու պատրաստակամ մարդ։

Կանդիդատուրա, թեկնածութիւն։ Ժողովրդական ներկայացուցչի պաշտօն ընդունելու պատրաստակամութիւն։

Կանդիտէր տես *կօնդիտէր*։

Կանդրաբանդ տես *կօնտրաբանդ*։

Կանդրախտ տես *կօնտրակտ*։

Կանեօկ (ռուս.), բառացի ձիուկ. ամենասիրելի խղճերը, որի մասին մարդ ամենից յաճախ է խօսում։

Կանիկուլ (լատ.). արձակուրդ. ամառւայ ամիսները, երբ դպրոցում պարապմունք չըկայ։

Կանիտէլ (ֆր.), բարակ երկար ոսկեզօծ թել։—Ջանձրալի, անբովանդակ խօսակցութիւն։

Կանկան (ֆր.), անպարկեշտ շարժուձեւերով մի պար։

Կաննիբալ (իսպ.), մարդակեր վայրենի։—*Կաննիբալիզմ*, մարդակերութիւն։ — Վայրագութիւն, գազանային բնաւորութիւն։

Կանուն, Թիւրքիայում կոչւում է աշխարհիկ օրէնսդրութիւնը, շէրիաթից զատ։—*Կանուննամէ*, Մուհամմէդ II-ի օրէնսգիրքը։—*կանուն ի Նասաի*, հինեական օրէնք. այդ անունը կրում էր Թիւրքիայի առաջնադրական օրէնքը 1876 թ.ին։ Նոյնպէս կոչւում են նաև նախկին Թիւրքիայի և Պարսկաստանի առանձնապրական օրէնքները։

Կանտ (գերմ.), երիզ։

Կանտադօ (իտալ.), դանդաղ, ձըգւած (երաժշտութիւն)։

Կանտատա (լատ.), մի բանի ձօնւած երաժշտական կտոր, որ յաճախ կազմւած է այլ եւայլ կտորների խառնուրդից։

Կանտար (իտալ.), ձանրութեան չափ Թիւրքիայում=40 հոկա=56,366 կիլօգրամ։ Նոր ժամանակներում կ.=100 կիլօգրամ։

Կանտիզմ, *կանտիանիզմ*, գերմանացի փիլիսոփա Իմմանուէլ Կանտի (1724-1804) փիլիսոփայական ուսմունքը, որ կոչւում է յաճախ նաև քննադատական փիլիսոփայութիւն կամ կրիտիցիզմ. մարդկային ճանաչողութիւնը բաղկանում է երկու տարրից, մէկը գրանցից ձեռն է, որ անկախ է փորձից և մարդկային հոգու առանձնայատկութիւնն է, իսկ միւսը բովանդա-

կութիւնը, որը փորձի արդիւնք է։—կանտիան կամ կանտիանէը, այդ ուսմունքի հետևող։

կանտիանէ նէգլիժարլ (ֆր.), արհամարհելի մեծութիւն. մի ուժ, որին կարելի է ամենևին հաշւի չառնել, այնքան նա աննշան է։

կանտլապլասեան կոմէօգիա կոչւում է աթեղերքի ձևակերպման այն հիպօթէզը (հաւանական ենթադրութիւնը), որը Գերմանացի փիլիսոփա Կանտը և Ֆրանսիացի գիտնական Լապլասը (1749—1827) միաժամանակ և իրարից անկախ առաջադրեցին. ամբողջ աթիղերքը իր բոլոր աստղերով և մոլորակներով առաջ է եկել մի մառախլային պատուղ գնդից, որից, շնորհիւ վանողական և ձգողական զօրութիւնների, պահպանելով և որոշ չարաբերութեան մէջ կանգ առնելով խառացել և կազմել են այժմեան բոլոր երկնաւոր մարմինները։

կանտրոլ տես կօնտրոլ։

կանտօմանիա (լատ. յուն.), երգամոլութիւն։

կանտրօնայա պալատա, Ռուսաստանում տեղական վերահսկողութեան ծառայող հաստատութիւն, որ կայ իւրաքանչիւր նահանգում. նրա պարտականութիւնն է առուգել նոյն նահանգի տուրքերի, ծախսերի օրինականութեան և պետական գանձարանի գործողութեան վրայ։

կանտօրա (ֆր.), գրասենեակ վաճառատան մէջ։—Հաշւեսենեակ։

կանտօրկա (լատ. ռուս.), առևտրական գրասենեակներում գործածական բարձր գրասեղան։

կանտօրշչիկ (ռուս.), առևտրական գրասենեակում հաշւապահ։

կանտօրշչիցա (ռուս.), հաշւապահուհի։

կանտոն (ֆր.), շէյցարական պաշնակցական հանրապետութիւնը կազմող փոքրիկ պետութիւնները։ Կիսականտոն, դրանցից նրանք, որոնք պաշնակցական խորհրդի մէջ փոխանակ երկուսի մի պատգամաւոր ունեն։ ց. ներքին ինքնավարութեամբ օժտուած պաշնակիցներ են։—Ֆրանսիայում՝ վարչական միութիւնները։

կանտոնիստներ, մինչև 1856 թ. Ռուսաստանում զինւորների որդիներ, որոնք նախորոշած էին զինւորական ծառայութեան և դաստիարակւում էին յատուկ դպրոցներում։

կանցել (լատ. դերմ.), կաթոլիկ և բողոքական տաճարներում այն տեղը, որտեղից քարոզ է արտասանւում։

կանցէլեարիա (լատ.), դիւան, դիւանատուն։—*կանցէլեարիական*, պաշտօնական դիւանատների օրինակով՝ ձևական, ձրգձրգուող, դանդաղ։ կ. ոճ, որի մէջ գերակշռում են պաշտօնական արտայայտութիւններ, հնարանութիւններ, և առհասարակ նա ունի իր յատուկ դրօշմը։—*կանցէլեարիզմ*՝ գործավարութիւն ընդարձակ գրագրութիւնով և թղթերի կուտակումով։

կանցլեր (լատ.), պետական բարձր պաշտօն է. Գերմանիայում առաջին նախարարը, որ կոչւում է պետական կ.։—Մի քանի երկրներում՝ համալսարանական վերատեսուչ։

կանուա (լատ.), խիտ նոսր գործած ցանցաւոր կտոր, որի վրա դունաւոր թելերով ձևագործ են կարում։—Շարադրութեան կամ նկարի հիմնական գծերը։

կանօն (յուն.), եկեղեցական կարգ։

կանօնադա (ֆր.), երկարատև ռմբակոծութիւն թնդանօթներով։

կանօնական իրաւունք, կաթոլիկ եկեղեցու իրաւունքը, որի պղբիւրներն են եկեղեցական ժողովների որոշումները և պապերի կոնդակները։ Եկեղեցական իրաւունք։

կանօնիզացիա, սրբերի կարգը դասւելը կաթոլիկ եկեղեցում։

կանօնիէրկա (ֆր. ռուս.), նեղ անցք բերդի պարսպում թնդանօթ արձակելու համար։

կանօնիկոս, եկեղեցական տիտղոս է կաթոլիկների։—Կաթոլիկ երեցփոխ.

կանօնիսա, եկեղեցական իրաւագէտ։

կանօնիր (ֆր.), թնդանօթաձիգ զինւոր։

կանօսա, գղջում, իր սկզբունքներից հրաժարւելը։ (Գերմանացոց կայսր Հայնրիխ IV-ը 1077 թ. ին գնած կանոսա դղեակը Գրիգոր VII պապից թողութիւն խնդրելու համար)։

կանֆէտ տես կօնֆէկտ։

կաշա, սառն քահանայ։

կաշմիր, քիշմիր, շատ նուրբ տեսակի բրդէ կտոր, որ պատրաստում են կաշմիրի այծի մազից։

կաուզալ (լատ.), պատճառական։—*կաուզալիտէտ*, պատճառականութիւն, երկու երևոյթի յարաբերութիւնը իրրև պատճառ և հետևանք, ինչպէս ընդունւում է բնական գիտութիւնների մէջ։ Անգլիացի փիլիսոփա Իւմը (Hume 1711—1776) կ.-ը համարում է երկու երևոյթի սոսկ հետևողութիւն մէկը միւսին, որը մի քանի անգամ կրկնւելով հաւատք է ծոյացնում, որ իրը թէ դրանցից մինը պատճառ է, իսկ միւսը հետևանք։

կաուզալ բժշկութիւն, որ ուղղած է հիւանդութեան հիմնական պատճառների դէմ։ Հակառակը սիմպտոմատիկ։

կաուչուկ, (ֆր.) խէժ, որ գալիս է ամերիկական որոշ ծառերից և սառչելով կարծրանում է։

կաչկա (ռուս.), նաւի տարութերութիւնը փոխադրի ժամանակ։

կապացիտէտ (լատ.) ունակութիւն. պարունակելու կարողութիւն։—Հմտութիւն, ձարպիկութիւն։ Հմուտ մարդ։

կապելլա (իտալ.) մատուռ, աղօթատուն, փոքրիկ եկեղեցի։—Եկեղեցական երգեցիկ կամ երաժշտական խումբ։ *Կապելլան*, կապլան, մատուռի քահանայ։ Տնային քահանայ և քարոզիչ։—Քահանայի օգնական։

կապէլմայստէր (իտալ. գերմ.), երգեցիկ կամ երաժշտական խմբի խմբապետ։

կապիկ տես կօպէկ։

կապէր (ֆր.), այն անձը, որին պատերազմող պետութիւնը իրաւունք է տալիս պատերազմի տեղութեան ընթացքում յափշտակել թշնամու առևտրական նաւերը։—Այս նպատակով գործող նաւը պատերազմի ժամանակ։

կապիտալ, գլխաւոր։ Գլխային, Առաջնակարգ։

կապիտալ (լատ.), գրամագլուխ. պարտքով արուած գրամի հիմնական գումարը առանց տոկոսների։—Մի գումար տոկոսաբեր գրամի։—Տնտեսագիտական մտքով կ. հասկացողութիւնը ունի բազմաթիւ տարմանութիւններ, որոնցից ւիւրաքանչիւրը հակադրութեան մի

կամ միւս կողմն է առանձնապէս շեշտում։ Կ. Նիւթական բարիքների գումարն է—դրամական միջոցներ, այլևայլ արդիւնքներ (պրօդուկտ), շէնքեր, գործիքներ և մեքենաներ,—որոնք մի կողմից իրենց սեփականատիրոջ համար իրրև եկամուտի աղբիւր են ծառայում, միւսից՝ զուտ անձնական անառնական բնոյթ ունեն. իսկ միւս կողմից միջոցներ են ծառայում նոր արտադրութեան համար, այսինքն՝ ժողովրդական անառնական բնոյթ ունեն. բուռ Բէօմ Բաւէրկի դրանց մէջ չէն մըտնում անձնական աշխատանքը, մասամբ թէ ֆիզիքական, և բնութեան հողը, որովհետև սրանք արդիւնքներ, պրօդուկտներ չեն։ Ըստ Մարքսի Կ. այն արդիւնաբերական միջոցներն են, որոնք կապիտալատիրոջ ձեռքում միջոց են բանուորին շահագործելու և նրա վրա իշխելու համար. այսինքն՝ այնպիսի արդիւնաբերութեան միջոց, որը գնելով և գործադրելով «աշխատանքի ոյժ» կոչուած ապրանքը, յաւուրս նպատակ ունի նրանից յաւելեալ արժէք դուրս բերել յօգուտ կապիտալատիրոջ։ Բազմաթիւ առմանուանումների մէջ մի ընդհանուր գիծ կայ, դա այն է, որ Կ. ոչ թէ այն դրամներն են, որ պահուած են անգործում կամ կճուճներով թաղուած հողի տակ. ոչ թէ անպէտք ընկած շէնքերը և գործարանային պահեստում դարսած մեքենաները. ոչ թէ պահեստարաններում շարէշար կիտուած զանազան հում նիւթեր կամ արդիւնքներ. այլ վերոյիշեալներից միայն նրանք, որոնք գործադրւում են նոր արդիւնքներ և նոր հարստութիւններ ստեղծելու համար և ոչ թէ գոյութիւն պահպանելու անմիջական միջոցների հայթայթման։

Կապիտալիզացիա, գոյքի հաշուելը դրամով կամ դրամագծնելը։ Մի գոյքի եկամուտը հաշուելով նրա արժէքի 10% որոշել գոյքի արժէքը դրամով։ Դրամադլխում։

Կապիտալիզմ (Ֆր.), արտադրութեան կարգերի ներկայ եղանակը, որը տալիս է հնարաւորութիւն կապիտալիստների իշխանութեան և վնասակարութեան ներքոյ, ուր սրանք կարգադրում են արդիւնագործելի ապրանքների տեսակը և քանակը, բաշխում են աշխատանքը. ապահովում արդիւնքը պատուհասելի և նրանց անփափանութիւն։ Իսկ կապիտալի դիմացը կանգնած աշխատանքը միայն հպատակում է և հնազանդ դեր ունի, և արդիւնքից առանում է միայն պայմանաւորուած բաժինը իրրև աշխատավարձ, չնայած իր գործին և տուած արդիւնքին։—Կ. ըստ սմանց՝ նաև այնպիսի արտադրութեան եղանակ, ուր գլխաւոր գործոններից մէկն է կապիտալը։

Կապիտալիստ, կապիտալատէր, գրամատէր. հարուստ մարդ։—Արդիւնագործական մի ձեռնարկութեան մէջ գրամի և առհասարակ կապիտալի տէրը։—*կապիտալիստական արտադրութեան եղանակ* կամ *կ. արտադրութիւն* կոչւում է ներկայ եղանակը, որ յաջորդեց բնական անտեսութեան. բնական տ. մէջ աշխատանքը և կապիտալը կենարանացած էին աշխատաւորի իրեն մէջ, և նա արդիւնաբերում էր սեփական գործածութեան համար. կապիտալիստականում կապիտալը պատկանում է մէկին, իսկ աշխատողը ուրիշ է և արդիւնաբերում է շուկայի համար իրրև ապրանք։

Կապիտան (Ֆր.), զինուորական առաջնորդ, վաշտապետ. ղեկավար յատուկ գալիս է ենթադնդապետը։—Նաւապետ։

Կապիտացիա, կապիտասիօն (Ֆր.), գլխահարկ. հարկ որ վերցւում է իւրաքանչիւր մարդից հաւասարապէս առանց նկատի առնելու նրա անհատական կարողութիւնը։

Կապիտել (լատ.), խոյակ. սիւնի գլուխը, որի վրա հանգչում են կամարները։—Գլուխ շարագրութեան, գրքի։

Կապիտէլ, ապարանական տաճարի մի տեսակը. որ գլխատաճի ձև ունի, բայց մանրը է։

Կապիտուլացիա, կապիտուլասիօն (Ֆր.), յատուկ պայմանագրեր են եւրոպական քաղաքակիրթ պետութիւնների և արևելեան կամ կիսաքաղաքակիրթ պետութիւնների մէջ, որոնցով եւրոպական պետութիւնները, հետևելով Ֆրանսիայի օրինակին, մինչև այժմ իրենց որոշ արտօնութիւններ են վերապահում այդ երկրներում՝ հովանաւորութիւն քրիստոնեաների ոչ քրիստոնեայ պետութիւնների մէջ. յատուկ երաշխաւորութիւններ քրիստոնեաների և օտարահպատակների կեանքի և գոյքի ապահովութեան. առևտրական յարաբերութիւնների պաշտպանութիւն. դատաւորական և ոստիկանական իրաւունքներ իրենց հիւպատոսների համար. սեփական փոստ. յատուկ պայմաններ այդ պետութիւնների հետ քրիստոնէութիւն տարածելու նպատակով հաստատութիւններ հիմնելու. նաւահանգիստների մաքսելիութեան վերաբերմամբ և այլն։ Կ. հիմնուած են յատուկ հրովարտակների վրա և մի տեսակ առորդաս վիճակի մէջ են պահում արևելեան պետութիւններին եւրոպական պետութիւնների դիմաց։—Միջազգային պատերազմական իրաւունքի մէջ Կ. որևէ պաշարուած բերդի, նաւատորմիղի, զօրամասի անձնատուր լինելը հակառակորդին որոշ պայմաններով, երբ պարզւում է, որ ուժը հակառակորդի կողմն է և կռիւը շարունակելը միայն ապարդիւն զոհերը պիտի աւելացնէ։

Կապիտոլ, կապիտօլիում, հին Հռոմի միջնաբերդը։ *կապիտօլի սագերը*, այն հռչակաւոր սագերը, որոնք իրենց աղաղակով ազատեցին կապիտօլը Գալլերի նենգաւժումից։

Կապիշօն, (Ֆր.) գլխանոց, կանացի վերարկու գլխանոցով։ Կրօնաւորի գլխանոց, վեղար։

Կապուդան-փաշա. բարձրագոյն հրամանատար ծովային զօրքերի թիւրքիայում։

Կապուտ (գերմ.), փչացած, կտրուած

Կապուցինեան, կապուտինեան, Ս. Ֆրանցիսկի միաբանութեան անդամ կուսակրօն հոգևորական, որ կրում է կապիշօն։

Կապսուլ (լատ.) պատիճ կլոր կամ գլանաձև, որի մէջ դեղ են լցնում, որ հիւանդը կուլտայ առանց համը զգալու։—Փամփուշտի պատիճ։

Կապտուրա, թշնամու նաւը խլելը։

Կապրալ (Ֆր.), ենթասպայ։

Կապրիզ (Ֆր.), քմահաճոյք, կամայականութիւն. կամակորութիւն։

Կապօտ (Ֆր.), լայն շրջազգեստ կանանց առաւօտեան հանգչելու համար։ Լայն վե-

բարկու չափաւ պլխանոցով։

Կապօտաժ (ֆր.), աբեւտա նուի անցած ճանապարհը չափելու։

Կապօր (ֆր.), կանացի գլխարկ, որ կիպ նստում է գլխին և ծածկում ականջները։

Կապչալի կոչւում է ներկայումս Պարսկաստանում ինազատորդ հարստութիւնը, սկսած 1796 թւից, որի հիմնադիրը եղաւ Ագա Մահմէդ շահը, որը ծագում էր թիւրքական կաջար ցեղից։

Կասէթ (ֆր.), կաւոր, ամէն կողմից ծածկած և ապակէ լուսամուտներով։

Կասանդրա, յոյն դիցաբանութիւնից, Պրիամոսի աղջիկներից։ ամենագեղեցիկը, որին Ապօլլօնը նախագուշակելու շնորհք տւեց, երբ նրանից խոստում տուաւ նրան սիրելու. բայց երբ կ. Ապօլլօնին խաբեց, նա պատժեց նրան այն բանով, որ կ.-ի դուշակութիւններին այլևս ոչ ոք չէր հաւատում։

Կասացիա (ֆր.), վճռի բեկումը։ Խնդիր մի որոշում քանդելու մասին։

Կասէտ (ֆր.), արկղիկ. լուսանկարչութեան մէջ գործածական տափակ արկղը, որի մէջ պահւում են ապակիները, որպէսզի լոյսից չը փչանան։

Կասիս, խմիչքի մի տեսակը։

Կասկա (ֆր.), զօրքի որոշ տեսակի գործածած գլխարկ մետաղից կամ կաշուց սաղաւարտի ձեւով և մազափունջ զարդարանքով։

Կասկադ (ֆր.), արհեստական ջրվէժ։ Փոքրիկ ջրվէժ։

Կասկէտ (ֆր.), սաղաւարտիկ։

Կասսա (ֆր.), գանձարան, դրամարկղ։

Կասսիր, գանձապետ.

Կասսիրշա (ֆր. ռուս.), գանձապահուհի. խանութում վաճառումները ընդունող կին։

Կաստա (փորթ.), հնդիկ ժողովրդի իրայատուկ բաժանումները, դասակարգերը, պահպանած մինչև ներկայ ժամանակս նոյն բանը կար նաև հին Եգիպտոսում։ Հնդիկները բաժանւում են չորս կաստայի. 1. բրահմանա դիտուններն և քահանաների դասը, մնկնում են սրբազան գրքերը, զոհաբերութիւն անում, գրաւում են առաջին տեղը պետութեան մէջ, տպրում են ուրիշների նէրով. ծագում են բարձրագոյն տաճոմ՝ բրահմայի բերանից. 2 կշատրիա, ազնուական և զինուորական դասը, որոնցից առաջ են գալիս երկրի տէրերը. պարտաւորութիւն ունեն ժողովուրդը պահպանել, նէրներ անել, զոհեր անել տալ. ծագում են Բրահմայի բազկից. 3) վայշիա, առևտրական, իրկրագործ, անասնապահ և արհեստաւոր դասը ծագում են Բրահմայի ազդրից. 4 սուդրա, այն դասը, որ պարտական է անմռունչ հետևել և հնազանդել առաջին երեք կաստաներին։ Անթոյլատրելի է ամուսնութիւն տարբեր կաստաների մէջ և մէկից միւսին անցնելը։

Կաստանիէտ (իսպ.), փայտէ փոքրիկ ծնդզաներ, որ իսպանական պարերի պարողները հարնում են մատներին և պարի չափով շրխկացնում։

Կաստէլ (լեհ. լատ.), ամուր դղեակ։

Կաստէլլան, դղեակի կառավարիչ, վերահսկող։—Վերակացու որևէ հասարակական շէնքի, —Կաթոլիկ եկեղեցու պահապան։

Կաստրատ ներքինի, կըտած. ամորձատ։

Կաստրացիա (լատ.), ներքինացումն. սեռական ընդունակութիւնից զրկելը՝ արանց ամորձիքը, իսկ կանանց ձւարանները հանելով։

Կաստրուլ (ֆր.), կաթսայ։

Կաստոր, մի տեսակ մանուածանման կաոր։

Կաստոր և Պոլլուքս տես դիսկուրները։

Կաստօրկա (ռուս.), կաստորեան իւղ, գերչագի ձէթ, լուծողական դեղ է։

Կատալէպսիա (յուն.), ուշաբարձութիւն, ուղղագարձութիւն. ջղային մի ցաւ, հիւանդը դառնում է անզգայ և կորցնում է կամաւոր շարժողութիւնը։

Կատալօգ (յուն.), գրացուցակ. այբբենական ցուցակ այլևայլ առարկաների։

Կատակլիզմ (յուն.), ընդհանուր ջրհեղեղ։ Աշխարհաւերութիւն։—Յեղաշրջում։

Կատակօմբները (իտալ.), ընտորերկրեայ գերեզմանոցներ Հռոմում, որ առաջին քրիստոնեաները գաղտնի կատարում էին իրենց կրօնական ծէսերը. գետնադամբան։

Կատասպազմա (յուն.), ծեփվելի. դեղ, որ դնում են դրսից փափկացնելու համար։

Կատաստրօֆա (յուն.), աղէտ, անսպասելի չարաբաստիկ դէպք. կործանումն։—Թատերական կամ վիպական գրւածքի մէջ այն դէպքը, որը բաղդի որոշման վրա վճռական ներգործութիւն է անում։—Ըստ Կարլ Մարքսի սօցիալական յեղաշրջումը պիտի կատաստրոֆով լինի, իբրև հետևանք դասակարգային յարաբերութիւնների սրման։

Կատարր (յուն.), լորձաթաղանթի բորբոքում մարսելի որևէ մասում, ստամոքսում, թոքերում և այլն. հոսախտ։

Կատարակտ (յուն.), խամրութիւն աչքի ոսպի, որի հետևանքով տեսողութիւնը խաթարում է։—Ջրվէժ, սոնանք։

Կատաֆալկ (ֆր.), սանդղաձև բարձրութիւն, որի վրա դրւում է զագաղը.զագաղարան։

Կատէգօրիա (յուն.), տեսակ, կարգ, դասաւորութիւն։—Ստորոգութիւն. ընդհանուր հիմնական հասկացողութիւններ, որոնցից միւս բոլոր հասկացողութիւնները բղխում են։—*Կատէգօրիական*, ստորոգական։ Որոշակի, ճշգրիտ. վճռական, կրաքական։—*Կատէգօրիական իմպէրատիվ* տես *իմպէրատիվ*։

Կատէխիզացիա (յուն.), որևէ ուսմունքի վերաճառ տարց ու պատասխանի։

Կատէխիզիս (յուն.), գրքոյկ, որ նպատակ ունի մի քան ուսուցանել տարց ու պատասխանով։—

Կատէխիզմ (յուն.), հաւատոյ հանգամանքի կամ քրիստոնէական վարդապետութեան ուսմունք տարց ու պատասխանով։—*Քրիստոնէական վարդապետարան*։

Կատէտ տես *կսմիէտ*։

Կատիլինական, դաւադրական. հռոմէացի Կատիլինայի նմանի։

Կատօնական, նման հռոմէացեցի կատօնների. անզգուշութեամբ և խիստ բռնաւորութեամբ իշխան։

Կատօրգա (ռուս.), տաժանակիր աշխատանք. որին դատապարտում է ռուսաց օրէնքը քրէական և քաղաքական մեծ յանցանքների համար։

Կատօրժնիկ, (ռուս.) տաժանակրական. տաժանակիր աշխատանքի դատապարտած։

Կարաբին, *դարաբինա*, կարճ, լայնափող հրացան. տարացան։

—Կարաբինէր, այդ զէնքը կրող զօրք։ Թիկնապահ զօրքի մի տեսակը։

Կարագէօրգիևիչ, Սերբիայի այժմեան թագաւորական հարստութեան անդամ. Կարագէօրգիի ցեղից, որը 1801 թուին սերբերի ապստամբութեան գլուխ անցաւ և գահակալեց Ս. Իշխան։

Կարագաչ տես դարատաչ։

Կարահիմ, հրէական մի տոհմ, տագնակեցիների յաջորդները. մերժում է թալմուդը և իր կանոններն ու սկզբունքները միայն Մովսէսի օրէնքներից է ծագեցնում։

Կարակաս (ֆր.), մի տեսակ հրձիգ ռումբ։

Կարամբոլ (ֆր.), բիլիարդի կարմիր գնդակը։—Բիլիարդի մի խաղ է, որի մէջ խաղացողը իր գնդակը պիտի դիպցնէ երկու այլ գնդակի։

Կարամէլ (ֆր.), այրած շաքար, որ գոր է ածւում իբրև քաղցրաւէնի կամ իբրև կերակուր դեղատուրելու միջոց։

Կարանդաշ (Թուրք. ոուս.), մատիտ։

Կարանտին (ֆր.), մի տեղ, ուր ճանապարհորդներին առժամանակ պահում են, եթէ նրանք գալիս են տարափոխիկ հիւանդութիւններ ունեցող երկրից, որպէսզի վարակման առաջն առնեն։—Այդ արգելման ժամանակամիջոցը։

Կարաուլ (Թուրք.), զգաստ, պահակ. պահնորդ, պահապան։

Կարատ (ֆր.), կշռաչափ թանկագին քարերի համար, որ դեղատան երկրներում տարբեր ծանրութիւն ունի։

Կարաւան, բեռատան (պարսկ.) ժողովրդների մէջ ներքին և արտաքին հաղորդակցութեան նախնական ձևը, որ դեռ պահպանել է ասիական երկրներում, ուր երկաթուղիներ և հազորդակցութեան այլ յարմարութիւններ դեռ ևս պակասում են։ Աւազակների և գազանների յարձակման միացած ուժով դիմադրելու կարիքից առաջ եկած՝ ճանապարհորդների և վաճառականների մեծ խումբ, որ գրաստներով ապրանք և մարդիկ են տեղափոխում քաղաքից քաղաք, երկրից երկիր։

Կարաւան-քաշի, բեռատան-քաշի, կարաւանապետ։ Կ-ը դեկավարող և առաջնորդող։

Կարաւան-սարայ բեռատանատուն, քարաւանների իջևան։ Ներկայումս այդ անունը կրում են նաև-լի նոյն շէնքերը. իսկ մեծ քաղաքներում՝ ընդարձակ շէնք, մէջ տեղը բակ, շուրջանակի թէ վերև և թէ ներքև վաճառանոցներով, պահեստներով և այլն։

Կարբօն (լատ)., ածուխ, բնածուխ։

Կարբոնատ, բնածխատ, ածխային թթուտի աղ։

Կարբոնարօ (իտալ. յոգնակին՝ կարբոնարի), Իտալիայում մի քաղաքական կուսակցութիւն, որ 19-րդ դարի սկզբներում նպատակ էր դրել հայրենիքը ազատել ֆրանսիացիների, աւստրիացիների և պապերի իշխանութիւնից։ Գաղտնի յեղափոխական կազմակերպութիւն էր։ — Կարբոնարիզմ, դրանց մտածելա—և գործելակերպը։

Կարդինալ (լատ.), կաթոլիկ եկեղեցու 70 բարձր հոգևորականները, որոնք պապի խորհրդականներն են, որոնց միջից և պապ է ընտրւում։

Կարդինալ (ածական.), գլխաւոր, առաջնակարգ։

Կարդօն տես կարտօն։

Կարդօսաֆիա (յուն.), սրտի հիւանդութիւն։

Կարէմ (ֆր.), պաս, պահք, մեծպաս։

Կարէր, կարիէրա (ֆր.), ասպարէզ, ծառայութեան ասպարէզ. ճանապարհ պաշտօնների մէջ աստիճանաբար բարձրանալու։ Ջիւս սրաբշաւ վազք։

Կարիէրիստ, մի մարդ, որի միակ հոգածութիւնն է պաշտօններ առանալ և բարձրանալը։

Կարիերիստուր (իտալ.), ծաղրանկար. դէպքերի և անձնաւորութիւնների ծաղրական և չափազանցրած պատկերացնելը։ Կարիկատուրիստ, ծաղրանկարիչ։

Կարիսաբիա (իտալ.), ամենասիրելի. կաթոլիկ։

Կարիտաս (լատ.), կոչւում են այնպիսի պատկերներ, որտեղ նկարած է բարեգործութեան և մայրական սիրոյ տեսարան։

Կարիտատիվ սիստէմ անուանում է անտեսագէտ պրոֆ. Ադոլֆ Վագների անտեսութեան կազմակերպութեան այն եղանակը, որտեղ անտեսական բարիքները անվարձ, անփոխարինելի, ձրի տրւում են մի կողմից և առացւում են միւս կողմից. սրանց մէջ են բոլոր մանաւանդ բարեգործական հաստատութիւնները, ազգաստախնամները, շատ վանքային անտեսութիւնները, գիտութեան գեղարուեստի և հայրենասիրական նպատակներով եղած ներարերութիւնները և այլն։ Անհատական և հասարակական անտեսական կազմակերպութիւնների կողքին կ՝երթայ ձևն է։

Կարկասոներ կոչւում են Իսպանիայում Դօն-Կարլօսի գահակալութեան երեսունների կողմնակիցները։ — Նաև՝ 1830-ին Ֆրանսիայից աքսորւած Կարլօս X թագաւորի կողմնակիցները։ Տես նաև խրիստինօսներ։—Կարլիզմ, խպանական կարլիստների մտածելա—և գործելակերպը։

Կարնըալ (իտալ.), բարեկենդան. բարեկենդանի զարճութիւնները։

Կարնիզ (յուն.), զարդարանք պատի վերին մասում անմիջապէս առնիքի տակ, պատի երկարութեամբ ձգւող. պահակ։

Կարուսէլ (ֆր.), ժողովրդական զարճութեան ծառայող փայտէ ձիերի խումբ, որոնց վրա հնձնում են և «արշաւում»։—Հնում՝ տպետական ձիարշաւ։

Կարպետ (անգլ.), կապերտ, գորգ։—Անգլիական հատ գործւածք է ոտքի տակ գցելու համար։

Կարտ, կարտա (ֆր.), թուղթ (թղթախաղի)։—Քարտէզ, աշխարհացոյց։

Կարտ բլանշ (ֆր. սպիտակ թերթ.), անսահման իրաւունք. լիազօրութիւն, որը կարելի է գործադրել ըստ ցանկութեան։—Սպիտակ թերթ թուղթ, որը ունի սակայն առորագրութիւն։

Կարտեօմանիկ (ֆր. ռուս.), թղթամոլ, թղթախաղով տարւած։

Կարտէզիանիզմ կոչւում է Կարտէզիուսի (Դեկարտ, 1596—1650) և նրա հետևողների փիլիսոփայական ուսմունքը. մեր գիտցածների մէջ ամենահաստատունը միայն նա է, ինչ որ մենք մտածում ենք, գիտակցում ենք. cogito, ergo sum. մտածում եմ (գիտակցում եմ), ուրեմն կամ։ Այն ինչ որ գիտակցելով մեզ որոշակի և պարզ է ներկայանում, նա է միակ ճշմարիտը։ Կ. որոշակի տարբերում է նիւթ

և ոսկի, մարմին և հոգի։

Կարակէլ (ֆր.), երբեմն սեռ-պիկսան, արէկան կամ արէօսան, բինգ, և այլ կերպ անուանած, անտիսական նպատակով կապ-ուած միութիւններ են մինոյն ճիւղի ձեռնարկողների և արդիւնաբերողների, որ նպատակ ունին փոխադարձ մրցումը առմանամոլակիով, արտադրութիւնը պահանջի համեմատ կանոնաւորելով և ապառման շուկաները իրար մէջ բաշխելով անտիսապէս առաւելագոյն շահ ձեռք բերել։ Կարակէները ձըգտում են մինոյն ճիւղի արտադրութեան բոլոր ձեռնարկութիւնները մի երկրում, և ըստ կարելոյն նաև ամբողջ աշխարհում մի միութեան մէջ կենտրոնացնել, օրինակ՝ մի երկրի բոլոր բամբակեղէնի գործարանները. իսկ սինդիկատները բացի դրանից միացնում են իրենց մէջ նաև այդ ճիւղի արդիւնաբերութեան հետ անմիջապէս առնչութիւն ունեցող բոլոր արդիւնաբերութիւնը, այս դէպքում՝ բամբակի մշակութիւնը, գործարանները, մինչև անգամ և ապառման ձեռնարկութիւնները՝ վաճառումը, ապառնութիւնը և այլն։ Կ. է կոչւում նաև բանւորական արհեստակցական զանազան ճիւղերի միութիւնը մինոյն վայրում կամ նոյն ճիւղի արհեստակցութիւնների դաշնակցութիւնը մի պետութեան մէջ կամ ամբողջ աշխարհում.—1887 թ. Փերմանիայում պահպանողական և նացիոնալլիբերալ կուսակցութիւնների դաշնագրութիւնը հանրաշխ գործունէութեան համան պարլամենտում կրում էր նոյնպէս կ. անունը։—Գրաւոր կոչ մենամարտի։

Կարտէշ (գերմ.), թնդանօթային փամփուշտի մի տեսակը, որի մէջ լցած է մանր գնդակներ և կտրած երկաթ։—Որսորդական խոշոր կտորակ։

Կարտուզ, գլխարկի մի տեսակը։

Կարտուշ, աւազակ, սրիկայ։ (Հռչակաւոր գող և աւազակ Կարտուշի անունից, որին գլխատեցին Պարիզում 1721 թ.)։

Կարտօգրամ՝ (յուն.), աշխարհագրական քարտէզ, որի տարբեր գոյները կամ նշանները վիճակագրական տեղեկութիւններ են հաղորդում։ Տես նաև Դիագրամ։

Կարտօգրաֆիա (յուն.), քարտիզագրութիւն. գիտութիւն քարտէզներ կազմելու։—Կարտօգրաֆ, քարտէզ նկարող։

Կարտօմանտիա, գուշակութիւն թղթախաղի կարտերով։

Կարտօն (ֆր.), ստուարաթուղթ։

Կարտօֆիլ, գետնախնձոր, պատատա։

Կարրէ (ֆր.), քառակուսի. զօրքի դասաւորութեան մի ձև չորս կողմի յարձակումներից յաջողութեամբ պաշտպանուելու համար։

Կարցէր (լատ.), դպրոցում կամ համալսարանում մի սենեակ, ուր կարճ ժամանակով իրրև խստագոյն պատիժ բանտարկում են աշակերտին կամ ուսանողին։ Նոյնպիսին նաև բանտերում, ուր գցում են առանձնապէս անհնազիտ և աղմկարար բանտարկեալներին։

Կարօլինա, Կարլոս V-ի քրէական օրէնսգիրքը հռովմէական կայսրութեան համար։

Կարօլինզներ, ֆրանսիական թագաւորական հարստութիւն, որ տեւեց 751 թ.-ից մինչև 987.

Կացապ (ռուս.), անուանում են մալաբօանները (Փարը Ռուսաթայի բնակիչները) ռուս պետացուն նրա մօտքի պատճառով։ (Kak uan—ինչպէս ասծ)։

Կաւալիէր (ֆր.), ասպետ. շքանշան ունեցող։ Պարոն, որ պարում է կնոջ հետ, կամ նրան ուղեկցում, պրպեցնում։

Կաւալէրգարդ (ֆր.), մեսոպետ ասպետարանների կրող մի պօրտպուեղ է Ռուսաստանում։

Կաւալէրիա (ֆր.), հեծելազօր։—Կաւալէրիստ, հեծելազօրքի սպայ կամ զինուոր։

Կաւալէտտա (ֆր.), ասպետ. խումբ. պրօսանքի նպատակով կազմուած ձիաւորների խումբ։

Կաւատ, զաւատ. դատաստ (Թուրք.), ռասիկանական պաշտօնեայ Թիւրքիայում, որ եւրոպական դեսպանատներում պահապանի և մունետիկի պեր է կատարում։

Կաֆէ (ֆր.), սուրճ։ Սրճարան։

Կաֆէկղրա տես կաթէկղր։

Կաֆէ շանտան (ֆր.), ժողովրդական ճաշարան կամ սրճարան, որտեղ ոչ տասչնակարգ երգչուհիներ թեթև բովանդակութեամբ երգեր են տասում լսողից։

Կաֆիէին, սրճին. սուրճի մէջ եղած գրգռիչ մասը։

Կաֆտան (Թուրք.), տղամարդի երկար հագուստ։

Կէ տես քէ։

Կէր (անգլ.), չորս տեղ ունեցող կառքի մի տեսակը։

Կէզէլբան (գերմ.), կէզլի խաղալու համար պատրաստած յատուկ տեղ։—Կէզլի (գերմ.), խաղ է, մեծ փայտէ գնդակներ մի տախտակի վրայից գլորելով աշխատում են տախտակի միւս ծայրում շարուած 9 փայտակ սիւներին գետին գցել։

Կէղղ (յուն.), փշատերև երկարակեաց ծառ է. մայրի։

Կէլնէր (գերմ.), ճաշարանի, գարեջրատան և այլն սպասաւոր։

Կէկուօկ, ամերիկական անմարմինների մի պարը։

Կէկս (cakes), անգլիական կրկնակի պաքսիմաթ։

Կէնգուրու, Աւստրալիայի մի կենդանի է. համարեա միշտ կանգնում է իր յետին երկար ոտների վրայ և յետնում է ապտակ. ազնիվազ։

Կէնտաւր (յուն.) գիւտասար, առասպելական կենդանի կէս մարդ և կէս ձի. մարդաձի։

Կէպի. գինուորական մի գլխարկ է, վերևը տեղ։

Կէսար, կէսարիզմ տես գէզար...

Կէրամիկ (յուն.), գեղարուեստական բրուտութիւն։

Կէրբէրոս տես գէրբէր։

Կէրօսին, նաւթից ստացուած այրելու նիւթ, որ վառում են լոյս տառնալու համար։

Կէօլնի ջուր տես օդեկոլոն։

Կէֆալօգրաֆիա (յուն.), գլխի ուղեղի մասին դիտութիւն։

Կէֆալօմէտր (յուն.), գլուխը չափելու գործիք։

Կէֆալօտօմիա (յուն.), գլխատառութիւն. գլուխը ուսումնասիրելու նպատակով կտրատածքներ անելը։

Կէֆիր, մի տեսակ խմիչք, որ պատրաստում է կովի կաթից, որ նոման վիճակի մէջ է գըտնում կէֆիրի հատիկներով կամ սանկով։

...լա (արաբ.), գլուխ, ուղղութիւնը դէպի Մէկկա, ուր մահմետականները գտրնում են իրենց հայեացքը աղօթելիս։

—Հարաւ.—Դ. տրվա Ալիմ, նա, որի վրայ ուղղուած աշխարհի հայհոյանքը։ Տաճկաց Սուլթանի և Պարսից Շահի սիրազան է։—Պահարան մզկիթում, ուր կօրաննէ պահած, ուղղած դէպի Մէկկա։

Կրզլար-ապա, Սուլթանի հարէմի պետուր վերակացուն։

Կրշլա (թուրք.), զօրանոց։

Կիրիտկա (արաբ. ռուս.) կաշէ կամ կտաւէ վրանաձև ծածկոց կառքի վրայ։ Այդպիսի ծածկով սայլ։

Կիմաո (յուն.), հին յունական լսարանաւոր նուագարան, որից զօրպացել է ժամանակակից գիտարը։

Կրլար տես ար։

Կիլօ, կիլօգրամ՝ տես գրամ։

Կիլոլիտր տես լիտր։

Կիլոմէտր տես մէտր։

Կիլոտոն տես տոն։

Կիկլիմօրա (ռուս), ռուս ժողովրդի հատատալիքով՝ պնդային ոգի թզուկ կինջ կերպարանքով, որը անբարեացակամ վերաբերմունք ունի դէպի տան մարդիկ. սրանք աշխատում են նեղրնեղով կ.-ի սիրտը շահել։

Կիկլօպ տես ցիկլօպ։

Կիլ (Փր.), բիլիարդի ձողը։

Կինամօն, դարչին։

Կինզ (անգլ.), թագաւոր. ասում է հեգնօրէն անգլիական թագաւորի մասին։

Կինէմատօգրաֆ, սինէմատօգրաֆ (յուն.), կամ բիօգրաֆ, մի մեքենայ, որը շարժուղ պատկերներ է դնում պատի վրայ.—Հատատուբիւն, որտեղ ցոյց են տալիս շարժուղ, կենդանի պատկերներ։

Կինէտիկա (յուն.), ուսմունք շարժման մասին։

Կինիկ տես ցինիկ։

Կինաո, ոտի վրա մանր առուստաբ անողների դասը Թիֆլիսում։

Կիպարիս (յուն.), նոճի։

Կիսէկա (ռուս.), մարմաջ. նուբը նոսր կոտր։

Կիսկ (ռուս.), թթուշ կերակուր է կարտօֆիլի ալիւրից և պտուղների հիւթից։

Կիլլի, Նոր Զելանդիայի մի հազուագիւտ թռչուն է. այդպէս է անուանած իր ձայնի նմանութեամբ։

Կիսօտ, կիսօտ (յուն.) սրերի պատկերներ դնելու արկղ։

Կիտէլ (գերմ.), ապխտակ կամ մոխրագոյն կտաւից զինուորական հագուստ։

Կլարնէտ (լատ.), լիմն. հարուածային երկրներում ածող պղտուղ, առաւ թթու հիւթով։

Կլիրասիլ (Փր.), թիկնոցաձև զօրքի մի տեսակը, որ կրծքին և թիկունքին մետաղէ զրահ է կրում.

Կլիրիշարիլ (գերմ.), բոզաքաղքական հեգնոտ ծաղր։

Կլիսկա (գերմ ռուս.), հեգնոտ (բոզոքական)։

Կիմնիկեան փիլիսոփայութիւն տես ցինիկներ։

Կիրասօ, քաղցրահամ մի խմիչք, լիկէօր է։

Կլարէ (Փր.), գիւղական քահանայ։

Կլասկ տես բլօսկ։

Կլակիօր (Փր.), թատրոնում վարձու ծափահարողներ, որոնք պարտաւորութիւն ունին ծափահարել դերասանին կամ պըրեմիէրին։

Կլան (շօտլ.), մի ընդհանուր նախահօրից առաջ եկած ցեղ, գիւղատան Շօտլանդիայում (Սկօտլիայում), մեծ հեղինակութեամբ կապած իրենց ցեղապետի հետ և նրան հնազանդուղ։ 1745 թւի ճակատամարտից յետոյ Անգլիայի կառավարութիւնը վերացրեց կլանները իբրև

ժամանակակից քաղաքակրթութեան պահանջներին անհամապատասխան և խոչնդոտ յառաջադիմութեան։ Զարմ։

Կլասան (գերմ.), նուագարանի լեզուակ—Դանակ, փական, խուփ։

Կլասիտօն (թուրք.), արծաթ կամ ոսկի երիզ։

Կլաս (լատ.), դասակարգ. հասարակութեան մի խմբակցութիւն, որը միւսներից տարբերուում է իր պարապմունքով և իր շահերով. եթէ այդպիսի խմբակցութիւնը ճանաչուում է օրէնքի կողմից և ունենում է յատուկ իրաւունքներ և պարտականութիւններ տարբեր միւսներից, նա դառնում է դաս, сословіе, état։—Դասարան զրպրոցական։—երկաթուղու գնացքում կարգ։

Կլասիկ, կլասիկական, դասական. հին յունաց և լատինացոց վերաբերեալ։ — Առաջնակարգ, ընտիր, օրինակելի—կ. լեզուներ, արուեստ, գրականութիւն և այլն, յոյն և լատին լեզ., արուեստ, գր. և այլն։ կ. հեղինակներ կամ կլասիկներ կոչուում են մանաւանդ հին յոյն և լատին հեղինակները, իսկ առհասարակ իւրաքանչիւր գրականութեան մէջ ընտիր, օրինակելի հեղինակները, որոնք բոլորի կողմից ճանաչուում են իբրև վարպետներ։—կ. զիմնազիա, միջնակարգ դպրոցի այն տիպարը, որտեղ գերակշռում է յունարէնի և լատիներէնի ուսումնքը, այսինքն որտեղ տրուում է կլասիկական կրթութիւն։

Կլասիկական դպրոց անտանագիտութեան տասում է Ադամ Սմիթի և նրա հետևողների դպրոցը, որը իբրև նախադրեալ ընդունելով, որ մարդի անձնական շահը միակ մղիչն է տնտեսական գործողութեան, այդտեղից արտածանկան—ղեկտիւտի—եզանակով բղխեցնում էր յատկանական օրէնքներ մարդկային տնտեսութեան բոլոր ժամանակների համար։—(Տես նաև լիբէրալիզմ, տնտեսականի վերաբերեալ կտորը)։ Այս դպրոցին էր, որ եկաւ հակադրելու պատմականը—Տես հիստորիզմ։

Կլասիցիզմ, ուղղութիւն, որ գեղարուեստի և գրականութեան մէջ հետևում է հին դասական աշխարհին՝ յունաց և հռոմայեցոց ժամանակներին։ Գրականութեան մէջ մանաւանդ այդ ուղղութիւնը կոչեց լեզուն կլասիկականութիւն, որովհետև հին դասական գրականութեան միայն արտաքին ձևերի նմանութիւնն էր նրա համար պարտաւորիչ։

Կլասիֆիկացիա, դասակարգութիւն. տարրականների բաժանումը զանազան խմբերի համաձայն իրենց բնորոշ յատկութեանց։

Կլարնէտ (իտալ.), սրնգի նման նուագարան։

Կլաւիատուր (լատ.), տեղնաշար. դաշնամուրի կամ մի այլ նուագարանի մատերի ամրոցքութիւնը։

Կլաւիշ (լատ.), դաշնակի մատերը, այն փայտիկները, որոնց մատներով հարուածում են, որ ձայն դուրս գայ. տեղն։

Կլեասուզա (լատ. ռուս. արտասանութեամբ.) մի հանգամանք, որ գործը կինճռում է և անախորժութիւն պատճառում դիմացինին։

Կլեասուզնիկ (լատ ռուս.) խանգարիչ, խառնակիչ. բամբասող։

Կլէճօնկա (գերմ. ռուս.), մոմլաթի. ժոմով, խէժով կամ ձիթով ծածկած շոր։

կլկլ, անագր.—կլկլշի, դալայշի; պղնձէ ամաններ անագով։

Կլէպա տես կլլֆա։

Կլկլաոժանիա (յուն.), պատմ. ոլորութիւն. հիւանդութեամբ գոհանալու առանց կարիքի։

Կլերաս, կլէր (յուն.), կղերականութիւն, հոգևորականութիւն. եկեղեցական, հոգևոր դասը եկեղեցու, որ ուսուցանելու և պաշտամունք կատարելու պարտաւորութիւնը ունի։

Կլերիկալ, կղերական, հոգևորական ոգի ունեցող. ձգտող եկեղեցական ոգին տիրապետող դարձնելու կեանքի մէջ։

Կլերիկալիզմ, կղերականութիւն, այն հասարակական հոսանքը, որ ձգտում է եկեղեցուն ազդեցութիւնը տարածել ամբողջ աշխարհական կեանքի վերա, հակառակ է պետութեան միջամտութեանը եկեղեցու գործերին. դպրոցը և ընտանիքը իրեն դաստիարակչական հաստատութիւններ պահանջում է յանձնել հոգևորականութեան հսկողութեան և ղեկավարութեան։ Բազաքական և անտեսական պահանջներով կ. երբեմն ունի ղեմոկրատական բնոյթ, բայց ընդհանրապէս աւելի մօտ և դաշնակից է զգում իրեն արիստոկրատիային և բուրժուազիային։

Կլերօկրատիա, կղերապետութիւն։

Կլէֆտ, կլէպա (յուն.), յոյն հրացակամբի առաջնորդ. Տաճիկ իշխանութեան չենթարկուած լերին լեռնցի յոյներ, որոնք նպաստեցին Յունաստանի ազատութեան։ Կոչւում են նոյնպէս արմատով։

Կլիզմա, կլիստիր (յուն.), դրեթէ օքնա, հեղուկ, որ յետանքից ներս ին լցնում առանմքը, աղիքները լուանալու կամ լուծ առաջ բերելու նպատակով։ —Դրա համար գործադրող խողովակը։

Կլիմաս (լատ.), հին Հռոմում այն մարդը, սովորաբար ստրկ, որ ընդունում էր մի ուրիշի—պատրօնի—հովանաւորութիւնը։ Յաճախորդ։—Պաշտպանեալ, որը իր գործը վարելը յանձնում է փաստաբանին։

Կլիկ, կլիկա (ֆր.), մարդկանց մի խումբ, որոնց կապողը անձնական անմարթաբար շահն է։

Կլիմա, կլիմատ (յուն), մի տեղի օդի որպիսութիւնների ամբողջութիւնը։—Կլիմատոլոգիա (յուն.), գիտութիւն օդի և եղանակի վիճակի և նրա ազդեցութեան մասին գործադրական աշխարհի վրա։

Կլինիկա (յուն.), հիւանդանոց, մանաւանդ ուսումնարան համապատասխանների կից հաստատութիւն, որտեղ հիւանդներ բժշկելով ուսանողները վարժւում են ուսուցչապետի ղեկավարութեամբ և լսում են դասախոսութիւններ հիւանդի մահճակալի մօտ։

Կլիշէ (ֆր.), նկարի կազապարը փորագրած մետաղի կամ փայտի վրա, որից կատարում են տպագրութիւնը։

Կլիատիր տես կլիզմա։

Կլիշնիկ (ռուս.), զանազան, որի մօտ են լինում բանալիները։ Մանաւանդ՝ բանդապան։

Կլիօ, պատմութեան մուսան։

Կլու (ֆր. մեխ.), ամենատարածուած առարկան որևէ հանդէսի, ցուցահանդէսի մէջ և այլն։

Կլուբ (անգլ.), ակումբ, երեսաց ժողովարան. ժամանցի կամ քաղաքական նպատակներով կազմված միութիւն նաև դրանց ժողովատեղին։

Կլօակ (լատ.), կոյուղի. անմաքրութիւններ դուրս տանելու խողովակ կամ ջրանցք։

Կլօզէտ (անգլ.), արտաքնոց։

Կլոան, կլուան (անգլ.). խեղկատակ, ծաղրածու։

Կնայայ (գերմ.), ինջոյք, կոնծարանութիւն։

Կնեազ (ռուս.), իշխան։—Կնեագինա, իշխանուհի։—Կնեաժնա, իշխանադուստր։

Կնէխտ (գերմ.). ճորտական դիւղացի միջնադարեան Գերմանիայում։

Կնիկուն (գերմ.), ոտվբանս (ֆր.), ծունկը ծալելով բարևելու եղանակ, որ անում են մանկահասակ աղջիկները և պալատական ընդունելութիւնների ժամանակ՝ բոլոր կանայք։

Կնուտ (ռուս.), մարակ։

Կնօպկա (գերմ. ռուս.) լայն և տափակ գլխով մեխ (գամ), որին կարելի է մատով սեղմել և նստեցնել պատի մէջ։—Կոճակ էլեկտրական զանգակի և նման բաների։

Կշանարիա տես կսանուա։

Կոկորդիլոսի արցունք տես կրօկօդիլ։

Կոմի տես գրաֆ։

Կոնգլոմեր, մեռաքակ կանաչ ու կարմիր քաշկինակներ, որ կապում են փեսայի կրծքին մի ծայրն ուսին ատրացնելով, մեջը գոտու մէջ։

Կոնաֆէօր (ֆր.), վարազվիր։

Կոնաֆիտր, մոզերի ամբողջածք։

Կոնը (լատ.), խորանարդ. մի տարածութիւն, որ պարփակած է վեց քառակուսի կողմերի մէջ։

Կոր, հնոցի մէջ ամրացրած անշարժ կաթսայ։ Արտի պղղինձ։

Կոռնիկ, խորանարդիկ մանուկների խաղի համար։

Կոռ դ'էտա (ֆր.), պետական հարուած. պետական կազմի յեղաշրջումն դէպի վատը, առանց ժողովրդական համաձայնութեան, իշխանութեան ձեռքով։

Կուզէն (ֆր.), հղրօր, քրոջ, մօրեղբօր, հօրեղբօր, մօրաքրոջ, հօրաքրոջ որդի։ Իսկ նոյն ազգականների աղջիկը կոչւում է կուզին։

Կուլ, հին Ռուսաստանում հացահատիկի չափ, մօտաւորապէս մի չետվերտ։

Կուլակ (ռուս. բառնագր.), պետական կեղեքիչ, վաշխառու։

Կուլի, Հինաստանում և Հնդկաստանում, օրավարձով աշխատող բանուր. տեղափոխելով Ամերիկա խոշոր մրցակիցներ են հանդիսանում տեղացի բանուորներին։

Կուլինար (լատ.), խոհարարական. խոհանոցին և կերակուրներին վերաբերեալ։

Կուլիշ (ռուս.), զանակական հացի մի տեսակը Ռուսաստանում։

Կուլիս (ֆր.), նկարած պատ, անառատ, բեմի մի տեսարան ներկայացնող, որ գրւում է թատրոնական բեմի վրա գործողութեան պահանջի համեմատ կողմնափեղկ, նկարափեղկ։

Կուլմինացիա (լատ.), բարձրակէտ, գագաթնակէտութիւն. ամենաբարձր կետին հասնելը։—Աստղի անցնելը միջօրէականի վրայով. նրա ամենաբարձր կետում լինելը։

Կուլուար (ֆր.), նրբորդ. երկար ձգած զրօսասենեակ թատրոնական կամ պատմական դահլիճի կողքին։

Կուլտ (լատ.), պաշտամունք, պաշտօն. երկրպագութիւն աստուածութեան։

Կուլտուրական, կուլտուրէլ.

բնական վիճակից բարձրացած, բազաբակրթութեան, մարդկային մշակող ձեռքի ազդեցութիւնը իր վրա կրող։ Կ. բոյս, մարդի ձեռքով, իր պէտքերին յարմարեցնելու նպատակով մշակուած։

Կուլտուրկամպֆ (գերմ.), 1871-1887 թիւը տեղ պայքարը Բիսմարկի և կաթոլիկ հոգևորականութեան մէջ Գերմանիայում, որի նպատակն էր չեզոքացնել կաթոլիկութեան ազդեցութիւնը երկրում և վերջնել նրանց դիմադրութիւնը գերմանական միութեան։

Կուլտուրկլգէր (գերմ.), կուլտուրա տարածող։ Ռուսաստանում՝ ժողովրդի բազում լուսաւորութեան կողմնակից առանց յեղափոխական քայլերի։—Հեգնորէն՝ չանուն կուլտուրայի տարածման նախնական վիճակում գտնուած ժողովրդների մէջ անիրաւութիւններ գործող։

Կուլտուրա, կուլտուր (լատ.), մշակութիւն. հողի, բոյսերի մշակութիւնը մարդկային ձեռքով։—Մարդկային կեանքի զարգացումը համեմատած բնական վիճակի հետ. բնական վիճակից զարգացման ճանապարհով դուրս եկած և աւելի բարձր աստիճանի վրա հասարակական կեանք։ Մշակոյթ։

Կուլմինատոր (գերմ.), խոհարարապետ.

Կուկուրուզ (թուրք.), սեմինդը. եգիպտացորեն։

Կումաչ (արաբ.), կարմիր բամբակէ գործուածք։

Կումի տես գումի։

Կումիս, զալմուղների գործածած մի խմիչք ձիու կաթից։

Կումիր, կուռք։

Կանկատատօր (լատ.), դանդաղկող, յամրաշարժ. այդպէս անուանում էին հռոմայեցի զօրավար Ֆարիոսին բնորոշելու համար նրա գործելակերպը Անիբալի դէմ մղած պատերազմում 217 թ. Ք. ա.։

Կուշ (ֆր.), դրամական մի գումար։—Թղթախաղում դրամի քանակը, որը մի անգամից դնում են մէջ տեղ։

Կուշ! (ֆր.), պարկիր (շանն են ասում)։

Կուշակ (ռուս.), շորից գօտի, որ կապում են ռուս գիւղացիք։

Կուշէտկա (ֆր. ռուս.), նիզ և երկար թաղի պարկելու համար.

Կուչէր (գերմ.), կառապան։

Կուպէ (ֆր.), բաժանմունք երկաթուղու վագոնում։—Ծածկած կառք խորանարդաձև։

Կուպիոն (լատ.), հռոմայեցոց դիցաբանութեան մէջ սիրոյ աստուածը։

Կուպիւր (ֆր.), կրճատուած թատրոնական գրւածքի, լրագրական յօդուածի և այլն.

Կուպլէտ (ֆր.), ոտանաւորի տուն։—Ծաղրական բնաւորութիւն ունեցող երգ, որի բոլոր տներից յետոյ կրկնւում են միևնոյն խօսքերը։

Կուպճի (ռուս. ուղիղը՝ կուպշայակրնգաստ,) նօսրաթով վաւերացրած թուղթ, որով վկայւում է մի կալւածքի գնւած լինելը։

Կուպօլ (իտալ.), գմբէթ։

Կուպօն (ֆր.), կտրօն. մի տեղի տոմսակ թատրոնի ընդհանուր օթեակի մէջ։—Մանաշահ. պետական տոկոսաթուղթերին, բաժնետիրական տոմսերին և այլ արժէթղթին կցւած մանր տոմսակներ, որոնցից իւրաքանչիւրը նրա վրա նշանակած ժամանակին պոկում են և ներկայացնելով համապատասխան հիմնարկութեան

դանձարանը տալիս են տոկոսներ։

Կուպօրօն, արջառապ։

Կուտասարսիին (ռուս.). արդիւնագործութիւն, Ռուսաստանում տարածւած արդիւնագործական այն ճղանակն է, որով արդիւնագործողը կուտարսը միաժամանակ և տէրն է և բանւորը, բայց գործում է ոչ թէ մանուածոյ յաճախորդի պատւերով, այլ մեծ քանակութեամբ շուկայի համար։ Տնայնագործութիւն։

Կուտուգա, (ռուս.), բանտ. ժողովրդական ծաղրական անունն Ռուսաստանում։

Կուտուխատա, մօնդօլական բարձր հոգևորական։

Կուլաճ (ֆր.), արատաւորութիւն, համարձակութիւն։

Կուրան տես կօրան։

Կուրատէլ (լատ.), բաժանվայրի վարչութիւնը, դիւանատունը։

Կուրգան (պարսկ.), գոհ. մատաղ։—Կուրգան-բայրամ՝ տես բայրամ՝։

Կուրգան (պարսկ. կուրխանա, բլրատուն), Ռուսաստանում և Սիբիրում բլրաձև գերեզմաններ հին մօնղօլների։

Կուրիա (լատ.), որոշ ընտրողական եղանակի մէջ ընտրողների մի խումբ, ըստ դասակարգի կամ ըստ ազգութեան, որին որոշ թւով ներկայացուցիչներ տալու իրաւունք է վերապահած, ինչպէս Աւստրիայում, Ռուսաստանում, Պարսկաստանում։—Հռոմայ պապի վարչական իրաւունքների իրագործման ծառայող բոլոր հաստատութիւնների և պաշտօնեանների ամբողջութիւնը՝ կարդինալներ, պրէլատներ, փաստաբաններ, գործակալներ, նօտարներ, կօնսիստօրիանները, հոգևոր դատարանները և վերջապէս պապի պալատը։ Հին Հռոմում պատրիկների (ազնուականների) ատորաժանումները, որոնք կառավարում էին ժողովուրդը։

Կուրիէր (ֆր.), պնդագեսպան, սուրհանդակ։

Կուրնօզ (լատ.), հեռադրքիր. զարճալի, զրաղեցուցիչ։ Տարօրինակ. սրամիտ։

Կուրս (լատ.), ընթացք, ուղղութիւն. նաեւ բռնած ընթացքը։ Արտասահմանեան դրամի, մուրհակի և այլն այն միջին գինը, որով մի օրւայ մէջ կատարւում են առևտրական հաշիւները. օրինակ՝ նայած կուրսին մի օր կարող է արժենալ 267 ռուբլի, մի այլ օր դրանից աւել կամ պակաս։—Դասընթաց. մի գիտութեան ամբողջութիւնը, որ ուսանւում է։—Ռուսաստանում՝ համալսարանական տարի։ Կուրսեր, բարձրագոյն դպրոց։ Ժամանակաւոր դասընթաց։

Կուրսիվ (լատ.), նօսր, նօսրագրութիւն։

Կուրսիտկա (լատ. ռուս.), ուսանողուհի. բարձրագոյն դասընթացների հետևող օրիորդ կամ տիկին։

Կուրտիզան (ֆր.), պալատական, դրանիկ։—Դանդաղ յետևից քարշ եկող։

Կուրտիզանուհի, կուրտիզանկա (ֆր. ռուս.), սիրուհի բարձրաստիճան մարդի։

Կուրտուազի (ֆր.), նաեւ քաղաքավարութիւն. ասպետական պաշտամունք կանանց։

Կուրօրտ (լատ. գերմ.), բուժավայր. այնպիսի տեղ ուր գնում են հիւանդները բժշկուելու և կազդուրուելու համար հանքային ջրով, օդով և այլն։

Կուրֆիւրստ (գերմ.), հին Գերմանիայում իշխան, թեկ

7—9, որ իրաւունք անէր ընտրել կայսր։

Պուէբրա (ֆր.), նամակի ծրար։—Անգամի սիրոց։—Մի մարդի պարագաներ ճաշելու համար։

Կա... տես րա...

Կաճօնճ (լհհ.), կաթոլիկ քահանայ։

Կրամ (դեմ.), անանկութիւն։

Կրասիմնոյ (ռուս.), օսլա

Կրակօվնակ, լհհական մի ապագային պար։

Կրամբամբուլի (չէխ.), մի աւազակ օղի։

Կրամօլա, խռովութիւն, ապստամբ։ Դաւաճանութիւն։ Կրամօլնիկ (ռուս.), ապստամբ. ապստամբ։

Կրան տես դրան.

Կրանիօմէտրա (յուն.), գանգաչափութիւն։

Կրաուն, անգլիական արծաթ դրամ—5 շիլինգ—2,08 րուբլի —6,25 ֆրանկ։

Կրաս (լատ.), կոպիտ, խիստ։

Կրատէր (յուն.), հրաբխարերան. այն անցքը, որտեղից հրաբխային ասրը արտաւիժուածներ է անում։

Կրէատուր (լատ.), արարած։—Մի մարդ, որ բարձր դիրքի է հասել ոչ իր անձնական արժանիքներով, այլ որովհետև իր կամքը և խիղճը մի զօրաւորի տրամադրութեան տակ է դրել և նրա շնորհիւ է դիրքի հասել. ձեռնասուն։

Կրէատօր, արարիչ, ստեղծիչ,

Կրէացիա, ստեղծագործութիւն, արարչագործութիւն։

Կրէացիանիզմ, Կրէատիանիզմ (լատ.), մի հայեացք է, ըստ որի երեխայի մարմինը ստեղծում են ծնողները, բայց նրա ծննդեան րոպէին Աստուած իր հոգին փչում է նրա մէջ։

Կրէդիտ (ֆր.), վարկ. հաւատ, վստահութիւն։ Այն վստահութիւնը դէպի մի անձնաւորութիւն. որի հեման վրա կարելի է այժմ նրան որոշ ծառայութիւն անել համոզուած լինելով, որ ապագայում փոխարէնը կստացի։ Այս վստահութեան վրա հիմնուած՝ դրամական վճար՝ ապագայում կամ ստանալու յոյսով. վաճառականին արուած ապրանք, արժէքը ապագայում ստանալու պայմանով և այլն։ Հաշուապահութեան մէջ իր պարտքը և դէմացինի պահանջը, որ գրուում է հաշումատեանի աջ երեսի վրա։—Կրէդիտային հաստատութիւններ, այն բոլոր բանկերը, փոխատու ընկերութիւնները և այլն, որոնք որոշ հրաշխաւորութեամբ անտեսական ձեռնարկողներին որոշ ժամանակով փոխարինաբար դրամ են տալիս տոկոսով։ Կ.-ային տուն, պետական թղթապրամ, որի դիմաց միշտ կարելի է ստանալ հնչիւն դրամ։

Կրէդիտիվ կամ ակկրէդիտիվ հաւատարմաթուղթ, յանձնարարական գրութիւն. մի գրութիւն, որը մի բանկիր—ուղարկողատալիս է, որպէսզի նրանով մի այլ բանկում փող բաց թողնին ի հաշիւ Կ. ուղղի։

Կրէդիտիվ հրովարտակ կամ գրամնօտա (ռուս.), վկայագիր, որ արուում է այլ երկիր ուղարկուող դեսպանին, որպէսզի նրան ճանաչեն, իբրև ներկայացուցիչ։

Կրէդիտօր, վարկատու, վստահղող, պարտատէր։

Կրէդո (լատ.), հաւատամք. հաւատոյ հանդգնակ—Քաղաքական Կ. մի կուսակցութեան քաղաքական դաւանանքը, նրա ըմկղմունքները։

Կրէմ (ֆր.), ևեր—Սերից, ձուից, շաքարից պատրաստած.

մի քաղցր ուտելիք։ Կրէմ-գոյն, բաց դեղնաւուն, թաւմ իւղի գոյն։

Կրէմատօրիում, դիակներ այրելու տեղ։

Կրէմլ (ռուս.), միջնաբերդ, քաղաքարերդ։ Մասնաւորապէս՝ Մոսկուայինը։

Կրէյսէր (դեմ.), յաճախաւոր ձեռն պահաւորած, արագաշարժ պատերազմական նաւ, որ կարող է հետու ուղևորութիւններ անել և նպատակ ունի շրջել ջրերում դիտելու համար թշնամուն, յափշտակել թշնամու առևտրական նաւերը և պաշտպանել ափերը։

Կրէյցկը, կրօյցկը, գործածութիւնից դուրս եկած ասուրիական դրամ = մօտաւորապէս մի կոպէկ —2,5 սանտիմ։

Կրէնդէլ (գերմ.), իւղով հաց որ թխած է B տառի ձևով։

Կրէպ (ֆր.), նուրբ մետաքսէ շղարշ ալիքաւոր գործած երեսով, որի սեր յաճախ գործ է ածւում իբրև սգի քող։

Կրէպօ, բաղկեթու։

Կրէսոս, Լիդիայի թագաւորը VI դարում Ք. ա., որ յայտնի էր իր անթաւ հարստութեամբ և գանձերով։—Շատ հարուստ մարդ։

Կրէս-ապատ, մի տեսակ բանջարեղէն։

Կրէտին, (ֆր.), ապուշ թանձրամիտ։

Կրէտինիզմ, մի տեսակ հիւանդութիւն է, ապուշութեան մի ձևը, որով բանուածները լինում են փոքրաճասակ, հաստապլուխ, ապուշ հայեացքով և թոյլ մկաններով. ամբողջ մարմինը անհամաչափ է կազմուած. մտաւոր ընդունակութիւններից զուրկ են, միայն ունին ինքնապահպանման բնազդ. ապրում են Ալպերի մի քանի հովիտներում։

Կրիգա (յուն.) կրիզ, ճգնաժամ, տագնապ։—Տնտեսական կ. առում է անտեսական կեանքի կանոնաւոր ընթացքի ժամանակաւոր խանգարումը, որը հետևանք է արտադրութեան և սպառման անհամապատասխանութեան. ապրանքների մեծ քանակութիւն, առևտրի պակասութիւն, անգործութիւն և այլն, որ շատերին անտեսական թշուառութիւն և քայքայում է պատճառում։—Բժշկութեան մէջ կ կոչւում է հիւանդութեան ընթացքում վճռական վայրկեանը։—Քաղաքական կեանքում գործերի այնպիսի բարդացում, որի հետևանքը լինում է միջնորդութեան ամրողջական կամ մասնակի հրաժարականը։

Կրիկէտ (անգլ.), անգլիական գնաւակախաղ. երկու բանակներից իւրաքանչիւրը աշխատում է թիակներով չեզ մղել դէմացինի անձակած գնդակը և արգելել դիպչելու ձողերին։

Կրիմինալիստ (լատ.), ոճրագէտ իրաւաբան, քրէագէտ։ Իրաւաբան, որ մասնագիտօրէն ուսումնասիրել է քրէական իրաւունքը։—Կրիմինալիստիկա, քրէական իրաւունք։

Կրիմինէլ, Կրիմինալ, յանցաւոր, ոճրական։ Քրէական։

Կրինօլին (ֆր.), ձողից շինած շրջաններ, որոնք հետում գործ էին ածում կանանց հագուստի փէշերը լայն ձևով պահելու համար։

Կրիպտօգրաֆիա (յուն), գաղտնագրութիւն։—Կրիպտոմանիա, գաղտնամոլութիւն։

Կրիստալ (յուն.), բիւրեղ։—Կրիստալիզացիա բիւրեղացում։

Կրիտէրիում, գատաւնիշ. ճշմարտութիւնը որոշելու համար չափ, նշան, փորձաքար։—Քրն-

նպատակութեան ատեքանոչափ։

Կրիտիկա (յուն.), քննադատութիւն. դատողութիւն և ուսումնասիրութիւն մի երեւոյթի մասին, թէ արդեօք նա համապատասխան է այն կանոններին ու օրէնքներին, որոնք պիտի իշխեն նրանում։

Կրիտիկական, ապդնապալից, ճգնաժամային. վճռական, վտանգաւոր։ Դժւարին։—Քննադատական։

Կրիտիցիզմ կոչւում է յատկապէս Կանտի փիլիսոփայական սիստեմը, որը կատարով վերաբերելով մեր ընդհանուր հասկացողութիւններին նախապէս որոշում է մարդկային ճանաչողութեան սահմանները։ Տես *կանտիզմ*։ — Քննադատական եղանակ ուսումնասիրութեան։

Կրմանչ (քրդ.), քուրդ։

Կրուգալայա պլատիկա (ռուս.), համայնքի պարտաւորութիւնը՝ վճարել տուրքերը իր անպարտաճանաչ համայնակիցների փոխարէն Ռուսաստանում։

Կրուժկա (ռուս.), ըմպանակ. ջուր խմելու աման կոթով։ — Նոյն ձևի գանձանակ։

Կրուպի թնատոթ, ամենաւալ թ-ները, որոնք պատրաստւում են Գերմանիայի էսկն նահանգում գործարաններում։ *Կրուպի* գործարաններ։

Կրօկէտ (անգլ.), անգլիական մի խաղ է. մուրճի հարւածներով աշխատում են փայտէ գլնաձևները անցկացնել կամարակապ անկած ձողերի միջով։

Կրօկօդիլ, կոկորդիլոս. խլեզաձև կենդանիներից ամենամեծը — *կոկորդիլոսի արցունքներ* թափել, կեղծ ափսոսալ. իբր թէ կոկորդիլոսը իր որսը ուտելիս լալիս է։

Կրօն, ռուսական արծաթ դրամ = 35 կոպէկ = 1,05 ֆրանկ։ Սկանդինաւեական կրկրնեռւմ կ —49 կոպէկ = 1,33 ֆրանկ։

Կրօնպրինց (գերմ.), Գերմանիայի գահաժառանգը։

Կրօնօս, հին յունաց պիւտանութեան մէջ՝ ժամանակի ատւածը, հռովմայեցոց *Սատուրնը*։

Կրօր (հնդ.), Հնդկաստանում խաշու դրամական հաշիւների համար գործածական անուն — տաս միլիոն րուպի։

Կսապրատա (լատ.), քառակուսի. չորս անկիւն ունեցող մի ձև, որի բոլոր անկիւնները ուղիղ են և կողմերը հաւասար։

Կսապրատուր, քառակուսացում. որևէ ձևի տարածութեան մեծութիւնը արտայայտել նրան հաւասար քառակուսով։ — Շրջանի կտրատութիւն, մի խնդիր է՝ շրջանի մեծութեան հաւասար քառակուսի կառուցանել, որ անլուծելի է երկրաչափութեան մէջ. այդ պատճառով չ. կ. նշանակում է ցնորք, անիրագործելի երազ, անկարելի բան։

Կտաղիլիօն (ֆր.), միլիոնը չորս ատեքան բարձրացրած։

Կտաղրուբէդ (լատ.), չորքանկի։

Պտագի, բտագի, ատերևոյթ։

Կտալիտէտ (լատ.), որակ, արժանութիւն։

Կտալիֆիկացիա (լատ.), առարկաների որակի նշանակումը։

Կտանտում (լատ.), քանակ. քանակութիւն։

Կտարտ (լատ.), քառորդ. զանազան երկրներում տարբեր ծաւալ ունեցող հեղուկի չափ։

Կտարտա (լատ.), չորրորդ լարը լարաւոր նւագարանների։ — Քառորդ ձայն (երաժշտական)։

Կտարտալ, եռամսեակ, քառորդ տարի։ — Բազաքամաս, որ ընկած է չորս փողոցի մէջ։ — *Կտարտալնի* (լատ. ռուս.), քաղաքամասի հսկող ատեքանական պաշտ։

Կտակէր, կէկէր (անգլ.), ներքատն. տասնհօթերորդ դարի կիսին Անգլիայում Գէորգ Ֆօքսի հիմնած մի ազանդի հետևողները իրենց անւանում էին «բարեկամների ընկերութիւն», ժխտում են քահանայութիւնը, ծէսերը, խորհուրդները. ընդունում են մարդկանց կատարեալ հաւասարութիւնը, հրաժարւում են երդումից և պինւորական ծառայութիւնից, վարում են խստակրօն կեանք. տարածւած են Անգլիայում և Ամերիկայում։ Անունը ծագում է անգլիերէն դողալ բառից, ինքնագլխով դողալ՝ որովհետև կրօնական յուզմունքից դողում են։

Կտարտէտ (ֆր.), քառերգ. քառանւագ. չորսի քառաձայն նւագածութիւն կամ երգեցողութիւն. Նաև այդ նպատակով հեղինակած երաժշտական կտոր։

Կտարտէր, անգլիական չափ հացահատիկների = 290³/₄ վիտր = 1,38 հեկտոլտր — 8 բուշել։

Կտարտիրա (ֆր.), բնակարան։ — *Կտարտիրանտ*, վարձակալ բնակարանի. բնակարանում վարձով ապրողը։

Կտարց (գերմ.), որձաքար։

Կտաս (ռուս.), ռուսական թըթու խմիչք է, որ պատրաստում են թթւեցրած հացից. թթւաջուր։ — Թթու դրած վարունգի մի տեսակը։

Կէկէր տես *կտակէր*։

Կէհտօր (լատ.), աւագ գանձապետ հին Հռովմում։ — Գանձապահ, հաշւապահ. համալսարանում թոշակները գանձող։ — Ֆրանսիական պառլամէնտում՝ ներքին կարգի վրա հսկող երեք պատգամաւորը։ — *Կէհտորա*, *կէհտօրի* պաշտօնը. նրա գիտանը։

Կիէտիզմ (լատ.), խորհրդապաշտական մի ուսմունք (XVII դարում), որը կարծում է, թէ խորասուզւելով Աստծու մէջ կարելի է խորին խաղաղութեան հասնել։ — *Կիէտիստ*, այս ուսմունքի հետևող։

Կիինկէլիպատ (լատ.), հնգապատութիւն. հնգի իշխանութիւն։

Կիինկիլիոն, միլիոնը հինգ աստիճան բարձրացրած։

Կիինտէմնց (լատ.), հնուս նշանակում էր էֆէբը, որը համարում էին հինգերորդ տարրը (առաջին չորսը՝ հող. ջուր, կրակ և օդ)։ — Ծուռ, ուղեծուռ։ — Էութիւն, մի բանի էական մասը։

Կիրա (ֆր.), հաւատարեցումն պարտաւորութիւնների. պարտքի ջնջումն։ — *Կիրատացիա* (ֆր.), ատեցական, անդորրագիր։

Կիրիլնալ, կայսերական պալատը Հռովմում. առաջ պապինն էր. կառուցած է համանուն բլուրի վրա։

Կուոլիբէտ (լատ.), ինչ որ ուզէք. խառնւող ամենատեսակ բաներին. Այդպիսի երաժշտական կտոր կամ նկար։

Կուօտ (ատ.), ինքնավար գաւառի բաժինը պետական ծախսից։

Կուալիցիա (լատ.), *կուալիսիօն*, դաշն, միաբանութիւն, նիզակակցութիւն. մի քանի պետութիւնների կապակցութիւնը իրար հետ մի ընդհանուր թըշնամի տապալելու նպատակով։ — Համաձայնութիւն քաղաքական կուսակցութիւնների մէջ ընդհանուր քայլերի համար ընտրութիւնների ժամանակ։ — Տնտեսագիտութեան մէջ կ. նշանակում է բանւորների դաշնագրութիւն աշխատավարձի

յաւելման կամ աշխատաժամերի կրճատման նպատակով. գործատուների միութիւն պայքարելու համար բանւորների պահանջների դէմ, կամ արտադրութիւնը կանոնաւորելու և բարձր գներ սահմանելու նպատակով (կարտէլ)։

Կօրպայտ (լատ.), բաց մոխրագոյն մեհեաղ։

Կօրզար (ռուս.), Փոքր Ռուսիայում թափառական կոյր երաժիշտ, աշուղ, որ նւագում է կօրզա, մանդօլինի նման եռաւոր մի գործիք։

Կօրսար, կաշեայ պատեան ատրճանակի։

Կօղ (Ֆր.), *կօղէրա* (լատ.), օրէնագիրք. պետութեան հրատարակած օրէնքների ժողովածու, իրրև օրէնսդրութիւն մի որոշ ակզբունքով։ — *Կօղ սիվիլ* (Ֆր.), քաղաքացիական (ոչ քրէական) օրէնագիրք։ — *Կօղ Նապօլէօն, Նապօլէօն I-ի օրէնագիրքը*, որի հետևողութեամբ կազմուած են բոլոր քաղաքակիրթ երկրների օրէնագիրքերը։

Կօղիֆիկացիա (լատ.), *կօդիֆիկասիօն* (Ֆր.), երկրի օրէնքների վերածումը մի ընդհանուր սիստէմի, համակարգութեան։

Կօզակ տես *կազակ*։

Կօզիր (ռուս.), *կօզըր*, թըզթախաղի մէջ այն գոյնը. որը այդ ձեռք խաղում առաւելութիւն ունի և յաղթում է։

Կօէքսիստէնց (լատ.), էակցութիւն, գոյակցութիւն, համագոյութիւն։

Կօէֆիցիէնտ (լատ.), գործակից. հանրահաշւի մէջ այն թիւը, որով բազմապատկւում է մի մեծութիւն. 3 a ձևի մէջ 3-ը գործակից է։ — Մշտական մեծութիւն, որով չափում են բնական երևոյթները։

Կօինցիդէնտ (լատ.), համապիր, զուգադէպ. երկու կամ աւելի փաստերի դիպակցելը։

Կօլէկտիվիզմ, այսպէս է կոչւում յաճախ *մէրկանտիլիզմը*, 17-րդ դարի անտեսական քաղաքականութիւնը, որովհետև Լուդովիկոս XIV-ի մինիստր Կօլբէրը (1619—1683) այս ուղղութիւնը ամենահետևողական կերպով իրագործեց Ֆրանսիայում։ Տես նաև *պրոտէկցիոնիզմ*։

Կօլդ-կրէմ (անգլ.), զովացուցիչ սպիտակ օծանելիք։

Կօլէգ (լատ.), պաշտօնակից, անդամակից. բարեկից։

Կօլէգիա, խումբ, խմբակցութիւն, որ ձայների մեծամասնութեամբ է վարում գործերը։

Կօլէգիաններ, Պետրոս Մեծի հիմնած կենտրոնական պետական հաստատութիւնները Ռուսաստանում։

Կօլէգիալ հաստատութիւններ կոչւում են այնպիսիները, որոնք կազմակերպւած են կօլեգիալ սիստէմով, այսինքն, որտեղ վճիռ արձակողը ոչ թէ մի պետական պաշտօնեայ է (*բիւրոկրատիզմ*), այլ մի քանի պաշտօնակիցների ժողովը ձայների մեծամասնութեամբ։

Կօլէժ (Ֆր.), *կօլէջ* (անգլ.), Ֆրանսիայում միջնակարգ, իսկ Անգլիայում բարձրագոյն դպրոցի մի տիպար։

Կօլէժսկի ասէսօր, կ. ս*էկրէտար*, կ. *սաւետնիկ*, կ. *րէգիստրատօր*, տարբեր *տասիճաններ* են քաղաքացիական պաշտօնէութեան Ռուսաստանում։

Կօլէկտացիա, հաւաքածոյ. ժողովաբարութիւն։

Կօլէկտիվ (Ֆր.), հաւաքական, ընդհանուր. խմբական, հաւաքօրէն, բազմաբար։ — *Հաւաքական մարմին*։

Կօլէկտիվիզմ (Ֆր.), հասարակական վարդապետութեան մի ուղղութիւն, որը ձգտում է *մոնոպոլ* անհատութիւնների փոխարէն հաստատել հաւաքական — *կօլէկտիվ* — սեռեսութիւն. կապիտալը, հողը, մեքենաները և գործիքները դարձնել ընդհանուրի սեփականութիւն, բայց իւրաքանչիւրի գործածութեան տարրականները թողնել *մասնաւոր* սեփականութիւն։ Ֆրանսիոյս երկրներում կ. գործ է տեսնում *սոցիալիզմի* փոխարէն։ — Հաւաքական սեփականատիրութիւն։

Կօլէկտիվիտատ, *կօլէկտիվիտմի* հետևող. այդ ուսմունքը տարածող։

Կօլէկցիա (Ֆր.), հաւաքածոյ, ժողոմածոյ. ուսումնասիրական կամ հաճոյական նպատակով ի մի գումարած և որոշ սիստէմով դասաւորած առարկաներ։ — *Կօլէկցիոնէր*, հաւաքածոյ կազմող։

Կօլէնկօր (Ֆր.), խէժով ծածկած կտոր։

Կօլիբրի, ամերիկական թըռչունների մի ցեղ. ամենափոքր գեղափետուր թռչնիկ. մեղրածուծ։

Կօլիզեում, *կօլօզեում* (լատ.), վէսպասիանոսի ժամանակ կառուցած հսկայական կրկէսը Հռոմում։ — *Մեծ շէնք* հասարակական զւարճութեան համար։

Կօլիգնա, *կօլիգնօն* (Ֆր.), բախիւն, ընդհարում. հակադիր և հակառակ հանգամանքների բախիւն։

Կօլխիդա, այն երկիրը Սև Ծովի արևելեան ափում, ուր արգօնաւտները գնացին ոսկեգեղմը բերելու։

Կօլիէ (Ֆր.), թանկագին քարերից մանեակ։

Կօլպօրտաժ (Ֆր.), գրավաճառութիւն և պատկերավաճառութիւն (տպագրւածների) շըրջապատյութեամբ քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, որ զանազան երկրներում կամ արգելւած է կամ որոշ սահմանափակումների է ենթակայ։ — *Առնասարակ շրջիկ առևտուր. շրջավաճառութիւն*։

Կօլպօրտէօր, շրջիկ գրավաճառ. *չարչի*

Կօլօ (լեհ.), շրջան։ — *Կոր պար սլաւոնական*։ — *Լենական կօլօ*, լենական միութիւն ազատամիտ ուղղութեամբ։

Կօլօմբինա (իտալ.), իտալական ժողովրդական կատակերգութեան մէջ կանացի դեր, հանդում է սև կիսապիժակ, *Հարլէկինի* սիրուհին։

Կօլօնատ (Ֆր.), սիւնաշար. սիւնազարդ սրահ։

Կօլօնատ (լատ.), հին Հռոմում ճորտութեան մի ձև. գիւղացիները հաստատւում էին կալւածատէրերի հողերի վրա և մշակում. այդ ճորտական գիւղացիները, որոնք կոչւում էին *կօլօններ*, անձնապէս աւելի ազատ էին, քան միջնադարեան ճորտերը։

Կօլօնի, *կօլօնիա* (լատ.), գաղթ. մայր երկրից դուրս, օտար աշխարհում բնակութիւն հաստատած ազգարնակութեան մի մասը. օրինակ՝ հայ *կօլօնիան* Ամերիկայում, Պարիզում և այլն։ — Որևէ տէրութեան կալւածքը այլ աշխարհում, որ առաջ է եկել կամ իրրև հետեւանք տիրապետութեան կամ ազգարնակութեան աւելցուկի գաղթելու։ — *Կօլօնիական կամ գաղութային քաղաքականութիւն*. ժամանակակից պետութիւնների ձգտումը՝ ձեռք բերել գաղութներ — կալւածքներ — ազգարնակութեան աւելցուկը տեղաւորելու և ապրանքների արտահանութեան համար։ —

Կօլօնիական սիստեմ, 18-րդ դարի սկզբներին և առաջ, գաղութային քաղաքականութիւնը, որով գաղութը միայն մայր երկրի մենաշնորհն էր առևտուրի համար և իրաւունք չունէր այլ երկրների հետ առևտրական կապեր ունենալ։

Կօլոնիալ կամ կօլոնիական ապրանք, երապական գաղութներից բերած՝ սուրճ, թէյ, համեմներ, հասարակածային մրգեր և այլն։

Կօլոնիզացիա, պետութեան այն գործողութիւնը, որը ուղղուած է ապաբնակութեան մի մասը կամ խտութեան պատճառով կամ քաղաքական դիտաւորութեամբ գաղթեցնելու և բնակեցնելու երկրի մի այլ մասում (ներքին կ.) կամ այլ տեղ իր կալուածքներում (արտաքին կ.). գաղթառաքութիւն, գաղութումը։

Կօլօնիտա, այլ երկրից եկած և մի երկրում վիրաբնակուած գաղթական։

Կօլօս (յուն.), հակայական մեծութիւն ունեցող արձան. ականջները՝ Հռոդոս կղզում արեւի աստծուն նուիրած 140 ոտք բարձրութիւն ունեցող երկաթէ արձանը։ — Հսկայամարմին մարդ։

Կօլօսալ, վիթխարի, չափազանակ. խիստ մեծ։

Կօլօսեում (լատ.), զարդարանք, դէնուազարուեստ երկի։

Կօլօրիստ, երանգիչ, դէնուազարող։

Կօլօրիտ, երանգ, դէնուագեղութիւն։ — Նկարների չաղազակ ընտրութիւն նկարչութեան մէջ։

Կօկարին, կօկայի տերևներից պատրաստուած մի հիւթ է, որը թմրեցնում է նեարդերը։

Կօկարդ (Փր.). Ժապաւէնից կամ մետաղից պատրաստուած բոլորակ նշան, որ կրում են գլխարկի կամ հագուստի վրա պետական որևէ պաշտօնի կամ մի կազմակերպութեան պատկանելը նշանակելու համար. խորհրդանիշ։ Նշոտա։

Կօկէտ (Փր.), ազամարդկանց դէմ գալ աշխատող կին. պըճնասէր, զարդասէր. կօկէտկա (ռուս.։ — Դիտաւորեալ միամիտ ձևացող։

Կօկս (անգլ.), քարածուխ, որի ջրածինը և թթուածինը հանուած է. գործ է ածւում իրրև վառելանիւթ։

Կօկտիւշ (Փր.), կապուտ հազկապտահազ. երեխաների հիւանդութիւն է, որի ժամանակ հազը վրա-վրա այնպէս է խեղդում, որ երեխայի դէմքը կապտում է և շունչը արգելւում։

Կօկօս (յուն.), հնդկընկոյզ։

Կօկօտ (Փր.), լկատէհ, անառակ կին, պոռնիկ։

Կօմանդիտային ընկերութիւն, անհատական նպատակով կազմուած ընկերութիւն, որի անդամները որոշ քանակութեամբ դրամ են մէջ բերում, բայց իրենք չեն զբաղւում գործերի կառավարութեամբ, այլ այդ յանձնում են պատասխանատու գործավարների, գլխաւորը ընկերութիւն։

Կօմանդիր, հրամանատար զօրամասի։

Կօմանդօ (իտալ.), կօմանդա, որոշ նպատակով ուղարկուած զօրախումբ։ — Հրաման, հրամանատարութիւն։

Կօմանդօր, բարձր շքանշանի տապան։

Կօմբինացիա (լատ.), զուգադրութիւն, համադրութիւն հանգամանքների։ — Խորհրդածութիւն այս և այս պայմանների զուգադրմամբ։

Կօմէդիա (Փր.), կատակերգութիւն, կատակախաղ. թատերական գրուածքների այն տեսակը, որոնց մէջ դուրս են բերուած մարդկային բարքերի ծիծաղելի կողմերը։ Ը. ա Արիստոտէլի կ. վատի և արատաւորի այնպիսի պատկերացումն է, որ ոչ թէ զզուանք, այլ ծիծաղ է առաջ բերում։

Կօմէդիանտ, ծաղրածու. ոչ անկեղծ մարդ։ Շրջիկ դերասան, որ ծաղրալի խաղեր է խաղում։

Կօմէնդանտ (Փր.). բերդապահ բերդապահ զօրքի գլխաւորը։

Կօմէնսուրապլ (լատ.), միևնոյն չափով չափելի։

Կօմէնսալիզմ (լատ.). կենդանիների համակենցաղի մի ձևն է, երբ մէկը միւսի կերակրի մնացորդով է սնւում. տեղատնակցութիւն։

Կօմէնտատօր (լատ.), մեկնիչ, մեկնաբանող, լուսաբանող։ — Կօմէնտար, բացատրութիւն, մեկնութիւն, մեկնաբանութիւն։

Կօմէտ, կօմէտա (յուն.), գլխաւոր աստղ, պետաստղ։

Կօմէքս, ուսանողական խըմբոյթ։

Կօմէրսիան (Փր.), առևտրական, վաճառական։

Կօմէրցիա (լատ.), առևտուր, վաճառականութիւն։ — Կօմէրցիայի սահմանիկ (խորհրդանշան), առաջին գիլդիայի վաճառականի տիտղոս է։

Կօմի (Փր.), գործակատար։ — Կօմի վուայաժօր (Փր.), շրջադայող, ճանապարհորդող գործակատար։

Կօմիզմ (Փր.), ծաղրական, ծիծաղելի մի կողմ մարդի կամ որևէ բանի մէջ։

Կօմիլֆօն (լատ.), դասընկեր համալսարանի. գինակից։

Կօմիֆօ (Փր.), մաքուր, շքեղ կերպարանքով։ Ամեն բան տեղին։

Կօմիկ (Փր.), զվարճան, որ կատարում է ծաղրալի դերեր։ — Կատակասէր, ծիծաղաշարժ մարդ։ — կ., կօմիկական, ծիծաղելի, ծաղրական, ծաղրալի։

Կօմիտատ (Փր.), պատերազմական, լիազօր. ոչ մշտական, առանց դիւանապետական բնոյթի գործակալ արտակարգ կերպով ուղարկուած մի պետութիւնից միւսի մօտ պետական որոշ գործեր՝ առնմանագծային խնդիրներ, հաղորդակցութեան ճանապարհների վերաբերեալ հարցեր, ցուցանմուշէներ և այլն, կարգադրելու համար. օգտւում է անձի և թղթակցութեան անձեռնմխելիութեամբ, բայց պատա չէ նրան ընդունող երկրի արդարադատութիւնից, այսինքն չի օգտւում էքստերրիտորիալիտետով։ Ամենաստիկ մարդ, որին յանձնարարուած է մի գործ կատարել։

Կօմիսիա (Փր.), յանձնաժողով. շատերի կողմից ընտրուած փոքրաթիւ խմբակ, որին յանձնարարուած է որոշ գործ։ — Յանձնարարութիւն. — վարձատրութիւն կատարած յանձնարարութեան համար։ — Կօմիսիական առևտուր, ուրիշի գրամով կամ ուրիշի ապրանքով առևտուր՝ իր ծառայութեան համար վարձատրութիւն (կօմիսիա) ստանալու պայմանով։

Կօմիսիոներ (Փր.), յանձնակատար. առևտրի մէջ այն միջնորդ անձը, որի աշխատն է իր անունով և իր տարերքութեամբ, բայց ուրիշի յանձնարարութեամբ և ուրիշի հաշուին ապրանք կամ արժեթղթեր գնել և վաճառել, կամ ապրանքներ ստանալ և ճանապարհել։ — Մեծ

քաղաքներում վարձակների անկիւններում կանգնած կարմիր պլեարկով բեռնակիրները։ — *Կոմիսիոնէրական վաճառականութիւն*, այնպիսին, որ կոմիսիոնէրների միջոցով է կատարւում։

Կոմիսարի, Տաճկաստանում առում են յեղափոխական կազմակերպութիւնների (կոմիտէների) անդամները։

Կոմիսար, Ունգարիայում շրջան, որ վարչական և մասամբ քաղաքական միութիւն է ներկայացնում։

Կոմիտ, *կոմիտէտ* (ֆր.), մանաւանդ, մանաւոյզ. մեծ ընկերութեան անդամներից ընտրված փոքր խմբակ, որ նախապատրաստում է հարցեր կամ իրագործում որոշումներ։ — *Մինիստրների կոմիտէտ*, նախաճեմանագրական Ռուսաստանում ամենաարժէք պետական հաստատութիւնը, որի իրաւասութեան ենթարկւում էին բարձրագոյն հաստատութիւնք գործերը։

Կոմից, *կոմիցիա* (լատ.), հին Հռոմում՝ քաղաքացիների ժողով պետական հարցերի մասին խորհրդակցելու և վճիռ կայացնելու համար։ Այժմ՝ ընտրողների, ձայնաւորների, պատիւրակների հաւաքումներ։

Կոմունա (ֆր.), համայնք, պետական կամ քաղաքային հաստատութիւն. որևէ տեղում ապրող մարդկանց խմբակցութիւն, որ ունի ընդհանուր սեփականութիւն, նրան կառավարում է ինքը և եկամուտը ծառայեցնում ընդհանուրին։ — *Պարիզի կոմմունա* կոչւում է 1871 թւին Պարիզում կազմած յեղափոխական կառավարութիւնը, որին մասնակից էին բանւորներ և մանր բուրժուաներ ապստամբած այն ժամանակւայ կառավարութեան դէմ. նա իրագործեց մի քանի բարենորոգումներ ժողովրդական ոգով, բայց պարտուեց և ոսկրալի կոտորած կրեց Տիէրիից և Ադոլֆին ժողովի բանակից ոտանակ հազար զոհեր տալով։ — Կ. կոչւում էր նաև 1792 թ. ֆրանսիական յեղափոխութեան անմիջական յաջորդած կառավարութիւնը։

Կոմունալ բաղաբականութիւն առարկան է կոմունան, այսինքն քաղաքային և պետական համայնքը. քաղաքային և պետական ինքնավարութիւններին վերաբերեալ քաղաքականութիւն։

Կոմունար (ֆր.), 1871 թւի Պարիզի կոմունային մասնակցայ։ Տես *կոմունա*։

Կոմունէր կոչւում են Իսպանիայում ղէմոկրատները, ամենավարականները։

Կոմունիզմ (լատ.), համայնականութիւն. համայնակցութիւն. հասարակավարութիւն. նախնական ժողովուրդների մէջ, մասամբ և մեր ժամանակներում, համայնական սեփականատիրութիւն հողի, որ նախորդել է հողի մասնաւոր սեփականատիրութեան։ — Ամենից հասարակական կազմակերպութիւն, որտեղ հողը, կապիտալը և առհասարակ արտադրութեան միջոցները մասնաւոր սեփականութիւն չեն, այլ պատկանում են ընդհանրութեան. որտեղ բոլորի քաղաքական և անհատական հաւասար պարտաւորութիւնների և իրաւունքի հիմքի վրա՝ բոլորի հաւասար աշխատանքով արտադրած անհատական բարիքները բաշխւում են բոլորի մէջ ըստ նրանց կարիքի։ — Աթէի բոլոր ուղղութիւնները և տեսութիւնները, որոնք համամտաբերական կարգեր են քարոզում։ Երբեմն նոյնացնում են սոցիալիզմի հետ։

Կոմունիկացիա (ֆր.), հաղորդակցութիւն ջրային կամ ցամաքային ճանապարհով։ Հաղորդակցութիւն առհասարակ։

Կոմունիկէ (ֆր.), ազդ, հաղորդագրութիւն։

Կոմունիստ, *կոմունիզմի* կողմնակից։ Մանաւորապէս 1847 թւին Լոնդոնի կոմունիստական հայազումարում Կարլ Մարքսի ծրագրի կողմնակիցները։ — *Կոմունիստական Մանիֆէստ*, Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի 1847 թւին Լոնդոնում առաջարկած և համագումարից ընդունված ծրագիրը սոցիալիստական գործունէութեան սկզբունքների և գործելակերպի մասին։

Կոմպակտ (ֆր.), հոծ, կուռ, միաձոյլ։ — *Պայմանագիր*։

Կոմպանիա (ֆր.), ընկերութիւն (առևտրական կամ այլ տեսակի)։ — *Կոմպանիոն*, ընկերակից, գործակից։ — *Կոմպանիոնկա* (ռուս.), տանտիկնոջը ընկերակցութիւն անելու նպատակով տանը ապրող կին։

Կոմպաս (լատ.), կողմնացոյց. գործիք, որը իր մէջ եղած մագնիսի սլաքով ցոյց է տալիս հարաւը և հիւսիսը։

Կոմպատրիօտ, հայրենակից, համերկրացի։

Կոմպարատիվ (լատ.), բաղդատական, համեմատական։

Կոմպէտէնտ (լատ.), իրաւասու. կարծիք յայտնելու իրաւունք ունեցող. կարող. որևէ բան հիմնաւորապէս ճանաչող, գիտցող։

Կոմպէտէնցիա (լատ.), ձեռնհասութիւն, իրաւասութիւն. իշխանութիւն. որևէ պաշտօնեայի կամ պաշտօնական հաստատութեան իրաւունքների և պարտականութիւնների շրջանը, որոնց սահմանում նա միակ գործառողն է։

Կոմպլեկտաւոր, ժամացոյցի մէջ մի յատուկ մաս, որը ընթացքը հաւասարեցնում է։

Կոմպլեկտացիա (լատ.), փոխարինութիւն. համակշռութիւն։ Հաւասարութիւն։

Կոմպլիկացիա (լատ.), դրաթաղութիւն. մի շարադրութիւն, որի նիւթը քաղած է այլևայլ գրքերից և ոչ ինքնուրոյնաբար ուսումնասիրած։ — *Կոմպլիկատոր*, գրաքաղ։

Կոմպլէկտ (լատ.), լրիւ կազմ. ամբողջութիւն։ — *Լրիւ*, անպակաս։ — *Կոմպլէկտացիա*, լրացումն մինչև պահանջած թիւ ամբողջանալը։

Կոմպլէքս (լատ.), մասերից կազմած ամբողջութիւն։ — *Կոմպլէկցիա*, մարդի մարմնական բնական կազմը։

Կոմպլիկացիա (լատ.) բարդացումն, խճճումն. բարդութիւն։

Կոմպլիմէնտ, *կոմպլիման* (ֆր.), հաճոյախօսութիւն. գովեստ հաճոյք պատճառելու նպատակով։

Կոմպլօտ (ֆր.), դաւ, դաւադրութիւն. գաղտնի կազմակերպած հարւած։ *Կոնսպիրացիայից* գանազանւում է իր աւելի խիստ գաղտնապահութեամբ և հարւածի անմիջականութեամբ։

Կոմպրէս (ֆր.), քաթանի կտոր, որ դրւում է վէրքի վրա կամ մարմնի մի հիւանդ տեղը. երբեմն թրջած. ճնշող։

Կոմպրոմիս (լատ.), համաձայնութիւն փոխադարձ զիջումով. Արևմտարհական մարզով գեղջուկն սկզբունքների։

Կոմպօզիտօր, *կոմպօնիստ*

(լատ. Փր.), հրաժշտական եղանակ յորինող, երգահան։

Կօմպոզիցիա, հրաժշտական կտորի շարադրութիւն։ — Բազադրակցութիւն, տարբեր մեւոտոնների և նիւթերի խառնուրդ։ — Մասերի շարակցում։

Կօմպօնիստ տես *կօմպօզիտօր*։

Կօմպօտ, (լատ.), շաքարով եփած մրգերէն կերակուր. մրգապաղամա։

ԿօմՓօթ (Փր.), պահարան բազիաակներէն հատար, որի սրկղնները գետ ու ներս են ձգուում։

ԿօմՓՈՒԼ, Անգլիայում հանգանքների ժողովի անդամ։

ԿօմՓօրտ (անգլ.), ապրելու յարմարութիւն. կեանքի լաւ ընթացքի համար բնակարանային և այլ յարմարութիւններ։ — *ԿօմՓօրտաբլ*, յարմար, հանգիստ։

Կօնսակ (թուրք.), կառավարչական բարձր պաշտօնեայի բնակարան Թիւրքիայում։ — Սերբիական թագաւորական պալատ։ — Պալատ։ Վարչատուն։

Կօնգլօմէրատ (լատ.), այլ և այլ տեսակ քարերի բեկորներից կազմած և մի շաղախով իրար միացած քարակոյտ։ — *Կօնգլօմէրացիա*, այլևայլ մասերից կազմած մի մարմին։

Կօնգրէ տես *կինգրէս*։

Կօնգրէգատ, շիղջակոյտ. աչ բիւրեղեայ քար, որի մասերը շատ թոյլ են միացած իրար հետ։

Կօնգրէգացիա (լատ.), վանական միաբանութիւն. կուսակրօնների ուխտ։ Կաթոլիկ վանական միաբանութիւն։ — Կարգինալական վարչութեան բաժանումները Հռոմում։

Կօնգրէս, *կօնգրէ* (լատ.), հանդիպումը, վեհաժողով. միջազգային համագումար թագաւորների կամ նրանց մինիստրների, որ նպատակ ունի խորհրդակցել և վճիռ կայացնել խաղաղութեան պայմանների մասին, կնքած խաղաղութեան արդիւնքները որոշել, կամ միջազգային անկախ հարցեր լուծել ձայների հաւասար իրաւունքով և մեծամասնութեամբ։ (Սրանք կոչւում են երբեմն նաև *կօնֆէրէնսներ*)։ — Գիտութեան այլևայլ ճիւղերի ներկայացուցիչների համագումար գիտական որևէ հարցի մասին խորհրդակցելու և վճիռ կայացնելու նպատակով։ — Կուսակցական ներկայացուցիչների համագումար ծրագրային, գործնականական կամ հաշուեւսական նպատակներով։ — Միացեալ Նահանգների Ֆրանսիական պարլամենտի երկու պալատների, պատգամաւորների և սենատի, որ անգի է ունենում հանրապետութեան նախագահի ընտրութեան և սահմանադրութեան փոփոխութեան կարիքի դէպքում։ — Ամերիկայի Միացեալ Նահանգների օրէնսդրական ժողով։

Կօնդիտէր (լատ.), շաքարացրութիւն. քաղցրաւէնիներ պատրաստող։

Կօնդիցիա (լատ.), պայման. վիճակ։ — Առաջարկ։

Կօնդուկտօր (Փր.), վարիչ ձիաքարշի, էլէքտրաքարշի և այլն։ — Վերակացու, վերահսկող ճանապարհի, շինութեան և այլն։

Կօնդօսիէրի (իտալ.), սկզբում Իտալիայում, ապա և այլ երկրներում, միջնադարեան վարձու զօրաբանակի հրամանատար, որ ծառայում էր այս կամ այն իշխանին։

Կօնդօր (իսպ.), վարագաւոր ամենամեծ թռչունը։

Կօննակ (Փր.), պինուց քաշած լաւ տեսակի օղի։

Կօնգամ... տես *կօնսում*...

Կօնկատալ (Փր. հայ պատմագիրները գրում են *գոնդատալ*), սպարապետ, զօրքերի հրամանատար միջնադարեան Ֆրանսիայում։ 1627 թ. Լուդովիկոս XIII վերացրեց այդ պաշտօնը։

Կօնկէրա (լատ.), կապակցութիւն։

Կօնկիւնկտուր (լատ.), հանգամանքների դասաւորութիւն, որ ներգործում է անհատական կամ քաղաքական կեանքի այս կամ այն ընթացքի վրա։ — Հանգամանքներ։

Կօնկա (ռուս.), ձիաքարշ. ձիաքարշ երկաթուղի քաղաքում կամ հաստատութեան համար։

Կօնկիստ (լատ.), նոր պապ ընտրելու համար ժողովը կարդինալների, որոնց փակում են բանալիով Վատիկանի մի սենեակում, մինչև նրանք մէկի վրա համաձայնութեան են գալիս։

Կօնկուբինատ (լատ.), հարճութիւն, կենակցութիւն առանց եկեղեցական կամ քաղաքացիական արարողութեան։ — *Կօնկուբին*, հարճ։

Կօնկուբինտ, մրցակից, հաւակնորդ. նա, որ ձգտում է ուրիշների հետ միևնոյն նպատակին և աշխատում է նրանց վերաբերմամբ գերակշռութիւն ձեռք բերել։

Կօնկուբինցիա, *կօնկուբինց*, *կօնկիւբանս* (Փր.), մրցութիւն. ձգտումն երկու կամ աւելի անհատների մէջ աւելի շուտ հասնելու միևնոյն նպատակին։ Տնտեսական կ., ձգտումն աւելի լաւ ապրանք աւելի ժամն վաճառել։

Կօնկուրս (լատ.), վճարման անկարող, անանկ պարտապանի կարողութեան բաշխումը պարտատէրերի մէջ իւրաքանչիւրի պարտքի քանակի համեմատութեամբ։ — Մրցութիւն։

Կօնկրէտ (լատ.), թանձրացեալ։ Մի հատկացողութիւն, որ ընդգրկում է միայն մի բան։ Հակառակը՝ *աբստրակտ*, վերացական։ — Զգայարանքներին մատչելի։ Իրապէս գոյութիւն ունեցող։

Կօնկրէտաներ կոչւում են այն հոգեբանները, որոնք ընդունում են, որ հոգին և մարմինը միացած են։

Կօնկօրդատ (լատ.), պայմանագրութիւն կաթոլիկ եկեղեցու պետի և որևէ կաթոլիկ պետութեան մէջ, որով նրանց փոխադարձ յարաբերութիւնն է սահմանում և որոշում է եկեղեցու իրաւասութեան սահմանները պետութեան մէջ։

Կօնկօրդիա (լատ.), համերաշխութեան սուսածուհին հին Հռոմում։ — Համերաշխութիւն։

Կօնուս, *կօն* (լատ.), երկրաչափական մարմին, մօտաւորապէս շաքարի գլխի ձևով, որը կրկագմբ, եթէ մի ուղղանկիւն եռանկիւնի պտտեցնենք իր շուրջը իրրև առանցք առնելով նրա կաթէտներից մէկը։ — Կոնաձև, կօնուսի ձև ունեցող։

Կօնսէկուտիվ (լատ.), յաջորդ։

Կօնսէկվէնտ (լատ.), հետևողական։

Կօնսէկվէնց, տրամաբանական հետևողութիւն, հետևանք։

Կօնսէրը (լատ.), պահածոյ ուտեստ. մսեղէն, բուսեղէն կամ մրգեղէն այն կերպ պատրաստած, որ նրանք երկար պահւում են առանց փչանալու։

Կօնսէրւատիզմ (լատ.), պահպանողական աշխարհայեցո-

քը, որի արտայայտութիւններն են՝ քաղաքական կազմի համար բացարձակ միապետութիւն. հասարակական միայն որոշ շերտերի, գլխաւորաբար ազնուականութեան, զեկավարութիւնը պետական գործերում, դասակարգութեան մէջ կրօնական ոգի, եկեղեցու ազդեցութիւնը ժողովրդի և պետութեան վրա. արդիական կեանքում՝ կալւածատէրերի և առհասարակ գործատուների գերագասութիւնը գիւղացիներից և գործաւորներից. վարչութեան մէջ՝ ոստիկանութեան և պաշտօնէութեան բարձր հեղինակութիւնը ժողովրդի համար և այլն։

Կօնսէրւատիվ, պահպանողական (ածական)։ Պահպանողական (գոյական)։

Կօնսէրւատօր (լատ.), պահպանողական. մարդ, որ ձգտում է պահպանել գոյութիւն ունեցող քաղաքական և ընկերական կարգերը, եթէ դրանք համապատասխանում են կօնսէրւատիւ աշխարհայեացքին, կամ վերականգնել հինը, որը իր աշխարհայեացքին համապատասխան է։

Կօնսէրւատօրիա (լատ.), *կօնսէրւատուար* (ֆր.), երաժշտութեան բարձրագոյն դպրոց. հրաժշտանոց։

Կօնսիէրժ (ֆր.), դռնապան։

Կօնսիլիում (լատ.), բժիշկների խորհուրդ հիւանդութիւնը որոշելու համար։

Կօնսիստորիա (լատ.), հոգեւոր կառավարութիւն. թեմական կամ վիճակային առաջնորդի դիւանը, նաև հայոց եկեղեցական վարչութեան մէջ։ —Կաթոլիկ եկեղեցում՝ պապի նախագահութեամբ գումարուող կարդինալների խորհուրդը, որ լինում է գաղտնի կամ հրապարակային, նայած քննուող խնդիրներին։ — Բողոքականների մօտ՝ եկեղեցականներից և աշխարհականներից կազմված հոգարարձութիւն, որ վարում է եկեղեցու գործերը։

Կօնսում (լատ.), հիւպատոսարաքին գործոց մինիստրութեան պաշտօնեայ, որ ապրում է որոշ առհասարակ առևտրական վէնտրոններում և պարտաւորութիւն ունի պաշտպանել իւր երկրի քաղաքացիներին արտասահմանում, հովանաւորել, հետաքրքրել և ընդարձակել վաճառականութիւնը իւր երկրի և այն երկրի մէջ, ուր ինքը նշանակած է իբրև պաշտօնեայ. ունի դատաւորական իրաւունքներ իւր քաղաքացիների վերա, որոնք ապրում են կօնսուլի բնակած երկրում, քննում է նրանց վէճերը իրար հետ և արտասահմանցիների հետ։

Կօնսուլատ (լատ.), հիւպատոսարան. այն հաստատութիւնը և շէնքը, ուր գտնւում է կօնսուլը իր պաշտօնեաներով և դիւանով և որտեղ սովորաբար նա ապրում է։

Կօնսուլատս, պետական խորհուրդը Իտալիայում։ — Մինիստրների խորհուրդը Իտալիայում։

Կօնսուլտանտ (լատ.), խորհրդատու իրաւագէտ։ — Բժշկական խորհրդի մէջ (կօնսիլիում, կօնսուլտացիա) մասնակցող բժիշկ։

Կօնսուլտացիա (լատ.), մասնագէտների խորհրդակցութիւն։ — Բժիշկների խորհուրդ ծանր հիւանդութեան դէպքում։

Կօնսում, ապառուծ։ — *կօնսումէնտ*, ապառող. որևէ սակի ապրանքի գնող, գործածող։

Կօնսումացիա, *կօնսումասիօն* (ֆր.), *կօնզումացիօն*, ապառուծ. անտեսական բարիքների ոչնչացումը գործածութիւնը նպատակայարմար կերպով և աննպատակ վչսացնելը։

Կօնսպէկտ (լատ.), մի շարադրութեան բովանդակութեան համառօտութիւնը. հայեաց։

Կօնսպիրանտ կամ *կօնսպիրատօր* (լատ.), դաւադիր։ — *Կօնսպիրատիվ*, դաւադրական, դաւանի։

Կօնսպիրացիա (լատ.), դաւադրութիւն. գաղտնի որոշում մի քանի մարդկանց մէջ՝ փոխելու պետութեան կառավարութեան ձևը մահափորձ կատարելով թագաւորի դէմ։ Գաղտնապահութիւն։

Կօնստանտ (լատ.), մնայուն, անփոփոխելի։ Կայուն։ — *Կօնստանց*, մնայունութիւն։

Կօնստէբլ (անգլ.), ոստիկանական պաշտօնեայ Անգլիայում, որ միաժամանակ և՛ կարգապահութեան է հսկում և քաղաքային վարչութեան է ծառայում։ — Քաղաքապահ։

Կօնստէլլացիա (լատ.), աստեղախումբ. համաստեղութիւն։ — Առաջերի դիրքը դէպի միմեանց և նրանց իրը ներգործութիւնը մարդկային վիճակի վրա։

Կօնստիտիւանտ (ֆր.), սահմանադիր ժողով. 1789 թւի յեղափոխութեան ժամանակի ազգանունը ֆրանսիական ազգային ժողովի, որը մշակեց պետութեան սահմանադրական հիմնական օրէնքները։ — Առհասարակ մի ներկայացուցչական ժողով, որը սահմանադրական կարգեր է հաստատում։

Կօնստիտուտիվ (լատ.) էական. որոշ. փաստական։

Կօնստիտուցիա (լատ.), *կօնստիտուսիօն* (ֆր.), սահմանադրութիւն։ Մի պետութեան այն հիմնական օրէնքը, որով որոշում է նրա կազմակերպութեան եղանակը այն ուղղութեամբ, որ անպատասխանատու միապետի բացարձակ իշխանութիւնը սահմանափակելու համար գոյութիւն ունի և ժողովրդից ընտրուած ներկայացուցիչների ժողով օրէնսդրական իրաւունքներով. կ. որոշում է ժողովրդի ներկայացուցիչների և միապետի փոխադարձ իրաւունքների և պարտաւորութիւնների սահմանը, քաղաքացիների իրաւունքները։ — Որևէ պետութեան կազմակերպութիւնը առհասարակ։ Կազմ, կազմութիւն։ *Մարմնադրմ.*

Կօնստիտուցիօնալ դէմօկրատ կուսակցութիւն, տես կադէտական կ.։

Կօնստիտուցիօնալիզմ, սահմանադրականութիւն. սահմանադրական սկզբունքների վրա հիմնուած պետական կազմ. այդ ուղղութեամբ վարդապետութիւն։

Կօնստիտուցիօնել, սահմանադրական։

Կօնստրուկցիա (լատ.), շինուածք, կառուցուածք. ձևակերտութիւն։

Կօնսոլ (ֆր.), պատի կամ վառարանի վրա դուրս պրծած զարդարուն երիզ, որի վրա զարդարանքներ և լամպեր են դնում։ — Շարժական պատուդան կամ սիւն սենեակում. ջահակալ — երբեմն այդպես ազատազատում է և կօնսոլ բառը։

Կօնսօլիդացիա (լատ.), պետութեան կամ համայնքի զանազանատեսակ պարտքերի մի տեսակի վերածումը գործավարութեան հեշտացման և պարզացման, տոկոսային տարբերութիւնների վերացման և նոյ-

նացման, վճարման գործը հեշտացնելու, վճարման ժամանակը յետաձգելու և այլ նպատակով։

Կոնասմէ (ֆր.), հիթհոդ մասյաւր, ուժարպանակ։

Կոնասիոնալ (ֆր.), ներքաշնակութիւն ամրոյթ կազմելու համար։

Կոնատակա (լատ.), կցորդութիւն, շփումն. հաղորդակցութիւն։

Կոնատէս (ֆր.), կամաւոր։

Կոնտինգէնտ (լատ.), լրիւ կամ ամբողջական ներկայութիւն (պաշտօնեաների, զօրքի և այլն)։ — Մօտիկ, հարևան (տեսակի տարաբաժանում)։

Կոնտինուէլ (ֆր.), տևական. շարունակական։

Կոնտինուիտէտ, տևականութիւն, մշտականութիւն։

Կոնտինուէնտ (ֆր.), մայր ցամաք։

Կոնտինէնտալ, մայր ցամաքին (ոչ կղզիներին) վերաբերեալ։ Յամաքային։

Կոնտուր (ֆր.), մի առարկայի եզերքի գծերից կազմած նըկար. ծրանկար։

Կոնտր մաներկը բառերի բակըզրում նշանակում է հակառակ, ընդդէմ և թարգմանւում է հայերէն հակ, հակա մասնիկներով. օր. *կոնտրմանիֆեստացիա*, հակացոյց. *կոնտրրէվոլիւցիա*, հակայեղափոխութիւն։

Կոնտրաբանդ (ֆր.) մաքսանենգած ապրանք. գաղտնի կերպով ասմանը անցկացրած այնպիսի ապրանքներ, որոնց ներմուծումը և արտահանութիւնը արգելած է. երբեմն գաղտնի են անցկացնում մաքս վճարելուց ազատ ճանապարհ համար։ — Գաղտնի անցկացնելը արգելւած ապրանքների։ — Գաղտնապրմական։ *Կոնտրաբանդիստ*, գաղտնի ապրանքներ փոխադրող։

Կոնտրաբաս (ֆր.), ամենամեծ ջութակը, որ ամենացածր ձայնն է հանում. հակաբամ։

Կոնտրադիկցիա (լատ.), հակասութիւն, հակիմաստութիւն։

Կոնտր-ադմիրալ, նաւատորմիղային զօրքի բարձր սպայական մի աստիճան է. ենթածովակալ։

Կոնտրալտօ (իտալ.), կանացի ցածր ձայն. վերբամ, թաւ ձայն։ — երգչուհի, որ այդպիսի ձայն ունի։

Կոնտրակտ (լատ.), պայմանագիր. գաշն։

Կոնտրահէնտ, պայմանագիր կապող անձը. գաշնագիր։

Կոնտրասարկա, մի նշան, որ ժամանակաւորապէս դուրս է մի առարկայ փոխարինելու համար։

Կոնտրաստ (լատ.), հակադրութիւն. ներհակութիւն. հակադրումն երկու գաղափարների, որոնք նպաստում են լիմաստ պարզելուն։

Կոնտրպունտ (ֆր.), կամ ֆրանսիական կաղիլ, մի պար է, որի մէջ չորս զոյգ խաչաձև կանգնում են և պարում։

Կոնտրիբուցիա (ֆր.), պատերազմական տուգանք զրամական վճար, որ պատերազմի մէջ պարտած կողմը անում է յաղթողին։ — Յատուկ հարկեր մըշտական զօրքը պահպանելու համար։ — Ֆրանսիայում՝ հարկ։

Կոնտրիւֆիգիտ (ֆր.), փոխայգեվութիւն. փոխայգ։

Կոնտրրէվոլիւցիա (ֆր.), հակայեղափոխութիւն։

Կոնտրոլ (ֆր.), տուգանք, վերահսկողութիւն. համաձայնութիւն, հաշվեհսկողութիւն — *կոնտրօլիօր*, տուգող, համաձայնու, հաշվեհս։

Կոնտրօվէրզ (լատ., իտալ. ֆր.), դիտական վէճ. բանավէճ։ — *Կոնտրօվերզիստ*, բանավիճող։ Կրօնական խնդիրների մասին վիճաբանող։

Կոնտո-կուրանտ (իտալ. ֆր.), ընթացիկ հաշիւ. բանկում կամ մի այլ հիմնարկութեան մէջ մի անձի դրամական մուտքի և ելքի հաշիւը։

Կոնտօր և այլն տես գործածական ձևը՝ *կանտօր*...

Կոնցէնտրացիա (ֆր.), համակենտրոնացում։ — *Կոնցէնտրիկ*, համակենտրոն. շրջաններ, որոնք ունեն տարբեր մեծութիւն, բայց միևնոյն կենտրոնը։

Կոնցէպտ (լատ.), հասկացողութիւն. միտք։ — Ուրուագիծ մի գրաւոր աշխատանքի։

Կոնցէպտուալիզմ (լատ.), միջնադարեան փիլիսոփայութեան մէջ մի ուղղութիւն էր, Թոմաս Ակվինացու պաշտպանած (1225—1274), որը ընդհանուր պատկերացումների վէճի մէջ, հակառակ նոմինալիզմի, պնդում էր, որ դրանք գոյութիւն ունեն։

Կոնցէպցիա (լատ.), ըմբռնողութեան եղանակ։ — Յղացումն։

Կոնցէսիա (լատ.), արտօնութիւն, արտօնագրութիւն. կառավարութեան շնորհած բացառիկ իրաւունքը մի ձեռնարկութեան համար։ — *Կոնցէսիօներ*, այդպիսի արտօնագրերը։

Կոնցէրտ (լատ.), համերգ, նւագահանդէս. նւագածութիւն կամ երգեցողութիւն հրապարակով, հասարակութեան համար։ — Երաժշտական մի կտոր, որ գրած է մի գործիքի համար, որին ձայնակցում է երաժշտական խումբը։ — Ներազգային *կոնցէրտ* կոչւում է երկրագործական վեց մեծ պետութիւնների (Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, Ռուսաստան, Աւստրօ-Ունգարիա և Իտալիա) փոխադարձ յարաբերութիւնը, որը երբեմն ներպաշնակ է, երբեմն ոչ։

Կոնցէրտանտ, համերգում կամ համանւագում մասնակցող անձը։ *Կոնցէրտ տւողը*։

Կոնցէրտիստ, *կոնցէրտ կոչւած* երաժշտական կտոր հեղինակող։

Կոնցիլ (լատ.), կաթոլիկ և պիսկոպոսների ժողովը պապի հետ միասին և նրա դեկավարութեամբ. կամ մի շրջանի եպիսկոպոսների ժողովը եկեղեցական խնդիրների քննութեան և վճռելու նպատակով։ — Եկեղեցական ժողով։

Կոնսէնսո (լատ.), ազգային ժողովը ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ, ընտրւեց 1792 թ. Նոյն թւի սեպտ. 21-ին յայտարարեց միապետութիւնը վերացած և հաստատեց հանրապետութիւն, իր մէջ միացընում էր օրէնսդրական և

կատարողական իշխանութիւնները. խիստ միջոցներ ձեռք առաւ բոլոր հակահանրապետական-ականների դէմ, մղեց մի շարք պատերազմներ արտաքին թշնամիների դէմ. իր գործունէութիւնը շարունակից մինչև 1795 թ. հոկտ. 26։ — Առհասարակ ազգային ժողով։ — Կուսակրօն հոգևորականութեան ժողով վանքում։ — Վանք, վանական միաբանութիւն։

Կոնվենցիա (լատ.), համաձայնութիւն, պայմանագիր պետութիւնների մէջ, որը նպատակ ունի կանոնաւորել մի որևէ հարց, հակառակ տրակտատի, որը բազմաթիւ հարցեր է կանոնաւորում։

Կոնվերսացիոն (ֆր.), զրոյց, խօսակցութիւն։

Կոնվերսիա (լատ.), փոփոխութիւն պարտքի պայմանների մէջ, որը պետութիւնը, իրրև պարտապան, անում է իր պարտապանների դիմաց իջեցնելով տոկոսը և պահանջելով վճարելի տոկոսի քանակը։

Կոնվերտա (ֆր.), նամակածրար, պահարան։

Կոնվուլսիա (լատ.), ջղաձգութիւն։—*Կոնվուլսիվ*, ջղաձգօրէն.

Կոնվոկացիա (լատ.), կոչ։

Կոնվոյ (ֆր.), ուղեկցող պահակ. զինուած պահպանութիւն, որ ուղեկցում է մի բանի։

Կոնֆեդերացիա (լատ.), դաշնակցական պետութիւն. օրինակ՝ Շուէյցարիան։ Տես *Ֆեդերացիա*։ — Հին Լեհաստանում՝ ազնուականների համագումարներ թագաւորի ընտրութեան ժամանակ։ — Աշխատանքի կ. կամ Աշխատանքի ընդհանուր Համաձայնակցութիւն, Ֆրանսիայում այն հաստատութիւնը, որի մէջ միանում են բոլոր արհեստակցական դաշնակցութիւնները (ֆեդերացիաները) և արհեստակցական միութիւնները, իր մէջ կենտրոնացնում է բոլոր անկուսակցական բանուորութիւնը, որ պայքարում է իր ազատագրութեան համար։

Կոնֆլիկտ, կոնֆլետ (լատ.), բազդրաւէնք։

Կոնֆլիկցիա (լատ.), պատրաստի հագուստի և սպիտակեղէնի վաճառք։

Կոնֆլիսիոն (լատ.), գաւանութիւն. խոստովանութիւն։

Կոնֆլսի նէլ, գաւանական։ — *Կ. գպրոցներ*, որտեղ աշակերտները տեղաւորւում են քահանայական գաւանութեան. գաւանանդութիւնը կրօնական ոգի ունի։

Կոնֆլսի նապիզմ, ուսմունք, որը ընդունում է կրօնի կախումը որևէ գաւանանքից։

Կոնֆլտի (լատ.), դիմակահանդէսների և բարեկենդանի զարմանութիւնների ժամանակ գործածական մանր գնդակներ կաւճից և այլ նիւթերից կամ թղթէ մանր շրջաններ, որոնց իրար վրա են գցում։

Կոնֆեդերէնց, կոնֆեդերէնցիա, կոնֆեդերանս (ֆր.), խորհրդակցութիւն. համագումար. դեսպանաժողով։ Այլ և այլ պետութիւնների ներկայացուցիչների խորհրդակցութիւն քաղաքական հարցերի շուրջը։ — Դիւանագէտների խորհրդակցութիւն։ — Մասնակի խորհրդակցութիւններ *կոնգրէսի* անդամների մէջ։ — *Կոնգրէս* և *կոնֆերէնց* հասկացողութիւնները իսկապէս չունեն խիստ գծագրած սահմաններ. *կոնգրէս* կոչւում են սովորաբար այն համագումարները և խորհրդակցութիւնները, որոնց մասնակցում են թագաւորներ կամ նրանց ներկայացուցիչներ և որտեղ տեղանի վրա են մնծ քաղաքական հարցեր, իսկ *կոնֆերանսներ* նրանք են, ուր ուղարկւում են պետութիւնների կողմից *կոմիսարներ*, որոնց վարչական և տեխնիկական հարցեր են խորհրդակցութեան առարկայ. *կոնֆերանսները* երբեմն գումարւում են *կոնգրէսների* համար նախապատրաստական աշխատանքներ կատարելու նպատակով. կամ փոխարինելու համար կուսակցական *կոնգրէսները*, որոնց այս կամ այն պատճառով չեղումարելու դէպքում։ Տես նաև *կոնգրես*։ — Հրապարակական գաւախօսութիւն, բանախօսութիւն։

Կոնֆիդենցիալ (լատ.), գաղտնապահական. ծածուկ։

Կոնֆիսկացիա (լատ.), գրաւումն յարգունս. մեկի ունեցածքի գրաւումը յօգուտ պետական գանձարանի կամ գաւառանի վճռով կամ վարչական կարգադրութեամբ։

Կոնֆիրմացիա (լատ.), արևմտեան եկեղեցիների սովորութիւնը 14 — 16 տարեկան պղջիկներին և տղաներին հոգևորականի մօտ կրօնապէս նախապատրաստել առաջին հաղորդութեան համար։ — Բարձրագոյն հաստատութիւն գաւառանական վճռի։

Կոնֆլիկտ (լատ.), ընդհարում, միջադէպ։ — Վարչական իշխանութեան միջամտութիւնը գաւառանական իշխանութեան գործավարութեան մէջ երբ վերջինս հանում է գաւի ենթարկել մի պետական կամ քաղաքական պաշտօնեայի։ — Ընդհարում երկու պաշտօնական հաստատութիւնների, երկու պետութեան մէջ իրրև հանգանք այն բանի, որ մեկը միւսի իրասութեան — *կոմպետենցի* — սահմանն է թեւակոխել։

Կոնֆուզ (լատ.), շփոթութիւն։

Խառն. ամօթապարտ։ — *Կոնֆուզիոն* (ֆր.), ամօթանք, շփոթութիւն։

Կոշմար (ֆր.), մղձաւանջ. խառնակ երազներով ծանր քուն. երազում թուում է, թէ մի բան կուրծքը ճնշում է և խեղդում. առաջանում է յաճախ մի ճնշումից ջնած ժամանակ և ստամոքսի լիքը լինելուց։

Կոպէկ (ռուս.), ռուսաց դրամի ամենափոքր միութիւնը 2,66 ռանտիի։ — *Կապէյնիշնիկ*, կոպէկի եռակից ընկնող, մի կոպէկի համար հագի ուտող մարդ։

Կոպիա (ֆր.), պատճէն, ընդօրինակութիւն։ — *Կոպիստ*. ընդօրինակող։

Կօչա տես խօչա։

Կօտ տես բէգաու։

Կոամէտիկա (յուն.), գեղադէղ. մարմնի և երեսի թարմութիւնը և գեղեցկութիւնը պահպանող գեղեր։ — Գեղադեղագործութիւն։

Կոամիկական, տիեզերական։

Կոամօգէնիա (յուն.), ուսմունք տիեզերքի ծագման մասին։

Կոամօգրաֆիա տիեզերագրութիւն. գիտութիւն տիեզերքի մարմինների չափմանց և նրանց առաջ բերած երևոյթների մասին։

Կոամօմէիզմ (յուն.), տիեզերաստուածութիւն. ուսմունք, որը աստուածութիւնը և տիեզերքը նոյնացնում է։

Կոամօմէօզմի, ուսմունք, որը ցանկանում է Աստծու գոյութիւնը ապացուցած լինել հենց նրանով, որ տիեզերքը գոյութիւն ունի։

Կոամօկրատ, տիեզերական մի թագաւորութիւն հիմնելու մասին երազող։

Կոամօլօգիա, տիեզերաբանութիւն. գիտութիւն տիեզերքի

կառավարող օրէնքների մասին։

Կօսմօպօլիա (յուն.), աշխարհաքաղաքացի։ — *Կօսմոպօլիտիզմ*, աշխարհաքաղաքացիութիւն, համաշխարհայնութիւն. մի հայեացք է, որը սովորական հայրենասիրութիւնը շատ նեղ դգացմունք համարելով ձգտում է ընդգրկել իր սիրոյ մէջ ամբողջ տիեզերքը և իր հայրենիքն է համարում ամբողջ տիեզերքը և ոչ թէ մի երկիր։

Կօսմօս (յուն.), տիեզերք. ամբողջ աշխարհը բոլոր երկնային մարմիններով։

Կօսմօգրէֆ (յուն.), երկնագունդ։

Կօսակ, կաթոլիկ եկեղեցի, ազօթատուն։

Կօսիմ (Ֆր.), հագուստ։

Կօսիկ (ռուս.), ծովաբոյծ մոլթի։

Կօսիլիօն (Ֆր.), ֆրանսիական մի պար է։

Կօսլէտ (Ֆր.), տապակած կոտրամիս։

Կօրալ (յուն.), բուսա՞ն, մարջան.

Կօրան, ալ-կօրան, դուտան (արաբ.), մահմեդականների սրբազան գիրքը, որ պարունակում է իր մէջ Մահմէդի կեանքը և քարոզութիւնը. կրօնական և օրէնսգիրք է, ըստ աւանդութեան դէռ աշխարհի սկզբից պահած էր Աբրահամը երկնքում և 611 թ. ք. յ. Վարբել հրեշտակապետի ձեռքով յանձնել է Մահմէդին. իրապէս նրան կազմել են Օմարը և Աբուբեքրը, իսկ հրատարակել է Օսման Խալիֆը։

Կօրբէյ (Ֆր.), կողով։ Եւրոպական պարի մէջ մի ձև, երբ կանայք և տղամարդիկ մէջէմէջ ձեռք ձեռքի հիւսած կողովաձև շղթան են կազմում։

Կօրէկթալէտ (Ֆր.), բոլոր պարտ կանայք և տղամարդիկ, որոնք բալէտում առանձին դեր չեն կատարում և պարում են խմբով։

Կօրպէզարպիա (Ֆր.), պահպանի պիտոյքների կեցութեան համար շէնք։

Կօրպէլիէրների կրօն, Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ իր նիւթերը Պարիզի կօրպէլիէրների վանքում կայացնող մի կուսակցութիւն էր, որի անդամները պաշտում էին ամենածայրայեղ յեղափոխական հայեացքներ և առաջադրեցին ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն նշանաբանը։

Կօրպիտ, սրտապին, կաթոպին։

Կօրսէն (Ֆր.), գօրաշղթայ. շարքով գաստիարակած պահակների փոքրիկ խմբեր։

Կօռէսպօնդ (լատ.), յարաբերական հասկացողութիւններ. այնպիսիք, որոնք մէկը առանց միւսի չեն մտածուում. օրինակ՝ մարդ և կին, հոգի և մարմին, պատճառ և հետևանք։

Կօռէսպօնդիվ, յարաբերական։ *Փոխյարաբերութիւն* կամ *կօրէսպօնդենցիա*։

Կօռէկտ (լատ.), ճշգրիտ, անսխալ. շիտակ։ — *Կօրէկտիվ*, ուղղութիւն։ — *Կօրէկտոր*, սրբագրութիւն տպարանական շարածքի։ — *Կօրէկտօր*, սրբագրիչ։

Կօրէկտօվնէնտ (լատ.), թղթակից, նամակագիր։ — *Կօրէկտօվնէնցիա*, թղթակցութիւն, նամակագրութիւն. նամականի։

Կօրէֆէրէնտ (լատ., գեկուցակից-գլխաւոր գեկուցանողի մաքերը մի այլ կողմից լուսաբանող. նրան լրացնող։

Կօրիմօր (Ֆր.), միջանցք, նրբանցք։

Կօրիֆէյ (յուն.), ամենաառաջնակարգ ներկայացուցիչ դաբեւսի և գիտութեան որևէ ճիւղի. պարագլուխ։

Կօրնէտ (Ֆր.), հնձելազօրքի սպայի ցածր աստիճան։ — *Կ. կամ կօրնէտուպիտօն*, եղջիւր նապղու դրծիք։ — *Կօրնէտիստ* կօրնէտ նւագող։

Կօրնէժական սին, յատնական ճարտարապետութեան երբորդ շրջանի (առաջինը դօրիական, երկրորդը յօնիական) համար բնորոշող սիւն, որի պուլթը զարդարւած է քանդակած տերևներով ծաղկի պսակի ձևով։

Կօրուպցիա (լատ.), ապականութիւն. փչացումն բարքերի։ — *Կաշառատուութիւն*։

Կօրպորէնցիա (լատ.), մարմնեղութիւն, միրութիւն։

Կօրպուս (լատ.) կոչւում են մի շարք օրէնսգրքեր. օր. *կօրպուս իւրիս*, Յուստինիանոս կայսրի կօդէքսներից կազմած օրէնսգիրքը։

Կօրպուս (լատ.). մարմին, իւրան։ — *Զօրարաժին*, որի մէջ մտնում են հետևակ, ձիաւոր և թնդանօթաձիգ զօրք 30—50 հազար հոգի։ — *Որևէ հիմնարկութեան պաշտօնէութիւնը*։ — *Տպարանական խոշոր տառեր*։ — *Տեղնան կազէտների կօրպուս*։

Կօրպօրացիա (լատ.), միևնոյն արհեստը կամ միևնոյն կոչումը ունեցող անձնաւորութիւնների միութիւն որևէ տեղում կամ երկրում, որի անդամները կապած են իրար հետ փոխադարձ պարտաւորութիւններով և իրաւունքներով. սրանք ունին երբեմն և որոշ արտօնութիւններ. օրինակ հարքարութիւնները, իրաւաբանների, բժիշկների կօրպօրացիա և այլն։

Կօրսաժ (Ֆր.), կանանց հագուստի վերին մասը մինչև գօտին առանց թևքերի. լանջագեստ նաև վիֆ։

Կօրսակ (ռուս.), ազէսի մի տեսակը Քանկապին մորթով Ռուսաստանում և Սիբիրում։

Գօրսար (իտալ.), ծովահէն։ Ծովային աւազակութեամբ պարապող նաւ։

Կօրսէտ (Ֆր.), կանանց հագուստի մի մասը, որը իրանը գոտուի մի մասը և նրան բարեձև տեղում է և նրան բարեձև կերպարանք է տալիս. տեղիքան։

Գօրսօ (իտալ.), դրամական միութիւնների ընթացիկ արժէքը, նոյնը կուրս։ — Իտալական շատ քաղաքների պետական փողոցի անունը. այդտեղից՝ կառքերով զբոսանք այդ փողոցներում, կամ քաղաքից դուրս։

Կօրտէժ (Ֆր.), թափօր, շքախումբ. յուզարկաւորութիւն։

Կօրտէնները (իտալ.), դասական ժողովները Իտալիայում և Փորթուգալիայում։ — Իտալական և փօրթուգալական ժողովրդական ներկայացուցչութիւնները, պարլամէնտները։

Կօօպէրատիվ, գործակցական։

Կօօպէրատօր, գործակից, կօօպէրացիայի մէջ մասնակցող։

Կօօպէրացիա (լատ.), կօօպէրատիվ ընկերութիւն, կօօպերատիվ տիպեր, ընկերակցութիւններ — սոցիալիների — մի տեսակն է, բանւորների գործակցութիւններ, որոնք նպատակ ունին արտադրել առանց կապիտալիստի միջամտութեան ընկերական ճանապարհով կամ հոգալ իրենց անդամների սպառողական կարիքները առանց միջնորդ-վաճառականի, ուղղակի արտադրողից գնելով և իրենց անդամ-սպառողին ուղղակի վաճառելով։ Գործակցութիւն։

Կօպատացիա (լատ.), ինքնալրացում. մի հաւաքական մարմնի պակասած անդամների փո-

խարէն մեռցած անգամների ձեռքով նրանց հրաւիրումը և կազմի լրացումը։

Կոօրդինատներ, համակարգեալ գծեր երկրաչափութեան մէջ։

Կոօրդինացիա (լատ.), համակարգումն. առանձին մկանների նպատակայարմար կերպով իրենց գործողութեամբ միմեանց հետ կցորդելը բարդ շարժման ժամանակ, երբ գործում են շատ մկաններ։—Տարբեր գործողութիւնների միմեանց կցորդելով համակարգելը։

Կօֆտա (չէդ.), կանացի կարճ վերնազգեստ։

Հ.

Հաբ, (արաբ.), դեղահատ։

Հաբէաս կօրպուս ակտ, (լատ.), Անգլիայում 1679 թուից գոյութիւն ունեցող իրաւաբանական մի հաստատոդութիւն է, որը երաշխաւորում է անհատի անձեռնմխելիութիւնը. ոչ ոք չի կարող ձերբակալել, բանտարկել, զրկել գոյքից, ազատութիւնից կամ կեանքից առանց դատարանական որոշման և վճռի։ Իւրաքանչիւր ձերբակալուած իրաւունք ունի պահանջել որ նրան անմիջապէս տանին դատարան, յայտնեն ձերբակալման պատճառը և քննեն։ Քննութիւնից յետոյ ձերբակալուածը կամ ազատ է արձակւում կամ վերադարձւում է բանտ։

Ռէզօնանս (լատ.), ձայնի ուժեղացումն շնորհիւ նրա, որ ձայնը կպչելով որոշ առարկաների նրանցից առաջ է բերում նոյնաչափ տատանումներով ալիքներ։ Արձագանք։

Ռէզօնատօր (ֆր.), նուագարան գործիքների վրա մի մաս, որը ուժեղացնում է ձայնը։

Ռէզօնեօր (ֆր.), մի մարդ, որ սիրում է երկար բարոյախօսական խրատական եղանակով ճառել։

Րէէլ տես *րէալ*։

Րէէստր (ֆր.), դիւանատունում ցուցակ ներս մտած և եւլած թղթերի։

Ռէժի (ֆր.), արդիւնաբերութեան կամ առևտրի որոշ ճիւղի մենաշնորհը և կառավարութիւնը պետութեան ձեռքով նրա պաշտօնեաների միջոցով։—Թիւրքիայում և Պարսկաստանում այդ անունով մասնաւորապէս կոչւում է ծխախոտի մենաւաճառը։

Ռէժիմ (ֆր.), պետութեան կառավարութեան եղանակ։—Ապրուստի կանոններ, որոնք որոշում են ուտելու և խմելու կարգը և նիւթը և առհասարակ ապրելու եղանակը։

Ռէժիսօր (ֆր.), թատրոնական ներկայացման կառավարիչը, որը դերերն է բաժանում և խաղը դնում։

Ռէժին տես *ռէգիմն*։

Րէխ (արաբ.), դեսպանների ասպը, որևէ վարչութեան պետ Թիւրքիայում։—Նաւապետ վաճառականական նաւի։ Տես նաև *ռէս*։

Րէխս էֆէնտի, պետութեան կանցլեր և արտաքին գործոց մինիստր Թիւրքիայում։

Ռէլատիվ, յարաբերական։

Ռէլատիվիզմ (լատ.), կոչւում է այն ուսմունքը, որը ընդունում է, թէ մի ճանաչողութիւն յարաբերականութեան մէջ է ճանաչողի հետ։

Ռէլացիա (լատ.), հաղորդագրութիւն, գլխաւորաբար պետական գործողութիւնների մասին։—Յարաբերութիւն։

Ռէլիէֆ (ֆր.), բարձրաքանդակ. քանդակած պատկերը, որը քարի ընդհանուր մակերևոյթից բարձր է։—Ուռուցիկ։ *ցայտուն*։

Րէլիգիա (լատ.), *րէլիգիօն*, կրօն։—*Րէլիգիօզիտէ*, կրօնականութիւն։—*Րէլիգիօզ*, կրօնական։

Ռէյա (անգլ.), երկաթէ ձողերը, որոնց վրայով շարժւում են երկաթուղու անիւները։

Րէկապիտուլացիա (լատ.), կրկնութիւն գլխաւոր բովանդակութեան, երկրորդաբար։—Հաշւապահութեան մէջ՝ այլ և այլ կարգի գումարների միացումը։

Ռէկլամ (լատ.), առևտրական ասպարէզում այն բոլոր միջոցները, որոնք նպատակ ունին հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել մի ապրանքի վրա՝ յայտարարութիւն, նկարներ, հասցէով թերթիկներ, վճարուած գովասանական յօդուածներ և այլն։

Րէկտօր (լատ.), առաջ. վերատեսուչ։

Րէկտօրատ, վերատեսչի պաշտօն։

Րէկրուտ (ֆր.), նորակոչ զինուոր։

Րէկրիմինացիա (ֆր.), ազակցութեան, պահանջ։—Պատերազմի ժամանակ հրամանատարի պահանջը ապրանքատուութիւնից, որ վերջինս մատակարարէ զօրքի համար անհրաժեշտ բոլոր իրերը։

Րէկոգնիցիա (լատ.), վերատին ճանաչումն։ Իրաւաբանութեան մէջ՝ որևէ անձի կամ թղթի ճանաչումը իրրև այնպիսին, ինչպիսին նա ներկայացուած է։—Մի գրուածքի քննական և սրբագրական վերանայումն։

Ռէկօմանդէ (ֆր.), պատուիրած, ապահով ուղարկած նամակ, ծրար և այլն։

Ռէկօմէնդացիա (ֆր.), յանձնարարական թուղթ գովասանքով։ Յանձնարարութիւն։

Ռէկօնստրուկցիա (լատ.), վերաշինութիւն. շէնքի վերականգնումն։

Ռէկօրդ (անգլ.), ծանրութեան ամենամեծ սահմանը, որը կարող է բարձրացնել ըմբիշը։—Ամենաարձր չափը մրցութիւնների մէջ։

Ռէհաբիլիտացիա (լատ.), վերատեսութիւն. վիրատուութիւն նախկին քաղաքական և քաղաքացիական իրաւունքների մէջ։

Ռէյին, գրաւ։ Գրաւական։

Րէժէն (գերմ.), նեղ և երկար կաշի, որ գործ է ածւում իրրև գօտի, կապ և այլն։

Ռէմիզ (ֆր.), թղթախաղում՝ տասնուվեցը։

Ռէմինգտօն, գրելու մեքենայ։

Ռէմօնտ (ֆր.), շէնքի կարկատաններ և վերանորոգութիւններ և դրանց համար ծախսած փողը։—Ձօրքի համար պահակ ձիերի տեղ նորերը գընելը։

Րէյդ (հոլանդ.), խոր տեղ ծովում, որտեղ կարող են կանգնել նաւերը։

Ռէյն-վէյն տես *ռայն-վայն*։

Րէյս, փորթուգալական դրամի ամենափոքր միաւորութիւն = $^3/_5$ սանտիմ = $^1/_{12}$ կոպէկ (*Րէալ* բառի յոգնակին է)։

Րէյս (գերմ.), նաւի ճանապարհորդութեան մի գլուխը։

Րէվէյատազ տես *Ռայհատազ*։

Րէվիսրատ տես *ռայհատազ*։

Ռէնէգատ (լատ.), ուրացող, կրօնափոխ, դէնտարէ։ Մասնաւորապէս՝ քրիստոնէութիւնից մահմեդականութեան անցած.—Դաւաճան, իր կուսակցութիւնից կամ համոզմունքներից զարձած։

Ռէնէսանս (ֆր.), վերածնութիւն. XV — XVI դարերում պատմութեան այն շրջանը, երբ դասական աշխարհի արուեստի և գրականութեան ուսումնասիրութեան ազդեցութեան տակ Իտալիայում վերածնուեց դասականի նմանողութեամբ արուեստ, իսկ այնտեղից էլ տարածուեց Ֆրանսիա և Գերմանիա։—Ճարտարապետութեան ոճ, որը այդ շրջանում առաջացաւ հետևողութեամբ դասականի որոշ ձևերի։

Րէնտա (ֆր.), հողային հասյթ. հասոյթ, եկամուտ, որ առացւում է տարբեր թղթերից, վարձով տւած կալւածքից, որևէ ձեռնարկութեան մէջ դրած դրամագլխից, բաժնեմասնութիւնից և այլն. առհասարակ եկամուտի այն մասը, որը աշխատավարձ չէ և հետևանք է սեփականատիրական վիճակի։ Ըստ *Ռէկարդօի դ.* եկամուտի այն առաւել մասն է, որը արդիւնք է մի հողային կալւածքի

առաւելութեան միւսների վերաբերմամբ. երբ մի հողակտոր աւելի լաւ յատկութիւն ունի քան իր հարևանը, կամ գտնուում է սպառման շուկային աւելի մօտ և իբրև հետևանք այս հանգամանքի նրա ւաճած բերքը աւելի է կամ յատկութեամբ բարձր կամ թէ չէ շուկայի մօտիկութեան պատճառով աւելի քիչ ճանապարհածախս է պահանջում, այնինչ վաճառւում է նոյն գնով, ինչ որ հեռու հողերից բերուածները, ահա այդ տարբերութեան չնորհիւ առաջ եկած նիամուտի աւելին րէնտա է։ Այս բ. կոչւում է նաև դիֆէրէնցիալ րէնտա, տարբերական հասոյթ։ Այժմ բ. համարւում է բոլոր այն հասոյթը, որ մշտապէս կայ առանց աշխատանքի գործադրութեան — Գետնային րէնտա, պետութեան վճարած տոկոսները իր այնպիսի փոխառութիւնների համար, որոնց մայր գումարի վերադարձման համար նա պարտաւորութիւն չի յանձն առնում, սակայն իրեն վերապահելով յետ դնման իրաւունքը, իսկ տոկոսները մշտապէս և պարբերաբար վճարում է։

Րէնտաբլ (ֆր.), րէնտաբլեր, շահաւէտ, նիամաւոր։

Րէնտաբիլիտէտ (ֆր.), շահաւէտութիւն. րէնտա բերելու կարողութիւն։

Ռէնտգէնեան կամ իքս ճառագայթներ, Գերմանացի գիտնական Ռէնտգէնի գիւտը 1895 թ.ին. մի տեսակ անտեսանելի ճառագայթներ են, որոնք չեն անդրադառնում անթափանցիկ մակերևոյթներից (բացի որոշ նիւթեր պարունակողներից) և թափանցում են նրանց։ Ի ճ-ի միջոցով հնարաւոր է լուսանկարել աչքին անտեսանելի առարկաներ, ինչպէս մարդկային ոսկրներ և ներքին գործարաններ։

Րէնտիէ, րէնտիէը, ռանտիէ (ֆր.), իր կալւածքների նիամուտով կամ դրամների տոկոսով, րէնտայով ապրող մարդ։

Ռէնտէ (ֆր.), լաւ կամ վատ համբաւ, անուն, հռչակ որևէ անձի կամ իրի մասին։

Ռէնտէսացիա (լատ.), վերանորոգութիւն, վերականգնում։

Րէշէրշ (ֆր.), հետախուզութիւն, հետազօտութիւն. փընտրտուք։

Րէտնիօն (ֆր.), ժամանակի համար հաւաքում պարով և զարճութիւնով։

Րէֆիտատիվ, րէցիտատիվ (իտալ.), զրոյցի մօտեցող եր գեցողութիւն. թիւերգ. զրուցերգ։

Րէպարատուր (լատ.), նորոգութիւն. կարկատան նոյնն է ինչ որ րէմօնտ։

Րէպէտիցիա, կրկնութիւն. թատրոնական փորձ։

Րէպէտիտօր (լատ.), աշակերտին դաս պատրաստելում օգնող անձն. նրա հետ կրկնութիւն անող։

Րէպէրտուար (ֆր.). թատերական գրւածքների ցանկը, որը խաղացելու է մի որևէ բեմի վրա որոշ ժամանակի ընթացքում։—Մի դերասանի խաղալու դերերի ամբողջութիւնը։

Րէպլիկա (ֆր.), պատասխան, առարկութիւն։ — Դերասանի վերջին խօսքերը, որին հետևում է միւսի պատասխանը։—Երաժշտութեան մէջ՝ մի կտորի կրկնութիւնը այլ ձայնով։

Րէպուբլիկ տես րէսպուբլիկա։

Րէպուտացիա (ֆր.), համբաւ, հռչակ, հասարակութեան մէջ լաւ կամ վատ կարծիք մի անձի մասին։

Րէպս տես րիպս։

Րէպտիլ (լատ.), սողուն։—Րէպտիլ մամուլ ասում է կառավարչական քաղաքականութեան խնկարկող, կառավարութիւնից կաշառած մամուլ։

Րէպրէզէնտացիա (լատ.), ներկայացուցչութիւն։ — Ներկայացնել։—Պատկերացումն։

Րէպրէսալիա (ֆր.), խիստ սահմռկեցնող միջոցներ, որ մի պետութիւն գործադրում է մի ուրիշի դէմ, երբ վերջինս խախտել է եղած պայմանագրերը։

Րէպրէսիա (լատ.), կամ րէպրէսիվ միջոցներ, ներքին շարժումների դէմ կառավարութեան կողմից գործադրուղ խիստ պատժական միջոցները զրամական տուգանք, աքսոր, բանտարկութիւն, մահապատիժ և այլն։

Րէպրօդուկցիա (լատ.), վերարտադրութիւն. վերականգնում։ Բնախօսութեան մէջ բ. ասում է նիւթի շարունակ վերականգնումը, որը կենդանի մարմինը միշտ կայուն է պահում նրանով, որ մաշած մասերի տեղ նորերն են անցնում։ —Հոգեբանութեան մէջ՝ գիտակցութեան մէջ նախկին պատկերների կրկին երևան գալը, երբ դրանց համար անմիջական զրդիռ չկայ։

Րէպօրտեօր (անգլ.), օրւայ մանը լուրեր հաղորդող լրագրական աշխատակից։

Ռէս, գիւղապահ, տանուտէր։ Տես նաև ոէիս։

Րէսկրիպտ (լատ.), Ռուսաստանում կայսրի հրամանը մասնաւոր մարդի կամ պետական պաշտօնեայի, որի մէջ արտայայտում է շնորհակալութիւն նրա սրած ծառայութիւնների համար և յայտնում է մի վարձատրութեան կամ նոր պաշտօնի մասին։—Հին Հռովմում՝ կայսրի հրամանը մասնաւոր մարդի իբրև պատասխան նրա գանգատի կամ հարցման։

Րէսպէկտ (ֆր.), ակնածութիւն յարգանք, պատիւ։

Րէսպիրատօր (լատ.), մի տափակ գործիք է, որ հագնում են բերանին, որպէսզի ներշնչած օդը նրա միջով անցնելով մի քիչ մեղմանայ թոքերի մէջ մտնելուց առաջ։

Րէսպուբլիկա (լատ.), րէպուբլիկ ֆր.), հանրապետութիւն, հասարակապետութիւն. կառավարութեան այն ձևը, որտեղ չկայ ժառանգաբար անցնող իշխանութիւն. ժողովուրդը կառավարում է ինքն իրեն, իր ընտրած ներկայացուցիչների միջոցով. պետութեան ամենաբարձր պաշտօնեան նախագահն է, որը նոյնպէս ընտրւում է որոշ տարիներով։

Ռէտուլ Ալլահ արաբ.), Աստուծոյ առաքեալ. Մահմետի կոչումը մուսուլմանների մէջ։

Րէտուրս (ֆր.), ազդեցութեան դիմաց միջոցներ։

Րէտտուրացիա (լատ.), յետդարձափոխութեան միջոցով գանգուրկ եղած թափաւորական հարստութեան վերադարձը իշխանութեան։ Մասնաւորաբար՝ Բուրբոնների վերադարձը Ֆրանսիայի գահին 1814 թ.ին և դրա հետևանքով եղած յետադարձ-րէակցիոնէը շարժումը և Մարտսարանները Անգլիայում 1660 թ.ին։—Գեղարուեստական մի երկրի ամբողջական վերականգնումը նրա սակաւ ճեացորդներից։

Ռէտօրան (ֆր.), ճաշարան։

Ռէտօրացիա (ֆր.), հասա-

բակ տեսակի ճաշարան։

Ռեհիրսալ (ֆր.), զօրքի նահանջ։ — *Արտաքնոց։*

Ռետուշ (ֆր.), լուսանկարչության մէջ՝ ապակու կամ թղթի վրա պատկերի ուղղումները, շրջակումները մատիտով կամ վրձինով։

Ռետուշօր (ֆր.), լուսանկարիչ-արհեստաւոր, որը ռետուշ է անում։

Ռետուր տոմսակ (ֆր.), երկաթուղու տոմսակ, որ իրաւունք է տալիս գնալու և վերադարձի։

Ռետրօգրադ (լատ.), յետադիմական մեկնոյն է թէ *Ռեակցիոն*։

Ռետորիկա (յուն.), րիտորիկա, ուսումն ճարտասանական, հռետորական արուեստի, նրա կանոնները։ — Տեսութիւն արձակ գրականութեան. պարզ, ուղիղ, գեղեցիկ և արտայայտիչ բանաւոր և գրաւոր արտայայտուելու արուեստի կանոնները սովորեցնող գիտութիւն։

Ռեցենզենտ (լատ.), գրախօս, մատենախօս. քննադատ։ *Ռեցենզիաներ գրող։ Գրադատ։*

Ռեցենզիա (լատ.), գրախօսութիւն. մատենախօսութիւն քննադատութիւն։ Գրական մի նոր երկի կամ թատրոնական ներկայացման մասին վերլուծական և քննադատական փոքր յօդուած։ Գրադատութիւն։

Ռեցեպտ (լատ.), դեղատոմս. դեղատուն ներկայացնելու համար բժշկի գրած տոմսը, որի մէջ նշանակուած է պահանջած դեղի բաղկացուցիչ մասերը և պատրաստութեան եղանակը։

Ռեցեպտուրա (լատ.), դեղագործական գիտութեան այն մասը, որը սովորեցնում է դեղեր պատրաստելու եղանակը։

Ռեցիտատիվ տես *ըեզիտատիվ*։

Ռեւանշ, *ռեւանշ* (ֆր.), վրէժ, հատուցում։ Մանաւանդ՝ մի ձգտումն Ֆրանսիայում հատուցանել Գերմանիային նրա յաղթանակի փոխարէն 1870 թէ֊ի ֆրանս-պրուսական պատերազմում։

Ռեվերանս տես *կնիքսէն*։

Ռէլիգիոնիզմ կոչւում է կրօնական ոգեալ-դէմօկրատիայի մէջ այն հոսանքը, որը պահանջում է կաւտակցութեան ծրագրի վերաքննութիւն, գտնելով, որ նա այլևս չէ համապատասխանում մտաւորական կեանքի զարգացման ընթացքին. իսկ ընթացիկ քաղաքականութեան մէջ պահանջում է ընթանալ միւս ձախակողմեան կուսակցութիւնների հետ իրագործելու համար մի քանի հասունացած ժողովրդապետական բարենորոգութիւններ։ Տես նաև *ըէլիգիոզ-սոցիալիզմ*։

Ռէլիգիոնիստ, վերաքննական. վերաքննութիւնպահանջող։

Ռէլիզօր, վերաքննիչ. վերաստուգող։ Գեւական պաշտօնեայ, որ պարտաւորութիւն ունի քննել մի հատատութեան գործերը, մի որոշ ժամանակի ընթացքում կատարած, համոզելու համար, թէ հակօրինական բան չկայ արդեօք։

Ռէլիւ (ֆր.), ամառոցի կամ շաբաթավերջի զբօսական և քննադատական։ — Տեսութիւն շաբաթեայ կամ ամսեայ անցքերի։

Ռէմանիզմ (յուն.), ռոկրացուս, յօդացաւ։

Ռէօլիւցիա (ֆր.), յեղափոխութիւն. յանկարծական և բռնի փոփոխութիւն հասարակական կարգերի. որը երկար ժամանակի ընթացքում կուտակուած անբաւականութեան արդիւնք է։

Ռէօլիգիօներ, յեղափոխական։

Ռէօլօգ (ֆր.), ապտամբութիւն։

Ռէօլվէր (անգլ.), ատրճանակ։

Ռէքս (լատ.), թագաւոր։

Ռէքսիւրի չերմաչափ, 80 աստիճանի բաժանուած չերմաչափը, որի հնարողն է Ֆրանսիացի Ռէօմիւրը (1683-1757). այնինչ Ցէլսիուսի չերմաչափը, բաժանուած է 100 մասի, և սրա հնարողը եղել է Շուէդ աստղաբաշխ Ցէլսիուսը (1701—1744)։

Ռէօրգանիզացիա (ֆր.), վերակազմութիւն. կրկին կազմուելու։

Ռէօկրուտացիա (լատ.), կրկին գրաւումն կրկին սիրապատութիւն։

Ռէֆէրատ (լատ.), զեկուցումն. բանախօսութիւն որևէ նիւթի մասին, մանաւանդ՝ պետութեան և գրականութեան մէջ մի նոր երևոյթի մասին։

Ռէֆէրէնդար (լատ.), զեկուցանող պաշտօնեայ։ — Երիտասարդ իրաւաբան Գերմանիայում, որը համալսարանի ատարման քննութիւնը տուել է և մի գատարանական հաստատութեան մէջ նախապատրաստւում է երկրորդ — ատեաոյի քննութեան։

Ռէֆէրէնդում (լատ.), համաժողովրդական ձայնատուութիւն, հանրական քւէարկութիւն. ժողովրդական ուզդակի օրէնսդրութեան ձևը, որ տեղի ունի Շուէյցարիայում և Հ. Ամերիկայի Միացեալ Նահանգների շատ նահանգներում. կարևոր նշանակութիւն ունեցող օրէնքները ևնթարկուում են ամբողջ ազգաբնակչութեան քւէին, և ուրանք ընդունուած են համարուում, երբ ստանում են ձայների մեծամասնութիւն։ Օր. Շուէյցարիայում օրէնքը ենթարկուում է ո., եթէ այդ պահանջում են 30000 քաղաքացի կամ ութ կանտոն։

Ռէֆէրէնտ (լատ.), զեկուցանող. դասախօս. ատենադպիր։

Ռէֆլէկտօր (լատ.), յղկած մակերեսով ճառագայթներ անդրադարձնելու համար գոգաւոր հայելի լոյսը զօրեզացած անդրադարձնելու համար։

Ռէֆլէքս (լատ.), զօրք. արտացօլում։ — Մկանների ակամայ շարժում։ — *Ր. շարժում* կոչւում է այնպիսին, որը հակառակ կամաւորին, կատարւում է կամքից և ուժերութիւնից անկախ. անդրադարձ շ։

Ռէֆլէքսիա (լատ.), լոյսի ճառագայթների անդրադարձում, արտացօլում։ — Մտերիմութիւն. խոհուն սեփական պատկերացումների ներքին խոնարհութիւն։ — Հիւանդոտ ինքնաքննադատութիւն։

Ռէֆրէն (ֆր.), յանգիրգ. երգի մէջ իւրաքանչիւր տունից յետոյ նոյնութեամբ կրկնուող մասը։

Ռէֆօրմ (լատ.), բարենորոգութիւն. ձևափոխութիւն. սիրող կարգերի բարեփոխութիւնը դէպի լաւը։ Բարեփոխութիւն։

Ռէֆօրմատական եկեղեցի ասում է Ցւինգլիի և Կալւինի հաստատած եկեղեցին Շուէյցարիայում, որը արդիւնք է թէստ քննադատութեան պատճառած դէմ. վերահաստատում է առաքելական ժամանակների պարզութիւնը ժամատուութեան մէջ, մերժում է սրբերի պատկերներ, երգիչոն և այլն. հաղորդութիւնը համարում է լոկ

իբրև յիշողութիւն Քրիստոսի վերջին ընթրիքի մասին։

Բէֆորմատոր, բարենորոգիչ. մանաւանդ՝ բէֆորմացիայի գործիչները։

Բէֆորմացիա, XVI դարի խոշոր շարժումը Եւրոպայում, որ սկսւեց Շւէյցարիայում և իր շատ զօրեղ արտայայտութիւնը ստացաւ Գերմանիայում. նա ուղղված էր առանձնապէս կաթոլիկ եկեղեցու կաշկանդող սկզբունքների և դրամական ի չար գործադրութիւնների դէմ. ապա նաև միջնադարեան ֆէոդալական-աւատական — կարգերի դէմ։ Ր. արդիւնքը եղաւ բողոքականութեան առաջ գալը։

Բէֆորմ-բիլլ (անգլ.), օրինագիծ Անգլիայում, որը նպատակ ունի որևէ բարենորոգութիւն գլխաւորաբար պառլամէնտին վերաբերեալ։

Բէֆորմիզմ, բարենորոգութիւն քարոզող ուսմունք, ուղղութիւն։

Բէֆորմիստ, բարենորոգութիւններով և ոչ յեղափոխական ճանապարհով հասարակական կարգերը բարելաւելու կողմնակից։

Բզզդ, ապրուստ։

Բրնձապար տես *ռանձպար*։

Բիալ, պարսկական դրամահաշիւ է = 25 շահի = 60 սանտիմ = 23 կոպէկ. իբրև դրամ գոյութիւն չունի։ — Ամերիկական դրամ = 1ր. 30 կոպ.։

Բիզդազ, Դանիայի պարլամէնտ։

Բիգիս պուրի (վրաց.), հիւրասիրութեան, հրուէրքի մի ձևը։

Բիզօրիզմ (լատ.), չափազանց խիստ պահանջներ բարոյականութիւնից. մանրակրկիտ բարոյախօսութիւն։ — Խիստ հետևողութիւն մի օրէնքի առանց բացառութիւնների *Բիզօրիստ*, ծայրայեղ խստապահանջ բարոյական օրէնքների պահպանութեան մէջ։

Բիդիկիլ (ֆր.), ծաղրալի, ծիծաղելի։ — Կաշէ կամ այլ կտորից քսակ, պայուսակ, որ կանայք գրպանի տեղ կրում են ձեռներին մէջը թաշկինակ և նման մանր բաներ դնելու համար։

Բիգիկօ տես *բիսկ*։

Բիլմ (յուն.), *բիֆմա* (ռուսական արտասանութիւնը), յանգ. ոտանաւորի տողերի նոյնանշին վերջաւորութիւնը։ — Ձափ երաժշտութեան։

Բիկստազ Շէէդիայի պարլամէնտը։

Բիկօշէտ (ֆր.), գլանաձև ճանապարհը մի մարմնի, որը մի ուղղութեամբ գլեզելով հանդիպում է արգելքի և ճանապարհը փոխում։

Բինգ (անգլ.), ժամանակաւոր կապակցութիւն արդիւնաբերական նպատակով։

Բիպս, բէպս (ֆր.), ամուր գործած մի կտոր է, որ գործ է ածւում իբրև պատառ, վարագոյր և այլն։

Բիսակ (ռուս.), Ռուսաստանում շատ գարգացրած մի ցեղ ձիերի, որոնք լծելու համար են գործ ածւում, վազում են շատ արագ, բայց ոչ արշաւում։

Բիսկ (ֆր.), *բիգիկօ* (գերմ. ձևը), վաճառ. մի ձեռնարկութիւն, որի յաջողութիւնը ապահովված չէ, հետևաբար և իր մէջ վտանգ ունի անյաջող ելք ունենալու։

Բիվալիտէտ (ֆր.), մրցութիւն, մրցակցութիւն։

Բիվօգ, ձնամխ. տես *ֆրանսիական տօվար*։

Բիտէր (գերմ.), ասպետ։

Բիտուալ (լատ.), եկեղեցական ծիսարան։

Բիտօր (յուն.), հին Յունաստանում՝ հռետոր և ուսուցիչ հռետորութեան։

Բիտօրիկա տես *բէտօրիկա*։

Բիւմկա (ռուս.), գաւաթիկ օղու համար։

Բիֆ (անգլ.), խոթի սատրջրեայ ժայռ։

Բիֆմա տես *բիլմ*։

Ռուայալիստ տես *ռօյալիստ*։

Ռուբիկօն, մի գետակ է, որը հին ժամանակ բաժանում էր Իտալիան յայսկոյս Ալպեան Գալլիայից, որտեղ գտնւում էր Ցեզարը։ Հռովմի սենատը նրան արգիլել էր Ռ. անցնել. բայց նա անցաւ, և սկսւեց քաղաքացիական պատերազմը։ Այստեղից ծագում է «Ռ.-ը անցնել» խօսքը, այսինքն՝ վճռական քայլը ռնել։

Ռուբին, սուտակ, կարկեհան. կարմրաւուն թանկագին քար։

Ռուբլի, ռուսաց դրամական միաւորութիւն = 100 կոպէկ = 2,66 ֆրանկ։ Աւելի է նոյնպէս մանեթ, մանեթանոց։

Ռուբրիկա (լատ.), գրւածքի մէջ բաժանմունք. վերնագիր։ — Հին Հռովմում՝ օրէնքի յօդւածի առաջին խօսքը, որը գրւում էր կարմիր ներկով։

Ռուդիմէնտար (լատ.), սաղմային, չզարգացած։ — Ր. գործարաններ կենդանու այն գործարանները, որոնք չեն զարգանում և մնում են առանց գործառնութեան, ինչպէս տղամարդի սաձնքները, մարդի կոյր աղիքի որդաձև յաւելուածը։

Ռուզդ, ապրուստ, ապրուստի միջոց։

Ռուզնամէ (պարսկ.), լրագիր։ — Օրացոյց, պետական պաշտօնէութեան և այլ բաների մասին տեղեկութիւններով թիւրքիայում։

Ռուին (լատ.), աւերակ։

Ռուլէտ (ֆր.), րուլէտկա, խաղ. գնաակը գցւում է պարտւող տափակ շրջանի վրա, որի վրա գծած կարմիր կամ սև շերտերից կամ այլևայլ համարներից մէկն ու մէկի վրա կանգնելուց խաղացողը կամ շահում է կամ կորցնում։ «Ֆրռռան»։

Ռուկի վվերխ! (ռուս.), ձեռքերը դէպի վեր. ռուս զրամաշրջիկների կանչը, որով նրանք դիմում են մարդկանց և պահանջում որ ձեռքերը բարձր պահեն, զէնքի սպառնալիքով, մինչև իրենք իրենց կողոպուտը վերջացնեն։

Ռումբի, եզան կամ գոմէշի մեծ տեգեր գինու համար։

Ռունա, միայն ուղիղ գծերից կազմված տառերից այրուբէնը, որը գերմանական ժողովուրդները գործ էին ածում մինչև լատինական այրուբէնը ընդունելը։

Ռուպի, արծաթէ դրամ Անգլիական Հնդկաստանում = 88 կոպէկ = 1,65 ֆրանկ։ — Փորթուգալիայի գաղութներում գործածական դրամ = 90 կոպէկ = 1,70 ֆրանկ։

Ռուսալկա (ռուս.), ջրային և անտառային ոգի սլաւոնների հաւատալիքով։

Ռուսիֆիկացիա (լատ.), ռուսացումն։

Ռուսակ, խայտառակ։

Ռուսօֆիլ (յուն.), ռուսասէր։

Ռուսօֆօբ (յուն.), ռուսատեաց։

Բուտինա (ֆր.), վարժութեամբ ձեռք բերած հմտութիւն, որի համեմատ գործւում է առանց գիտակցելու տեսական հիմքերը և սկզբունքները։ — Աւանդական կարգերով անգիտակից առաջ գնացող կեանք։

Բուտինեօր (ֆր.), անգիտակից աւանդապահ։ — Առանց նո-

բուքիւններից ազատելու, մի անգամ ձեռք բերած փորձի և վարժութեան ճանապարհով ընթացող։

Ռօբինզօն, Դանիէլ Դէֆօի հռչակաւոր վէպի հերոսը, որ մանկութիւնից ընկնում է անմարդաբնակ կղզի և այնտեղ աստիճանաբար ձեռք է բերում կեանքի յարմարութիւններ։ Ր. մարդկութեան կաւլտուրայի աստիճանաբար զարգացման պատմութիւնն է։

Ռօբինզօնադ, Դէֆօի վէպի նմանողութեամբ գրուած երկ։ —Հինգական անուն անտեսական այնպիսի գործերի, որտեղ աշխատում են վայրենի կեանքի վրա հիմնուած դուրս բերել անտեսական կեանքի օրէնքները։

Ռօզա (լատ.), վարդ։ Վարդագոյն։

Ռօզբիֆ տես րօստբիֆ։

Ռօզգա (ռուս.), ճիպոտ ձաղկելու համար։ Ռօզգի, մարմնական պատժի մի ձեր՝ մարդին բերնքսիվեր պարկեցրած գետ ձղնելով հաւուածում են մերկ մարմնին։

Ռօզէտ (ֆր.), մանրիկ գոհար։ — Զարդարանքի մի տեսակը։

Ռօլանդ, ֆրանսիական հին ժողովրդական վէպի հերոսի անունը։

Ռօկօկօ (ֆր.), ճարտարապետութեան և զարդանկարչութեան մի ոճ, որ զարգացաւ Ֆրանսիայում XVIII դարում. հակառակ իրենից առաջ եղած մաքուր ոճի, ր. զարդանկարում էր երեակայական ձևերով, ծաղկի շարերով, վառ գոյներով և խիստ նրբագեղ նկարներով։

Ռօկֆօր, ոչխարի կաթից պատրաստած իւղալի և խիստ սուր համ ունեցող պանիր։

Ռօմ (անգլ.), ոսիկից խմիչքի մի տեսակը։

Ռօման (ֆր.), վէպ, սիրատպատում։

Ռօմանական ազգերն են նեղոսային հարաւում և արևմուտքում ապրողները՝ իտալացիք, ֆրանսիացիք, իսպանացիք, Փորթուգալացիք և Րումանացիք։ Սրանց լեզուները կոչում են ռօմանական լեզուներ։

Ռօմանական ոճ, ճարտարապետութեան մէջ X-րդ դարում իշխող ոճն է, կիսաշրջան կամարներ և ծանրանիստ շէնքեր։

Ռօմանիզմ, հռոմէական եկեղեցու վարդապետութիւնը։ —Ռօմանական լեզուների առանձնայատկութիւն։

Ռօմանիստ, վիպասան։ — Հռոմէական եկեղեցու ուսման կողմնակից։

Ռօմանտիզմ, գրական ուղղութիւն եւրոպայում XIX դարի առաջին կիսում. որը մի հակադարձ շարժում էր դրանից առաջ տիրող կեղծ դասական ուղղութեան կաշկանդող պայմանաւորութիւնների դէմ։ Ըստ ժամանակի մարդկանց երեւոն հոգեկան աշխարհից ր-ը իր անձնաւորութիւնները պատկերացնում էր ամբողջական, առողջ, չբախտակուած բնաւորութիւններով. առեղծում էր անձնաւորութիւններ և պատկերներ. որոնց նմանը իրականութիւնը չէր տալիս, բայց և որոնք առասպելական հէքիաթային չէին, նրանց գոյութիւնը հնարաւորութեան, երեակայելիութեան սահմանից դուրս չէր։

Ռօմանտիկ, ռօմանտիզմի ուղղութեամբ գրող, մտածող։

Ռօմանռօմանիա, վիպամոլութիւն. վէպեր կարդալու մոլութիւն. վէպի ընթերցամոլութիւն։

Ռօմբ (յուն.), շեղանկիւն հաւասարակողմ քառանկիւնի։ Տըրամանկիւն։

Ռօյալ, ռօնալ, պաշտամունք։

Ռօյալիզմ, արքայական ուղղութիւն. բացարձակ միապետութիւն քարոզող վարդապետութիւն։

Ռօյալիստ, ռուայալիստ (ֆ.), արքայական. անսահման միապետութեան կողմնակից։ — Ֆրանսիայում յեղափոխութեան շրջանում՝ Բուրբոնների հարբուտութեան կողմնակից։

U.

Սաբաք (արաբ.), պաճառ։

Սաբաթ (թուրք.), կոզով։

Սաբահ (արաբ.), առաւօտ, արշալոյս։

Սաբաօթ, սաբաւօթ (հբր.), Տէր զօրութեանց. Աստուծոյ կոչումը հին կտակարանում։

Սաբէիզմ պաշտամունք երկնային լուսաւորների, պլխաւորաբար արեգակի և լուսնի, որ գոյութիւն ունէր հին Ասորիայում և Եգիպտոսում։

Սաբէլլիանիզմ կոչւում է երրորդ դարում Սաբէլլիուս քահանայի ուսմունքը, որը ասում էր թէ Աստուած ոչ թէ երեք անձից է կազմուած, այլ նա երեք տեսակ յայտնութեամբ է հրապարակ գալիս։

Սաբր (արաբ.), համբերութիւն։ — Ս. անել, համբերել, սպասել։ — Ս. փուշտց. սաբր գալ, փուշտալ մէկ անգամ, որ անսահմանապաշտօրէն համարւում է նախադրութեամբ մի գործի ձեռնարկելիս։

Սաբօ (ֆր.). փայտէ կօշիկներ, որ հագնում են ֆրանսիական գիւղացիք։ Կօշիկ փայտէ տակերով։

Սաբօտաժ (ֆր.), գործադուլաւորների դէմ. աշխատանքը կատարելապէս անհնարին դարձնելու համար գործադուլաւորները փչացնում են աշխատանքի նիւթը. մեքենաները և այլն. կամ շարունակում են աշխատանքը, բայց դանդաղկոտութեամբ, ձգձգելով և այլն։

Սաբօր (ռուս. սլաւ.), մայր եկեղեցի։ — Համայնքի, շրջանի, ազգային ժողով։ — Բանիայի և Հերցեգովինայի ազգային ժողով։

Սագա, սկանդինաւեան ազգերի ժողովրդական զրոյց։

Սաղա (պարսկ.), միայն, միմիայն։ — Անխառն, զուտ, պարզ։

Սաղաղա, ողորմութիւն. գթութիւն։ — Ի սէր, ի շնորհ։

Սաղաֆ (արաբ.), սառոփ։

Սաղղէր (պարսկ.), կրակա-

պաշտ պարտիզների — գէրրների արքային գիրքը։

— Սաղի (արաբ.), թիւրք-աց թափառաշրջիկ կրօնաւոր։

Սաղիզմ, խեղաթիւրուած սեռական զգացմունքներ, երբ տղամարդը սեռական գրգիռ է առանում մարմնապէս տանջելով կնոջը։ Անունը ծագել է Մարկիզ դը Սադ-ից (1740-1814), որը ապականած բարքեր ուներ և բանտում գրեց մի շարք պոռնկագրական վէպեր։ — Վիպագրութեան ուղղութիւն Մարկիզ դը Սադի հետևողութեամբ։

Սաղուկեցիք, ազանդաւորների խումբ Հրէաստանում դեռ Քրիստոսից առաջ III. դարում ծագած. ս. մերժում էին բանաւոր աւանդութիւնները, չէին հաւատում հրեշտակներին և հոգու անմահութեան, բայց խիստ պահպանում էին բարոյականի կանոնները. նրանց ուսմունքով մարդկային բարեպաշտութիւնը կամ դժբաղդութիւնը կախուած է մարդի իրեն կամքից և ոչ թէ ի վերուստ է նախորոշած, ինչպէս քարոզում էին փարիսեցիք։

Սաղրազամ, Սաղրի-ազամ (արաբ.), մեծ վէզիր, վարչապետ, նախարարապետ. մինիստրների նախագահ։

Սազ (պարսկ.), յարմար, լրբիւ, տեղին։ Սաղբին։ — Սազել, յարմարել, վայելել։ — Սազական։

Սազ (պարսկ.), լարաւոր նրբագործ, որ գործ են ածում աշուղները։ — Սազանդար (պարսկ.), նուագածու։

Սաղմաշմիշ լինել (թուրք.), կուշտը առիթ փնտրել։

Սաղմլ (արաբ.), կերակուր կրելու համար մեծաղէ աման թաի ձեով, որոնք այնպէս են յարմարեցրած, որ հագցուում են իրար վրայ։

Սաղմլչեամ (արաբ.), կողացաւ. ցախցաւ։ Բառ ոմանց՝ տիֆ։

Սաժին, երկարութեան չափ Ռուսաստանում = 7 ոտնաչափ — ֆունտ — կամ 3 արշին = 2,133 մետր։

Սահիր դրամ, պարսկական արծաթ դրամ գործածութիւնից վերացած = 38 կոպէկ = մօտ մի ֆրանկ։

Սահիզնիկ (ռուս.), կոչւում է «Սահիզ լուսակաւոյ նաւրօզա» — ռուս ժողովրդի միութիւն — կոչուած կազմակերպութեան անդամը։ Այդ միութիւնը վերին աստիճանի յետադէմ մի կազմակերպութիւն է և ամէն միջոցներով ձգտում է վերականգնել նախկին միահեծան թագաւորութիւնը Ռուսաստանում ջնջելով բոլոր հետքերը հոկտեմբերի 17-ի մանիֆեստի։

Սալ (թուրք.), լաստ։

Սալա (արաբ.), կողմ։ կողավագործ. ակուռդ։

Սալահմ տես սալամ։

Սալահանա, դատարկաշրջիկ։

Սալամ, սալէմ (արաբ.), խաղաղութիւն. ողջոյն։ — Սալամաթ (արաբ.), փրկութիւն, պատսպարութիւն։ Ողջութիւն։

Սալամ-ալէք (արաբ.), խաղաղութիւնը ձեզ հետ. մահմետականների ողջոյնի ձևն է։

Սալամանդր (յուն.), գիծոր. մեծ մողէսի մի տեսակը, որ ապրում է խոնաւ տեղերում։ Սրա մասին կար առասպել, որ ապրում է կրակի մէջ. ուստի և ս. կոչւում է նաև պիցարանական մի հրային ոգի։ Տես էլէմէնտար ոգիներ։

Սալամլըք (արաբ. թիւրք.), հիւրերին ողջունելու սովորական պալատներում. ընդունելութեան դահլիճ։ Տես սալամլըք։

Սալատ (պերս.), սալաթ, մի տեսակ բանջար, որ համեմած ուտում են տապակած մսի հետ։ Առհասարակ համեմունքով պատրաստած բոլոր բանջարները, որոնք նոյն նպատակով գործ են ածում։ Սպցան։

Սալաւաթ (արաբ.), կրօնական գրգռումն։

Սալաթ տես սօլաթ։

Սալէմ տես սալամ։

Սալըլ տալ (թուրք.), բայատրել, — լուր տալ։ Սալըդ, պատուէր, հրաման։

Սալմ (թուրք.), միայն։ Լոկ։

Սալիդնի տես սօլիդ։

Սալիտա (Փր.), հրացանաձգութեամբ, թնդանօթաձգութեամբ կամ դրօշակներով ողջոյն և պատիւ տալը բարձրաստիճան անձանց։

Սալիւտացիա (Փր.), դիւանապետական պատիւ և ողջոյն տալիւտով։

Սալլաղ (պարսկ.), ոչնաուսն մորթեղ։ Սալլախանա (պարս.), սպանգանոց։ — Կեղտառ. անմաքուր, անկարգ տեղ։

Սալլանա (թուրք.), դանդաղկոտութեամբ, երերալով։

Սարտօ մօրտալէ (իտալ.), մահացու թունէք. լարախազացների մի ժամար թունէք օդի մէջ պատրաստ։ — Վտանգաւոր, յանդուգն ձեռնարկութիւն։

Սալսատօր, գարնէրի մի տեսակը, որը պատրաստում են գարնանը Բաւարիայում։

Սալվարսան կամ «606», պրօֆէսօր Էրլիխի գիւտը, որով բժշկում են սիֆիլիսը, մալարիա և մի քանի հիւանդութիւններ ներբսկման միջոցով։

Սալվի տես չինար։

Սալօլ, անգոյն բիւրեղային փոշի, որ ընդունում են իբրև դեղ յօդացաւի և ջգայնութեան դէմ։

Սալօն (Փր.), հիւրասենեակ։

— Ընտիր հասարակութիւն, որ ժողովւում է յայտնի տեղերի հիւրասենեակներում։ — Գեղարուեստական ցուցահանդէս Պարիզում, որ կայանում է իւրաքանչիւր տարի։

Սալօպ (Փր.), հնուց գործածական լայն արձակ վերարկու կանանց։

Սալֆէտ (իտալ.), սալֆետկա (ռուս.)) անձեռոցիկ. բերանը և ձեռքերը սրբելու շոր։

Սախա, սախկա, այն վէգը, որով խաղի մէջ խփում են միւս վէգերին կամ ընկոյզի շարքին։

Սախամ (արաբ.), խեղ. խեղանդամ. չաշմանդամ։

Սախապ, սախկալ (թուրք.), մօրուս։

Սախարին, մի հիւթ է շաքարի պէս քաղցր։

Սակ (Փր.) տոպրակ, մեշօք։

Սակալը-շէրիֆ (թուրք. արաբ.), մաղեր Մահմէդի արբանեակ մօրուքից, որը իւրաքանչիւր տարի Կ. Պոլսում ցոյց են տալիս ժողովրդին հանդիսաւորութեամբ։

Սակրամէնտ (լատ.), եկեղեցու արբազան խորհուրդ։

Սակրօսանտ (Փր.), ճանապարհորդական պայուսակ, որ կախում են ուսից։

Սահար, աշիր (արաբ.), տէրտէր կերպ մեծարում են Պարակատառնում հերոսացինների։

Սահաթ (արաբ.), սրնաթ, ժամ։ ժամացոյց — Սահաթչի, ժամագործ։ Նոյնպէս՝ սահաթսազ։

Սահան (արաբ.), մետաղ. սկաւառակ։

Սահարա (արաբ.), ընդարձակ աւազապատ անապատ հիւ-

սիսային Աֆրիկայում։

Սաղ (թուրք.), ողջ. առողջ։ Ամբողջ։—Սաղ-սաղ, կենդանության։—Սաղլամ (թուրք.), չբեղեսած։—Սաղություն, ողջություն, առողջություն։—Սաղ սալամաթ, սաղ սլիմ (թուրք.), ողջ և առողջ. անվնաս։

Սաղկա տես սալոր։

Սաղր, սաղրիկ, ծանծաղ, ոչ խոր։

Սաղրի, ձիու հասի ոտների վերին մասը և դրանից պատրաստած կօշկացու կաշի։

Սաճ տես սալջ։

Սամ, սէմ (Uncle Sam, բուն կամ հօրեղբայր Սամ, Սամուէլ), Հիւսիսային Ամերիկայի բնակիչների ծաղրական անունը։

Սամադուր (ռուս.), երեսակայող մեծամիտ խմաւոակ։

Սաման (թուրք.) յարդ։

Սամարացի, տես գութ, ոզրմած մարդ։

Սամի (արաբ.), թագ. կոմս, —եղանակ, ձև։

Սամով, չոր և տաք քամի, խորշակ, որ փչում է յատկապես ամռան Արաբիայում և Միջագետքում. Աֆրիկայում նա կոչւում է Շամսին։

Սամօղերժաւիլ (ռուս.), ինքնակալութիւն. միահեծանութիւն։

Սամօղերժց (ռուս.), ինքնակալ. ռուսաց կայսրի տիտղոսը։

Սամօգաննց (ռուս.), ինքնակոչ. մանաւանդ այդպես կոչւում էր կեղծ-Դմիտրին 1605-6 թւերին Ռուսաստանում։

Սամօվար (ռուս.), ինքնահեռ, հեշտահեռ. թէյ պատրաստելու մեքենայ Ռուսաստանում։

Սայմիշ անել, հաշի առնել, բանի տեղ սեպել։

Սանադ (արաբ.), փաստաթուղթ. առուտրական, մուրհակ և այլն։

Սանահաթ տես զանիաթ։

Սանաւոզէն, անդադարելութիւն է, որ տրւում է թոյլերին և հիւանդներին։

Սանաւորիա, սանաւորիում (լատ.), բուժարան. առողջ անդադրութիւն և լաւ օդ ունեցող հիւանդանոց թոյլերի կազդուրման և հիւանդների համար։

Սան-բէրնար տես Մէն-բէրնար։

Սանգակ, մի տեսակ թուրքական հաց. հատս լաւաշ է, որ թխւում է տախտապատ գետտրների վրա. թաղիթափա

Սանգար, պատանէշ, պաշարւածի ամրութիւն։

Սանգրինիկ (լատ.), արիւնային, կայտառ, պիւրթրորդոք մարդ։ Տես նաև սանգվինիում։

Սանդալ (յուն.), յոյների և հռովմայեցիների գործածած կօշիկը, որի երեսը բաց էր, իսկ ոտկը լինում էր փայտից կամ կաշուց, կապերով ամրացնում էին ոտին։—Դրա նմանութեամբ ժամանակից կօշիկ։—Մարդապաշար կօշիկ կամ ոլիկ հոգևորականութեան։

Սանդմար (թուրք.), լոկմալար հատնկիւնի նւագարան. ոլի լարերին ձողերով հարւածելով նւագում են։ Քնար, չնարակ։

Սանիաթ տես զանիաթ։

Սանիտար (լատ.), պատերազմի և համաճարակների ժամանակ բժիշկներ, նրանց օգնականներ, գթութեան քոյրեր։ հիւանդապահներ և այլն

Սանիտարիա, բժշկական գիտութեան այն մասը, որը վերաբերում է հասարակաց առողջութիւնը պահպանելու գործին։

Սանխօ-Պանչա Սէրւանտէսի երգիծաբանական վէպի հերոս Դոն-Քիշոտի ծառան։ Հաւատարիմ և չիմար ծառայի տիպար։

Սանկա (ռուս.), սահնակ։

Սանկիւլօտ (ֆր.), ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ այդպէս էին անւանում ժողովրդի մարդկանց, որոնք մասնակցում էին յեղափոխութեան մէջ. նրանք չէին կրում կիւլօտներ, այսինքն մինչև ծունկը տրտաւարտիք, որը յատուկ էր ազնւականութեան։ Անվարտիք։

Սանկտ (լատ.), սուրբ։

Սանկցիա (լատ.), սրբագործումն. նւիրագործութիւն։ Հաւանութիւն։—Օրէնքի վաւերացումը բարձրագոյն իշխանութեան ձեռքով։

Սանջակ (թուրք.), Դրօշակ։ —Վիլայէթից փոքր վարչական միութիւն Թիւրքիայում. նա կառավարւում է կայմակամով կամ մութէսարիֆով և համապատասխան է մօտաւորապէս Ռուսաստանի ուեզդին —գաւառին։

Սանջակ, սանճախ, գնդասեղ։

Սանջակ բէզ, սանջակի կառավարիչ։

Սանջակ շէրիֆ, Մահմեդի սրբազան դրօշակը, պահւում է Կ. Պօլսում և դուրս է բերւում պատերազմի ժամանակ։

Սանջու, սանճի (թուրք.), խիթ. սուր ցաւ մարմնի որևէ մասում։

Սանուարա, հնդկական կրօնի մէջ կոչւում է գոյութեան անդադրում վերանորոգութիւնը, հակառակ նիրւանայի,

Սանսիւր (ֆր.), տես ցէնզուրա։

Սանսկրիտ. հիպւոների հին լեզուն, որով գրւած են հնդկաստանի հին սրբազան գրքերը և բանաստեղծութիւնները։ Ս.-ը հնդեւրոպական լեզուների նախահայրն է։

Սանտարակ տես, ցէնտիաբ։

Սանտիզրատ (ֆր.) Չիրմասաւի բաժանւած հարիւր աստիճանի։

Սանտիգրատ տես գրատ։

Սանտիլիտր տես լիտր։

Սանտիմ (ֆր.), ֆրանսիական դրամի ամենափոքր միութիւնը = 0,37 կոպէկի։

Սանտիմէնտալ, զգայուն, լալկան

Սանտիմէնտալիզմ, սէնտիմէնտալիզմ (լատ.), գրական ուղղութիւն, որ զարգացաւ XVIII դարի վերջին քառորդում Անգլիայի մէջ. յատկանշական կողմն է զգայուն կարեկցականութիւն, որը հեշտութեամբ զառնում է կեղծ զգայական լալկանութիւն։

Սանտիմէտր տես մէտր։

Սաչախ (թուրք.), ծոպ, վերջաւորք։

Սաչի, (թուրք.), հարսանիքական նւէր. տես ծաղ։

Սաչմա տես սէչմա։

Սապթոր (ֆր.), զօրքի մի բաժինը, որը պատերազմի ժամանակ զինւորական ճարտարապետական գործեր է կատարում, կառուցանում է ամրութիւններ, կամուրջներ, ճանապարհներ, հետապրպիծ և այլն։

Սապօզ (ռուս), երկարավիզ կօշիկ։

Սապօժնիկ (ռուս.), կօշկակար. նաև գործ է ածւում հայհոյական մաքով՝ կոպիտ, արբեցող և այլ իմաստով։

Սապօնջի, օճառ եփող,

Սալ (թուրք.), երկաթէ թիթեղ։ Երկաթից կամ չուգունից ծանծաղ սկուռազ, որով կրակի վրա բան են թովում։

Սաուակինոս տես սարացին

Սառաջ, կաշեգործ.

Սառաֆ (արաբ.), սեպհական-ատու, մանր բանկեր արևելքում, որ գրամ է փոխում և մանրա-ցնում, գրաւականով գրամ է տալիս և այլն։

Սաս (Թուրք.) ձայն։

Սասիկա տես սօսիկ։

Սասլօվիէ (ռուս.), դատ։ Տես կլաս։

Սատին (Ֆր.), բամբակէ փայլուն կտոր։

Սատիր (յուն.), հին յոյների հաւատալիքով՝ անտառային ոգի, որը գօտուց վար նոխազ էր, իսկ գօտուց վեր՝ մարդ փոքրիկ եղջիւրներով. սրանք յափշտակում էին նիմֆաներին. տափատ էին և զգայական։ — Տափատ, իգամոլ մարդ։

Սատիրա (լատ.), երգիծաբանութիւն. գեղարուեստական գրականութեան այն տեսակը, որ ծաղրում է մարդկանց պակասութիւնները և բարոյական թուլութիւնները։

Սատիրական, երգիծարանական։

Սատիսֆակցիա (Ֆր.), բաւարարութիւն, գոհացումն, ըստ հաւատքարար՝ վիրաւորուած պատուի պահանջներին։

Սատիրիազիս (յուն.), սեռական զգացմունքի հիւանդագին ուժեղ արտայայտութիւնը տղամարդկանց. հոգեկան հիւանդութիւն է։

Սատիրիկ երգիծարան գրող։

Սատուրն, հին հռոմէացիների աստղուհիամբ՝ կապիտալի ամենահին թագաւորը, որը յետոյ աստուածացաւ և պատկերանում էր իբրև մի ծեր մարդ ձերուկ գերանդին ձեռքին։ Յունաց Կրօնոսը։ Ս.-ի ժամանակ էր մարդկային հասարակութեան ոսկեդարը։ — Երևակ. արեգակի մոլորակներից մեկը, որը լուսատուր գօտի ունի։ — Կապար։

Սատուրնալիա (լատ.), հին հռոմէացիների տօն ի պատիւ Սատուրնի ժամանակաւոր ոսկեդարի, երբ սիրում էր ազատութիւնն և հաւասարութիւնը։ Այս տօնը տևում էր մի քանի օր, աշխատանքը դադարում էր և բոլորը, առանց խտրութեան դիրքի, հաւասարապէս ազատ զարգանում էին։ — Անկարգ զարգութիւն։

Սատուրնիա անուանում էր լինօնան իբրև Սատուրնի տուն։ — Իտալիայի բանաստեղծական անունը։

Սատրապ (յուն.), հին Պարսկաստանում արքայական տեղապահ, որը անսահմանափակ անպատասխանատու իշխում էր իրեն յանձնած երկրում։ — Այդ տեսակի կառավարիչ։ — Հեշտասէր կամայական ագա, հարուստ մարդ։

Սատրապիա, սատրապի կառավարութեան յանձնած երկիր։

Սարայ (պարսկ.), սէրայ պալատ, ապարանք։ — Տախտակոտմով շրջապատած տեղ։

Սարացին (արաբ.), Եւրոպայում անւանում էին արաբներին և յետոյ մահմեդական ժողովուրդներին, որոնց դէմ կռուում էին խաչակիրները։

Սարաֆան (ռուս.), ռուս գեղջկուհիների հագուստ ծածկանոց գործուածքով։

Սարբազ (պարսկ.), հեռեակ զինուոր Պարսկաստանում։

Սարդանապալ, Ասորեքի վերջին թագաւորը Ք. ա. 9-րդ դարում, որ շատ փարթամ էր, հնամոլ և պերճանք սիրող։ — վերոյիշեալ յատկութիւններով թագաւոր կամ իշխան։

Սարդոր (պարսկ.), փոխարքայ, տեղապահ. այսպէս էին կոչւում պարսից ընդհանուր նահանգապետները հնում. այժմ այն տիտղոսը ունի Մակուի խանը։ — Նահանգապետ։

Սարդին (իտալ.), *սարդինկա* (ռուս.), *սարդել* (գերմ.), փոքրիկ համեղ ձուկ Միջերկրական ծովում։ Փոքրիկ թիթեղեայ տուփերում արտահանւում է ամէն կողմ։

Սարդոնական ծիծաղ (յուն.), բռնի, զառն ծիծաղ, որի ժամանակ դէմքի մկանները հիւանդոտ կերպով ցնցւում են։ — Արհեստական կեղծ ծիծաղ։

Սարթ (Թուրք.), կոպիտ, խիստ։ Բուռն։

Սարթիկ (պարսկ.), կենդրոնական բարձր քաղաքագիտական և վենետրական ատաձնաւոր Պարսկաստանում։

Սարին (Թուրք.), զով։

Սարկազմ (յուն.), զառն, կծու ծաղր։ Հեղնախառն։

Սարկաստիկ, կծու ծաղրական։

Սարկոզ (յուն.), մսառ ուռուցք։ Մանրի գոյացում մարմնի մի մասի վրա։

Սարկոլօգիա (յուն.), դէտութիւն մսի մասին. մսախօսութիւն։

Սարկոտիկա, դեղօրայք, որոնք վերականգնում են միսը։

Սարկոֆագ (յուն.), քարադագաղ, քարադամբան, դագաղի ձև ունեցող դիերդմանաքար։ Առհասարակ քարէ շիրիմ։ — Հին ժամանակ՝ դիակը արագութեամբ մաշող քարից պատրաստած դամբարան։ — Մսակեր կենդանիների արագ տեսակ։

Սարհանգ (պարսկ.), պինուրական բարձր աստիճան Պարսկաստանում։

Սարմիա, մայա (պարսկ.), դրամագլուխ։

Սարսաղ (Թուրք.), սխեմար, ապուշ։

Սարսազ տես սարքազ։

Սարսիարաստ (պարսկ.), գաւառական դատաւոր քրիստոնեաների Պարսկաստանում։

Սարքեազ (պարսկ.), գործի գլուխ. կառավարիչ գիւղական կամ այլ կալւածքի։

Սաւառի, բացի։

Սաւան (յուն.), սպիտակ ծածկոց։ Սպիտակ շապիկ, որով թաղում են մեռելին։

Սաւաւնները (իտալ.), ընդարձակ դաշտավայրեր Հիւսիսային Ամերիկայում բուսած խոտով և եղեգով։

Սաւդա (արաբ.), սէր, ցանկութիւն, տենչ։ — Սաւդաքեար, սիրահար, սիրահարած։

Սաւկա տես սօվկա։

Սաւխասաղլամ (Թուրք.), փոլոքվին առողջ, ամենևին չբնութաւած։

Սաւրի, դիցուք, տանք թէ։

Սաւրս, սարիւ, թախտ. հողից, քարից, աղիւսից բարձրութիւն նստելու համար. յաճախ շինուած է լինում դիւղական տներում։

Սաֆիան, այծի կամ ոչխարի մորթից պատրաստած շատ բարակ և նուրբ կաշի։

Սաֆռան տես զաֆռան։

Սաֆո, VI դարում Ք. ա. յոյն բանաստեղծուհի, որ գրում էր սիրային երգեր և դրաղւում էր սիրային արկածներով։ — բանաստեղծուհի։

Սէանս (Ֆր.), նիստ. պետհաստների մի նիստ, որի ընթացքում մինը նրանցից երբև միջնորդ հաղորդակցութեան մէջ է լինում պետների հետ։ — Այն ժամանակաշրջանը, որի ընթացքում որոշ դիրք են ընդունում, որ նկարիչը պատկերը նկարէ։ — Պատկերների մի շարք սրնե-

ժատօգրաֆում։

սէգան (պարսկ.), մի պարսկական եղանակ։

սէգաէնա (լատ.), երկրաչափութեան մէջ առում է շրջանի այն մասը, որը ընկնում է խօրդակի և նրան համապատասխան շրջագծի մէջ։

Սէդիլ (ֆր.), կեռ նշան է, որը դրւում է ֆրանսիական c. տառի տակ (ç), որպէսզի նա արտասանւի ոչ թէ «կ.» այլ «ս.» եթէ նա e, i և y տառերից առաջ չէ։

Սէգօն (ֆր.), տարւայ եղանակ։—*Տարեայ* մի որոշ մասը, որի ընթացքում տեղի է ունենում մի որոշ տեսակի զբաղմունք, զարգութիւն, առեւտուր, բժշկութիւն և այլն։ Օրինակ՝ թատրօնական սեզօն, հանքային ջրերի, ծովային բաղնիսների, դպրոցական և այլն սեզօն։

Սէիդ (արաբ.), Մահմեդի աղջկայ, ծաթմայի սերնդից առաջ եկածները կրում են այդ տիտղոսը. նրանք միայն իրաւունք ունին կրելու կանաչ գօտի և կանաչ փաթոթ գլխին։

Սէիզ, հօտի առաջնորդ այծը։

Սէլ (արաբ.), սէլսալ, հեղեղ։

Սէլադօն, Դ՝ Ուֆրէի «Աստրէ» վէպի հերոսի անունը, որից և ս. նշանակում է ամաչկոտ, երազուն սիրահար։

Սէլամ, սէլամ սյլէյքում և այլն տես սալամ և այլն։

Սէլամլըք (արաբ. թիւրք.), տաճկաց սուլթանի հանդիսաւոր երթը դէպի մզկիթ ապօթելու իւրաքանչիւր ուրբաթ օր։—*Սուլթանի հանդիսաւոր ընդունելութիւնը բայրամի տօնին*։ Տես նաև սալամլըք։

սէլէկցիա (լատ.), ընտրութիւն, որի հետևանքով կենդանական և բուսական աշխարհում որոշ փոփոխութիւններ են առաջ գալիս տեսակների մէջ։ ս. լինում է բնական և արհեստական։ Տես դարւինիզմ։

սէլիտրա, բորակ։

սէլտէրա տես զէլտէրա

Սէկուլարիզացիա (լատ.), աշխարհականացումն. հոգևորից աշխարհական դարձնելը։ Գլխաւորաբար՝ հոգևորականների և վանքապատկան կալւածքների փոխանցումը դէպի պետական սեփականութիւն։ Որոշ հատուածութիւնների աշխարհականացում, ազատելով նրանց հոգևորականների և եկեղեցու ազդեցութիւնից։

սէկուլարներ (լատ.), տւում էին Հռովմում դարմանուի տօնախմբութիւնները։

սէկունդ (լատ.), վայրկեան. րոպէի $\frac{1}{60}$-րդ մասը։

սէկունդա, երաժշտութեան մէջ՝ երկրորդ ձայն կամ երկրորդ ձայն նւագող գործիքը։

սէկունդանտ (լատ.), մենամարտի ժամանակ երկու կողմերից հրաւիրւած վկաներ, որոնք պարտական են հսկել մարտի կանոնների ճշգրիտ իրագործման։

սէկունդաշատի (լատ. հայ.), ժամացոյցի կերպարանքով գործիք է վայրկեաններ հաշւելու համար։

սէկունդ-մայօր, դինւորական ոտքի տատիճան հնում։

սէկսուալ (ֆր.), սեռային՝ բնականական և բնախօսական մտքով։

սէկտ (իտալ.), քաղցրահամ փրփրող գինու շատ տեսակներ կրում են այս անունը։

Սէկտա (լատ.), ազանդ. փոքրաթիւ մարդկանց խումբ, որը ընդհանրութիւնից զատւում է իր առանձին մտածողութեամբ, գլխաւորաբար կրօնական հարցերում։

Սէկտանտ, ազանդաւոր։

Սէկտօր (լատ.), շրջանի այն մասը, որը պարփակւում է երկու շառաւիղով և սրանց արանքում ընկած շրջագծով։

Սէկրէտ (ֆր.), գաղտնիք։

սէկրէտար (ֆր.), քարտուղար։

Սէկրէտարիատ (ֆր.-լատ.), քարտուղարութեան պաշտօն կամ քարտուղարի գրասենեակը։

Սէկցիա (լատ.), հատւած, կտոր. մասնաճիւղ։ — Դիակի կարատումը։

Սէհր (արաբ.), տեսարան։ — *Ս. անել*, դիտել մի տեսարան։ —*Սէհրան*։ գրօսանք։

Սէհրազ (թուրք.), ցանցառ, նօսր։

Սէմ տես *Սամ*։

Սէմական, սէմիտական ազգեր, կամ *սէմիտներ* կոչւում են արաբները, հրէաները, փիւնիկեցիք, քաղդէացիք և այլն, իսկ սրանց լեզուները *սէմական* կամ *սէմիտական*։

Սէմաֆօր (յուն.), բարձր սիւներ երկաթուղու կայարանների մօտ շարժական թևերով և գունաւոր լապտերներով, որոնցով նշան են անում շոգեմեքենավարին, թէ արդեօք հնարաւորութիւն կայ ճանապարհը շարունակել կամ ոչ։—*Ծովային* հեռագիր, դրօշակներով և լապտերներով նշանացի խօսակցութեամբ մօտեցող նաւի հետ ծովափից։

Սէմէստր (լատ.), վեցամսեակ, կիսամեակ դպրոցական, գլխաւորաբար համալսարանական դասընթացի։

Սէմինար (լատ.), վարժողութիւն և գործնական պարապմունքներ համալսարանում պրօֆէսօրի ղեկավարութեամբ։

Սէմինարիա (լատ.), միջնակարգ դպրոց հոգևորականներ կամ ուսուցիչներ պատրաստելու համար։—*Թեմական դպրոց*։

Սէմինարիատ, սեմինարիայի աշակերտ։

Սէմիտ, անւանում են յաճախ հրէաներին։ Տես *սէմական*։

Սէմիտօլօգիա, գիտութիւն սէմական լեզուների և այդ լեզուով խօսող ազգերի մասին։

Սէյմ (լեհ.), ժողովրդական ներկայացուցիչների ժողով հին Լեհաստանում։ — Առնւազն դասային ներկայացուցչական ժողով. այդպէս կոչւում է մասնաւորաբար Ֆինլանդիայի պատգամաւորական ժողովը։

Սէյր... տես *սէհր*...

Սենատ (լատ.), ծերակոյտ, հին Հռովմում ծեր և փորձած ազնւականների ժողովը, որը սկզբում խորհրդակցական նշանակութիւն ունէր, ապա նաև կառավարում էր երկիրը։—*Ժողովրդական* ներկայացուցչութեան վերին պալատը Բելգիայում, Ֆրանսիայում, Ամերիկայի միացեալ նահանգներում և Իտալիայում։ — *Ռուսաստանում*՝ կառավարչական ս., բարձրագոյն դատաստանական և վարչական հիմնարկութիւնը, որի անդամները նշանակւում են բարձրագոյն իշխանութիւնից նաև ի պաշտօնէ, ինչպէս նախարարները և նրանց օգնականները։ Ս. օրէնդրական իրաւունք չունի, բայց օրէնքների հրապարակումը և մեկնաբանութիւնը նրա ձեռքն է. նրա մեկնութիւնները օրէնքի զօրութիւն ունեն։

Սենատոր, սենատի անդամ։

Սենիօրէնկօնվենտ կոչւում է գերմանական *ռայխստագում* և պետական պառլամենտներում բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներից կազմւած մի մասնախումբ, որ նախագահի

հետ միասին որոշում է օրակարգի խնդիրները, կոմիտեների մէջ իւրաքանչիւր կուսակցութիւնից լինելիք անդամների թիւը եւնման խնդիրներ, որոնք վերաբերում են բոլոր ֆրակցիաներին։

Սէն-Բէրնար. Սան-Բէրնարեան շներ, Շեյցարիայի Ս. Բէրնար վանքում պահւող շների մի ցեղ, որոնք ձնաւոր եղած ճանապարհորդներին ազատում են։

Սէնիկա տես սինիկաւ։

Սէնիաձ տես զանիաձ։

Սէնիօր (իտալ.), տէր։—Աւատական իշխան։—Կալւածատէր։

Սէնիօրատ տես մայօրատ։

Սէնսացիա (լատ.), ուժեղ տպաւորութիւն։

Սէնսիբլ (լատ.), զգայուն։—Սէն սիբիլիտէտ, զգայունութիւն։

Սէն-Սիմօնիզմ, Ֆրանսիացի կոմս Սէն-Սիմօնի (1760–1825) եւ մանաւանդ նրա հետեւորդների ձեւակերպած հասարակական ուսմունքը. ձգտում է հասարակական կարգերի բարւօքման, որի համար անհրաժեշտ էր համարում եւ մատնաւոր սեփականութեան վերացումը, հարստութիւնների ժառանգականութեան ջնջումը, կանանց իրաւահաւասարութիւնը եւ այլն. հոգեւոր իշխանութիւնը պիտանականների իսկ աշխարհականը՝ արդիւնաբերողների ձեռքում պիտի լինէր։ Ժամանակակից սոցիալիզմի նախակարապետներից մէկն էր այս վարդապետութիւնը։

Սէնսուալիզմ (լատ.), զգայապաշտութիւն. ճանաչողութեան տեսութեան (իմացաբանութեան) մէջ այն ուղղութիւնը, որ մեր բոլոր ճանաչողութիւնը համարում է զգայութիւնների արդիւնք և որի ներքին փորձի իբրև ճանաչողութեան աղբիւր ժխտում է։—Սէնսուալիստ, այս ուղղութեան հետեւող և պաշտպան։—Սէնսուալիտէտ, զգայասիրութիւն, ցանկասիրութիւն։

Սէնտէնցիա (լատ.), վճռաբանութիւն։—Իմաստուն խօսք։

Սէնտիմէնտալ տես սանտիմէնտալ։

Սէջմա (թուրք.), կապարէ դնդակիկ հրացանի համար։

Սէպարատ (լատ.), առանձնացած. բաժանուած. անջատ։

Սէպարատիզմ, անջատականութիւն. որևէ կրօնական կամ պետական համայնքից, կուսակցութիւնից կամ մի խմբակցութիւնից անջատւելու և ինքնուրոյն գոյութիւն հիմնելու ձգտումն։

Սէպարատիստ, անջատական։

Սէպարատօր, դատիչ, մեքենայ, որով սերը զատում են կաթից։ Սէպզատօր։

Սէպարացիա (լատ.), անջատումն, զատումն։

Սէպտէնատ (լատ.), եօթնամեակ։ Վերմանիայում դինուորական եւնմատոյցի տեսութիւնը, որ հօթ տարի է։

Սէպտիմա (լատ.), ձայնաստիճանի եօթնեորդ ձայնը։

Սէսիա (լատ.), նստաշրջան. դատարանի, պառլամէնտի և այլն մի շարք նիստերը ընդգրկող ժամանակաշրջանը։

Սէր տես սիր։

Սէրայ տես սարայ։

Սէրասկիր, սէրի–ասկէր (պարսկ. արաբ.), զօրագլուխ. պատերազմական նախարար։

Սէրդար տես սարդար։

Սէրդար էրջէմ բարձրագոյն հրամանատար զօրքերի թիւրքիայում։

Սէրէնատա (իտալ.), դիշերային հրգ. լարաւոր գործիքի ձայնակցութեամբ, որ երգւում է սովորաբար սիրոյ առարկայի պատշգամբի կամ լուսամուտի տակ. ցայգերգ։

Սէրթուկ տես սիրտուկ։

Սէրժանտ (ֆր.), ենթասպայ։

Սէրիա (ֆր.), շարք. յաջորդութիւն։—Ռուսաստանի արքունի գանձարանի տոկոսաբեր թուղթ։

Սէրիոզ (ֆր.), լուրջ. խոհուն։

Սէրպանտին (լատ.), օձաքար. կանաչաւուն քար մուգ շերտերով, որ օձի կաշու նմանութիւն ունի։—Նեղ և երկար շերտեր գունաւոր թղթերի, որ դրւում են ածում պարահանդէսների ժամանակ իրար վրա նետելու համար։—Մի տեսակ պար։

Սէրտիֆիկա, (ֆր.) վկայագիր, վկայաթուղթ։

Սէրտուկ տես սիրտուկ։

Սէրսիզ, սէրսիս (ֆր.), ամանեղէն ճաշի, թէյի և այլն։

Սէրսիտիզմ (լատ.), ստրկական քծնութիւն մեծի, իշխանաւորին։

Սէրսիտուտ իրաւունք, իրաւունք օգտւելու ուրիշի սեփականութեան որոշ մասից կամ ուրիշի սեփականութիւնից որոշ չափով օր. վերացող իրաւունքը կալւածատիրոջ անտառից խոտ հնձելու, որս անելու և նման բաներ։

Սէցէսիա, սէցէսիօն (լատ.), բաժանումն, անջատումն։

Սէցէսիոնիստներ կոչւում էին Ամերիկայում հարաւային նահանգների կողմնակիցները, որոնք 1861 թ. պատերազմ հանեցին և կազմեցին հարաւային դաշնակցութիւնը։—Վերմանիայում՝ մի խումբ ազատամիտներ, որոնք բաժանուեցին ազգային ազատամիտ կուսակցութիւնից 1880 թ.։

Սէքսուէլ տես սէկսուալ։

Սըզու (թուրք.), ցաւ. յօդացաւ։

Սըլմար, թանկագին ծածկոց թամբի։

Սըրա (թուրք.), խոտ—Սըխլամ, նեղուածք. Ջիբ ժամանակի մէջ շուտ հասցնելու գործ։

Սրնաք-դրան, պարսկական դրամ=1,30 րուբլի։ Տես ասիլը...

Սրնաք տես տանաք։

Սրնաձ և այլն տես սանաձ և այլն։

Սրնարի (պարսկ.), զուռնով նւագելու եղանակ առաւօտեան։—Խազդի մի տեսակը։

Սրոգա, սրգաս, ամասնութիւն մանմեդականների։

Սրմսար (արաբ.), մի քնոտ։ Յետնարան ծառ ճիւղին։

Սրնդղի, ժողովրդական վիրաբոյժ, որը լուսացնում է մանաւանդ մարմնի կոտրած և դուրս ընկած տեղերը. ոսկրաբոյժ։

Սրնդր տես սինօն։

Սրտ (արաբ.), գազանի։ Սրտ լինել, աներևոյթանալ, անյայտանալ։

Սրրա (թուրք.), կարգ. շարք, հերթ։

Սրրդղ (թուրք.), ձոգ։—Երկարաձգակ մարդ՝ ծաղրական մըտքով։

Սրրմ տես սիրիմ։

Սրրմա (թուրք.), ոսկեթել։—Սրրմաբէշ, ոսկեթել շինող։

Սրտաղ (թուրք.), ծեփ։—Սրտաղչի, պատի ծեփ անող արհեստաւոր։

Սրտարի (պարսկ.), հեծեալ։

Սրտիա (պարսկ.), մարտական։

Սրֆամ (արաբ.), դէմք, կերպարանք։ Մանաւորաբար՝ ծաղրական մաքով։

Սրֆտա (արաբ.), առաջին վաստակ։ Առաջին անգամ կիրառած պատուղ երեխայրիք։

Սի տես դօ։

Սիամէթ տես *զիամէթ*։

Սիբարիա, քնքշացած մեղկացած մարդ, որ իր հաճոյքի համար է ապրում և կեանքը բաւականութիւնների մէջ է անցկացնում, ինչպէս հին յունական Սիբարիս քաղաքի բնակիչները։

Սիբիլլա կոչւում էին հին Յունաստանում աստուածներից ներշնչւած, նրանց կամքը յայտնող մարգարէուհիները։ Սրանցից մէկը, որ Կումէացի էր, վաճառեց Տարկւինիոս Հպարտին այն երեք գրքերը, որոնց մէջ գուշակութիւններ կային Հռոմի վիճակի մասին։

Սիգար, *սիգարէտ* տես *ցիգար*։

Սիգնալ (Ֆր.), ազդանշան։

Սիգնալիզացիա, ազդանշաններ տալու համակարգութիւնը. երբ հեռաւորութեան պատճառով անմիջական հաղորդակցութիւնը հնարաւոր չէ, դիմում են պայմանաւորւած նշանների օգնութեան։

Սիգնատուր (լատ.), վաւերացումն սեփական ձեռագրութեամբ և կընքով։—Դեղատան այն տումարը, որը կցւում է սրւակին կամ տուփին և որի վրա նշանակւում է դեղի բաղադրութիւնը ու հիւանդի անունը։—Տպագրական թերթի առաջին երեսի ցածում դրւած թւանշանը։

Սիդէրալ (լատ.), աստեղային։

Սիդէրիզմ, ուսմունք աստղերի ներգործութեան մասին։

Սիդր (Ֆր.), մրգագինի, խնձորագինի։

Սիգիֆ, յունաց առասպելներից՝ Կորնթոսի թագաւորը. Էօլի որդին. նա աւազակութեամբ էր պարապում և իր ոճրագործութիւնների համար դատապարտւեց դժոխքում մի մեծ քար գլորել սարնիվեր, բայց հէնց որ նա քարը հասցնում էր սարի գագաթը, սա նորից ցած էր գլորւում և Ս. հարկադրւած էր գործը նորից սկսել։ Ս. աշխատանք, միշտ նոր և նոր ճիգեր պահանջող, անպտուղ աշխատանք։

Սիլահ (արաբ.), զէնք։

Սիլէնցիում (լատ.), լռութիւն։

Սիլինդր տես *ցիլինդր*։

Սիլլա տես *ապտակ*։

Սիլլաբուս (լատ.), Պիոս IX Պապի հրատարակած ցանկը 1864 թւի դեկտեմբեր 8-ին, որի մէջ նա անիծում է 80 մոլորութիւն կրօնական, քաղաքական և հասարակական նշանակութիւն ունեցող։

Սիլլոգիզմ (յուն.), հաւաքաբանութիւն. տրամաբանութեան մէջ մի դատողութիւն, որը կազմւած է երեք նախադասութիւնից, որոնցից վերջինը եզրակացութիւն է րղխած առաջին երկուսից։ Օր. բոլոր մարդիկ մահկանացու են (մեծ նախադրեալ). Հայրապետը մարդ է (փոքր նախադրեալ). Հայրապետը մահկանացու է (եզրակացութիւն)։

Սիլուէտ, դիմատուէր, սուէբանկար. նկար, որը ներկայացնում է սև գոյնով առարկայի միայն շրջագծերը։

Սիլուան (լատ.), հին հռովմայեցոց աստւածը անտառների և հովիտների։

Սէլէստէր անւանում է եւրոպական դաշտան ժողովրդների մէջ տարեմուտի երեկոն։

Սիլֆա սիլֆիդա տես *էլէվէնտար ոգիներ*։

Սիլֆօքանտ (յուն.), հին Ա-թէնքում մաքսային պաշտօնեայ, որը լրտեսում էր թուղ արտահանողներին և յայտնում իշխանութեանը։—լրտես, զբօսպարտիչ։

Սիմ (պարսկ.), կեղծ ոսկեթել։ Կարաւոր նետագարանի մետաղէ լար։

Սիմբիօզ (յուն.), համակենցաղ. այլևայլ գործարանաւոր մարմինների կենակցութիւնը, երբ նրանցից մինը ապրում է միւսի հաշւով կամ իրար ձգակցում են գոյութիւն պահպանելու համար և այլն։

Սիմբոլ (յուն.), *սիմ'ոլ*, խորհրդանշան, առարկայ, նկար, գոյն և այլն, որոնք պայմանական կերպով արտայայտում են որևէ գաղափար. օրինակ՝ խաչխոյը յոյսի սիմբոլ է, արծիւը՝ իշխանութեան, սպիտակ գոյնը՝ անմեղութեան և այլն։

Սիմբոլիզմ, *սիմ'ոլիզմ*, որ նոյնպէս ասւում է ղեկատէնտական ուղղութիւն, 19-րդ դարի վերջին քառորդում Ֆրանսիայում առաջ եկած նոր ուղղութիւն գեղարւեստի մէջ. տես *ղեկադէնտ*։

Սիմբոլիկա, *սիմ'ոլիկա* ուսմունքը խորհրդանշանների, նշանակների մասին։—Աստւածաբանութեան մէջ՝ ուսմունք հաւատոյ հանգանակի մասին։

Սիմբոլիստ, *սիմ'ոլիստ*, *սիմբոլիստական* ուղղութեան հետևող գեղարւեստագէտ։

Սիմէտրիա (յուն.), համաչափութիւն, չափակցութիւն. ամբողջութեան մասերի այնպիսի դասաւորութիւնը, որտեղ մի կողմը և միւս կողմը իրար հաւասար են և նման։

Սիմուլանտ (լատ.) կեղծ, ձևացնող։

Սիմուլատ (լատ.), միասնական։—Տարբեր դաւանանքների միաժամանակ ծառայող (զարդ, եկեղեցու շէնքն և այլն)։

Սիմպաթի (յուն.), համակրանք, համակրելիութիւն։

Սիմպաթիկ, համակրելի դրսեւորական։ Գրաւիչ։

Սիմպաթիկ նեարդ, նեարդային համակարգութեան այն մասը, որը ճիւղաւորւում է ներքին գործարանների մէջ և կառավարում է ախտաբոյս շարժողութիւնները՝ աստամոքսի, աղիքների, սրտի և այլն։

Սիմպլ (Ֆր.), պարզամիտ, անարւեստ։—*Սիմպլիզմ*, պարզամտութիւն։

Սիմպտոմ (յուն.), ախտանշան. երևոյթներ, որոնք նշաններ են հանդիսանում մի հիւանդութեան երևալուն։

Սիմպտոմատիկ, ախտանշանական։

Սիմուլ և այլն *սիմբոլ*։

Սիմոնականութիւն, *սիմոնիա*, սրբութիւնների և եկեղեցական պաշտօնների գնելը կամ վաճառելը դրամով։

Սիմոնիզմ տես *Ակն-սիմոնիզմ*։

Սիմֆոնիա (յուն.), երաժշտական մեծ կտոր նւագախմբի համար. համանւագ։

Սիմֆոնիստ. սիմֆոնիաներ գրող երաժիշտ։

Սինագոգա (յուն.), երրայական աղօթատուն.

Սինգուլէր (լատ.), եզակի. միակ. բացառիկ։

Սինդիկալիզմ (յուն.), ձեղքուածի սինդիկատներ կազմելու։ Մասնաւորաբար այդ անունը կրում է ֆրանսիական բանւորութեան գործելակերպը՝ կազմակերպել կուսակցութիւններից դուրս արհեստակցական հողի վրա, մերժել քաղաքական կռիւը և ուղղակի գործողութիւններով, այսինքն գործադուլով, ցոյցերով և այլն, պատրաստել բանւոր դասակարգը վերջնական կռւի կապիտալիզմի հետ։ Այս գործելակերպը կոչ-

ւսամ է նաև չեզոփոխական ա.։

Սինդիկալիստ, ֆրանսիական սենդիկալիզմին հետևող։

Սինդիկատ, արհեստակցութիւն. որևէ արհեստի պատկանող մարդկանց միութիւն ընդհանուր նպատակների իրագործման համար։—Առևտրական արդիւնաբերութեան կամ առևտրի միևնոյն ճիւղին պատկանող մարդկանց կամ հաստատութիւնների միութիւն տնտեսական ընդհանուր ձեռնարկութիւնների նպատակով։ Տես նաև *կարտել*։

Սինէկդոխա (յուն.), խնայմտութիւն. համահասակացողութիւն. պատկերաւոր. ոճի մէջ՝ երբ ամբողջն է ասւում մասի փոխարէն և ընդհակառակը. օր. քառասուն գլուխ ոչխար, փոխանակ՝ քառասուն հատ. կամ գործ է անում մի յատուկ տեսակ այդ մարդի յատկութեան փոխարէն, օր. մեր դպրոցները շատ կան։

Սինէկդոտ (լատ. անգլ.), մի ծառայութեան համար իրեն վարձատրութիւն տրած պաշտօնեայ, երբ պաշտօնեան լուծը կամուտ է տանում առանց կատարելու գործ ունենալու։

Սինէմատօգրաֆ տես *կինեմատ*...

Սինէչամպ, սեխի մի տեսակը։

Սինեմեա. սինեմէզիս (յուն.), համաչրութիւն. միացումն երկու հակադիր գաղափարների մի երրորդ բարձրագոյնի մէջ. տես դիալէկտիկա.—Միաւորումը, կապակցութիւն տրամաբանութեան մէջ՝ հակադրակ անալիզի — վերլուծութեան — մտքի այն գործունէութիւնը, որը հատ հատ դրութիւններից դատողութիւններ է կազմում.—Զգայարանքների տպաւորութիւնների միացումը, որից կազմւում են մեր գաղափարները, ըմբռնումները։

Սինեմէտիզմ (յուն.), փիլիսոփայութեան մէջ այն ուղղութիւնը, որը իրականը և գաղափարականը ընդունում է սկզբից և մէթ իրար հետ անբաժանելիօրէն կարծում և ոչ թէ մէկը միւսից բղխող։

Սինի (պարսկ.), ափսէ, մեծ և տափակ պղնձէ ափսէ։ Սեղան։

Սինիզմ, *սինիկ* և այլն տես *չին*...

Սինիօր (իտալ.), *սինիօրէ*, տէր. պարոն.—*Սինիօրա*, տիրուհի, տիկին։—*Սինիօրինա*, օրիորդ։

Սինխրօնիզմ (յուն.), համաժամանակութիւն. նշանակումն միաժամանակ դանազան երկրներում և դանազան ժողովրդների մէջ տեղի ունեցած դէպքերի։

Սինկրատիա (յուն.), համապետութիւն. պետական կազմ, որտեղ ժողովուրդը բարձրագոյն իշխանութեան կատարողական գործերում մասնակցում է իր ընտրած մարդկանցով։

Սինկրէտիզմ (յուն.), համախառնութիւն. բոլոր տարբեր համակարգերի շատ մասերի անքննադատ միաւորումից մի նոր ամբողջութիւն կազմելը, որ առկոյն մի ընդհանուր սկզբունքով կապած չէ. Ս.-ը տարբերւում է էկլէկտիզմից նրանով, որ իր մէջ ընդունում է նաև մասեր, որոնք առաց հակասութեան չեն։

Սինոտաբսիս (յուն.), համաձայնութիւն. քրիստոնէութեան երկրորդ մասը, որտեղ ամփոփւած է քառերի միացումը նախադասութիւնների և նախադասութիւնների յարաբերութիւնները։

Սինոպ, սինոպտոս (յուն.), հոգևոր բարձրագոյն տասատասութիւն, որ բաղկացած է նշանակավոր եպիսկոպոսներից և վարդապետներից և պատասխանութիւն ու իրաւունք ունի վարելու և հսկելու բոլոր եկեղեցական գործերին. ս. կայ՝ հայ լուսաւորչական էջմիածնում, Սրբազան կառավարչական ս. Պետերբուրգում և այլն։

